

ՎԱՋԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

**ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՌԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

1

ԵՐԵՎԱՆ - 2022

ՀՏԴ 809. 198. 1

ԳՄԴ 81.2

ՀՀ 205

Համբարձույան Վ.Գ.

Հ 205 Հայերենի բառաքնություն և ստուգաբանություն, պրակ 1,
Եր. 2022, 194 էջ:

Նյութերը ներկայացնում են բառաքնական և ստուգաբանական ճշգրտումներ և լրացումներ՝ հայերենի ստուգաբանական բառարանի համար: Տեղ են գտել նաև նոր ստուգաբանություններ:

Գիրքը հասցեագրվում է համեմատական լեզվաբանության մասնագետներին, հայերենով հետաքրքրվող լայն շրջաններին:

Հ ԳՄԴ 81. 2Հ-3

ISBN

© Էդիթ-Պրինտ 2022

© Վ. Համբարձույան 2022

Առաջարան

Մի քանի տասնամյակ է, որ հայերենի համեմատական-տիպաբանական ուսումնասիրությունը հնդեվրոպական լեզուների շրջանում մտել է նոր փուլ: Դա ամենից առաջ բացատրվում է նյութի ավելի մանրամասն և ավելի հանգամանալից անդրադառնալու հանգամանքով:

Հայերենի հնչյունական համակարգը, մանավանդ պայթական բաղաձայնական համակարգը ներկայացնում է այնպիսի հնագույն (արխաիկ) գծեր, որոնք համեմատաբար ավելի մոտ են հնդեվրոպական նախալեզվի համար վերականգնվող նախատիպին:

Հնչյունական շատ երևույթներ (օր.՝ հետնալեզվային պայթականների տարբերակային արտացոլումը՝ հե. *k > k / k' / k^h), ներկայումս դիտվում է համակարգի մեջ, և ըստ այդմ տեսական հիմնավորումն ունենում է ավելի մեծ հավաստիություն, վերականգնման համար կարելի է սահմանել հնչյունական նոր օրենքներ, մեծ ուշադրություն դարձնել նրանց իմաստային (նաև դիցական, առասպելական և այլն) կողմին, անցկացնել տիպաբանական զուգահեռներ այլ (ոչ հնդեվրոպական) լեզուների հետ:

Հատկապես վերջին տասնամյակներին մեծապես առաջ են գնացել բառի (արմատի) ստուգաբանությանը վերաբերող աշխատանքները:

Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ից անցել է շուրջ մեկ հարյուրամյակ (հ. 1, Ե., 1926 և հջ.), Գ. Զահուկյանի՝ հայոց լեզվի պատմության և մյուս աշխատությունների ցանկերից, դրանց հիման վրա կազմված «Ստուգաբանական բառարանից»՝ շուրջ հինգ տասնամյակ (1970-ական թթ.), և այդ ընթացքում համեմատական (resp. տիպաբանական) լեզվաբանության, ըստ այդմ բնականաբար, հայերենի ուսումնասիրության (ուրիշ հետազոտող-

ների կողմից կատարվածի) մեջ ստուգաբանական (բառաքննական) մասը անհամեմատ լայն ընդգրկում ունի՝ ոչ միայն գործնականում, այլև հատկապես տեսական առումով:

Հայերենի տվյալները անհամեմատ լայն ուշադրության առարկա են վերջին տասնամյակների հնդեվրոպական լեզուների ընդհանուր համեմատաբանական-ստուգաբանական ուսումնասիրություններում, փորձ՝ մեզանում նույնպես նման ինքնօրինակ աշխատանքների ձեռնամուխ լինելու համար:

Այդ նյութը ուշադրության առարկա է լեզվական կողմով (արտահայտության պլան), այլև արտալեզվական հատկանիշներով (բովանդակության պլան). այլ կերպ ասած՝ լեզվական նյութին անդրադարձ է կատարվում ըստ հնչյունական, բառային (արմատի հետ կապված), այլև նախադասության (բանաստեղծական խոսքի և այլն) համատեքստում:

Աշխատանքը կարելի է բաժանել մի քանի մասի.

1) հատուկ ուշադրության առարկա են հայերենում հնդեվրոպական արմատի զրո աստիճանի ձայնավորման հնարավոր արտացոլումների հարցը, բառաքննական և ստուգաբանական մի քանի զուգահիսյուսներ, այլև կատարվում է բնագրային որոշ բառերի և մեկ արտահայտության քննություն,

2) առանձին ստուգաբանական-իմաստաբանական մակարդակում քննվում են *այգի*, *առակ* և *առած*, *արտորալ* և *արտոյտ*, *եղեռն*, *երկինք* և *երկիր*, *հարկ(անեմ)*, *հերկ*- բառերը (արմատները), որոնք բնիկ են (ունեն հնդեվրոպական ծագում). միայն *մարգարիտ* բառն է, որ փոխառություն է ոչ հնդեվրոպական լեզվից,

3) կատարվում է շուրջ մեկուկես տասնյակ բառերի ավելի մանրամասն համեմատական-ստուգաբանական քննություն:

Այստեղ բուն նյութը ներկայացվում է հայերենի բառապաշարի համեմատական-ստուգաբանական քննության մեջ ավանդականի

ներառումով, այլև նոր, վերջին մի քանի տասնամյակի ընթացքում եղած ձեռքբերումների նկատառումով. նախկինում ամենևին չստուգաբանված («անհայտ ծագման»), այլև նոր տվյալների մեջբերումով փորձ է արվել ոչ հավաստի կամ անհավանական ստուգաբանություն ունեցող միավորների համար գտնել ավելի համոզիչ և հիմնավոր մեկնաբանություն: Այդ ընթացքում, բնականաբար, կատարվում են լրացումներ, ճշգրտումներ, այլև վերանայում: Ըստ հնարավորին հաշվի են առնված տվյալ բնագավառում մեզ մատչելի աշխատությունների տվյալները:

Աշխատանքների հիմնական մասը վերջին տարիներին լույս է տեսել գիտական հանդեսներում և ժողովածուներում, որոնք այստեղ ներկայացնում ենք որոշ շտկումներով և անհրաժեշտ լրացումներով (տե՛ս գրականության ցանկը);

Հեղինակը սիրով կընդունի ամեն մի նպաստավոր դիտողություն կամ առարկություն:

1. Հնդեվրոպական արմատի զրո աստիճանի ձայնավորման արտացոլումը հայերենում

Հարցի ընդհանուր դրվածքը

Հնդեվրոպական (հե.) արմատի ձայնավորման տարբեր աստիճանները այս կամ այն չափով ունեն իրենց արտացոլումները նաև հայերենում: Հե. լեզուներում լիաձայն (*e/o) և ոչ լիաձայն [ø (զրո ձայնավորում)] կառուցվածքի պարզ կամ կրկնական արմատի [հմմտ. հուն. τέκος «նորածին» // τέκτω «ծնում եմ» (<*τ(ί-τκ-ω)] արտացոլումները նկատվում են բաղաձայնների

հանդիպադրման ($C_1VC_2 // C_1C_2$) տարբեր համակցումներում գլխավորապես շեշտի տեղափոխությամբ պայմանավորված ընդունված է այդ համակցումները (կառուցվածքները) բաժանել մի քանի տեսակի՝ 1) խուլ բաղաձայնների միջև, 2) ձայնեղ բաղաձայնների միջև, 3) ծերպաձայնային (գլոտալ) և խուլ բաղաձայնների միջև և 4) ձայնորդ և մյուս կարգի (ձայնեղ, խուլ և ծերպաձայնային) բաղաձայնների միջև¹:

Հիշյալ չորս կարգի համակցումներում ևս գտնում ենք հայերենի արմատի համապատասխանությունների արտացոլումներ: Դրանց մանրամասն (առանձին) քննությունը հե. արմատի մակարդակում հայերենի ստուգաբանության և բառաքննության համար ունի հիմնարար նշանակություն:

1. Հե. երկու խուլ բաղաձայնի կառուցվածքի արտացոլում

Հայ. *տապ* [տաւ-թ (?)] < հե. *t^[h]ep^[h]-. հմմտ. հինդկ. *tāpah* «տապ, տոթ. փոշի», ավեստ. *tāpaiti* «տաք է» [նաև սողդ. տրի «ջերմել. դողերոցք», պամիր.(վախան.) *tab* «տապ դողերոցք»]. հմմտ. հայ. *թպղա* «մի չար ոգի (նեղություն, հիվանդություն պատճառող. օր.՝ դողերոցք)», լատ. *tepidus* «տաք», *tepeō* «տաք եմ», հիռլ. *té* «տաքացած», վալլ. *twym* «շոգ», հսլավ. *toplŭ* «տաք, շոգ» և այլն (հմմտ. *Гамкредидзе, Иванов, 1984, էջ 153, 683*):

¹ Հնդեվրոպական ընդհանուր վիճակի նման բաշխումների մասին մանրամասն տե՛ս Գամկրեյիձեի և Իվանովի աշխատության մեջ (*Гамкредидзе, Иванов, 1984, էջ 152-157*): Այդ աշխատության մեջ կատարված վերլուծության նյութի ընդգրկումը թերի է, քանի որ, բացառությամբ երեք օրինակի (հե. *p^[h]et^[h] - / *p^[h]t^[h] - > հայ. *թիռ*- «թռչելը». որ վերանայելի է, հե. *set^o- / *st^o- > հայ. *նի-ստ-իմ* «նստել»), հե. *se/ok^{[h]o} - > *ակն* «աչք», ներառված չեն հայերենի տվյալները, ուստի մեր այս աշխատանքը, կարելի է ասել, լրացնում է այդ բացթողումը:

Ավանդաբար համարվում է իրանական փոխառություն, որ նոր տվյալների նկատառումով՝ առարկելի է. նման համեմատության դեպքում այն պիտի քննվի ավելի լայն ընդգրկումով՝ ժամանակի մեջ. այսպես, օրինակ, նոր տվյալների համաձայն արմատը (տարբերակ՝ *t'ap^[h]-), իբրև փոխառություն հնդեվրոպականում, ենթադրվում է համեմատելի այլ խմբի լեզուների (սեմականի, նույնիսկ քարթվելականի) հետ (Ն. Կ., էջ 879):

Հայ. *տոշոր* [*տոշ-որ* (**տեշ-* (?))]. 1. նխն.՝ «արագ հոսք. անծրև», 2. ուշ (թերևս՝ փխբ.)՝ «այրում. վառվելը» < հե. *t^[h]ek^{[h]o}-. հմմտ. հինդկ. (վեդ.) tákti «շտապում է. ձգտում է (թռչունների, կենդանիների համար ասված)», հիռլ. techid «վազում է», intech «ուղի. ճանապարհ», լատվ. teku «փախչում է», լիտվ. tekù «վազում եմ. հոսում եմ», հւլավ. tekø «վազում եմ» և այլն (Ն. Կ., էջ 153, 670):

Հայ. *տքնիլ* (< *տք-ն-իլ* < **տիք-*) < հե. *t^[h]ek^[h]- // *t^[h]k^[h]-. հմմտ. հուն. τέκος «(նորա)ծին», կրկնականը՝ τέκτω «ծնում եմ» (<*tí-τκ-ω) (Ն. Կ., էջ 152): Հայերենի հիշյալ ձևը ներկայանում է արմատի լիաձայն [ոչ ø (զրո) աստիճանի] դրսևորմամբ, իսկ եթե նկատի ունենանք այն, որ լիաձայն / ø (զրո) ձայնավորումը հնդեվրոպականի մեջ է դիտարկվում (նախապես «չարչարվել. ճիգ անել՝ ճգնել». «երկնել՝ ցավ կրել»(?)), ապա հայերենի դեպքում պիտի ենթադրելի լինի **տիք-* (< **տեք-*) արմատի հանդիպադրում ավելի վաղ ժամանակի մեջ, քան որ կարող է հատկացվել նախահնդեվրոպականի ոլորտի համար:

Ըստ այսմ, թերևս, վերևանայելի է նախկինում կատարվածը բառի ծագման, եթե ոչ նաև կազմության վերաբերյալ (արմատական, ոչ նախածանցական բառ): Հիշենք, որ Աճառյանը *տքնիլ*-ը կապում է *քուն* արմատի հետ՝ *տ* ժխտական մասնիկով,

սկզբնականը՝ *տքուն* «անքուն» և այլն, որին հետևում է Ջահուկյանը (*Աճառեան*, 1979, էջ 441, 591-592, *Ջահուկյան*, 1987, էջ 242, 358. նաև՝ 2010, էջ 787):

Հայ. *փետուր* (< *փեպ-ուր*) < հե. *p^[h]et^[h]- // *p^[h]t^[h]-. այս դեպքում, ինչ խոսք, ավելի իրական կլինի, եթե տարբերակվի հե. արմատի իմաստային երկու ոլորտ՝ 1) «թռչել» և 2) «թև, փետուր», ինչպես որ առանձնացվում են այդ իմաստների կրող ձևեր ցեղակից մյուս լեզուներում. այդ արմատից ունենք ոչ միայն հայ. *թիռ-* (*թռչել*) (իմա՝ գործողություն), այլև *փետուր* (իմա՝ գործողության միջոց). հմմտ. մի կողմից՝ հուն. πέτομαι «թռչում եմ», πτήσις «թռիչք» և այլն, իսկ մյուս կողմից՝ հինդկ. pátatra «թև», հրգերմ. fedara «փետուր» և այլն (հմմտ. *ն. տ.*, էջ 153):

Ավանդաբար քննության է առնվել միայն առաջինը՝ *թիռ-* (*թռչել*) (իմա՝ գործողություն), այսինքն՝ քննությունից դուրս է մնացել գործողության միջոցը՝ *թեւ-*ը (հմմտ. *Աճառեան*, 1973, էջ 177, նաև 184-186): Ըստ Ջահուկյանի՝ «Փետուր բառը բնիկ հնդեվրոպական չէ, բայց կարող է վաղ շրջանում յուրացված լինել հնդեվրոպական որևէ լեզվից և թերևս առկա լինել հենց վաղնջահայերենում» (*Ջահուկյան*, 1987, էջ 262): Հետագայում ևս փետուր-ի համար նշվում է՝ «ծագումն անհայտ է», իսկ թեւ-ի համար թեականով նշում՝ «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *pteuo [*pet-] «տապալել, թռչել, ընկնել» արմատից, որտեղից հայ. թեր, թերթ, թիռ» (*Джакян*, 1967, էջ 103, 306 *Ջահուկյան*, 2010, էջ 265): Աղայանը փետուր-ը կապում է թեւ-ի հետ, որ «ծագում է հնիս. pet ականատի ստորին ձայնդարձով pte ձևից՝ -wo ածանցով», իսկ փետուր-ի հարցում Ջահուկյանի և իր իսկ բացատրությունը՝ հե. *p > հայ. փ անցման վերաբերյալ նշվում է, որ «մնում

է սոսկ իբրև վարկած, թեև փետուր բառի կապը *pet- արմատի հետ ոչ մի կասկածի տեղիք չի տալ:իս» (Աղայան, 1974, էջ 70-71):

Այս ամենով իսկ միանգամայն իրական է հայ. *փեպուր, թե* և մյուս բառերի բխեցումը հնդեվրոպական հիշյալ տարբերակային արմատից:

Հայ. (բրբռ.) *փիջինա* [< *փիջ-ին-ա* (?)] «մատղաշ անասուն՝ եղջերավոր» (Մշ., Աշ.) < հե. *p^[h]eġ^[h]- // *p^[h]ġ^[h]-. հմմտ. ավեստ. fšu-yant- «անասնապահ», fšu-šan- «անասնատեր», գոթ. faihu «անասուն», լատ. pecū «անասուն. ունեցվածք» (հմմտ. pecten «սանր»), հինդկ. kṣu-m'na-, kṣu-mānt- «անասնակերով լի», քուրդ. kṣú- «ուտելիքով հարուստ», հուն. κτείς, (սեռ. հոլ.) κτενός (<πκτεν-) «սանր» և այլն (Γαμκρелиძე, Иванов, 1984, էջ 153): Հայերենն այս դեպքում արտացոլում է նախալեզվի հնչյունական լիաձայն տարբերակը:

Հայ. *քան-* (*չոր-ք*) «չորս» < հե. *k^[h]oet^[h]- // *k^[h]oġ^[h]-. հմմտ. հինդկ. turiya- (< *kturiya-) «չորրորդ», ավեստ. tūrya- (նույնը), հուն. τέσσαρες (նույնը), հւլավ. četyre (նույնը) (ն. տ., էջ 845. հմմտ. Աճառեան, 1977, էջ 631-632, 1979, էջ 555-556. Ջահուկյան, 2020, էջ 777): Նախկինում հե. *k^[h]o > հայ. *ք* // *չ* զարգացումը չի եղել քննության առարկա, թեև այն կարևոր է հայերենի պայթական բաղաձայնների պատմության տեսանկյունից. հարցն այն է, որ հե. *k^[h]o > հայ. *ք* անցումն ավելի հին է, քան հե. *k^[h]o > հայ. *չ* անցումը, որն իբրև հնչյունական օրենք, հայերենի համեմատական ուսումնասիրության համար ունի առանցքային նշանակություն (հմմտ. centum/satəm հարաբերակցություն): Աճառյանը նույնիսկ գրում է. «Թէ ի՛նչ ճամբով հնիս.

k^het^hor-es (իմա՛ ավանդական վերականգնում - Վ. Հ.) դարձած է հայ. *չորեք, չորք՝* խնդրական է. եղած այլևայլ ենթադրությունները տե՛ս տակը. հմմտ. *քառ* և *քառասուն»* (*Աճառեան*, 1973, էջ 631):

2. Հե. երկու ձայնեղ բաղաձայնի կառուցվածքի արտացոլում

Հայ. *դեհ* «կիզում. այրվելը, վառվելը» (*հր-դեհ*) < հե. *d^[h]eg^{[h]o-} // *d^[h]g^{[h]o-}. հմմտ. թոխ. Ա tsäk- «այրել», լատ. febris «այրուք. տենդ, ջերմախտ», foueō «տաքացնում եմ», լիտվ. degú «կիզում եմ», հսլավ. žegō «կիզում եմ», žešti (նույնը) և այլն (*Гамкредлидзе, Иванов*, 1984, էջ 154):

Հարկ կա նշելու, որ ըստ Աճառյանի՝ այն «անստույգ բառ» է, այնինչ Ջահուկյանը մի դեպքում՝ ծագած է համարում հե. *dāu- արմատից, որն առարկելի է՝ ձայնավորի անցման, ինչպես նաև հայ. *հ*-ի անբացատրելի մնալու պատճառով, իսկ մեկ այլ դեպքում՝ ավելի ուշ, այն առնչում է հե. *dheg^h- արմատի հետ (*Աճառեան*, 1971, էջ 647. *Джаукян*, 1967, էջ 152)²:

Այս դեպքում թեական լինելը, կարծում ենք, վերանում է, եթե հարցը դիտարկվում է երկու ձայնեղ բաղաձայնի ø (զրո) աստիճանի ձայնավորման դրսևորման հայկական արտացոլման տեսանկյունից:

² Հետագայում Ջահուկյանը թեականով է անդրադառնում այդ արմատին. «Կապ ունի՞ արդյոք հնդեվրոպական *dheg^h (թերևս տպագրական վրիպակ է, պիտի լինի *dheg^h. – Վ. Հ.) «այրել» արմատից ծագող որևէ ձևի հետ. ավ. «իրդեհ». հայերենին մոտ է հինդկ. dāhā «իրդեհ» ձևը, բայց ինչպե՛ս կարող էր այն հայերենի աղբյուր լինել» (տե՛ս «Հայերեն ստուգաբանական բառարան», էջ 192):

Հայ. բող (բրբռ.) «միջուկը փտած, որդ ընկած, փչակավոր (ծառի մասին)» < հե. *b^[h]ed^[h]- // *b^[h]d^[h]-. հմմտ. գալլ. bedo- «փոս. առու», լիտվ. bedū «փորում եմ», լատ. fodiō «փորում եմ». նաև fōssus (< fodiō «քանդում եմ, փորում եմ»), հինդկ. budhná-, հուն. πυσμήν «հատակ. վիրապ» (< հե. արմատի *b^[h]od^[h]-thos ձևից) և այլն (Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 70, 154): Հմմտ. նաև հայ. (բրբռ.) բաղոց «բանջարանոցում ջրի հավաքման հողե պատնեշ» (?). նաև (բրբռ.) բողնոց «հացը սեղանին բերելու երկարավուն փոսորակ լայն տախտակ. խոնչա»: Հայ. (բրբռ.) ձևերը չենք գտնում ինչպես ստուգաբանական, այնպես էլ նոր հրատարակված բարբառային բառարաններում. գրական հայերենի բառարաններում բաղոց-ը բերվում է «թարեք» իմաստով (ՄԲԲ, 1944, էջ 302: ԺՀԼԲԲ, 1969, էջ 256. ԷԱԲ, 1976, էջ 150): Ըստ այսմ՝ հայերենի համար կարելի է նշել արմատի n/w լիաձայն դրսևորմամբ բաշխում:

3. Հե. ծերպածայնային և խուլ բաղաձայնների կառուցվածքի արտացոլում

Հայ. *հեպ(ք)* «ոտնահետք», նաև *ոպ(ն)* «ոտք» < հե. *p^[h]et'- // *p^[h]ot'-. հմմտ. խեթ. pedan «տեղ», հուն. πέδον «գետին. հող», լատ. pēs, (սեռ. հղ.) pedis «ոտք», գրթ. fōtus (նույնը), նաև խեթ. pata- (նույնը), հուն. πούς, (սեռ. հղ.) ποδός «ոտք» և այլն (Γαμκρελιδζε, *Иванов*, 1984, էջ 154)³:

Հայ. *ղած-* (*ղած-եմ*) «խնամք. հոգալը» < հե. *t'eḱ^[h]- // *t'oḱ^[h]-. հմմտ. հուն. δεξιτερός «աջ (կողմ)», լիտվ. dešinas «աջ (կողմ)». հսլավ. desnъ «աջ (կողմ)». ընդ որում՝ հունարենում նկատվող իմաստային որոշակի զարգացումով հանդերձ. հուն. δέχομαι «ընդունում եմ», δόξα «կարծիք» (*Ն. Կ.*, էջ 155): Ածառյանը համարում է «անստույգ բառ», ըստ Ջահուկյանի՝ «ծագումն անհայտ է» (*Ածառեան*, 1979, էջ 359-360. *Ջահուկյան*, 2010, էջ 718):

Հայ. *ղասն* «տասը» < հե. * t'eḱ^[h]-m̄ - // *t'eḱ^[h]-om . հմմտ. հինդկ. dáśa «տասը», հուն. δέκα, լատ. decem, գրթ. taihun, հիբլ. deich, լիտվ. dešimts «տասը», հսլավ. desetī «տասը» և այլն (Γαμκρελιδζε, *Иванов*, 1984, էջ 155, 229, 846. 961): Արմատի բուն մասին հավելյալ *-m̄ // *-om ածանցումը, թերևս, չի ազդում հարաբերակցության վրա:

4. Հե. ձայնորդ և մյուս կարգի բաղաձայնների կառուցվածքի արտացոլում

Հայ. *նիստ* (< *նի-ստ*) < հե. *set'-// *st'-. հմմտ. հինդկ. niḍá- (<*ni-zd-- <*ni-st'-) «ապաստարան», հուն. ἔζομαι «նստած լինել,

³ Հեղինակները բերում են նաև հայ. *հեպ* «հետք» բառ-օրինակը:

լատ. *sedeō* «նստել», լիտվ. *sėdžiu* «նստել», հւլավ. *sěždō* «նստել», *sędō* «նստած լինել» և այլն (*Ն. Կ.*, էջ 152, 155)⁴:

Հայ. *ակ(ն) // աչ(ք)* «աչք» < հե. **sek*^{[h]o-} // **sk*^{[h]o-}. իբրև ընդհանուր արմատ նշվում է **se/ok*^{[h]o-}. հմմտ. խեթ. *šakuša* «աչք», *šakušai-* «տեսնել. նայել», թոխ. Ա *ak*, Բ *ek*, հինդկ. *ákṣi* «աչք», հիդլ. *rosc* «աչք. հայացք», նաև *ro-sc* (< **pro-sk*^{wo-}) «աչք», հուն. ὄσσε (երկ. *թ.*) «աչքեր», լատ. *oculus* «աչք», հիսլ. *sjá* «տեսնել», հվգերմ. *ouga* (գերմ. *Auge*) «աչք», հանգլ. *ēage* (անգլ. *eye*) «աչք», գոթ. *saihan* «տեսնել», լիտվ. «աչք», հւլավ. (նույնը) և այլն (*Ն. Կ.*, էջ 155, նաև 696-697, 786₁). արմատի նախնական իմաստը հնդեվրոպականում եղել է «հետևել. աչքը վրան պահել» (*Ն. Կ.*, էջ 155, նաև 696-697, 786₁): Դասական համեմատաբանությունը, խեթականի տվյալների հայտնի չլինելու պայմաններում, արմատի նախածն է վերականգնել **ok*^{u-}-ը, որը ներկայումս վերանայելի է (տե՛ս *Hübschmann*, 1895, էջ 413. *Աճառեան*, 1971, էջ 107. *Ջահուկյան*, 2010, էջ 30-31):

Այստեղ հայերենի՝ ստուգաբանորեն հայտնի ձևին վերստին անդրադառնալը տեղին է երկու հանգամանքով. նախ՝ հատկապես խեթականի տվյալի հիման վրա նախածնի ճշգրիտ վերականգնում, այնուհետև՝ հարցը մեր այս թեմայի մեջ քննելու անհրաժեշտություն:

Հայ. *սեղմ* (< *սեղ-մ-ել*) < հե. **seḡ*^[h]- // *sḡ*^[h]-. հմմտ. հինդկ. *sáhate* «հաղթում՝ հաղթահարում եմ», ավեստ. (ըղձ. հոգն. 1-ին դ.) *zaēma* «հաղթենք», հուն. ἔχω (աոր. ἔσχον) «ունենալ. բռնել», (ըղձ. հոգն. 1-ին դ.) *σχοιμεν* «հաղթենք», գոթ. *sigis* «հաղթանակ» և այլն (*Гамкрелидзе, Иванов*, 1984, էջ 155):

⁴ Հեղինակները բերում են նաև հայ. *նիստ* բառ-օրինակը:

Հայ. *սկել* (*h-սկել*) «տքնել. արթուն մնալ. հսկել» < հե. *sek'- / *sk'-. հմմտ. հինդկ. *sájati* «մոտ է գտնվում. կից է», միդլ. *sén* «ծուղակ. թակարդ», լիտվ. *ségti* «մոտ գտնվել», այլև ավեստ. *vohuna-zga* -(spā) «շուն՝ վարժեցված արյան» (*ն. Կ.*): Աճառյանը համարում է «անստույգ բառ», իսկ ըստ Ջահուկյանի՝ «թերևս փոխառություն» (*Աճառեան, 1979, էջ 227. Ջահուկյան, 1987, էջ 683*): Այս արմատին է առնչվում հայ. *սկունդ* (< *սկ-ունդ*) բառը, որի սուգաբանական կապը *շուն* բառի հետ կասկած է հարուցում: Այս համատեքստում ուշագրավ է ավեստերեն բառի «շուն՝ վարժեցված արյան» իմաստը՝ կապված հայկական արալեզների (ժողովրդական մտածողությամբ) պատումի հետ, որն առանձին քննության նյութ է պարունակում (ավելի մանրամասն տե՛ս *Համբարձումյան, 2020, 1, էջ 87-89*):

Հայ. *սուղ* (*սղ-ան-ալ*) «կարճ. սուղ, պակաս» < հե. *sek^[h]- / *sk^[h]-. հմմտ. հինդկ. *á-sak-ra-* «անսպառ», հուն. (հոմ.) *ἔσκετο* «թափվեց (ջրի մասին ասված)», լիտվ. «թափվել (ջրի մասին ասված)», հւլավ. *isėknoti* «սպառվել», նաև արմատի կրկնակ ձևով՝ ավեստ. *hišku-* «չորացած», վալլ. *hysb-* (նույնը) և այլն (*Гамкредидзе, Иванов, 1984 էջ 155*): Հ. Աճառյանը համարում է «անստույգ բառ», ըստ Գ. Ջահուկյանի՝ «ծագումն անհայտ է» (*Աճառեան, 1979, էջ 250. Ջահուկյան, 1987, էջ 689*): Այս խմբի մեջ կարելի է բերել բաղաձայն-ձայնավոր և ձայնորդ (CVs-) տիպը, երբ ձայնորդը հաջորդում է. օր.՝ հայ. (բրբռ.) *քիս* «կաւ. քսելիք» (*քս-ել*), (բրբռ.) *քիսնալ*, *քիսնել* և այլն «դիպչել, պատահել» < հե. *k^[h]es- / *k^[h]s-. հմմտ. խեթ. *kišai*-«սանրել», հւլավ. *češó* «քորում եմ», հուն. *ξάινω* «քորում եմ. սանրում եմ» (*Гамкредидзе, Иванов, 1984, էջ 156*): Աճառյանը համարում է

«անստույգ բառ», *Ջահուկյանը* գրում է՝ «ծագումն անհայտ է» (*Աճառեան*, 1979, էջ 580. *Ջահուկյան*, 2010, էջ 783):

Եզրակացություններ

ա) Հնդեվրոպական լեզուների արմատի կատուցվածքի վերաբերյալ առաջարկվող նոր սխեմաները, ըստ դրանց՝ ծայնավորման աստիճանների առանձնացումը հնարավորություն են ստեղծում հայերենի համապատասխան նյութի ավելի լայն ընդգրկում համեմատությունների մեջ:

բ) Կարելի է պատկերացում ունենալ, թե բաղադրիչների անցումների հնչյունական կողմը չի համապատասխանում եղածին, դա, իրոք, այդպիսին է, որովհետև պիտի սահմանվեն անցումների նոր օրենքներ, զուգահեռ կամ ի լրումն մինչև այժմ եղածների:

գ) Ոչ միայն գրավոր վիճակով մեզ հասած, այլև բարբառային (բանավոր) շատ բառերի (նյութի) ավելի լայն ընդգրկումով քննությունը հիմնավոր է դարձնում հայերենի ցեղակցային կապերի բնույթը, ինչպես նաև ժամանակային ընդգրկման մեջ հնարավոր հնության արձանագրումը, և դա կարող է հեռանկարային լինել:

2. Հայերենի տվյալների կարևորությունը հնդեվրոպասեմական առնչությունների ուսումնասիրության մեջ

Լեզուների միջընտանիքային առնչությունների հարցը առաջ է քաշվել XIX դ. 2-րդ կեսին (տե՛ս *Meïe*, 1939. *Kuny*, 1943, էջ V-VII): Նման համեմատությունների համար լեզուներում այսօր հայտնի է ցեղակցական (ծագումով նույնական) մի քանի հարյուրից ավելի ձևույթ (պարզ, արմատական և ածանցական), թեև կան նաև աշխատանքներ, որոնցում այդ թիվն անհամեմատ մեծացված է⁵:

Ընդունված է տարբերել արևելանոստրատիկ (ուրալյան, դրավիդյան, այթայան) և արևմտան (աֆրասիական, հնդեվրոպական՝ հին պատկերացմամբ, և քարթվելական), որի հիմքում ընկած է, օրինակ, ընդհանուր նոստրատիկ ձայնավորական համակարգը, այն է՝ արևմտյանը վերածել է արմատի ձայնդարձի (աբլաուտի), իսկ մյուսը պահել է սկզբնական ձայնավորումը (վոկալիզմը): Մենք կառանձնացնեինք, այսպես կոչված, կենտրոնական կամ հարավնոստրատիկ (ծագումնային առումով հայտնի հնդեվրոպական և քարթվելական, ինչպես նաև ծագումնային հատկանիշով ոչ լիովին բացահայտված խուռարարտական, այլև խաթական՝ «նախախեթական» և այլն) (հմմտ. ԵՅՇ, 1998, էջ 338-339):

Այսպես, օրինակ, հանրաձանոթ ընդհանուր նոստրատիկ «կառուցել, կերտել, շինել, անել» տարբերակային իմաստի հա-

⁵ Նկատենք, որ քանակային մեծությունն այս դեպքում ևս զիջում է որակական ապացուցողականությանը:

մեմատության մեջ կարելի է ընդգրկել հայ. *կերպել*, այլև *քերել* (*քերթել*, *քորել*), եթե ոչ նաև *կարել*, *գրել* և այլն բայ(արմատն)երը, որոնք էլ հետնալեզվային խոլ (եթե ոչ «ծայնածերպային») k-ով առնչվում են արևելանոստրատիկին բնորոշ եռակի հետնալեզվայինների, ավանդաբար՝ սովորական (քմային) (*k), շրթնաքմային (*k'), հետնաքմային (*k^u) բաղաձայնների տեսությանը, ըստ որի, օրինակ, մի կողմից՝ հե. *k^uer- «անել, շինել», մյուս կողմից՝ ուրալ. kurA- / korA- «հյուսել, գործել», ալթայ. kurA- «սարքել, հարմարեցնել» (ն. տ., էջ 339): Նման առանձնացումը հավասարապես տարածվում է ոչ միայն պայթականների, այլև կոկորդայինների (լարինգալների) և սուլական ձայնորդների վրա. հմմտ. հե. k^oern «աղաց» - սեմ. gurn - «կալ, կալատեղ», ըստ այդմ ուգար. grn «կալատեղ. Դատաստան», ակկադ. maḫ/grattu «դատաստան, պատժարան», արաբ. ḡarana «աղալ, մանրել», gurn- «կալատեղ», բրբռ. «հավանգ, սանդ» և այլն (*Иллу-Свитыч*, 1964, էջ 5. *Гамкрелидзе, Иванов*, 1984, էջ 693, 873): Նույն և հաջորդ էջում Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը գրում են. «Փոխառությունները սեմականից հնդեվրոպականում, այլ ոչ թե հակառակը, կարելի է հաստատել սեմականում հիմքի պատճառաբանվածությամբ (մոտիվավորվածությամբ), որում անվանականի հետ կա նաև բայական ձև» (ն. տ., էջ 873-874): Այս փաստարկը խախտու է, քանի որ, օրինակ, բայական նման կազմություն նույն հիմքից ունենք նաև հայերենում՝ ի դեմս (բրբռ.՝ Մուշ, Ալշ., Մկս., Ուրմ. և այլն) *սոնել* «(հատիկը երկանքով) խոշոր աղալ» հե. ծագման բայի (տե՛ս ՀԼԲԲ, 2008, էջ 387):

Վերը նշվեց, որ միջընտանիքային ուսումնասիրությունները նոր չեն, այլ գալիս են նախանցյալ դարի կեսերից, և դրանց

պատմությունը անցել է ծավալման երեք փուլ՝ 1)լեզուների բնույթի և կառուցվածքի մասին հիմնական նյութի կամ փաստերի հավաքման և միջընտանիքային երկյակ համեմատության (Վ. Շոտ, Մ. Ա. Կաստրին՝ ուրալալթայան, Գ. Մյոլեր, Ա. Կյունի՝ հնդեվրոպասեմական, Ֆ. Բոպ՝ հնդեվրոպաքարթվեական), 2) անցյալ դ. առաջին կես, ավելի մեծ չափով համեմատվող նյութի ընդգրկում, այթայան լեզուների լավ ուսումնասիրվածություն, հնարավոր վերականգնումներ (Բ. Կոլինդեր՝ ուրալահնդեվրոպական, Օ. Սովաժո, Ա. Մ. Օ. Ռյասյանեն՝ ուրալալթայան լեզուներ, Հ. Պեդերսեն՝ բոլոր հայտնի և հնարավոր լեզուների համեմատություն. 1903 թ.) (ն. տ.), 3) անցյալ դ. երկրորդ կեսից առ այսօր (նոստրատիկ նախալեզվի վերականգնման փորձ. Վ. Մ. Իլիչ-Սվիտիչ, Ա. Դուգուպոլսկի, մասամբ՝ Գ. Ջահուկյան, Ա. Բոմխարդ և ուրիշներ) (*Иллюч-Свитыч*, 1971-1991):

Նախահայրենիքի առաջավորասիական տարածքի վրա լինելու մասին դրույթը (ոչ անկախ Գ. Ղափանցյանից, թեև այդ մասին չի նշվում) կա Գ. Ջահուկյանի «Очерки по истории дописьменного периода армянского языка» գրքում (1964 թ., տպագրված 1967 թ.) (հմմտ. *Feist*, 1913. *նույնի՝* 1937, նաև 1939. *Latham*, 1982): Գ. Ջահուկյանը ժամանակին, թերևս ոչ այնքան ընդարձակ և վերլուծաբար, այլ լոկ վարկածի ձևով, հարցը առաջ է քաշում երեք դրույթի տեսքով: Դրանք բերվում են նաև հետագայում, հեղինակի մյուս՝ «Հայոց լեզվի պատմություն» (Ե., 1987 թ.) գրքում, որոնցից երրորդը հետևյալն է. «Հնդեվրոպացիների ցեղակցական կապերը սեմիտների, այլև քարթվեական, թյուրքական ժողովուրդների հետ, այդ կապերը ժխտելու դեպքում էլ նրանց միջև նախնական շփումների ու փոփոխությունների ժխտման անհնարինությունը, ենթադրել է տալիս, որ

(հետագա մեջբերումը «Очеки»-ից) «հնդեվրոպացիները մի ժամանակ բնակվել են այն տերիտորիայում, որ սահմանակից է եղել սեմական ցեղերի կողմից բնակեցված տարածությանը» (Ջահուկյան, 1987, էջ 75. Джаукян, 1967, էջ 38)⁶:

Մեկ անգամ ևս դիմենք այս վարկածին, որ առաջ է քաշել Գ. Ջահուկյանը, և դա նախորդի և մյուս երկուսի համար մի տեսակ եզրակացություն է հիշեցնում. «Իբրև ընդհանուր եզրակացություն կարելի է ասել, որ մենք գործ ունենք հնդեվրոպացիների բնակության երկու հնարավոր վայրերի՝ 1) նախնական, երբ նրանք նոր էին բաժանվել նոստրատիկ ընդհանրությունից կամ, եթե նոստրատիկ վարկածը ժխտվում է, շփման մեջ էին սեմական. քարթվելական և այլ ժողովուրդների հետ, և 2) ավելի ուշ, երբ նրանք գտնվում էին ինտենսիվ տրոհման՝ հնդեվրոպական ժողովուրդների առանձնացման նախօրյակին: Առաջին շրջանի համար հավանական է հնդեվրոպացիների՝ Ասիայում (իմա՝ Առաջավոր Ասիայում- Վ. Հ.) գտնվելու, երկրորդ դեպքում՝ Եվրոպայում գտնվելու վարկածը: Դժվարություն է հարուցում միայն այն հարցը, թե հայերը, խեթերը, արիացիները բաժանվել են արդյոք հենց Ասիայում (իմա՝ Առաջավոր Ասիայում- Վ. Հ.) եղած ժամանակ և Եվրոպայում ընդհանրապես չեն եղել, թե նրանք (հատկապես հայերն ու արիացիները) եղել են Եվրոպայում, ապա վերադարձել Ասիա (իմա՝ Առաջավոր Ասիա- Վ.

⁶ Իբրև ընթացիկ մեկնաբանություն՝ նշենք, որ 1964 թ., առաջ քաշված գիտական, տվյալ դեպքում՝ ընդհանուր հնդեվրոպաբանական-համեմատական այս առաջավոր գաղափարը գալիս էր, անշուշտ, համալրելու, օրինակ. Իլիչ-Սվիտիչի այդ նույն տարում արդեն լույս տեսած աշխատություններում մշակվող տեսության հեռանկարային լինելը:

Հ.), ընդ որում հայերը՝ հենց իրենց բնակության սկզբնական վայրերը» (Ն. Կ.):

Ջահուկյանի գրքում նշվում է, որ սեմականից հնդեվրոպականին է անցել 24 բառ, որից 12-ը առկա է հայերենում: Դրանք են՝ *կով*, *արտ*, *ցախ*, *անդ* «հանդ, դաշտ», *դոն* «(մի տեսակ) հաց, պաքսիմատ՝ չոր հաց», *երկան(ք)*, *զինի* (ըստ իս՝ հմմտ. *այգի* «որթատունկի՝ խաղողի այգի»), *դուռն*, *նալ*, *տալ*, *աստղ*, *այս* «քամի» (Ն. Կ., էջ 450):

Գամկրելիձեն և Իվանովը, իրենց հերթին, առանձնացնում են սեմականից և շումերականից փոխառյալ 16 արմատ. *t^[h]auro- «վայրի ցուլ», *g^[h]alt'- «ուլ, այծ», *ag^[h]ono- «գառն(ուկ)», *q^[h]e/op^[h]- «կապիկ», *b^[h]ar(s)- «(հացա)հատիկ, ձավար», *d^[h]oHnā- «(հացա)հատիկ, հաց», *Hand^[h]- «(ուտելի) բույս», *k^oern- «աղաց, երկան», *med^[h]u- «մեղր, մեղրահյութ», *p^[h]elek^[h]u- «տապար, սակր. կացին», *sek^[h]ur- «կացին. սակր», *K^[h]laHu- «կողպեք. բանալի», *naHu- «նավ, աման», *k^[h]or(e)ı- «գնել. վաճառել», *t'ap^[h]- «զոհաբերություն», *Hast^[h]er- «աստղ», *sep^[h]t^[h]m «եթն (յոթ)», որոնցից մի քանիսն արդեն առանձնացրել էին նախորդ ուսումնասիրողները (Մյուլեր, Իլիչ-Սվիտիչ և ուրիշներ): Հեղինակներն այս համեմատության մեջ հայերենից բերում են միայն մեկ զուգադիպում՝ *Hand^[h]- «(ուտելի) բույս» > հայ. *(h)անդ* «դաշտ, հանդ», որը կարծում ենք իմաստի տեսանկյունից ավելի անբասիր չէ, քան եթե համեմատեին հայ. *(h)ունդ* «(ուտելի) հատիկ. ընդեղեն» միավորի հետ:

Մենք նոր վարկած ենք առաջ քաշում՝ ըստ հետևյալ հիմունքների:

1) Արդյո՞ք չի կարելի մտածել, որ հնդեվրոպականից են անցել նախորդ ուսումնասիրողների կողմից բերված զուգահեռ-

ները, որ, ասենք, 24-ն են, և որոնցից 12-ը կա հայերենում, այլ մյուսները (իմա՛ վերը թվարկվածը):

2) Հնդեվրոպականից սեմական լեզուներին են անցել թերևս ավելի մեծ թվով բառեր, սակայն ոչ այն չափով, որ ստանում է հախումն քննության տեսք. դա հիմնավորվում է հայերենի նորագույն տվյալներով, եթե ավելի լայն ընդգրկմամբ ենք անդրադառնում հնարավոր և համեմատաբար հավանական, ապացուցողական մեծ ուժ ունեցող տվյալներին (մեր տվյալներից, օրինակ, մի քանիսը, որ այստեղ բերելու ենք՝ *ար(ծ/տ), բար-իք//բեր-ք* և այլն):

3) Սահմանվում են հնչյունական օրենքներ, որոնք հիմք են հանդիսանում անցկացնելու միջլեզվաընտանիքային առնչությունների ժամանակագրություն:

4) Ի տարբերություն նախկինում ասվածի՝ թերևս անցում հնդեվրոպականից սեմականին, որ կարելի է դիտել հատուկ քննության առարկա՝ հայերենի և այլ լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրության հեռանկարում:

Բերենք մեր տվյալներից հետևյալ 10-ը (մեկ-երկուսը՝ հմմտ. Գ. Զահուկյան և ուրիշներ):

1. Հայ. (բրբռ.) (*h*)*աստղ* «աստղ» < հե. *Hast^[h]er- «աստղ», խեթ. *hašter-* «աստղ», սանս. *t'raṣ* (նույնը), արվեստ. *stərəbyō* (նույնը), հուն. *ἀστήρ*, կոռն. *sterenn* և այլն - սեմ. *'at̄tar-* «աստվածացված աստղ», «Վեներա», ակկադ. *Ištar* «Իշտար (աստվածուհի)», փյունիկ. *'štri* «Աստարտա (աստվածուհի)», հիբ. *'aštōrett*, արամ. *'štri* և այլն (*Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 685-686, 875*):

2. Հայ. *արծ/տ* < հե **ak'ro-* // **Hak'ro-* «անմշակ դաշտ. արոտավայր», հմմտ. հինդկ. *ájrāh* «դաշտ», հուն. *ἀγρος* «դաշտ,

արոտավայր», լատ. agēr «հող. դաշտ», գոթ. akrs «դաշտ» - շում. agar (= a-gār) «մշակովի տարածք. հասկ». հմմտ. նաև հայ. (բրբռ.) *հարոս* «չվարած՝ անմշակ դաշտ» (*Ն. Կ.*, էջ 694)⁷:

3. Հայ. *բար-իք* // *բեր-ք* < հե. *b^[h]ar(s)- «հացահատիկ. ծավար» - սեմ. *burr- // *barr- «դաշտ. ծավար», հիբ. dar «ծավար», արաբ. burr- «հացահատիկ»⁸: Եթե սա ընդունելի է, ապա վերականգնվող ձևի արտացոլումները միայն հին հնդեվրոպական բարբառներին հատուկ լինելը դառնում է վերանայելի (*Ն. Կ.*, էջ 872-873):

4. Հայ. (բրբռ.) *դոնիկ* «մի տեսակ հաց. բոքոն» (?) < հե. *d^[h]oHnā- «հացահատիկ. հաց», հինդկ. dhānā «հացաբույսեր», պրսկ. dāna «ցորեն, կորեկ», լիտվ. dūona «հաց», թոխ. B tāno «ցորեն» - սեմ. duḥn- «կորեկ, ակկադ. duḥna, հիբ. dōḥan, արամ. dōḥina, արաբ. duḥn- և այլն (տե՛ս *Ն. Կ.*, էջ 873):

5. Հայ. *դոուն* < հե. *d^[h]uer- // *d^[h]ur- «բակ. դուռ», հինդկ. dvār- «դուռ», dwāwah «դարպաս», արվեստ. (եզ. հայց. հոլ.) dvarom «դարպասները», հուն. θύρα «դուռ», լատ. forēs «դռներ» լիտվ. duris (նույնը), հսլավ. dvīri «դուռ», ռուս. дверь (նույնը) - շում. tūr «բակ, փարախ. դուռ» (տե՛ս *Ն. Կ.*, էջ 134, 217, 224):

6. Հայ. *ընկեր* (< **ըն-կար*) (< հե. *k^[h]or(e)₁ - «գնել, առևտուր անել» - սեմ. *k-r-j «առևտուր անել», հիբ. kārā (նույնը), kīrā «գնելը, գնում». արաբ. k-r-j «վարձով տալ» և այլն. հմմտ. (բրբռ.՝

⁷ Ըստ Զահուկյանի՝ *արաս* «փոպան, կորդ հող». «թերևս բնիկ հնդեվրոպական trōuk «կոշտ, կարծր, պինդ» արմատից, որն անհավանական է՝ հնչյունական անցումների առումով (տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 85):

⁸ Հմմտ. *բար(իք)*. «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ *բարն* եմ սիրում» (Ե. Չարեց):

փոխառ.) *չար-չի* «(շրջիկ) մանրավաճառ», *քրէ(հ)* «վճար, գին տալ» (հմմտ. *ն. փ.*, 1984, 2, էջ 110. այլև՝ 1984, էջ 875):

7. Հայ. *(հ)անդ* «դաշտ, արտ» < հե. *Hand^[h]- «ուտելի բույս». հմմտ. հուն. ἄνθος «ծաղիկ», ἄνθινον. εἶδος «բուսական ուտելիք» - սեմ. *hinc-(at-) «ցորեն», «հացաբույսեր», հմմտ. ուգար. ከצת «ցորեն», ակկադ. (բար.) uttetu «գարու հատ» և այլն (*ն. փ.*, էջ 873):

8. Հայ. *փաւ(ն)* «տոն» < հե. *t'ap[h] «զոհաբերում. ծիսական ուտելիք՝ աստվածներին մատուցվող», հմմտ. խեթ. ^{LU}tappala «պալատական խնջույքի խոհանոցն ապահովող», լատ. daps «խնջույքի՝ ծիսական ուտեստ», թոխ. tāpal «ուտելի(ք), tāp «ուտել» և այլն - սեմ. *-dba- «զոհաբերել», «զոհ», ակկադ. zibu «զոհ», ուգար. db- «զոհաբերում», dbh «զոհասեղան», հիբ. zebah «զոհաբերման կենդանի, արար. ḏabahā «զոհաբերել», ḏibh «զոհ», ասոր. debhō «զոհաբերում», հմմտ. (ըստ իս) մյուս կողմից՝ հայ. *փապ(ալ)-ել* «զոհել, զգեստնել». հմմտ. թոխ. A tāpal, այլև հայ. *փապ(ակ)-ել* «իր յուզով խորովել» (?) (հմմտ. *ն. փ.*, 1984, 2, էջ 110, այլև 1984, էջ 875):

9. Հայ. *փուար* «տավար» < հե. *t^[h]awro- «վայրի ցուլ», սեմ. tawr- «ցուլ. եզ», ակկադ. šūru, ուգար. tr, հիբ. šōr, ասոր. tawrā, արար. tawr- և այլն⁹:

10. Հայ. *փեղկ* «փեղկ. ստորոտ» < հե. *p^[h]elek^[h]u- «կացին, տապար», սեմ. *p-l-k. «կտրատել, կտրել, տաշել». «կացին», ակկադ. pilakku «կացին», pullukku «սպանել (կացնով)», «կտրատել», ասոր. pelkā «կացին», մանդ. pīlkā «կացին», արար. falakka

⁹ Ավանդաբար՝ հայ. *փուար* < հե. *dipəro- (*dipro) «արջառ, զահաբերվող կենդանի» (Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 734):

«ճղատել, կոտորել», հմմտ. հայ. *փղծուկ* (<*փղծ-ուկ*) «(կսկիծի) պոռթկում, հեծկլտոց» < հե. *p^[h]eɛk^[h]u- և այլն¹⁰:

Այսպիսով, հայերենի (գրական կամ բարբառային) տվյալները կարևոր են լեզուների միջընտանիքային (տվյալ դեպքում՝ հնդեվրոպասեմական) շփումների (առնչությունների) հարցի ավելի լայն ընդգրկմամբ ուսումնասիրության համար, մասնավորաբար հայերենի նախագրային շրջանի պատմության տեսանկյունից:

¹⁰ Ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ» («Հայերեն արմատական բառարան», հ. 4. Ե., 1979, էջ 506): Ավանդաբար *փեղկ* < հե. *sphelg- [*spelg-] (*spel-, *phel-) «ճեղքել, պատռել»: Ըստ Ջահուկյանի՝ *փուղծ* կամ *փուղծ* արմատից *-ուկ* ածանցով (տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 261, 765: Հմմտ. Թ. Բ. Գամրելիձե, *Вяч. Вс. Иванов*, նշվ. աշխ., էջ 109-110):

3. Հնչյունական և բառաքերականական զուգահիստայումների համեմատական- տիպաբանական քննություն

Ներածություն

Հին գրավոր մշակույթի պատմության, աղբյուրագիտության վերաբերյալ նորագույն տվյալները թույլ են տալիս առաջավորասիական որոշ լեզուների առնչություններին, եղած նյութին անդրադառնալ նոր հայեցակետից՝ կատարելով նաև որոշ լրացումներ և ճշգրտումներ, որպիսով ըստ հնարավորին կարող են ավելի ամբողջական լինել այդ լեզուների և դրանց կրողների պատմության վերաբերյալ գիտական պատկերացումները:

Հայերենի և խուռաուրարտական լեզուների առնչությունները ոչ միայն մեկ լեզվաընտանիքի ներսում (ինքնակա), այլև տարբեր լեզվաընտանիքների միջև (միջընտանիքային) քննության հարցեր են առաջ բերում, որոնց լուծումը, մանավանդ համեմատությունից դուրս մնացած տվյալների օգտագործմամբ, շարունակում է լինել հնդեվրոպաբանության ուշադրության ոլորտում: Այդ առնչություններին անդրադարձած հիմնական աշխատանքները կատարվել են 1960-1980-ական թթ.: Եթե մի դեպքում փաստական նյութը խիստ սուղ է (ըստ հայտնի արձանագրությունների՝ մի քանի հարյուրի սահմաններում), ապա հայերենի դեպքում այն կարելի է լրացնել գրավոր հուշարձանների ավելի մանրամասն, այլև հին և ներկայիս բարբառների տվյալներով¹¹:

¹¹ Մ. Լ. Իսաչիկյանի գրքում, օրինակ, խուռերեն բառերի և ձևույթների թիվը, մեր հաշվումներով, 580-ն է, իսկ ուրարտերենինը՝ ավելի պակաս (տե՛ս *Хачикян*, 1985, էջ 150-177):

Ըստ այդմ՝ ստորև անդրադառնում ենք այդ առնչություններին վերաբերող հնչյունական, բառային և այլ կարգի մասնակի զուգադիպումների՝ ժամանակակից հնդեվրոպաբանության պատկերացումների (կոնտինուումի) շրջանակում:

Ելակետային է նաև այն, որ ի տարբերություն հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջանի համար առաջարկված շրջանաբաժանման՝ մեր ձեռագիր աշխատանքներից մեկում փորձել ենք տարբերել նույն ժամանակաշրջանի հաջորդական երեք շրջան՝ ընդհանուր հնդեվրոպական (հնդեվրոպական միասնության կամ համահնդեվրոպական) շրջանին (մ. թ. ա. IX - III հզր.) հաջորդող, որոնցից երկրորդը կոչվում է հայխուռաուրարտական փոխազդեցության շրջան (մ. թ. ա. II հզր. երկրորդ կես - մ. թ. ա. I հզր. առաջին երեք քառորդ):

1. Հնչյունական զուգադիպումներ

Մինչև այժմ հայտնի աշխատություններում հայերենի և խուռաուրարտական լեզուների առնչությունների հարցը քննվել է հնչյունական անցումների սահմանման, բառային զուգադիպումների անցկացման մեթոդիկայի կիրառմամբ՝ շեշտը գրեթե բացառապես դնելով ստուգաբանական վերականգնման փոխարեն զուգաբանական նկարագրման վրա: Այնինչ ներկայումս առաջնային է այդ առնչությունների պատմամշակութային, լեզվական-համեմատական քննությունը՝ պայմանավորված այդ լեզուները կրողների պետական կազմավորումների, իրավական-տնտեսական շփումների հանգամանքներով: Տեսական այս դրույթի մեթոդական հիմքը, կարծում ենք, ստուգաբանական վերականգնումն է:

Այսպես, բերվում են համեմատություններ հնդեվրոպական (հե.) հիմք-լեզվի և ուրարտերենի միջև, որոնց կից դրվում է հայերեն հնարավոր համարվող ձևը՝ առանց հնչյունական անցումների ընդհանուր կարգի հաստատման. 1) ոչ ռնգային ծայնորդը բաղաձայնից առաջ և բառավերջում ուրարտերենում կարող է ընկնել, սակայն չի նշվում, որ հայերենում նաև պահպանվում է. հմմտ. հե. *andh- «դուրս ելնել, ծաղկել» > ուրարտ. a(n)dani «մարզ» (?). «դաշտ», հայ. *հանդ* «դաշտ. արտ» (տե՛ս *Джаукян*, 1959, էջ 34-35). 2) գտնում են, որ հե. *m ծայնորդը, իբրև բաղաձայն կամ երկբարբառի բաղադրիչ, ուրարտերենում և հայերենում պահպանվում է, սակայն կարելի է բերել օրինակ, որ հայերենում սղվում է. հմմտ. ուրարտ. armuzi «ընտանիք»(?) - հայ. (*q*)արմ, արմ-ապ և այլն. հմմտ. *տռ-ք* «եռալը. քոր, բորբոքում» և այլն (*ն. փ.*, էջ 33). 3) բառամիջի (նաև բառասկզբի) դիրքում բարբառներում միջին բարձրացման *ե-ն* վերաձվում է *յե-ի*, նաև *ո-ն՝ ուե-ի*, որը բավականին հին երևույթ է (հմմտ. eriec «երեք», eriesc «երեսք», uluec «ուլոք / ոլոգ». Ձեռագիր, X դ.), հմմտ. հե. eg'(o)- > ուրարտ. ie-še (-še-ն համարվում է էրգատիվ հոլովի վերջավորություն [?]), հայ. (գրական) *ես* «անձն. դեր, 1-ին դ.» (տե՛ս *ն. փ.*, էջ 31)¹² :

Բերենք մի քանի նոր դիտարկում՝ նկատելի հնչյունական մակարդակում¹³.

ա) ուրարտ. ia - հայ. *ա* [ä]. հմմտ. Biainili «Ուրարտու, ուրարտացի» - հայ. *Վան* [**Վիաին* (< **Բիաինա*, **բիաինացի*).

¹² Նշվում է միայն նոր գրականում (բայց ոչ՝ նոր բարբառներում) *յես* հնչման մասին. հմմտ. *յես* [Ալշ., Ախց., Երև., Ղրբ., Մշ., Տիգ., Հմշ. և այլն], *յես* [Վն.], *յես* [Ջղ.], *յիս* [Մրդ., Տփ.]:

¹³ Հարցի ավելի լայն քննարկումը հետագայի խնդիր է:

*Vian] (հե. *bheu- «աճել. ապրել». հմմտ. այբ. banē «բնակարան. ապրելու տեղ»). այս օրինակում զուգադրելի է ուրարտ. ia -Վանի բարբառի քմային ձայնավոր [ä] հարաբերակցությունը՝ անկախ ժամանակային հեռավորությունից.

բ) ուրարտ. b - հայ. բ [b]. հմմտ. ուրարտ.. badusi/e «մեծ (?), հսկայական (?)» - հայ. բարոց «(բանջարանոցում) մեծ թումբ՝ ջրի դեմն առնելու համար» (հե. *bhad «լավ»). նման անցում նշվում է բառասկզբի դիրքի համար (b > p-ին զուգահեռ), սակայն առանց օրինակի (*Джаукян*, 1959, էջ 16).

գ) ուրարտ. u - հայ. ո (երկար՝ երկբարբառային հնչումով, *ոու) [նախագր. հայ. *օ (?)]. հմմտ. Tušpa- [< *Tušpa-i]- *Տոսպ* [< *Տոուշպա-յ (սեռ. հոլ.)] (տեղանուն) [< հե. * օւ- (?)].

դ) ուրարտ. au - հայ. աւ. հմմտ. ուրարտ. bauše «խոսք. հրաման» - հայ. բան «բառ, խոսք. իր, առարկա» (*Джаукян*, 1967, էջ 18). այստեղ նկատի ունենք նաև՝ հայ. գրաւանուկ «զբոսնել» (նխն. «խոսքի բռնվել. զրուցել» (?)) (հե. bhā- «խոսել, ասել». հմմտ. լատ. ambulō «զբոսնել»).

ե) ուրարտ. ia - հայ. ա. հմմտ. ուրարտ. diau(e)ḫi - հայ. *Տայք* (հմմտ. ասուր. Daiaeni // Daiani. մ. թ. ա. XII-IX դդ.) (հմմտ. ն. տ., էջ 19. *Джаукян*, 1959, էջ 16. *Ջահուկյան*, 1987, էջ 430-431)¹⁴ :

զ) ուրարտ. d - հայ. դ/ւր. հմմտ. ուրարտ. za-d «անել, կատարել, ստեղծել, կառուցել», նաև d- «անել», zaduše «կատարելը. կատարում»(?) - հայ. (բրբռ.) զադ (*զաւր*) (Չրմ., Վն.) «արված մի բան՝ իր և այլն» (հե. dhē-) և այլն.

¹⁴ Ջահուկյանի աղյուսակում երկհնչյուններին վերաբերող զուգադրում չկա:

է) ուրարտ. Տ - հայ. տ. ուրարտ. šiwino «(արևի) աստված» - տի «օր, ցերեկ լույս» (< հե. * t'iu-) և այլն (*Хачукян*, 1985, էջ 48. հմմտ. *Համբարձումյան*, 2002):

2. Բառային զուգադիպումներ

Ջուգադիպում տերմինով ավանդաբար արտահայտվել է տարբեր լեզուների (նաև նույն լեզվի առանձին վիճակների՝ ժամանակային, տարածքային և այլն) լծորդում՝ ցույց տալու նրանց առավելապես հնչյունական, քան իմաստային մերձակցությունը («մոտ լինելը»)։ Խնդիրը մնում է նման միավորների ծագումնալին-մշակութային, ինչպես նաև տիպաբանական առնչության վերհանման, վերջինիս հավաստիության շեմի ապահովման մեջ։

Ըստ այսմ՝ ստորև անդրադառնում ենք մի քանի օրինակի¹⁵։

ա) *Խաղտիք* (*խաղ-տի-ք*) «տեղանուն. տարածք (իմաստի նեղացմամբ, կամ՝ հակառակը)» - [ուրարտ. *ḫaldi* - *խալդի* (*խալդ*) 1. «դիցանուն». 2. «ցեղանուն» (ուրարտացի) (էպոնիմ). 2. «երկիր» (?)]. որքան էլ նման համեմատությունը տարակուսելի կամ նույնիսկ անընդունելի լինի, այն հնչյունական անցումների տեսանկյունից միանգամայն անառարկելի է, թեև առայժմ կարելի է ձեռնպահ մնալ հե. ձևի վերականգնման հարցում (< հե. ?) (*Меликушвили*, 1960, էջ 427. *Мещанинов*, 1978. *Հմայակյան*, 1990, էջ 33-38)։

բ) *Հարի* «մինչև» (բրբռ.՝ Կր., Մշ., Սս. Խտջ.) - ուրարտ. *pari(e)* «մինչև». հայերենում հե. *p > հայ. *h* անցումը տեղի է ունենում ավելի վաղ, քան մինչև իրանական փոխառությունների

¹⁵ Նման օրինակների մեջբերումը կա՛մ նոր է, կա՛մ նախկինում եղածի, այսպես կոչված, լրացումային առաջադրում է։

ժամանակը՝ վերջինում: Բառը չունի Աճառյանի բառարանը, Ջահուկյանը իր աշխատություններում չի անդրադառնում հայ. *հարի* արմատին, և այդ ամենը, թերևս բառի ոչ գրական լինելու (գրավոր աղբյուրներում ավանդված չլինելու) պատճառով:

գ) *Հերհեր* - ուրարտ. *h̄arh̄ar-š* «քանդել, ավերել». այստեղ, թերևս, նաև *քրքիր* «փխրուն», որից՝ *քրքրել*. *հեղաքրքիր* և այլն. Ջահուկյանի բերած *խարխար-եմ*, *խարխուլ* և այլն ձևերը, նաև մեր այս ավելացրածը վկայում են, որ պարզ արմատն է ուրարտ. *h̄ar-*, որից ենթադրելի է հայ. **քիր*- [**ք(հ)ր-քիր*] արմատ:

դ) *խուբա* (*խուբ-ա*) «(անմշակ՝ հանգստանալու համար մնացած) դաշտ. տարածք» բառը ունենք նոր բարբառներից մի քանիսում (Ալշ., Մուշ, Սս. և այլն). թվում է, որ այն կարելի է համեմատել ուրարտ. *h̄ub̄i* «հովիտ. դաշտ» բառի հետ՝ ի լրացումն մինչև այժմ եղած տվյալների. հմմտ. նաև հայ. (բրբռ.) *խորուն* «հանդամաս. ձորամիջյան դաշտ» (Ալշ., Մշ., տե՛ս Մ. Գալշոյան, «Բովտուն»):

Այդ բառն ունի եր. Մեղրեցին՝ հետևյալ ձևով. «գուբբայ - հող» (հմմտ. *գաբուրայ* «հող») (ԲՀ, 1975, էջ 60, 70, նաև 357): Աճառյանը չունի *խուբա*, այլ բերում է Մեղրեցու օրինակը՝ *գուբբայ* «հող» (*Աճառեան*, 1971, էջ 586): Մենք հակված ենք կարծելու, որ այն ծագումով առնչվում է հայ. *հովիր* (< *հով-իր*) բառին:

Ջահուկյանը ժամանակին, ինչպես որ Ղափանցյանը, անդրադառնում է ուրարտ. *h̄ub̄i* (հարցականով՝ «հովիտ», նաև «գավառ». «տարածք») բառին. բառի այդ իմաստի առանձնացմանը թերահավատ են նաև այլ ուսումնասիրողներ (*Мецаганинов*, 1978, էջ 130-131. *Хачукян*, 1985, էջ 117): Ջահուկյանը նախ՝ գտնում է, որ «Հայերենը չի պահպանել նաև *հովիր* բառի համար

հնդեվրոպական որևէ անվանում, եթե *գոգ* բառին չվերագրենք նախնական այդպիսի անվանում» (Ջահուկյան, 1987, 258): Այնուհետև՝ այս և նման մի խումբ բառերի վերաբերյալ Ջահուկյանը գրում է. «Իբրև երկրորդ բաղադրիչներ կարող են ծառայել ... նաև ոչ հնդեվրոպական *ազարակ, աշխարհ ... հովիտ, քաղաք* բառերը,,», այդպես նաև՝ «*հսբի - հովիտ*»: «*հ*-ն արտահայտել է հիմնականում *խ. հսբի - հովիտ* համապատասխանությունը կարող է ուղղակի ուրարտահայկական չլինել (հմմտ. հայ. հավելուրդային *-տ*-ն, որի բնույթը պարզ չէ)». այլև՝ «... քիչ հնարավոր է, որ հայ. *հովիտ*-ը անմիջական փոխառություն լինի ուրարտերեն *հսբի «հովիտ» («շրջան» (?)* բառից, և պետք է ենթադրել մի երրորդ աղբյուր». «Եթե հայ. *հովիտ*-ը իրոք կապ ունի ուրարտ. *հսբի* -ի հետ, ապա հայերենի *հովիտ* բաղադրիչով տեղանունները (հատկապես գավառանունները) պետք է հիմնականում ուրարտ. շրջանից գան և մասամբ ուրարտ. ծագում ունենան. հմմտ. Վասպուրականում՝ *Աղի-հովիտ, Արծիշակովիտ, Կոգ-ովիտ, Կուղան-ովիտ*, Այրարատում՝ *Կոգ-ովիտ, Մոկքում՝ Արգասստ-ովիտ, Ծոփքում (Չորրորդ Հայք)՝ Բայա-հովիտ*»¹⁶: Իսկ հետագայում՝ հեղինակի բառարանում նշվում է, որ «*հովիտ (ովիտ)*՝ ձոր, հովիտ, խոռոչ»: Ծագումն անհայտ է: Թերևս ենթաշերտային բառ» (Ջահուկյան, , 2010, էջ 466)¹⁷: Ոչ միայն նման երկվությունը, այլև բառի բառակազմական-իմաստաբանական լայն ընդգրկումը, մանավանդ հե. վերականգնելի արմատի հետ կապ տեսնելը հիմք են հանդիսանում ուրարտ. *հսբի* ձևի առնչությունը հայերենի միջոցով հնդեվրոպական նա-

¹⁶ Այս և նախորդ մեջբերումները տե՛ս *ն. տ.*, էջ 413, 430-431, 434, 442-443:

¹⁷ Գ. Ա. Ղափանցյանը ժամանակին անդրադառնում է ուրարտ. *հսբի* (հարցականով՝ «հովիտ», նաև «գավառ«. «տարածք») բառին:

խաձևին. (առայժմ կարելի է ձեռնպահ մնալ հե. որևէ արմատի նշանակումից)¹⁸:

ե) Հայ. *սան* «աման. կաթսա» - ուրարտ. šani «աման». այս զուգադրությունը տալիս է Ղափանցյանը, այնուհետև Ջահուկյանը բերում է ոչ բնիկ, փոխառյալ [< ակկադ. šannu(m) «մետաղյա աման կամ գավաթ»] բառերի ցանկում (*Ղափանցյան*, 1961, էջ 43. *Ջահուկյան*, 1987, էջ 262, 466): Այսուհանդերձ, կարելի է կարծել, որ այն բնիկ է, ծագում է հե. *sem-ո «շերտփով» հանել՝ վերցնել», հայերենի բառապաշարից անցած ուրարտական արձանագրություններին (*Джаукян*, 1959, էջ 35):

զ) Հայ. *տաշի* «ցնծության ձայն. ձայնարկություն» (հմմտ. *տաշի-տուշի* և այլն) - [խուռ., ուրարտ. taše- «նվեր»] (< հե. *dō- «տալ»): Հայ. *տաշի* (բրբռ.-խսկց.) (կրկն.՝ *տաշի-տուշի*) «պարողներին խրախուսելու՝ ոգևորելու բացականչություն» (Ղրբ., նաև Ալշ. և այլն): Ձայնարկական այս բառը, ամենայն հավանականությամբ հին է, այլև բուն կամ նախնական իմաստով կապ ունի «նվիրաբերության» երևույթի հետ, և ըստ այդմ, կարելի է ասել՝ «պաշտամունքային» բառ պիտի եղած լինի (ներկայումս՝ «պարողներին ոգևորել նաև նվերներ տալով». հարսանիքներին պարողներին կամ նվագաձուներին դրամ տալով և այլն): Ըստ այդմ նկատենք, որ այն կարելի է առնչել, այսպես կոչված, խուռաուրարտական բառապաշարում տեղ գտած այն բառաձևի

¹⁸ Ջահուկյանը արմատի ծագումը հանգեցնում է հե. *ku(m)b(h)o- [*keu-] «թեքել, կորացնել, ճկել. փոս, խոռոչ» ձևին. հայ. *խուրա* // ուրարտ. hubi բառերի արմատի բխեցումը հնդեվրոպական այդ իմաստով նախաձևից, կարծում ենք, համոզիչ չէ: Թերևս անհնարին չէ մտածել, որ հիշյալ բառերին է առնչվում հայ. *խուպան* [*խուպ-ան* (?)] «անմշակ հող» (հմմտ. *խամ ու խուպան* «վար ու ցանքից դուրս՝ անմշակ վայր») բառը. որ համարվում է «անհայտ ծագման» (*Աճառեան*, 1973, էջ 397. *Ջահուկյան*, 2010, էջ 342):

հետ, որը գրավոր հիշատակությամբ հանդիպում է ուրարտական Սարդուրի II-ի մի արձանագրության մեջ (տե՛ս УКН, 158₃₁)՝ *Կուեռա* աստծու անունից սերված *Կուեռաիտաշե* (= Kueraitaše) քաղաքանվան մեջ, որի բուն իմաստն է «Կուեռայի նվեր» (հմմտ. *Սարգսյան*, 1988, էջ 86-87. *Хачиквн*, 1985, էջ 40, 48 և այլն): Բառի երկրորդ բաղադրիչն է -taše [հմմտ. ըստ Մ. Խաչիկյանի՝ ուրարտ. tāšə «նվեր», խուռ. tāžə (նույնը)]: Նշվում է նաև առանձին քաղաք՝ Taše (դարձյալ բուն իմաստով՝ «նվեր») (ն. տ.) (*Джаукян*, 1967, էջ 9, 52. *Хачикян*, 1985, էջ 40, 48. *Հմայակյան*, 1990):

Այնուհետև, թերևս, որոշ վերապահությամբ, այն կարելի է առնչել նաև հայ. *տաժել* «հոգալ. խնամել. սնուցել» բային (հիմքի *ե* տարրով՝ «խոնարհիչ ձայնավոր»). ըստ Գ. Զահուկյանի՝ *տաժել* բայի «ծագումն անհայտ է» (*Զահուկյան*, 2010, էջ 718): Միաժամանակ եթե բացառենք մեր իսկ ենթադրությունը *տաժարմատի* ծագումը հե. *t'ek^[h]- «թերվել, խոնարհվել» ձևից (հմմտ. *Гамкредидзе, Иваноя*, 1984, էջ 110, 155):

է) Հայ. *տրոփել* «խփել. տրոփել». ըստ Զահուկյանի՝ «անհայտ ծագման» (*Զահուկյան*, 2010, էջ 737): Այն, թերևս, հնչյունական և իմաստային առնչություն ունի ուրարտ. *durəb* «ապստամբել (?), լինել խռովահոյզ», խուռ. *durəpi* «հուզում, անկարգություն» (հմմտ. բրբռ. *դուրբ* «զայրալից խփելը, հարվածելը», *դրրբել* «խփել. հարվածել» և այլն. Մուշ. Ալշ. և այլն) (հե. *dhereu-* «տրտնջալ. շչալ. որոտալ, թնդալ». հմմտ. հուն. *θόροβος* «աղմուկ, անկարգություն») (*Джаукян*, 1967, էջ 19):

3. Բարբառային նյութի ընդգրկումը

Վերը կատարված վերլուծության ընթացքում այս կամ այն չափով անդրադարձ եղավ հայերեն բարբառային նյութին: Այստեղ շարունակաբար անդրադառնում ենք հետևյալ օրինակներին՝ ընդգրկելով նաև խոտերենի նյութը:

Հայտնի է, որ հայերենի և խոտերենի ու ուրարտերենի զգալի թվով տվյալներ ուշադրության առարկա են եղել նաև այդ լեզուները կրողների (լայն իմաստով) մշակութային առնչությունների մեջ: Միանգամայն տեղին է Ս. Հմայակյանի այն տեսակետը, թե հայկական մշակույթը, իր հերթին, «նշանակալից էր հատկապես Ուրարտուի պետական կրոնի ու լեզվի, հետևաբար և մտածելակերպի վրա» (Հմայակյան, 1990, էջ 85):

Բերենք հետևյալ օրինակները.

ա) խուռ. *purli* «տուն» - հայ. *փուռ-ն* «փուռ, կրակարան. օջախ (?)». հմմտ. խեթ. *pir, par-n* (հե. * *bhu-ro-* < **bheu-* [?]). հայ. (բրբռ.) *փուռնիկ* (< *փուռ-ն-իկ*) «թոնրի տակ շիկացած կրակին եփվող խմորագնդից թխված մի տեսակ հաց» (Ալշ., Մշ.):

բ) խուռ. *daki* «օջախ» - հայ. *դագ(ա)* «օջախ. հանդում շինված պատսպարան. տնակ, հողիկ». (նխն.) «օջախ. կրակ» հմմտ. «Աղջի ամոթ է, ներս արի *դագեն*» (Թումանյան) (< հե. **dheg^u* -) (տե՛ս *Джаукян*, 1967, էջ 19. հմմտ. ՀԼԲԲ, 2001, էջ 296):

գ) ուրարտ. *dir* «համաձայն լինել. զիջել», *diruše* «համաձայնություն. բարեհաճություն», *dera* «ուժ (?)» - հայ. *դիր-(ին)* «հեշտ. դյուրին, հավանելի. դուրեկան», (բրբռ.) *դիր (գալ)* «դուրեկան լինել. հավանել». հմմտ. լատ. *frētus* «վստահելի, սպասելի», *firmus* «ամուր, պինդ, ուժեղ» (հե. **dher* «պահել. սատարել»): Ջահուկյանը հայ. *դիր-ին* բառի *դիր-* հիմքը համարում է

հայերենում «ենթաշերտային կամ փոխառյալ» (*Ջահուկյան, 1987, էջ 353*):

դ) ուրարտ. *š-u-ḫi/e* «կարգավորում» - հայ. (բրբռ.) *սուք* (< *սու-ք*) «կառուցել, կերտել» [գրական՝ *շուք, շքեղ* «(ն)խն. իմաստով կառուցել, կառուցված» (?)], ըստ Ջահուկյանի՝ ուրարտ ձևը *š(u)-* «կարգավորել, ստեղծել, սարքել» բայից՝ *-ḫi/e* գոյականական վերջածանցով (*Ն. Կ., էջ 437*):

ե) խուռ. *Teššub* «ամպրոպի և անձրևի աստված», ուրարտ. *Teišeba* (?) - հայ. *դի-ք* (). հմմտ. հուն. *Ζεύς* «երկնքի աստված», լատ. *deus* «աստված» (հե. **dhēs-*) (հմմտ. *Джаукян, 1959, էջ 19*): Նախալեզվի համար ներկայումս վերականգնվում է բաղադրյալ **t'ieḅ-* «աստված», որից և մի կողմից՝ **t'ei-* «լույս տալ. փայլել», մյուս կողմից՝ **t'iy-* «օր» (հմմտ. հայ *տիլ* «օր. ցերեկ») ձևացումները (*Гамкрелидзе, Ивановя, 1984, էջ 791* և *հջ., Համբար-ձումյան, 2002, էջ 19-25. Hambardzumyan, 2014, էջ 87-88*):

Եզրակացություններ

1) Մեր այս դիտարկումները, որքան էլ ավանդույթի ուժով համարվեն անհամոզիչ կամ վարկածային, ունեն զուգահեռ օրինակներով մինչև այժմ եղած նյութի լրացման նպատակ՝ համապատասխան ապացուցողական շեմով:

2) Հնարավորության սահմաններում համեմատվող նյութը այսպես թե այնպես առնչվում է հնդեվրոպական հիմք-լեզվի համար վերականգնվող ձևերին, որ նշանակում է ավելի մեծ հավաստիություն այդ նյութի հիմնաշերտի հնդեվրոպական բնույթի վերաբերյալ:

3) Նոր նյութը վերցված է հեղինակին լիովին հայտնի բարբառներից, որոնք այդ տեսանկյունից, կարելի է ասել, ամբողջովին ուսումնասիրված չեն:

4) Ստուգաբանական համեմատության մեջ հայերենի և մյուս լեզուների նյութի առավել մեծ չափով ընդգրկման դեպքում սպասելի են նոր հիմնավորումներ:

4. Ստուգաբանական դիտարկումներ

Աշխատանքի սույն բաժնում հարցերի համեմատաբար լայն ընդգրկումով անդրադառնում ենք հայերեն որոշակի թվով բառերի արմատաբանական-ստուգաբանական քննությանը՝ իբրև լրացում կամ ինչ-որ չափով նաև ճշգրտում մինչև այժմ կատարվածի: Դրանք հայերենի ստուգաբանական բառարաններում, ինչպես նաև մինչև վերջին ժամանականերս լույս տեսած հնդեվրոպաբանական տարբեր բնույթի ուսումնասիրություններում կա՛մ մնացել են իբրև «անստույգ բառեր» (Աճառյան), բերվել են «ծագումն անհայտ է» որակումով (Ջահուկյան), կա՛մ ուշադրության առարկա են եղել մասնակիորեն. վերջին դեպքում նկատի ունենք ամենից առաջ տվյալ հարցի վերաբերյալ գոյություն ունեցող նոր նյութը, այլև քննության համար անհրաժեշտ եղած տարբեր փորձերը:

Թե որքանով են այդ դիտարկումները հավաստի և ընդունելի, պետք է դատել ըստ այդ բնագավառում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում երևան եկած ուսումնասիրությունների փորձի՝ կապված ստուգաբանվող բառերի ոչ միայն ձևալին-լեզվաբանական, այլև իմաստային-բանաստեղծական («առասպելական») կողմերի հետ, ընդ որում հնդեվրոպական ընդհանուր նախամշակույթի համատեքստում:

Հայ լեզվաբանության մեջ այս բնագավառում մինչև այժմ կատարված աշխատանքներում առավել ուշադրություն է դարձվել հիշյալ կողմերից առաջինի վրա, այնինչ նոր ուսումնասիրությունների փորձը ցույց է տալիս, որ մյուս կողմի նշանակությունը հավասարակշռում է առաջինին, այն նույնքան կարևոր է, որքան մյուսը: Հայերենի համեմատական-տիպաբանական քննության

դեպքում նույնպես այն կարող է բավարար չափով արդյունավետ լինել՝ նաև ընդհանուր հնդեվրոպական համեմատաբանության տեսանկյունից:

Երբ հարկ է եղել հարցին անդրադառնալ աղբյուրագիտական տվյալների համատեքստում, քննությունը կատարվել է հայերեն բնագրերի, համապատասխան բառարանների օգնությամբ, թարգմանական բնագրերի դեպքում նաև զուգահեռների օգտագործմամբ՝ ապահովելու հավաստիության ավելի բարձր շեմ: Ոչ պակաս կարևորություն է ունեցել նաև հայերենի բարբառային անձանոթ նյութը, որ լրացնում է քննության փաստական կողմը:

1) Հայ. *այգի* < հե. *oi-*ǵi*(*ā*)

Ներածական

Բառի ծագման հարցը եղել է համեմատաբար լայն քննարկման առարկա: Ըստ նոր տվյալների՝ այն բնիկ է, ունի համեմատելի զուգահեռներ ոչ միայն ցեղակից լեզուներում, այլև հայերենում առհասարակ: Հայերենում նկատելի են (բառ)արմատի հնչյունական և իմաստային տարբերակներ, մի իրողություն, որ բացատրելի է ըստ ժամանակային, տարածքային և գործառական հանգամանքների. բառի ծագման վերաբերյալ եղել են տարբեր փորձեր, որոնք բերվում են բուն շարադրանքում:

1. Հարցի քննությունը «Նոր հայկազյան բառարան»-ում

Հին հայերենում (գրաբարում) *այգի* նշանակում էր միայն «(խաղողի) այգի». հմմտ. ըստ ՆՀԲ-ի՝ «*այգի*, որ և *այգեստան*, (լատ.) vinea «պարտեզ՝ ուր խիտ առ խիտ տնկեալ իցեն *որթթ*

խաղողոյ, ևս և թզենիք և այլն» (ընդգծումները մերն են- Վ. Հ.) (ՆՀԲ. 1836, էջ 80): Նույն տեղում «(խաղողի) այգի» իմաստով բացատրություն ենք գտնում *այգի* բառից կազմված ձևերում. *այգաւէտ* «ուր իցեն յաւէտ այգիք»: Ի դեպ՝ ՆՀԲ-ն *այգաւէտ* բառահոդվածի վերջում նշում է հետևյալը. «(յօրինակս ինչ՝ վրիպակաւ գրի, գինաւէտ)». սա ամենևին էլ վրիպակ չէ, այլ հավաստում է, որ *այգի* և *գինի* բառերը նույնիմաստ են, միմյանց փոխարեն գործածված (ն. տ., էջ 79). *այգեգործ* / *այգէգործ*, լատ. *vinitor*) «գործող այգեաց, այգորդ, մշակ և պահապան այգւոյ», *այգեգործութիւն* / *այգէգործութիւն* (լատ. *vineae cultura*) «գործել զայգի, մշակութիւն այգեաց», *այգեկիրք* (իմա՝ *այգեկութիւն*) «կութիւն կամ կթումն այգեաց, ժամանակ խաղող քաղելոյ կամ կթելոյ զայգիս», *այգեկութիւն* «որ կթէ զայգին», *այգէմէջք* «միջին վայր այգեաց, սահմանք և ճանապարհք ընդ մէջ այգեաց», *այգեստան* (*այգեստանեայք*, *այգեստանի*) (լատ. *vinea*) «(խաղողի) այգիներ» (ՆՀԲ-ն չի տալիս այս բառերի բացատրությունը), *այգեւէտ* [տե՛ս *այգաւէտ*. այս բառի համար միայն բերվում է օրինակ՝ «(գաւառն ըռշտունեաց) *այգեւէտ* բազմութեամբք յոյժ վայելչացեալ զարդարի». *Արծր.* (= Թովմա Արծրունի), Ե, 6], *այգէգործ*, *այգէկութիւն* (տե՛ս *այգեգործ*) (հմմտ. *Հովհաննիսյան*, 2014, էջ 4 - 9):

Ինչպես դժվար չէ նկատել, բերված բառերի մի մասին կից տրվում են լատ. *vin-* (*vinum*) «գինի» արմատից բաղադրված ձևեր, հայ. *խաղողի*, *որթի* և դրանց վերաբերող իմաստի նշումներ, որոնք կողմնակիորեն ապացույց են առաջ քաշվող վարկածի: Նման դեպքերում ՆՀԲ-ի հեղինակները տալիս են բառի (տվյալ դեպքում՝ տերմինի) իմաստաբանական (բառարանագիտական) մեկնաբանություն, մի իրողություն, որ հիմք է հա-

մեմատական-ստուգաբանական ամեն մի քննության, և ամենևին պատահական չէ, որ եվրոպացի հայերենագետ-համեմատաբաններն իրենց աշխատություններում մեծապես հենվում են այդ բառարանի տվյալների վրա՝ գրեթե բոլոր նման իրողությունների քննության ժամանակ:

2. Բառի ծագման վերաբերյալ դիտարկումներ

Աճառյանը ևս, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, գտնում է, որ *այգի* բառը սկզբնապես նշանակելիս է եղել «խաղողի պարտեզ» և «խաղողի որթ», որ բաղադրություններում հանդես է գալիս հատկապես *այգե-/այգէ- (*այգեյ-), այգա-, այգ-* տարբերակներով (հմմտ. *այգեգործ/այգէգործ, այգաւէտ, այգորդ* և այլն), իսկ բառի ծագման վերաբերյալ գրում է. «բնիկ հայ բառ. հիմնական նշանակութիւնը «որթ». *ի* դնելով իբր բուսական մասնիկ (հմմտ. *կաղնի, ծիրանի*), արմատը կլինի *այգ-* «խաղող», որ յետոյ կորել է» (*Աճառեան*, 1971, էջ 166), և բերվում են համեմատելի ձևեր ցեղակից մի շարք լեզուներից:

Այնուհետև, բառի ծագման աղբյուրի վերաբերյալ նշվում է հետևյալը. «Այս բոլորի (իմա՛ հայ. և բերվող ցեղակից լեզուների ձևերի- Վ. Հ.) նախածնն է հնիս. *oiyā «լեռնային մանր պտուղ՝ մոշի, ելակի պէս. քոլապտուղ» ընդհանուր նշանակութեամբ: Հայերէնում oi տալիս է *այ* (հմմտ. *այտ* < oid) և ըստ օրինի դառնում է *գ*», և նշվում են ցեղակից լեզուներից այլ կարգի ձևերի օրինակներ, «որոնք ծագում են հնիս. *eiyā ձևից» (ն. տ.)¹⁹:

Ջահուկյանը, իր հերթին, ոչ անկախ Աճառյանից և Պոկոնոնուց, գտնում է, որ հայ. *այգի* բառը ծագում է հե. *oiy-iā [**ei-*]

¹⁹ Նկատենք, որ նախկին փորձերից «ուղիղ մեկնություն» է համարվում է. Լիդենինը:

բաղադրությամբ ձևից, այսինքն՝ հայերենի համար արմատ է դիտվում *oiu- ձևը, և զուգահեռներ է բերում ցեղակից տարբեր լեզուներից (սլավոնական, իտալյան, կելտական, գերմանական, այլև թրակերեն և հունարեն)՝ միաժամանակ գտնելով, որ *այգի* բառում *ի*-ով գոյականից կազմվել է ածականացված գոյական [$\left\langle \ast\text{-}(i)\bar{i}\bar{a} \right\rangle$] (*Ջահուկյան*, 1987, էջ 121, 231. նաև 2010, էջ 48)²⁰ :

Այնուհետև, Գամկրելիժեն և Իվանովը ևս, ելնելով Յու. Պոկոնու տվյալներից, հայ. *այգի* բառը բխեցնում են հե. *oiu-iā արմատից (իմա՝ *այգ-եալ* «այգով»). հմմտ. ռուս. ива «ուռենի» (նաև հչեխ. jiva «ռուս. тис կարմրածառ, գեղձի, կենի» (ըստ Ա. Ղարիբյանի բառարանի. *Гарубян*, 1977, էջ 227). «ուռ(են)ի»), սերբ.-խորվաթ. iва «ուռ(են)ի», լիտվ. ievà, լատվ. iëva «թխենի, բեկտենի», այլև լատ. ūva «(խաղողի) ողկույզ», հուն. οἶη, ὄη, ὄα «սնձենի, արջածառ» (< *oiua) ձևերը (*Гамкредидзе-Иваноя*, 1984, էջ 629):

Նկատենք, որ այս համեմատությունը հեղինակներն անցկացնում են «բուսական աշխարհ. ծառեր» իմաստային (թեմատիկ) խմբի միավորներից «կարմրածառ, գեղձի, կենի» տեսակին անդրադառնալիս (*ն. տ.*, էջ 628-631):

Սակայն ավելի իրական կլիներ հայ. *այգի* բառի ծագումը քննել «բուսական աշխարհ. մշակաբույսեր և խոտաբույսեր» իմաստային (թեմատիկ) խմբի, մասնավորապես «խաղող» և «գինի» ենթախմբի մեջ (*ն. տ.*, էջ 647-655): Այս դեպքում, կարծում ենք, կունենանք բառի ծագումնային ճիշտ բացատրություն, քան որ եղել են փորձեր նախկինում (առավելապես հիմնված է. Լիդենի ստուգաբանության վրա):

²⁰ Հե. վերականգնված արմատի նշանակումը բառարանում աղավաղված է:

3. Վերանայման առաջարկ բառի ծագման վերաբերյալ

Նոր տվյալների համաձայն՝ «գինի» ընդհանուր իմաստը կապվում է հե. * (e/o) ṡno- ձևի հետ. հմմտ. խեթ. $\underline{u}i\grave{a}na-$ «գինի», սեպ.-լուվ. $\underline{u}iniant-$ «գինի», հիեթ.-լուվ. $wiana-$ «գինի» (< հե. * $\underline{u}i^{[o]}$ no-), այլև միկ.հուն. $wo-no-$ «գինի», հուն. (հոմ.) $o\dot{i}o\psi$ «գինի» (< հե. * $\underline{u}o\grave{i}no-$).հմմտ. հայ. *գինի* «գինի» (< հե. * $\underline{u}o\grave{i}nom$), ավր. $v\acute{e}n\grave{e}$ «գինի» (< հե. * $\underline{u}o\grave{i}n\bar{a}-$) և այլն (*Ն. Կր.*, էջ 647):

Համեմատություն է անցկացվում նաև հնդեվրոպական մյուս, ինչպես նաև առաջավորասիական լեզուների տվյալների հետ՝ մասնավոր (իմա՝ * $wajn-$) նախաձևի վերականգնումով), միաժամանակ գտնում են, որ «գինի» անվանումը, այսպես կոչված, «տեղաշարժական (միգրացիոն) տերմին» է՝ լինելով բուն հնդեվրոպական բառ (դա է թույլ տալիս արմատի * $e/o/\emptyset$ (զրո) հերթագայությունը) (*Ն. Կր.*, էջ 648):

Հայտնի է, որ հե. * $\underline{u}(e/o)$ ṡno- ձևի պարզ * $\underline{u}ei-/^*u\grave{i}-$ տարբերակային արմատն առհասարակ ունի «հյուսել, ոլորել», «հյուսել, գործել» իմաստները (հմմտ. լատ. $uie\acute{o}$ «կապել», «հյուսել», սլավ. $viti$ «հյուսել» և այլն): Եվ ըստ այդմ՝ գտնում են, որ հնդեվրոպական բարբառներում տարբերակային այդ արմատների հիման վրա երևան են գալիս տարբեր կարգի մասնիկներով նոր կազմություններ (իրոք, եթե նկատի ունենանք նաև հայերենի տվյալները).

1) հե. * $-t^{[h]}i-$ մասնիկով * $\underline{u}(e)$ ṡ $-t^{[h]}i-$. հմմտ. լատ. $u\acute{i}tus$ «խաղողի որթ», ավեստ. $va\acute{e}iti-$ «ուռ(են)ի», «ուռենու ճյուղ՝ շիվ», լիտվ. $vytis$ «ուռենու ճյուղ՝ շիվ» (հմմտ. $\acute{z}il-vitis$ «դյուրաթեք ուռի», «որթատունկ»), սլավ. $viti$ «հյուսվածք, գործք», սերբ.-խորվ. $p\acute{a}viti$ «որթատունկ», հիոլ. $f\acute{e}ith$ «ուռ(են)ի», վալլ. $gwden$ «կապ. հան-

գույց» և այլն. հմմտ. (ըստ իս) հայ. (սեռ. հոլ.) *n-(n)-թ(h)* (< * *որ-թ(h)*). *n*-ի հետ կապված դժվարությամբ հանդերձ),

2) հե. **-t^[h]u-* մասնիկով՝ *u(e/o)i-t^[h]u-*. հմմտ. հուն. ἵτυς «ուռ(են)ի» (էոլ. *Fitus* «ուռ(են)ի»), լատ. *uitus* «անվահեց», պրուս. *witwan* «ուռ(են)ի», *apewitwo* «(նշտարատերև) ուռի», հւլավ. *větvi* «ճյուղ՝ շիվ» և այլն. հմմտ. հայ. (սեռ. հոլ.) *n-(n)-թ(nj)* (< * *որ-թ(nj)*).

3) հե. **n-* մասնիկով՝ *u^h-n-*. հմմտ. հւլավ. *věničī* «(ծաղկե) պսակ», սերբ.-խորվ. *vejěnac*, չեխ. *vě nec*, *vínec*, լիտվ. *vainikas* «(ծաղկե)պսակ», «(դափնե)պսակ» և այլն. հմմտ. հայ. *գհ-ն-(h)* «(խաղողի եռ եկած) հյութ. գինի»,

4) արեմատիկ/թեմատիկ **-o-/ **-ā** կազմություններ՝ **u(e/o)u-* *o-/a*. հմմտ. հուն. սին «որթ», հինդկ. *vayá* «ճյուղ, շիվ», հւլավ. *věja* «ճյուղ», լատվ. *vija* «(հյուսկեն) ցանկապատ», հիոլ. *fé* «շյուղ, ճաղ. շիվ» (հմմտ. վալլ. *gwial-en* «ճյուղ, ոստ, ուղեշ») և այլն (*ն. Կր.*, էջ 649-650)²¹:

Ըստ այսմ՝ հե. **u^hei-/ *u^hi-* արմատի՝ «հյուսել, ոլորել», «հյուսել, գործել» իմաստները հիմք են «(խաղողի) որթ», «գինի» նախնական իմաստով նշանակման՝ «ոլոր(վ)ել», «փաթաթ(վ)ել» հատկանիշով, այլ կերպ ասած բույսի անվանումը հիմնված է իր հատկանիշի վրա (հմմտ. կենդանու անվանում՝ *անեծ // առիծ* «մոնչացող»):

²¹ Այս 4-րդ տիպի համար հմմտ. հայ. *գհ* (նոր գրականում՝ *գհհի*) «մի տեսակ ծառ՝ բազմակուտակ ասեղնաձև փշատերև, մշտադալար, կեղևը մոխրագույն և թելանման շերտիկներով անջատվող» (< **vito-*, **voito*). ստուգաբանությունը՝ Է. Լիդենի (հոդվածը՝ "Indogermanische Forschungen" հանդեսում. հմմտ. *Աճառեան*, 1971, էջ 61, 554. *Հարությունյան*, 1983, էջ 50-57):

Այ(գհ) - հիռլ. eo «ռուս. тис «կարմրածառ, գեղծի, կենի», վալլ. ywen, հկոռն. hiuin, բրետ. ivin, գալլ. ivo- «կարմրածառ, գեղծի, կենի» (< հե. *e₁- / *o₁- «կարմրածառ, գեղծի, կենի»). և ըստ այդմ էլ ունենում ենք հայ. *այ* - < հե. *e₁-/*o₁- «կարմրածառ. գեղծի, կենի» (*Гамкрелидзе-Иваноя*, 1984, էջ 629, 631, 867. հմմտ. *Туманян*, 1974, էջ 194):

4. Բառի հե. ծագման հավանականության շեմը

Եղած փաստերի համալրումը և նորի հետ համադրությունը ցույց են տալիս, որ պետք է ընդունել ոչ թե *oiu-ā, այլ *oi-uā տիպի առանձնացում, որպիսով հատկանշվում է հետևյալը. 1) ունենում ենք ածանցման փոխարեն բառաբարդմամբ կազմություն²², 2) *-uā-ն դիտում ենք առանձին արմատ, որից էլ, ըստ այսմ, ծագում է հայ. *գհ*- (<*գհ-) բաղադրիչը, այլև՝ *գհ-նի* («որթատունկի պտղից ստացվող հյութ», «գինի»), *գի* (*գիհի*) «մի տեսակ ծառ»: Հմմտ. *գինի* - հիռլ. fin, վալլ. gwinn «գինի» < հե.* uēno-) (*Гамкрелидзе-Иваноя*, 1984, 647), *գի (<*վի), որթ (?) «խաղողի որթ» - հիռլ. feith «(մազա-)թել», վալլ. gwden «կապ, հանգույց». հմմտ. հայ. *գվինի «(փաթաթվող) բույս», «որթ», (ավելի ուշ) «գինի», լատ. uitis «(խաղողի) որթ» (հմմտ. ն. տ., էջ 650), *գի* - հինդկ. vāyati «հյուսել», հսլավ. viti «հյուսել», հուն. ἵτεα «ուռ(են)ի» և այլն:

Այնուհետև, Գ. Զահուկյանը հնդեվրոպական արմատների ցանկում տալիս է հայ. *որթ* «խաղողի տունկ» (< հե. *ort- [*ortho-], իսկ առանձին դիտարկումներում նշում է, որ *որթ* «խաղողի տունկ, խաղող» բառը ալբ. hardi «որթ» բառի հետ համեմատում

²² Սովորաբար՝ *-iā բաղադրիչը դիտվում է ածանց (*Զահուկյան*, 1987, էջ 231):

է Պեդերսենը, իսկ Պոկոռնին բերում է ոչ միայն այդ, այլև Պետերսոնի ստուգաբանությունը, այն է՝ համեմատել հուն. πτορθος «ծիլ, բողբոջ, ընծյուղ» ձևի հետ՝ բխեցնելով հե. *perth- արմատից, այլև նկատում է հետևյալը. «Աճառյանը (տրվում է հղում.- Վ. Հ.) գերադասում է ՆՀԲ-ից եկող մեկնությունը՝ որթ-ը կապելով որթ «հորթ» բառի հետ (հմմտ. երինջ «մեծ հորթ» և բրբռ. «խաղողի որթի մատ»): Եթե վերջինս ճիշտ է, ապա թերևս հայ. և հուն. բառերը պետք է դնել *per- «ծնել» արմատի տակ, որից հայ. որթ «հորթ» (*Ջահուկյան*, 1987, էջ 141, 184): Թերևս ավելի հավանական է հայ. որթ «խաղողի տունկ, խաղող» բառը բխեցնել հե. * $\text{u(e)}_1\text{-t}^{[h]}\text{i}$ - արմատից, որի դեպքում, հավանաբար, միակ դժվարությունը կարող է հարուցել հե. * t_1 > հայ. *ր* անցումը. հմմտ. լատ. uītis «խաղողի որթ», ավեստ. vaēiti «ուռի», «ուռենու շիվ», հիռլ. féith «մագ, մագի թել», վալլ. gwden «կապ, հանգույց», սլավ. vitī «գործք» և այլն. հմմտ. հայ. *գի-նի* (< **qđh-nh*) - միռլ. fé «շյուղ, ճյուղ. շիվ», վալլ. gwial-en «ճյուղ, ոստ, ուղեշ» (*Гамкрелидзе-Иванова*, 1984, էջ 650): Այս իմաստը պահպանվել է նաև հայերենի ներկայիս բարբառներում²³:

Ըստ այսմ՝ հայ. *գինի* բառի ստուգաբանությունը, եթե հաշվի ենք առնում նորագույն տվյալները, այլ ուղղությամբ է գնում, իսկ ցեղակից լեզուների (հին հնդկերեն, հունարեն, սլավոներեն, լատիներեն և այլն) ձևերը, ինչպես նաև իմաստային հնագույն և վերջինի՝ հետագա զարգացումները դրան լիովին նպաստում են:

²³ Հայերենի որոշ բարբառներում (Աշտ., Երև. և այլն) *այգի* (բրբռ. *իքի*) նշանակում է միայն «(խաղողի) այգի»՝ ի տարբերության մյուս տեսակի պտղատու ծառերի՝ խնձորի, ծիրանի և այլն այգիների:

Ուստի *այգի* բառի *-գի* մասը նախնական իմաստով նշանակում է «ոլոր(վ)ել», «փաթաթ(վ)ել». հմմտ. ռուս. *вить* «հյուսել, ոլորել և այլն», *виться* «պտտվել, փաթաթվել և այլն» [թերևս հմմտ. բնատղծ.] *витязь* (< *вит-язь*) «դյուցազն, քաջամարտիկ» ?]. հե. *g > հայ. վ անցումը սովորական է. հե. **uet'*- («ջուր») > *գեյր* «ջուր» (հմմտ. ռուս. *вода* «ջուր» և այլն), հե. **uel*- («պատահել» «վնասել. սպանել») > *գայլ* «պատահող. գայլ» (հմմտ. ռուս. *волк* «գայլ»), հե. **uoino-* > *գինի* «(խաղողի քացախացված) հեղուկ՝ հյութ. գինի», հե. **uit'*- > հայ. *գէյր* (**գեյր*) «գիտեմ. գիտենալ» (հմմտ. ռուս. *ведать* «գիտենալ. իմանալ») և այլն. *գինի* - հիռլ. *fin*, կիմր. *gwin* (<հե. **uei-*, **ueiñ-* «ծալել, ոլորել (որթատունկը)» (տե՛ս *Туманян*, 1974, էջ 194-195):

Այնուհետև, *այ(գի)* - հիռլ. *eo* «կարմրածառ, գեղձի, կենի», վալլ. *ywen*, հկոռն. *hiuin*, բրետ. *ivin*, գալլ. *ivo-* «կարմրածառ, գեղձի, կենի» (< հե. * *e₁-* / **o₁-* «կարմրածառ, գեղձի, կենի») (*Гамкрелидзе-Иваноя*, 1984, էջ 629, 631, 867. *Туманян*, 1974, էջ 194): Այս դեպքում նույնպես մենք ունենք բոլորովին այլ մոտեցում, այն է՝ գտնում ենք, որ առկա է հայ. *այ-* < հե. **e₁-* / **o₁-* «կարմրածառ, գեղձի, կենի» առնչություն:

Եզրակացություններ

1. Բառի՝ ավանդաբար հայտնի ստուգաբանական փորձերի հիման վրա, նոր տվյալների ընդգրկումով ստուգաբանությունը այլ տեսք է ստանում. բնիկ կամ հնդեվրոպական ծագման լինելը դառնում է ավելի հավաստի:

2. Նման քննությամբ մեծանում է հայերենի բառապաշարի իմաստային ոլորտը՝ կապված մշակութային («երկրագործության») տարածվածության հետ:

2) Հայ. *երկինք* // *երկիր* < հե. *k'°er-

Ներածական

Իրականության երկատումային («երկյակ») առանձնացումը (դիֆտոտոմիկ դիստրիբուցիա), իբրև մտածողության ձև, հատուկ է եղել նաև հնդեվրոպական նախալեզվի կրող ժողովուրդներին, որի տարբեր բնույթի արտացոլումներ հայտնի են ցեղակից լեզուների վիպական (առասպելական-բանաստեղծական) հատվածներում: Սույն հատվածում անդրադառնում ենք նման արտացոլումներից մեկին՝ հատկապես այդ բնագավառում կուտակված նոր տվյալների համադրությամբ, նաև առանձին դեպքերում անհրաժեշտ վերանայումներով, ուստի հարկ ենք համարում սկսել փոքր-ինչ հեռվից:

1. Հայ. *(ե)րկ-* / *կր-*. *երկինք* / *երկիր* (և այլն) առանձնացումը (բաշխումը)

Հայերենում *երկինք* / *երկիր* իրույթների երկատումը (դիֆտոտոմիան) հիմնված է արտահայտության պլանում *(ե)րկ-[ին(ք)]* / *(ե)րկ-(իր)* ձևով բաղադրելի մասերի տևականի (հարատևի) մշակույթի մեջ լեզվական դրսևորման (արտահայտության պլանի) *-ին(ք)* / *-իր*, նաև *-ք* / *∅* (զրո) հակադրությամբ, այլև *(ե)րկ-* նույնության վրա. այստեղ *ե-*ն նախահավելված (աուգմենտում) տարր է, մի կողմից՝ բնորոշ, օրինակ, հայերեն, ուրարտերեն, հունարեն լեզուներին և այլն, իսկ մյուս կողմից (ըստ իմաստի՝ բովանդակության պլանի)՝ «մեկը / ոչ-մեկը՝ մյուսը» (ըստ առանձնացման՝ բաշխման), «վերև / ներքև (ըստ դիրքի՝ մի կողմ / մյուս կողմ)», «արական / իգական» (ըստ սեռի՝ *ն/ր*), «թեթև / ծանր» (ըստ ձգողության՝ կշռի) հակադրությամբ (հմմտ.

հուն. γῆ «գետին. հող», լատ. terra «հող. երկիր» և այլն տարբերակման վրա). ունենք *երկն-ից. ի-ով* հիմք՝ արական, *երկր-ալ. ա-ով* հիմք՝ իգական:

Այդ երկուսի ընդհանուր արմատն է *-րկ-* մասը, որը, ինչպես կտեսնենք ստորև, բնիկ է, ունի հնդեվրոպական (հե. < *k^oer-) ծագում (արմատի լիաձայն աստիճան, գրականում՝ շրջմամբ): Հե. *k^oer- արմատից հայերենում կա ոչ միայն *-րկ-* (< *կր- հնչաշրջմամբ), այլև *-ւր-* [հիմքակազմ ն-ի մոտ՝ *n*. հմմտ. (բրբռ.) *սո-ն-ել* «(հատիկը) երկու կես անել. խոշոր աղալ» (բրբռ.՝ պահպամամբ). նախկինում բարբառային այս միավորին ուշադրություն չի դարձվել, մանավանդ ի համեմատություն գրականի [*-ւր-* // *-րկ-* (< *կր-)]. հմմտ. (*ե*)*րկ-ան(ք)* «աղաց. երկանք» // *սո(ն)-ել* «(երկանքով) խոշոր աղալ՝ հատիկը երկու կես անել»]. այս *-րկ-* (< *կր-) // *-ւր-* (< *ւր-) լծորդական արմատը ներկայացնում է հե. *k^oer- նախաձևի զրո (∅) աստիճանը:

Ըստ այսմ՝ կարելի է կարծել, որ հայ. (*ե*)*րկ-* // *ւր-* (< *k^oer-) լծորդությունը անվարան հիմք է հե. ծագման երկատումային իրոյթների ստուգաբանական, այն է՝ ոչ միայն ծագումնային-տիպաբանական, այլև առասպելական-բանաստեղծական խոսքի նոր մեկնաբանության համար (հմմտ. *Иванов*, 1962, էջ 37-41):

Ստորև անդրադառնում ենք այդ արմատի հայերեն արտացոլումներին՝ քննված ցեղակից լեզուների հետ հնարավոր կապի համատեքստում:

երկինք / երկիր միավորների, այսպես կոչված, հակադրյալ համադրությունը հնդեվրոպական բանաստեղծական խոսքի հնագույն նմուշներից է: Սա հայերենի դեպքում ավելի քան հին ժամանակների երևույթ է, որ սկզբնապես՝ բանավոր, հետա-

գայում՝ գրավոր (շնորհիվ Խորենացու) կա հայոց լեզվական մշակույթում. այդ երևույթի վերաբերյալ եղած մեկնությունը ներկայումս չի կարելի համարել լիովին համոզիչ, առավել ևս՝ վերջնական:

Կենդանի արարածի պատկերացմանը, անկախ նրա զարգացման աստիճանի ժամանակային, տարածքային և սեռային տարբերությունից, խորթ չէ երկատումը (դիխոտոմիան՝ «բաժանում երկուսի»): Նախնական (պրիմիտիվ) ժամանակներից ի վեր մինչև ցեղակցորեն առանձնացած լեզվախմբերի հասկանալի ձևերում այդ երկատումային մտածողությունը արտահայտվել է տարբեր ըմբռնումների նշանակման (կամ անվանման) մեջ: Դա ապացուցելի է ոչ միայն հնդեվրոպական, այլև ուրիշ տիպի լեզուներից հայտնի նախնական նշանակումների հիման վրա:

2. Հայ. երկու «երկու» բառի ստուգաբանությունը

Այս դեպքում կատարում ենք արմատի տարբերակային առանձնացում, առնչությամբ հնդեվրոպական նախածևի, նախ՝ ըստ ավանդական (դասական) համեմատաբանության փորձերի, այնուհետե՝ նոր ուսումնասիրությունների տվյալների:

Հայ. երկու «երկու» բառի ստուգաբանությունը, որ առաջարկել է ժամանակին Բուզգեն և լրացումներով հավանության արժանացել Մեյեի կողմից, հետագա գրեթե բոլոր աշխատանքներում մնում է միակ հավանականը, այն է՝ բառը ծագած է համարվում հե. *dw- արմատից:

Նկատենք, որ ժամանակին բառի ստուգաբանության հարցում այլ, անշուշտ, ավելի իրական և համաբանական (անալոգիական) մեկնություն է տված եղել հ. Ս. Տերվիշյանը՝ հատ-

կապես բառարմատի (*երկու*, իմաստը՝ «զույգ») բաղադրիչների ճիշտ առանձնացման առումով (արմատ՝ *կր-*, օր.*՝կր-կին*, որից հնչաշրջմամբ (ինվերսիա)՝ *րկ-*, իսկ *ե-ն*՝ հավելված է, *ու-ն*՝ երկակի թվի նշանակիչ) (*Տերվիշեան*, 1885, էջ 131):

Նման դեպքերում, առհասարակ, գործ ունենք հնչյունափոխական այնպիսի երևույթների հետ, որոնք գործելիս են եղել տարբեր ժամանակներում, և ինչպես այս, այնպես և նույն արմատից բխող այլ կարգի բառերին զուգահեռ առկայությունը հայերենում հավաստում է դրանց ծագման ոչ նույնժամայն դրսևորումների մասին: Եվ դա այդպես է, քանի որ դրանցում, ինչպես նաև այլ կարգի բաղաձայնական փոփոխությունների ենթարկված հայերեն զգալի թվով բառերում սահմանելի են հնչյունական տարբեր չափորոշիչներ, այլ կերպ ասած՝ դրանք հետևանք են տարբեր ժամանակներում հանդես եկած հնչյունական օրենքների (հմմտ. *Иванов*, 1967, էջ 981-984. *Макаев*, 1977, էջ 154-176):

Նման բառերի ծագման մեկնաբանությունը և ժամանակագրությունը ցույց են տալիս, որ դրանց մի մասը այս կամ այն ժամանակային կտրվածքում կարելի է դիտել իբրև գործուն օրենքների դրսևորման արդյունք, իսկ մյուս մասը՝ շեղումներ կամ բացառություններ այդ օրենքներից:

Իսնդիրն այն է, թե օրենքները գործել են նո՞ւյն ժամանակում, լեզվի զարգացման միևնո՞ւյն փուլում, թե՞ դրանք հնչյունական զարգացման («փոփոխության») առումով հաջորդել են միմյանց: Այս վարկածը, թերևս, կարելի է տարածել այն դեպքերի վրա, երբ հայերենի մեջ առկա են պարզ և քմայնացած կամ շնչեղացած բաղաձայններով բառերի տարբերակներ,

ընդամին՝ իմաստային և գործառական ակնհայտ տարբերակմամբ:

Ուստի կարծում ենք, որ հայերենի հնագույն շրջանի պատմության փուլերի առանձնացումը պիտի հիմնված լինի լեզվական ավելի մեծ թվով փաստերի վրա, իսկ արտաքին հանգամանքները (փաստերը) պիտի խաղան լրացուցիչ դեր: Ավելին, լեզվական փաստերը պետք է մշակել խորությամբ՝ ըստ արտահայտության և բովանդակության պլանների հաշվառման, այն է՝ իրականացնել համեմատական-տիպաբանական քննություն՝ հիմնված թե՛ լեզվաբանական (հնչյունական՝ ներքին վերականգնման, արտաքին համեմատության, համաբանության և տիպաբանական զուգորդման մեթոդների) գործադրման, թե՛ արտալեզվաբանական [արմատի կազմության՝ բառի բնիմաստի (էտիմոնի) վերհանման, առասպելական կամ դիցական, ազգաբանական առնչությունների] պարզաբանման վրա: Իսկ հարկ եղած դեպքում մշակել նոր մեթոդներ և հանդես բերել նոր մոտեցումներ՝ հարցերի առավել լայն պարզաբանման նպատակով:

3. Անդրադարձ ստուգաբանական նախկին փորձերին

Հայոց լեզվի պատմության փուլ առ փուլ ուսումնասիրությունը մեթոդապես անհրաժեշտ է, որի պայմաններում կբացառվեն ամեն կարգի ենթադրությունների և «տեսությունների», տարբեր վարկածների ձևով ի հայտ եկող պատկերացումները:

Այսօր, ինչ խոսք, հին է Մեյեի և ուրիշների կարծիքը հայ. *երկինք* / *երկիր* միավորի ծագման վերաբերյալ՝ թե՛ հնչյունապես և թե՛ մանավանդ իմաստով՝ ծագումը հե. *dw- (նոր նշանակմամբ՝ *t^u-o- [*t^o-o]) ձևից, որ առ այսօր համարվում է թեա-կան, այլև անառարկելի:

Այնուհետև, կան լեզուներ, որոնցում 2-9 հաշվարկի մեջ բացակայում է 1-ի հակադրությունը (հմմտ. հոլովման համակարգում՝ ուղղականի և մյուս հոլովների հակադրությունը). խուռերենում, օրինակ, հատուկ նշանակում չկա «մեկ» թվականի համար, նույնը՝ շումերերենում և այլն (տե՛ս *Гамкрелидзе-Иванов*, 1984, էջ 844):

Հայերենում, ըստ Աճառյանի, բնիկ են *երկ-* բաղադրիչով հետևյալ կազմությունները. *երկայն, երկան, երկար, երկեան* (< **երկհիաան*), *երկիղ* (տե՛ս *երկնչել*), *երկնչիլ, երկու*, բայց ոչ *երկին, երկիր* բառերը, որոնք համարվում են «անհայտ ծագման», իսկ ըստ Ջահուկյանի՝ բնիկ են նաև վերջին երկուսը (թեև հարցականով) (*Աճառեան*, 1973, էջ 60-67. *Աղայան*, 1974, էջ 65-69. *Ջահուկյան*, 2010, էջ 226-228):

Անդրադառնանք սրանց ավելի մանրամասն՝ նոր տվյալների հիման վրա, և անհրաժեշտ ճշգրտումներով և լրացումներով:

Նախ՝ Աճառյանը չի առանձնացնում *երկ-* արմատ, այլ *երկն, երկիղ* ձևերի հետ այն հղում է *երկնչել* «վախենալ» բային (< հե. **dwi* «վախենալ»). այդպես նաև *երկնել* բայի դեպքում, որ ըստ Ջահուկյանի՝ «Կասկածելի պետք է համարել Ֆրիսկի կողմից *երկն-*ի և *երկ-*ի միացումը իրար հետ, եթե ճիշտ է Աճառյանի կարծիքը *երկ-*ի իրանական ծագման մասին» (*Ջահուկյան*, 1987, էջ 16): Ջահուկյանը *երկնել (-իլ)* ձևին անդրադառնում է *երկն-*ի տակ՝ հե. **ed-ōn* (<**ed-*) «ծննդյան ցավ (քաշել)» իմաստով, բառարանում ևս բերում է *երկն-*ի տակ, *երկն* < հե. **ed-ūōn* (<**ed-*), այս անգամ՝ «ուտել» իմաստով, ընդ որում՝ հարցականով (*Ջահուկյան*, 1987, էջ 121, 209. նաև 2010, էջ 227):

Երկնչիլ (<*dwi «վախենալ») բառի դեպքում Աճառյանը գրում է. «Հայ. *երկ-* և հնիւ. dwi արմատների ծայնական համեմատությունը ճշտիվ նույնն է՝ ինչ որ *երկու* և dwō: Մեր ձևերի մեջ պարզական արմատն է *երկ-*, որից *ն, չ, նչ* ածանցիչներով և *-իւղ, -ոյր* մասնիկներով հառաջացած են *երկն, երկչոյր, երկնչիլ, երկիւղ*: Նշանակությանց կողմից ամենահարուստը հայերենն է, որովհետև ո՛չ միայն «երկյուղ, վախ սարսափ» նշանակությունն է պահում, այլև «ցավ» նշանակությունը, որ իրանյանների մեջ միայն կա *երկունք* = պիլ. bēš (IEW, 1, 817, Ernout-Meillet, 260)» (*Աճառեան*, 1973, էջ 65):

Ջահուկյանը չունի առանձին *երկնչիլ*, այլ տալիս է *երկ-ն-ի* տակ. *երկ-ն* «վախ» (< *dwi- [*dwi-] «վախենալ») (ն. տ., էջ 227): Հայտնի է, որ *երկնչիմ* «վախենալ» բառի չ-ն («ծոյլ աֆրիկատ») գալիս է հե. *sk^[h]- ածանցից (*Гамкрелидзе-Иванов*, 1984, էջ 1072, այլև 120), ուստի մնում է *երկն-*, այլև այն ծագում է հե. *(e)rk- արմատից (*ն. տ.*, էջ 133). և կարելի է մտածել, որ *երկնչիմ* ձևի մեջ *ն-ն* ևս անջատելի բաղադրիչ է:

Ըստ Աճառյանի՝ *երկայն* (<*երկ-այն*) < հե. *dewə (*dowə, *dwā, *dwi-). «ըստ որում՝ հնիւ. dw տալիս է հյ. *երկ-* (հմմտ. *երկու, երկնչել*), ուստի հնիւ. dwāro- տալիս է հայ. *երկար, րօ-ի* փոխարեն ոնգային մասնիկով՝ *երկայն* (իբրև հուն. δφά). միևնույն ժամանակ dewā ձևից *տևել* և dowā ձևից *տոկալ*: Այսպես, ուրեմն, հնիւ. երկավանկ արմատների և ծայնդարձի օրենքների համաձայն նույն ծագումն ունին և նույն արմատից են բխում հայ. *երկայն, երկար, տևել* և *տոկալ* բառերը (*Աճառեան*, 1973, էջ 60): Իսկ ըստ Ջահուկյանի՝ *երկայն* (<*երկ-այն*) < հե. *dwi-ino (*deu-) (*Ջահուկյան*, 1987, էջ 118):

Աճառյանը գտնում է, որ *երկար* «երկար (թե՛ ըստ ժամանակի տևողության և թե՛ ըստ տարածության)» բնիկ է (< *dwāro), նշելով՝ «ընդարձակ մեկնությունը տե՛ս *երկայն*» (*Աճառեան*, 1973, էջ 61). հմմտ. «ուղիղ մեկնեց Մեյե» (*Meillet*, REA, 4, էջ 1-4)» (ն. տ.): Իսկ ըստ Ջահուկյանի՝ *երկար* «երկար» (< *dwāron «երկարատև») (<* t'w-aH-) (հմմտ. *Гамкрелидзе, Иванов*, 1984, էջ 230). սրա լիահունչ տարբերակն է՝ հայ. *տրեւեմ* «մնալ. տևել» (<* t'ew-) (ն. տ.): Այնուհետև՝ *երկար* «երկար» (< *duā-ro *deu- [*duā-, *dū-]) «հեռանալ, հեռու, երկար ժամանակ» (*Ջահուկյան*, 2010, էջ 227): Իսկ *երկեամ*-ը համարվում է բաղադրված *երկի-ամ* ձևից, որում *ամ*-ը նշանակում է «տարի». *երկի-* (<*dxi-) (*Ջահուկյան*. 1987, էջ 246), որ ընդունում են հետազայում, սակայն արմատի այլ նշանակմամբ. հմմտ. *t'w-o- (հին *t'o-o) > հայ. *երկու*, *երկի-* բարդ բառերում (*երկեամ* «երկամյա. երկու տարեկան»). հուն. δύ(F)ο, δύω, δι- և այլն (*Гамкрелидзе, Иванов*, 1984, էջ 844):

Այնուհետև, *երկու* «երկու». բերվում է մի քանի այլ ձևերի մեջ «*երկո-* (օր.՝ *երկոտրասան*), *երկի-* (օր.՝ *երկեամ*, *եկերիդ*), *երկ-* (օր.՝ *երկդիմի*). նաև առանձին *երկ* «երկու». որից *երկիր* «երկրորդ». Աճառյանը գտնում է, որ ծագում է հե. *dwo, dwōu ձևից (իգականը՝ dwai, չեզոքը՝ dwoi) (*Աճառեան*, 1973, էջ 65-67):

Աճառյանն ունի մի կարևոր դիտարկում, մի գաղափար, որ այդպես էլ չի զարգացնում. ցեղակից լեզուների տվյալների համեմատության մեջ «ամենից ավելի ձևափոխյալը հայն է, այնքան, որ հնդեվրոպական կերպարանքը բոլորովին անճանաչելի է դարձած: Բայց ըստ որում հայերենի բոլոր թվականները բացատրվում են հնդեվրոպականով, ըստ այսմ պետք է որ *երկու* բառն էլ բացատրվի վերի ձևերով: Հայերենի մեջ *երկու*

հին երկակի թվի մնացորդներից է. իր ընկերներից մի եզակի, *երեք* և *չորք* հոգնակի լինելով՝ այս էլ բնականորեն երկակի միայն կարող էր լինել:

Երկակի թվի նշանն է *-ու*. արմատական *երկ-* < dv- ծայնափոխության (հմա՝ հնչյունափոխության. - Վ. Հ.) իբրև օրինակ ունինք նաև *երկ-իւղ*, *երկ-այն*, *երկ-ար*. այս բոլորի մեջ *ե* ավելացված է իբրև հենարան (ծայնավոր նախահավելված.- Վ. Հ.), որով երկու բառի բուն ձևը կլինի *-րկ*, որ շրջված գտնում ենք նաև *կր՝ կր-կին* բառի մեջ (հմմտ. *երեք-կին*, *չորեք-կին* և այլն. բառարանում կա վրիպակ. - Վ. Հ.): Այս *րկ* ձևի մեջ *ր* ծագում է d ծայնի կակղած ծ ձևից (հմմտ. ապարանք < հպրս. apadāna), իսկ *կ* ծագում է w ծայնից՝ անշուշտ անցնելով *q*-ից (հմմտ. *արեգ* < *rev): Նկատելի է, որ բոլոր սկյութական լեզուներում [= իրանական բարբառներ.- Վ. Հ.] d դարձած է ծ, որով ունինք սողդ. ծw՝ «երկու» և ծs «տասը» (MSL, 17, 158)», և եզրափակում է. «Այս ձևերի քննության համար տե՛ս մասնավորապես Meillet, MSL, 11, 394. 12, 227 և 431, 15, 353, 18, 250. Gauthiot, La fin de mot, էջ 76-77)» (*Աճառեան*, 1973, էջ 66-67):

Այսպիսով՝ տրադիցիոն ձևով վերականգնում է այն, որ հայ. *երկու* «երկու» բառը ծագում է հե. *d̥uō- [*d̥uō(u)-] արմատից, ընդ որում *երկի-* (< *d̥uī-), *երկո-* (< *d̥uō) տարբերակներով. Այն-ինչ, ըստ նոր տվյալների՝ *երկու* «երկու» < հե. *(e)rk- (*Ջահուկյան*, 2010, էջ 228. հմմտ. *Աճառեան*, 1973., էջ 66-67. *Pok.*, 1959, էջ 228-230. *Г.-Ив.*, 1984, էջ 133, 844): Այս երկրորդ *երկու*-ի դեպքում հեղինակները տողատակին գրում են. «հմմտ. նման հին զարգացում հիսլ. kvistr, kvisl «ճյուղ». Pokorny 1959, 232» (*Гамктелиძე-Иванов*, 1984, էջ 133):

Վերը բերված թե՛ հին և թե՛ համեմատաբար նոր քննություններում տրվող ստուգաբանությունը առարկելի է:

Երկին(ք) և *երկիր* բառերի ստուգաբանությունը, ինչպես վերը նշեցինք, պատկանում է Ջահուկյանին՝ թեականով, որպիսով ծագման հավաստիությունը փոքրանում է, նաև վերականգնվող (նախալեզվի հիմք հանդիսացող) ձևը նշվում է ոչ նույնը, որ նկատում ենք հեղինակի «Հայոց լեզվի պատմության» մեջ (հմմտ. էջ 84, 117, 123, 166 և այլն. բխեցվում են տարբեր արմատներից):

Ըստ այդմ՝ *երկին-* բառի արմատը, ոչ անկախ էսապալյանից և Աղայանից, ծագում է հե. *dxi-n-(?) (*dei-) ձևից՝ համարելով հնչյունապես կասկածելի, իսկ բառարանում հե. *d(i)xi-n (*dei-) «փայլել, շողալ» (*-u աճականով)՝ «շողացող երկինք», և նշում, որ «կան հնչյունական դժվարություններ» (Джаукян, 1967, էջ 226, 228. *Ջահուկյան*, 1987, էջ 117. նաև 2010, էջ 227):

Գրեթե նույն կերպ նաև՝ *երկիր* < հե. *er-*u-* (*er-), ընդ որում այս դեպքում ևս նշվում է հարցականով, այնինչ բառարանում ծագման համար բերվում են հե. *erdu- (?) [*er- (*er-t-, *er-u-)] ձևեր, որն ինչ-որ չափով հեռանում է նախորդից (*Ջահուկյան*, 1987, էջ 123. նաև 2010, էջ 227): Նա գրում է. «*Երկիր*-ի համար *er-t*u-* նախաձևը վերականգնված է հեղինակի կողմից՝ գերմ. և կելտական համապատասխան աճականներով ձևերի հիման վրա: Այս դեպքում հնչյունական դժվարությունը վերանում է: Ֆինկը և ապա Պեդերսենը վերականգնում են *er-*u-*, ենթադրելով հետագա ձևափոխություն *երկին*-ի ազդեցությամբ (*er*u-* > *եր*q-* > *երկ-իր*) (տե՛ս Պեդերսըն, 1907, էջ 19, 27, 135, 42, 104, 110, 135 և այլն): Հավանական չեն Մեյերի (իմա՛ *երկ-ար*) և Աղայանի [*d*h*er-] առաջարկած ստուգաբանությունները՝ առաջինը

ըստ իմաստի, երկրորդը՝ հնչյունապես» (*Ջահուկյան*, 1987, էջ 166. *Джаукян*, 1982):

Հայտնի է Տ. Դալայանի մի հոդվածը, որում փորձ է արվում *երկ-* բաղադրիչը (ըստ իր նշանակման՝ «բառը») բխեցնել (իր վերականգնումով) հե. **(u)erk^w-o-* կամ **hierk^wo-* նախածնից, որը ճիշտ չէ ոչ միայն լեզվական՝ ստուգաբանական տվյալների հարցում թերացման (նշելով՝ «կամ»), հնչյունական անցման դժվարության, այլև իմաստային՝ մշակութային անհավաստիության պատճառով²⁴: Բավական է միայն հիշել, որ *երկ-* ձևի մեջ *ե-*ն արմատի տարր չէ, այլ ձայնավոր (վանկարար) հավելված (աուգմենտում), որն այստեղ ունի երկրորդային (լրացումային) նշանակություն:

4. Նոր փաստեր. առաջարկներ հարցի լուծման մեջ

Այս համատեքստում բոլորովին այլ է *երկանք* բառի ծագման հարցը: Ըստ Աճառյանի՝ *երկան* «ջաղացք, ջաղացքի քար» (<**g²rāwanā-*), ըստ Ջահուկյանի՝ *երկան* «երկանք, աղացաքար, ձեռքի աղորիք» [< **guranā-* (**gurāuanā*)՝ *guer-* (*Աճառեան*, 1973, էջ 61. հմմտ. *Hübschmann*, 1895, էջ 444-445. *Ջահուկյան*, 2010, էջ 227): Այլև Ջահուկյանը ճիշտ է նկատում, որ սեմականից հնդեվրոպականին անցած «հնագույն փոխառություն» 24 բառարմատից 13-ը կա հայերենում, որոնցից *երկան*-ը առնչվում է արաբ., երբ. ձևերին. *երկան* (< հե. **gurānā*) - արաբ. *grn* «աղալ», երբ. *gōren* «կալ» (*Ջահուկյան*, 1987, էջ 450): Նկատենք նաև, որ *երկան* «աղաց. երկանք» բառը, ի տարբերություն Ս.

²⁴ Դալայան Տ. Ս., *Երկինք* և *երկիր* բառերի ստուգաբանության շուրջ // «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2017, էջ 92-104:

Բուզգեի և Ա. Մեյեի վարկածի, որն ընդունում են Աճառյանը և Ջահուկյանը [*երկան* <հե. *g_urānā (*g_uer-)], ավելի հավանական է համարվում ծագումը հե.*k'ōrāy- «աղաց» արմատից (*Гамкредлидзе-Иванов*. 1984, էջ 693-694):

Հետագայում ևս փորձեր են արվում հայ. *(ե)րկ-* արմատի ծագումը հիմնավորել ըստ եղած տեսության՝ ավելացնելով խեթալուվական (առանձնապես լուվական) տվյալները (տե՛ս *Иванов*, 1983, 4, էջ 22-43. նաև՝ 1984, էջ 61-86): Այս վերջինը բառի համեմատության նոր հնարավորություն է տալիս, այն է՝ *(ե)րկ-*արմատի համեմատության տարածում լեզվի բառապաշարի այլ օրինակների վրա: Վյաչ. Իվանովի հիշյալ աշխատանքում, ի նպաստ բառի ծագման վերաբերյալ նախկին տեսության հիմնավորման, լուվերենից բերվող լրացուցիչ օրինակի դեպքում ևս, կարծում ենք, քննությունը մնում է ոչ հավաստի (տարակուսելի), որքան էլ այլ լեզուների հետ նոր զուգահեռների անցկացումը և դրանց մանրամասն վերլուծությունը, հատկապես, հնչյունական անցումների սահմանումների մեջ, թողնում են գիտական աշխատանքի խորը տպավորություն (*ն. տ.*):

Եվ ի լրացումն այս ուղղությամբ մինչև այժմ արվածի՝ նույն արմատից ծագած ունենք հայ. (բրբռ.) *սռնել* «երկանքով» հատիկը խոշոր աղալ՝ երկու կտոր անել» բառը՝ արմատի կազմիչ առաջին հնչյոթների դրափոխությամբ, այն է՝ պայթական հետնալեզվային խուլի շփականացում՝ *-կր - // *-տր- (տե՛ս Մուշ, Ալշ., Սասուն, Մոկս, Ուրմ. և այլն). հմմտ. *կրկորդ* // *ստորդ* «կրկորդ» (*կրկորդ* < հե. *g_uo(r)-g_uor. *ստորդ*-ը, ըստ Աճառյանի՝ «անստույգ» է, ըստ Ջահուկյանի՝ անհավանական, թեև դրանք նույնն են իմաստով (ուրեմն նաև հնչումով), նաև *սկունդ* «շան ծագ» // *շուն* (< *k'ūon, *k'ūon-to) (?) և այլն:

Բնատնտեսության մեջ առաջնային նշանակության այդ գործիքը և նրա գործածելիությունը (այս դեպքում՝ ֆունկցիան), որ անվանապես ծագում են նույն արմատից, իմաստային տարբերակմամբ ավելի հավաստի են դարձնում քննության առարկա բառերի «երկու մաս՝ երկակի և այլն» իմաստի ընդհանրությունը. այդպես նաև *երկու* «երկու» բառը, որը, մեր կարծիքով, ծագում է նույն՝ հե. *k^oer- արմատից²⁵:

Իսկ ավանդական համեմատաբանության, այլև վերջինիս լրացում նոր ուսումնասիրությունների կողմից *երկու* «երկու» բառի համար նշվող *d_uo [*d_uō(u)] (ըստ Ջահուկյանի) կամ *dwo (*dwo) (ըստ Աճառյանի և նախորդների) ընդհանուր արմատը (ծագման առումով անկախ ծայնավորման տարբերությունից) ընդհանուր պետք է համարել միայն հայ. *դու(եմ)* «(ժամանակի մեջ) երկարել՝ շարունակվել. տոկալ», *դուկ(ամ)* «դիմացկուն լինել, դիմանալ» և այլն բառերի հետ (*Աճառեան*, 1979, էջ 416. *Ջահուկյան*, 1987, էջ 119, 162 և այլն):

Նման քննությունը նոր որակ է հայերենի համեմատական-տիպաբանական ուսումնասիրության բնագավառում, ըստ այդմ՝ յուրովի հեռանկարային գիտության զարգացման առումով (հմմտ *Иванов*. 1958, էջ 101-111. *Knobloch*, 1961, էջ 541-544):

Եզրակացություններ

1. Հայ. *(ե)րկ-* / *կր-* լծորդական արմատի գոյությունը վաղուց նկատված է, սակայն չի դիտարկված ծագումնային այն համատեքստում, որ կարելի է հիմնավորել հնդեվրոպական լեզվաբանության նորագույն տվյալների հիման վրա. ելակետայինը

²⁵ Սա նաև առանձին քննության հարց է:

երևույթի երկատումային աշխարհընկալումն է՝ ամենանախնական պատկերացումների մեջ:

2. Մեյեի և մյուս ուսումնասիրողների կարծիքը, որ հայտնվել է ժամանակին և մնում է նաև հետագայում, հայ. *երկինք / երկիր* միավորի ծագման վերաբերյալ՝ թե՛ հնչյունապես և թե՛ մանավանդ իմաստով ներկայումս թեական է, ոչ հավաստի:

3. Ըստ այս հարցում գոյություն ունեցող նոր տվյալների հիշյալ լծորդ արմատը ծագում է հե. *k^oer- արմատից, որ հայերենում (գրականում և բարբառներում) ունի մի շարք ձևացումներ (*երկու, երկար, երկնչել, կրկին, սոնել* և այլն)՝ նույնությամբ կամ դրափոխմամբ:

4. Նման վերլուծությունը հեռանկարային է հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների առնչությունների համեմատական-տիպաբանական հավաստիության (վերիֆիկացիայի) առումով՝ ամենից առաջ հայերենի նախագրային շրջանի պատմության համար:

3) Հայ. *առակ* // *առած* < հե. *reg'-

Ներածական

Թվում է, թե սրանք տարբեր բառեր են, քանի որ հայերենի գրավոր շրջանից ի վեր դրանք հանդես են գալիս ձևային և իմաստային զգալի տարբերությամբ, այնինչ ծագումով և կազմությամբ նույն արմատի ձևացումներ են՝ լեզվի պատմական զարգացման ընթացքում:

Աստվածաշունչ գրքում հայ. *առած* բառը գործածվել է 16 անգամ, իսկ *առակ*-ը՝ 115 (մոտավորապես 1-ը 8-ի հարաբերությամբ): Դրանք նույն արմատի տարբերակներ են, ծագում են

հնդեվրոպականի համար վերականգնվող նախաձևից: Նախկինում այդ հարցին տրվել է բոլորովին այլ լուծում:

1. Մինչև այժմ եղած բառաքննական փորձերը

Նախ անդրադառնանք մինչև այժմ եղած առավել հայտնի բառաքննական փորձերին (մեկնաբանություն, համեմատություն և այլն):

Հայ. *առած*, ըստ Աճառյանի՝ «1. երկնային ներշնչում, հայտնություն, տեսիլ, 2. աստվածային սպառնալիք, պատգամ», որ սկզբնապես վերաբերում էր աստվածներին, իսկ հետագայում՝ նաև նկատի են առնվում «սուրբ հայրերի պատվերները (իմա՛ պատվիրանները - Վ. Հ.), բարոյական վճիռ կամ իմաստասիրական ճշմարտություն (նոր հայերենում նշանակում է «առակ, ասացվածք») (*Աճառեան*, 1971, էջ 249):

Աճառյանը գտնում է նաև, որ *առած* բառը «կազմուած է *-ած* մասնիկով *առ-ն-ուլ* բայից (հմմտ. *արար-ած*), ճիշտ ինչպես հոմանիշ հուն. *λῆμμα* «1. ստացած բան, շահ, 2. իմաստասիրական առած, 3. ներշնչում, մարգարէութիւն» կազմուած է *λαμβάνω* «առնել» բայից», միաժամանակ նշվում է, որ նման «մեկնութիւնը ծանօթ էր հներին» (*ն. տ.*), և ըստ այդմ էլ՝ հետագա հայ բառարանագիրներին, նաև հայ և եվրոպացի լեզվաբաններին:

Այսպես, Ֆ. Մյուլլերը բառը համեմատում է հինդկ. *rāji*, զենդ. *rāza*, այլև զենդ. *rāzarān* «կարգ», որը բավականին մոտ է հավաստիությանը: Ըստ հ. Ս. Տերվիշյանի՝ այն բաղադրված է *առ* մասնիկով, այլև նույնն է *առակ* բառի հետ (տե՛ս *Dervischjan*, 1877, էջ 91): Կարծիք է հայտնվում նաև, որ բառն ունի *առ-ած* բաղադրությունը, որում *-ած* բաղադրիչն «*ատել* բայի հնագույն

ծնն է»։ այս կարծիքը, ինչպես Աճառյանն է նշում, ընդունում է նաև Մեյեն (*Աճառեան*, 1971, էջ 249)։

Իսկ *առակ* բառի համար Աճառյանը նշում է, որ «առաջին և նախնական նշանակությունն է «օրինակ», և ըստ այսմ շատ անգամ գործածուած է *օրինակ* բառի հետ միասին», և մյուս՝ նախորդի կոնկրետ նշանակություններն են՝ 2) «դիտելու բան, տեսնելու առարկա», 3) «ծանակ, նշավակ, խայտառակ» և այլն, որն (ըստ Աճառյանի) «կազմված է *ակն* «աչք» բառից՝ *առ* նախորդով. սակայն այստեղ առնուած է բառի հնագոյն արմատական *ակ* < հնխ. **ōki* ձևը» (*ն. տ.*, էջ 249-250)։ Այս դեպքում ևս Աճառյանը բերում է այն կարծիքները, որոնք հայտնվել են այդ բառի բացատրության կամ ստուգաբանության համար, որոնցից ոչ մեկը հավանական չէ, բացի նրանից, որ ստուգաբանական անհաջող բառարաններից մեկում *առակ*-ը բխեցվում է *ակն* «աչք» բառից, իսկ *անառակ*-ը՝ *առակ*-ից (*ն. տ.*, էջ 250)։

Ինչպես կարելի է նկատել, թե՛ մեկ, թե՛ մյուս բառի իմաստ(ներ)ը ճիշտ են նշված, սակայն առասպելական (միֆոլոգիական), եթե ոչ նաև բանաստեղծական (պատկերացումային) կողմը բացատրված չէ. պարզ չէ նաև իմաստի կամ իմաստների անցումների հարաբերական ժամանակագրությունը. իմաստի սոսկական նշումը բավարար չէ պատկերացման և անցումների համար։

Ջահուկյանը հայ. *առած* բառը բերում է (*առ*)*ած* տեսքով և բխեցնում հե. **əg*'- [**əg*'-], նաև հայ. *աս-եմ* ձևը (< **əg*'-), որ ըստ հեղինակի բառացանկի, զուգահեռ ունի միայն իտալյան լեզուներում (*Ջահուկյան*, 1987, էջ 121, նաև 2010, էջ 76)։ Ընդամին նշվում է հետևյալը. «*Առած* բառի *ած*-ի ստուգաբանությունը տրված է ըստ Մաքսուդյանի (MSL, 17, 356), որի կարծիքն

ընդունում են Մեյեն (Ernout-Meillet, 1959, էջ 19) և Պոկոննին (Pok., 1, 290): Աճառյանը (ՀԱԲ, 1, էջ 249) կազմված է համարում *առ-ն-ում* բայից *-ած* ածանցով («առնված բան»)» (*Ջահուկյան*, 1987, էջ 163):

Այնուհետև, *առակ* բառի համար հայտնվում է բոլորովին այլ կարծիք՝ *առ-ակ* բաղադրություն, որի *առ* (< *porsō [<*(h)or̥u-]) բաղադրիչը հնագույն հայերենում «առաջին հերթին գործածվելով որպես նախդիր՝ տարբեր հոլովներով, սա հին հայերենում արտահայտում է գերազանցապես մերձավորության գաղափար, որ հիմնականում պահպանվում է նաև նախածանցային կազմության դեպքում: ... *սպ*-ով և *ստ*-ով սկսվող արմատների մոտ հանդիպում է լրացուցիչ *ա* (*առա-*), որ կարող է լինել կամ նախահավելվածային, կամ, թերևս, հ.-ե. *-ō վերջածայնի զրո աստիճանի արտացոլում՝ *porsō- > *առա-*» (*Ն. Կ.*, էջ 243): Սրանից բացի տվյալ դեպքում նշելի է նաև հետևյալը. «Հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից *առ*-ն ստացել է նոր գործածություն՝ հուն. πρὸς-ի դիմաց: Առանձնացնենք ոչ հունաբան հին կազմությունները՝ *առագաստ* (հմմտ. *ագանիմ* «հագնել»), *առածիմ* (հմմտ. *ածեմ*, *ածիմ*), *առակ*, *առակոուկ* «հակառակող»...» (*Ն. Կ.*, էջ 243-244): Հետագայում, *առակ* և *առած* բառերի վերաբերյալ Ջահուկյանի բառարանում նշվում է սուկ հետևյալը. «*առակ*, տե՛ս *առ* և *աս-ել*» (*Ջահուկյան*, 2010, էջ 72):

2. Նորագույն տվյալների ընդգրկում

Նորագույն տվյալները հնարավորություն են տալիս հայ. *առած*, այլև *առակ* բառերի համար առաջարկելու նոր ստուգաբանություն, տալու համեմատաբար ավելի հավաստի բացատրություններ:

Ամենից առաջ նշենք, որ ծագումնային նույն արմատի տարբերակներից առաջ եկած հայ. *տոակ* // *տոած* բառերի ստուգաբանական մեկնաբանության համար ելակետային նշանակություն ունի այն, որ ամենից առաջ պետք է հաշվի առնել դրանց իմաստային-պատկերացումային ոլորտը՝ դիտված տարածական և ժամանակային կտրվածքների մեջ: Այն, ինչ հնագույն է և նախնական, հետագայում, մանավանդ հայերեն գրավոր ավանդույթով ամրագրվելիս, կարող են ունեցած լինել բավականին զգալի փոփոխություններ: Նախնականի վերականգնումը ըստ ձևի և իմաստի՝ տվյալ դեպքում ունի առանցքային նշանակություն:

Առակ//տոած բառերի նախնական (եթե ոչ՝ սկզբնական) իմաստը կապվում է «ասել, խոսել» ընդհանուր իմաստի հետ, ընդ որում տարածական-ժամանակային հստակ բաշխվածությամբ: Իսկ դա այլ բանի հետևանք չէ, քան ձայնական գործողության, որ հանդես է գալիս տվյալ պահին, տվյալ դեպքում: Այսպես, Վ. Ի. Տոպորովը գտնում է, որ տեքստի կառուցումը տեղի է ունենում տարածության և ժամանակի մեջ, և տարածության լիարժեք չափումն այլ կերպ չէ, քան «այստեղ-հիմա» (ոչ թե՛ «այստեղ»), նույնը ժամանակի՝ ոչ թե պարզապես «հիմա», այլ «հիմա-այստեղ» (տե՛ս *Tonopov*, 1983, էջ 239):

Այս բառն ունի զգալի թվով զուգահեռներ ցեղակից լեզուներում, որոնցում պահպանված են ոչ միայն հնագույն իմաստները, այլև տեղ են գտել նորերը. հմմտ. հինդկ. *rājas* «տարածություն» (*rjāti* «տարածք»-ի դեպքում) (*ն. տ.*): Հմմտ. լատիներեն բայաձևի և նրանից կազմված անվանման իմաստային կազմը. *regō* «ղեկավարում եմ, ուղղորդում եմ, որոշում՝ վճռում եմ և այլն», *rēxi* «ղեկավարեցի, ուղղորդեցի, որոշեցի՝ վճռեցի և

այլն» ձևերի անորոշ դերբայն է *regĕre* «ղեկավարել, կառավարել (նավը, ձիերին, մարդկանց և այլն», «ուղղել, ուղղորդել (դեպի նպատակը՝ նպատակին), «որոշել, վճռել, հաստատել», «հրահանգել, ցուցում տալ» (տե՛ս *Дворецкий*, 1976, էջ 864. *Համբարձումյան*, 2007, էջ 336), այնուհետև՝ լատ. *rĕx* «թագավոր, (իշխող)», «արքայազն, իշխան», (անեզ.) «արքայական զույգ», «գերագույն քուրմ», «բռնակալ», «տիրակալ, գերիշխան, տեր», «խրատատու, դաստիարակ» և այլն (*Дворецкий*, 1976, էջ 881):

Այս երկուսի մեջ ամենանախնականը «ասել, (իր խոսքը) առաջ բերել՝ առաջ տանել» իմաստն է, այսինքն՝ «ղեկավարելը», կամ ղեկավարն այդպիսին է ամենից առաջ, նախնական իր խոսքով, իր ասածով, որով պիտի կատարվի, իրագործվի նախատեսվածը, տեղի ունենալիքը:

Մյուս կողմից, բերենք հետևյալ օրինակը. հայ. *տնիծ* // *տնեծ* տարբերակային արմատն ավանդաբար բխեցվում է հե. **reug'* «մոնչել» արմատից, որ, ինչպես նաև Աճառյանն է գրում, «տալիս է հայ. *ռեծ* և *ռ-*ի պատճառով՝ *ա* հավելվածով՝ *տնեծ*», որն էլ համեմատվում է ցեղակից մի շարք ձևերի հետ (*Աճառեան*, 1971, էջ 259)²⁶: Բառի հետագա բացատրությունը, մանավանդ ցեղակից՝ հուն. *ῥοῦγῆ* «ռոնոց», *ῥοϋγμός* «մոնչիւն» և այլն», միու. *rucht* «ռոնոց, աղաղակ», գոթ. *in-rauhtjan* «կատաղել» և այլն ձևերի իմաստաբանության հետ կապված, Աճառյանը այլ կերպ է մեկնաբանում. «Այս բոլորը կազմուած են պարզական *reu-* «ռոնալ, գոչել, մոնչել» արմատից՝ *g'* աճականով: Նոյնից *k*

²⁶ Աստվածաշնչում, օրինակ, *տնիծ* // *տնեծ* բառը գործածված է 143 անգամ, *իւ-*ով՝ 76, *իսկ եւ-*ով՝ 67:

աճականով ունինք հայ. *rykati*, ռուս. *рыкать, рычать* «մոնչել, բառաչել» ... և այլն» (*Աճառեան*, 1971, էջ 259)²⁷:

Այնուհետև, Աճառյանը մեկ այլ դեպքում հետևյալ կերպ է անդրադառնում *անեւծ* բառին. «Երբ ստուգաբանելու համար *անհիծ* (հին ձևը՝ *անեւծ*) բառը դիմենք հնդեվրոպական նախալեզվի (լատիներեն *rex* «թագավոր») «տիրել, կառավարել» արմատին, որ պիտի տար հայերեն *ռեւծ*, *ռ*-ի (իմա՝ *ա*-ի) հենարանով *անեւծ*, ավելացնենք մեր կողմից *ւ* (*անեւծ*) և դուրս բերենք թագավորից մի գաղտնի անուն. օրինակ առնելով պարսկերեն *šir* «առյուծ» բառը, որ ծագում է իբր զենդերեն *xši* «իշխել» արմատից ինչպես ստուգաբանեց Ղափանցյանը (*Ղափանցյան*, 1927, 2, էջ 106), կատարում ենք շատ կամայական ստուգաբանություն: Իրավունք չունենք մեր կողմից որևէ *ւ* ավելացնելու. պարսկերեն *šir* «առյուծ» բառի ծագումը «իշխել» բայից առաջարկել է Դարմատետերը (*Etym. iran*, 1, 106), որ հիշում է Հոռնը (§ 803), բայց չի ընդունված լեզվաբանների կողմից, և Բարթոլոմեն իր բառարանում ամենևին չի էլ հիշատակում այն: Այսպես որ համեմատությունն իսկ անգո է: Շատ ավելի բնական է դնել *անեւծ* հնդեվրոպական նախալեզվի *reug* «մոնչել» արմատից, որից ունենք հունարեն *ἐρυγόντα* «մոնչելով», *ῶρυγή* «ոռնոց, մոնչյուն», լատիներեն *rugis* «առյուծի մոնչելը», միջին իռլանդերեն (...) «մոնչյուն», անգլոսաքս. *rēoc* «վայրի, վայրենի» և այլն» (*Աճառյան*, 1971, էջ 762):

«Առյուծի մոնչյուն (ծայն)» նշանակող հնդեվրոպական բառի նորագույն համեմատություններում առնչություն կա նաև «(ցուլի) բառաչյուն՝ մոնչյուն» (դա նկատում է նաև Աճառյանը

²⁷ Հմմտ. նաև ռուս. *речь* «արտասանվածք. խոսք»:

հուն. դեպքում) [թերևս նաև «(գոմեշի) մոլնգոց (ծայն)»] իմաստների հետ. հմմտ. հիռլ. rucht «մոնչյուն, ոռնոց», հուն. (հոմ.) ἐρύγομαι «ռոնալ, բառաչել» (փխբ.՝ «հերոսի, ծովի համար ասված». հունարենն ունի նաև «ցովի համար ասված», ἐρύγηλος «մոնչացող, բառաչող»), լատ. rugiō «մոնչում եմ (ինչպես առյուծը)», հսլավ. рѣžo «վրնջում եմ», հռուս. рѣжати «վրնջալ, խրխնջալ» (< հե.* reu-): «Այս սկզբնական նշանակությունից բնականաբար առաջ է գալիս կենդանիների անվանումը, մասնավորապես «առյուծ». հայ. առեւծ «առյուծ» (*Աճառեան*, 1971, 1, 259)». հմմտ. հանգլ. реос «վայրի» (իմաստային զարգացման առումով հմմտ. ռուս. лютый зверь), հիսլ. raukn «լծված կենդանի» (*Гамкредидзе, Иванов*, 1984, էջ 511):

Կարելի է կարծել, որ ծայնային գործողություն կատարելու տեսանկյունից «խոսել, ասել» (մարդու դեպքում) և «մոնչալ, մոռնչ արտահայտել» (գազանի, հատկապես՝ առյուծի դեպքում) նախնական իմաստով նույնն է, և համեմատաբար ավելի ուշ է, որ դա տարբերակվել (դիֆերենցվել) է՝ *մարդ-գազան* (մյուս կենդանի) հակադրությամբ: Մյուս կենդանիներից, օրինակ, *առիւծ* (*առեւծ*) անունը ծագում է հնդեվրոպական նույն արմատից, ինչ *առակ* և *առած* բառերը (*reg'-). *առյուծ* անունը իր ծայնային առանձնահատկությունից է, պայմանավորված է իրեն իսկ բնորոշ ծայնով:

3. Կարևոր մեկնաբանումներ՝ իբրև լրացում

Հայերենի համար վերականգնելի առավել հավանական ձևը, այլև իմաստային զարգացումը հավաստում են առավելապես հնագույն վիճակների հետ առնչություն, որն ուսումնասիրո-

ղից պահանջում է ավելի լայն քննարկում և նորագույն տվյալների վրա հիմնված վերլուծություն:

Այդ առումով հիշենք հայերենի ուսումնասիրությանը վերաբերող մեկ-երկու զգուշացում, մասնավորապես հայ. *կ//ծ* պայթականների ծագման և տարբերակման, առհասարակ առերևույթ մեկնաբանության հետ կապված:

ա) Անդրադառնալով հայերենի հնչունաբանության և ստուգաբանության խնդիրներին՝ Ջ. Բոլոնիեզին գրում է հետևյալը. «Հայերեն բառերի սխալ ստուգաբանությունների վերլուծության հիման վրա երբեմն արվել են համարձակ հետևություններ կամ ամբողջովին անհիմն եզրակացություններ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողել նույնիսկ հայերենի հնչունաբանության ուսումնասիրության վրա» (*Բոլոնիեզի*, 1982, էջ 21):

բ) Առաջ է քաշվում հետևյալ դրույթը. «Հայերենի պայթականների համակարգի վերլուծությունը հնդեվրոպական համակարգի առնչակցությամբ թույլ է տալիս դատել նրա բացառիկ հնատիպության մասին», այլև՝ «կատկայինների (իմա՝ ծերպածայնայինների - Վ. Հ.) տեսության լույսի ներքո պայթականների գրաբարյան համակարգը գերմանականի պես հանդես է գալիս իբրև հնդեվրոպական նախնական համակարգին ամենամոտ կանգնածը հնչույթաբանական հնատիպ հարաբերակցությունների պահպանման տեսանկյունից» (*Գամբելուժե*, 1984, էջ 33): Նման մոտեցման հաստատումը, ավելի ևս՝ նոր, լրացուցիչ փաստերով (օրինակներով) հիմնավորումը հեռանկարային են և լիովին կարող են նպաստել հայերենի վերաբերյալ նոր հայեցակետի զարգացմանը, առնվազն՝ առաջ քաշված նոր տեսության առավել հիմնավորման և լրացումային ճգրտումների:

գ) Որ հայ. *առած* // *առակ* տարբերակային բառերը չեն կարող ունենալ հունատիպ՝ *առ-* նախդրով կազմություն (*առ-ած* // *առ-ակ*), կարելի է հիշել, օրինակ, Ա. Փերիխանյանի ստուգաբանությունը հայ. *հարեան* բառի, որտեղ իրավամբ մերժվում է, ի թիվս այլոց, նաև Մ. Աբեղյանի կարծիքը, ըստ որի՝ «բառը կազմված է հայ. *յար(ա)-* + հայ. *վան* (հմմտ. *վան-ք*) բաղադրիչներից և հորինվածքով համանման է հուն. *πάροικος-ին*» (Քերիխանյան, 1993):

Մեկ այլ օրինակ. ունենք հայ. *առոգանել* // *ռոռոգանել* «ռոռոգել» (< *srou-, հմմտ. հինդկ. srāvati «ռոռոգել, ջրել»), ըստ որի հայ. *ա-*ն հետագա հավելվում է (**ա-ռոգ-*)՝ մի կողմից, հայ. *առոգանել*, *առոգանություն*, որ պատճենում է հուն. προσφῶδία (< προσ- φῶδία) «առոգանություն» բառի՝ մյուս կողմից (*Մուրադյան*, 1971): Այս դեպքում, թերևս, գործ ունենք պատմականորեն փոփոխության ենթարկված հին և համեմատաբար հետագա իմաստների բաղադրության (կոնտամինացիայի) հետ: Ուստի հնարավոր է հնդեվրոպական միասնության շրջանում տարբերակային ձևեր դիտել *srou- (< *s-roū-) // *reg'- արմատները՝ հնչյունական նման մեկնաբանությամբ, «հոսել, դուրս հանել, արտաբերել» (հմմտ. *առու* «հոսք») ընդհանուր իմաստով, որը բոլորովին այլ հարց է:

Եզրակացություններ

1. Քննության առարկա տարբերակային արմատի՝ նախկինում եղած ստուգաբանական փորձերը մասամբ կարող են հիմք հանդիսանալ բառի ծագման վերաբերյալ հավաստի ենթադրության համար:

2. Նոր փաստերի և տեսական դիտարկումների մեջբերումով այս դեպքում ևս փորձ է արվում հիմնավորելու արմատի բնիկ լինելը, այլև հնարավոր առնչությունը ցեղակից լեզուների ձևերի հետ:

3. Արմատի հնչյունական անցումների նշանակումը, իմաստային անցումների մեջբերումը բավարար են ստուգաբանական որոշակի շեմ ապահովելու համար:

4) Հայ. մարգարիտ - ասոր. margānīṯā

Ներածական

Առանձին ուշադրության առարկա *մարգարիտ* բառը «Վիպասանք»-ի հայտնի հատվածի կարևոր միավորներից է: Մինչև այժմ այդ բառի ծագման վերաբերյալ չունենք հավաստի կամ վերջնական քննություն՝ ստուգաբանության, մանավանդ հայերենի բառապաշարի իմաստային (թեմատիկ) որևէ խմբի պատկանելու առումով: Բառը փոխառություն է ոչ ավանդաբար նշվող, այլ ուրիշ լեզվից, և դա ունի իր կովանները:

1. Անդրադարձ նախկինում հայտնված կարծիքին

Հայերենի բառապաշարում այսօր սովորական *մարգարիտ* բառը, որ «Նոր հայկազյան բառարան»-ում բացատրվում է «հատիկ («ուլն». հմմտ. *ուլունք*) ծովային խեցեմորթի. սերմն սատափի. գոհար բոլորչի կաթնորակ փայլուն» իմաստով, հայտնի է նախագրային ժամանակաշրջանից, օրինակ՝ «Վիպասանք»-ից,

որից անցել է ոչ միայն Ս. Գրքին, այլև ինքնուրույն և թարգմանական գրականությանը (ՆՀԲ, 1837, էջ 218)²⁸:

Հ. Աճառյանն առհասարակ բառը համարում է հետագայում գրի առված, որն առարկելի է: Այդ բառին նա անդրադառնում է նախ՝ «Արմատական»-ում (Աճառեան, 1977, էջ 277-278), իսկ ավելի ուշ՝ առանձին հոդվածով (նույնը՝ «Լեզվի պատմության» 2-րդ մասում) (Աճառեան, 1946, էջ 163-173):

«Արմատական»-ում, բառի ստուգաբանությանը հաջորդում է հետևյալ լրացուցիչ բացատրությունը. «Հայերեն բառը առհասարակ դնում են (իմա՝ Կլապրոտ, Բուազաք և ուրիշներ - Վ. Հ.) հունարենից. բայց որովհետև նա ավանդված է այնքան հին ժամանակից, երբ դեռ հունարեն փոխառություններ չէին կարող լինել հայերենում, ուստի ավելի հարմար եմ կարծում դնել հռոմեական փոխառություն, քանի որ լատ. margarita, margaritum ձևերը դեռ Կիկերոնի և Տակիտոսի ժամանակից գործածական են» (Աճառեան, 1977, էջ 277):

Գրեթե նույնը գտնում ենք հեղինակի՝ հայոց լեզվի պատմությանը վերաբերող աշխատանքում՝ փոքր-ինչ ավելի ընդարձակ բացատրությամբ (նշում ենք հետևյալ մասը). «Ձարմանալի է, որ այդ հնագույն ժամանակից ունենք նաև մի հունական փոխառյալ բառ (մարգարիտ), որ լեզվի պատմության հետ համաձայնեցնելու համար պետք է համարել ավելի հռոմեական փոխառություն, քանի որ լատինական margarita, margaritum ձևերը

²⁸ Տարակուսելի է, որ բառարանի վկայություններում չենք գտնում «Վիպասանք»-ի հատվածի օրինակը:

դեռ Կիկերոնի և Տակիտոսի ժամանակից գործածական են» (*Աճառեան*, 1951, էջ 75)²⁹:

Այլ կերպ ասած՝ ժամանակագրությունը բերվում է ավելի հետ, այն դիտվում է համեմատաբար ուշ փոխառություն: Աճառյանը գրում է նաև, որ լատ. *margarita* բառը իր հերթին փոխառություն է հուն. *μαργαρίτης* ձևից («հոմանիշից»), որ հանդիպում է ոչ միայն այդ, այլև *μάργαρον*, *μαργαρις* և *μάργαρος* ձևերով: Այնուհետև քաղելով Բուազաքի բառարանի տվյալները (որ ժամանակին օգտագործել է նաև Հյուբշմանը)³⁰ Աճառյանը նշում է բառի հետ նույնական ձևեր այլ լեզուներում. պրսկ. *marvārid*, *murvārid*, ասոր. *margānīthā*, գոթ. *marikreitus*, որոնց սկզբնաձևը համարվում է հինդկ. *manjara* «ծաղիկների փունջ, ծաղկի կոկոն, մարգարիտ» (*Աճառեան*, 1977, էջ 277. հմմտ. *Boisacq*, 1923, էջ 610):

Աճառյանը նշում է նաև, որ առաջինը Կլապրոտն է, որ հայ. *մարգարիտ* բառը համարում է հունարենից փոխառյալ, որն ընդունում են «Նոր հայկազյան բառարան»-ի հեղինակները, ինչպես նաև Հյուբշմանը (*Hübschmann*, 1895, էջ 363. հմմտ. *Фасмер*, 1967, էջ 572): Սակայն, ի տարբերություն Հյուբշմանի, որ փոխառությունը համարում է հունարենից, Աճառյանը, ինչպես վերը տեսանք, «ավելի հարմար է կարծում» համարել լատիներենից՝ այն բացատրությամբ, որ այն, կրկնում ենք, «ավանդված է այնքան հին ժամանակից, երբ դեռ հունարեն փոխառություններ չէին կարող լինել հայերենում» (*ն. տ.*):

Մարգարիտ բառի ամենահին գործածությունը հանդիպում է «Վիպասանք»-ում, այդ մասին նշում է նաև Աճառյանը «Արմատական»-ում՝ տողատված բերելով համապատասխան հատ-

²⁹ Գ. Զահուկյանը ընդունում է Աճառյանի ստուգաբանությունը (տե՛ս *Զահուկյան*, 2010, էջ 515):

վածը. «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, // Տեղայր *մարգարիտ* ի հարսնութեան Սաթինկանն» (*Խոր.*, էջ 179)³⁰:

2. Բառի փոխառության ժամանակի նոր սահմանի գծում

Այս ամենով հանդերձ՝ բառի փոխառության ժամանակի վերին սահման պետք է դիտել ոչ վաղ, քան հայոց Արտաշես արքայի (մ. թ. ա. 189-160 թթ.) գահակալությունը, և ոչ ուշ, քան քրիստոնեական մշակույթի սկզբնավորումը հայ իրականության մեջ, քանի որ ինչպես այդ, այնպես էլ «Վիպասանք»-ի մյուս հատվածները, իբրև հայ բանավոր ստեղծագործության նմուշներ, առաջացած պիտի լինեն հեթանոսական տևական ժամանակում:

Ըստ այդմ՝ հայերենի նախագրային ժամանակաշրջանի պատմության նոր շրջանաբաժանում անցկացնելու դեպքում նկատում ենք, որ այդ ժամանակը պիտի լինի հայ-հնդիրանահունական առնչությունների շրջանը (մ. թ. ա. I հզր. կես - մ. թ. I-III դդ.), երբ, կարելի է ասել, բանավոր հյուսվում և պատմվում է հերոսական դեպքերի պատմությունը, մինչև որ գրի առնվեր առավելապես Խորենացու «Հայոց պատմություն» երկում³¹:

Այսպես, իմացական առումով անհետաքրքիր չէ *ոսկի* և *մարգարիտ* բառերի հարաբերակցությունը դիտարկել հին աշխարհի պատկերացումների (այլաբանական՝ առասպելական-դիցաբանական) համատեքստում՝ հետևյալ մասնավորմամբ.

³⁰ Խորենացու Պատմության քննական բնագրում *մարգարիտ* բառը չունի գրչագրական որևէ տարընթերցում, այսինքն՝ բառը ձեռագրերում գործածված է անխաթար ձևով (տե՛ս *Խորենացի*, 1991, էջ 179):

³¹ Ինչպես հայ-հնդիրանահունական, այնպես էլ նման այլ շրջանների առանձնացումը հայերենի նախագրային ժամանակաշրջանի պատմության համար ոչ միայն անհրաժեշտ է, այլև միանգամայն արգասավոր է և հեռանկարային:

ենթադրել, որ *ոսկու* և *մարգարիտի* [արականի և իգականի՝ + (այլուս) // - (մինուս) (?)] այլաբանական սերտաճումը (կապակցումը կամ համակցումը) կար հին աշխարհի վերերկրային պատկերացումներում, ուստի, ըստ այդմ, նաև գիտակցության մեջ, և կարելի է մտածել, որ այն ունեցել է (վիպական առասպելականի) լեզվական նշանակում (հմմտ. *Մարգարյան*, 2006, էջ 15-16):

Մարգարիտ բառի վերը բերված համեմատությունը՝ տարբեր տիպի լեզուներում, թույլ է տալիս ենթադրելու, որ հիշյալ կապակցումը կամ համակցումը եթե ոչ փառապանծ միասնության, ապա երախտաբեր (արգասավոր) միակցության խորհրդանիշ է եղել՝ այլաբանություն հին աշխարհի տարբեր ժողովուրդների (հնդեվրոպական և այլն) վիպական պատումներում, որի նշույլները կարելի է տեսնել նաև հետագա ժամանակներում, օրինակ՝ Ս. Գրքում նույնպես այն ունի իր բուն և այլաբանական արտացոլումը:

3. Բառի գործածությունը Ս. Գրքում՝ համեմատությամբ հունարենի

Մարգարիտ բառը Ս. Գրքում գործածվել է 14 անգամ, որից 6-ում այն հարակցվում է *ոսկի* բառին կամ կապակցվում նրա հետ՝ իբրև հիմքում ընկած ընդհանուր հասկացության զույգ (միաձույլ) նշանակում (*ոսկի* // *մարգարիտ*):

Ընդ որում երեք անգամ հարակցությամբ (*ոսկի ... մարգարիտ*). «ուր կային գահոյք բազումք *ոսկեղէնք* եւ արծաթեղէնք ընդելուզեալք *մարգարտաւք* եւ ականքք պատուականաւք» (*Եսթեր*, Ա, 6), «մի՛ ի հիւսս *ոսկեմանս* ընդելուզեալս *մարգարտով*, կամ ի հանդերձս պաճուճեալս» (Ա *Տիմոթ.*, Բ, 9), «Վա՛յ,

վա՛յ, քաղաք մեծ, որ զգեցեալ էիր բեհեզս եւ ծիրանիս եւ որ-
դան, *սուկեզօսս* եւ քարինս պատուականս եւ *մարգարիտս*»
(*Յայտն*. ԺԸ. 16): Եվ նույնքան անգամ կապակցութեամբ (*սուկի* և
մարգարիտ). «Եւ զգեցեալ էր զպատմութեան փառացն իւրոց, որ
էր ընդելուզեալ *սուկով* եւ *մարգարիտով* եւ ականբք պատուա-
կանօք» (*Եսթեր*, ԺԵ, 9), «Եւ Հողովեռն նստէր ի գահոյսն իւր, եւ
էր փակեալ զնա վարագուրաւք շուրջանակի, զորս էր ընդելու-
զեալ *սուկով* եւ *մարգարիտով* եւ ականբք պատուականաւք»
(*Յուդիթ*, Ժ, 19), «Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս եւ կարմիրս, եւ
զարդարեալ *սուկով* եւ *մարգարիտով* եւ ականբք պատուակա-
նաւք» (*Յայտն*., ԺԷ, 4):

Ի դեպ՝ հունարեն բնագրում *սուկի* և *մարգարիտ* բառերը
գործածված ենք գտնում նույնպիսի հարաբերակցութեամբ.
հմմտ. «ուր կային գոհոյք բազումք *սուկեղէնք* եւ արծաթեղէնք
ընդելուզեալք *մարգարիտաւք* եւ ականբք պատուականաւք» (*Ես-
թեր*, Ա, 6) [հմմտ. “ κλίναί χρυσαί καί άργυραί έπι λιθοστρώτου
σμαραγδίτου λιθου καί πιννίνου καί παρίνου λίθου“ (*Septuaginta*,
1935, էջ 952-953)], «Եւ Հողովեռն նստէր ի գահոյսն իւր, որ էր
փակեալ զնա վարագուրաւք շուրջանակի, զորս էր ընդելուզեալ
սուկով եւ *մարգարիտով* եւ ականբք պատուականաւք» (*Յուդիթ*,
Ժ, 19) [= “ και ήν Ολοφέρνης άναπαυόμενος έπί τής κλίνης ούτού
έν τω κωνωπίω, ό ην έκ πορφύρας καί χρυσίον καί σμαραγδου καί
λίθων πολυτελώ” (*Septuaginta*, 1935, էջ 991)]:

Ս. Գրքի հուն. *σμαραγδίτον* (*մարգարիտաւք*), *σμαραγδου*
(*մարգարիտով*) ձևերը հնչյունապես հետու են մարգարիտի, այլև
մարգարոն, մարգարիս և մարգարոս ձևերից (բուն արմատով՝ մոտ),
որ կարող է առանձին քննութեան առարկա լինել, սակայն այս-
տեղ նկատենք, որ բառարաններում և նախորդ ուսումնասիրող-

ների աշխատություններում նշվող հուն. *μαργαρίτης*, այլև լատ. *margarita* (հիմնական) ձևերը հազիվ թե կորցրած լինեն իրենց սեռանիշ (-դ, -a) վերջավորությունները հայ. *մարգարիտ* ձևի վերածվելու համար (իբրև մեկից կամ մյուսից անմիջական փոխառություն), այլ ավելի հավանական է ենթադրել դրանցից յուրաքանչյուրի ինքնուրույն զարգացումը: Իսկ այս դեպքում ո՞րն է այն բուն աղբյուրը, որից ծագում են (հնդեվրոպական նախածնից) կամ փոխառվում (հնդեվրոպական մեկ այլ լեզվից, կամ ոչ հնդեվրոպական որևէ լեզվից) այդ (հուն., լատ. հայ.) ձևերը. այստեղ է, որ մենք ենթադրություն ենք անում, այն է՝ բառը փոխառություն է ոչ հնդեվրոպական մեկ այլ լեզվից:

4. Եղած «տեսության» վերանայման հնարավորությունը

Այսպիսով, նկատենք, որ հայ. *մարգարիտ* բառի *-(ա)րիտ* ենթադրելի մասը համընկնում է ոչ միայն հուն. *-արիտ*, լատ. *-arita* և պրսկ. *ārid*, գոթ. *-reitus*, այլև ասոր. *-āriṯā*, վերջապես հինդկ. *-ara* «բաղադրիչներին» (տե՛ս *Աճառեսն*, 1977, էջ 277): Ըստ այսմ՝ մի կողմից ունենք *t / d / θ* տարբերություն, իսկ մյուս կողմից՝ այդ «բաղադրիչներին» նախորդող հետնալեզվայինի *g / j* տարբերակում (հմմտ. հուն., լատ., հայ., ասոր. *g*-ով ձևերը հինդկ. *j*-ով ձևի հետ):

Այնուհետև, եթե հին հայերենի բառապաշարում չունենք (ըստ գրաբարի բացատրական և ստուգաբանական բառարանների տվյալների) փոխառյալ *մարջան* (*մարճան*) «ծովաբույսի (կենդանու) կրացումից առաջացած մի տեսակ միացություն», ապա այն գտնում ենք միջին հայերենի գրական հուշարձաններում. «*Մարջան*, տե՛ս *մարճան*: Եւ են, որ բոյս են, որպէս *մարջանն* ի ծովն, և են ի կենդանոյ, որպէս *մարգարիտն* (Բանք,

306) [= Հովհաննես Երզնկացի, Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք («Բանքեր Մատենադարանի», հմ. 4, Ե., 1958)]» (տե՛ս *Ղազարյան, Ավետիսյան*, 1992, էջ 119) և այլն:

Մարջան-ը փոխառություն է արաբերենից, որի դեպքում արդի հայերենի բառարանները հղում են *բուստ* բառին. ըստ Մալխասյանցի՝ «*բուստ*, *բիստ*. պարսկ. busad. պոլիպների կրացած՝ ծառի նման ճյուղավորված, սպիտակ, կարմիր կամ սև մարմինը, որը ծովի տակից որսալով՝ նրանից զարդարանքներ են պատրաստում. մարջան», իսկ ըստ Աղայանի՝ «ծովային կենդանի, պոլիպների մի տեսակը. այդ կենդանիների կրացած մարմիններից գոյացած սպիտակ, կարմիր կամ սև գույնի քար, որից հատուկ մշակությամբ զարդարանք են պատրաստում, մարջան (կորալ)» (*Մալխասեանց*, 1944, էջ 393. *Աղայան*, 1976, էջ 209-210): Բառը, իր հերթին, կարծում ենք, ծագումով առնչվում է ասոր. margānīthā ձևին (հմմտ. արաբ. margān. ըստ Մալխասյանցի):

Եվ եթե մեր այս համեմատությունը և ըստ այդմ՝ ենթադրությունը հավանական են, ապա պետք է նաև կարծել, որ հայերենի *մարգարիտ* բառն ունի հնագույն ծագում, որ հասնում է հնդեվրոպական-սեմական առնչությունների ժամանակները: Իսկ դա, իրոք, առանձին քննության առարկա է ոչ միայն, այսպես կոչված, միջընտանիքային (հնդեվրոպական-սեմական) առնչությունների առումով, այլև տարբեր ընտանիքների ներսում դրանց՝ առանձին լեզուներում (հունարեն, լատիներեն, հայերեն, իրանական լեզուներ և այլն) ժառանգորդական ձևերի ինքնուրույն կամ փոխազդեցական զարգացման տեսանկյունից:

Եզրակացություններ:

1. *Մարգարիտ* բառի գործածությունը նախագրային հայերենում, գրառված հետագա վիպական (բանավոր) հայտնի հատվածում, ենթադրության հիմք է մեկ այլ լեզվից փոխառություն լինելու:

2. Գրավոր աղբյուրներում բառի նման հնչյունական կազմով հանդես գալը հավանական վկայություն է փոխատու լեզվում ևս նույնպիսի հնչման մասին:

3. Նոր տվյալների համեմատաբար ավելի լայն քննությունից կարելի է եզրակացնել, որ այն փոխառություն է ասորերենից, որի ուշ շրջանի մի ձևն է հայ. *մարջան* բառը (նոր փոխառություն):

5) Հայ. *եղեռն* բառի ծագման մասին

Ներածական

Այս բառի ծագումը և գրական հայերենում նրա գործածության դրսևորումները ենթադրում են ավելի հստակ վերլուծություն և բնորոշում: Համեմատությունը ոչ միայն հայերենի բառապաշարում արմատի տարբերակվածության առումով, այլև այլ լեզուների հետ ունեցած հնարավոր առնչությունների տեսանկյունից ևս ունի իր կարևորությունը:

1.Բառի բնագրային և բառարանային արծարծումները

Հայերենում ունենք *եղեռն* «չարիք, վտանգ, ոճիր, աղէտք, պատահար, վնաս» (ըստ ՆՀԲ-ի) բառը, որի ծագման և տիպաբանության հարցը ենթադրում է բառային միավորների ավելի լայն քննություն, քան կարելի է կարծել առաջին հայացքից.

գործածված է Ս. Գրքում, Եզնիկի, Ոսկեբերանի, Եվսեբիոսի և այլոց երկերում: Առաջինում այն հանդիպում է ուղիղ, այլև ածանցական ձևերով. ուղիղ ձևով՝ երկու անգամ. «Եւ ոչ ծանեալ զլինելոց *եղեռն* իւր, ասէ Տէր, որ գանձէին անօրէնութիւն եւ թշուառութիւն ի գաւառս իրեանց» (*Ամոլս*, 3. 10). «Եւ յղարկեցին զՄենեղաւոս վասն իշխանացն զրժոյութեան եւ ագահութեան: Հաստատեալ կայր չարախաւսութիւն մեծ, *եղեռն* վնասուքաղաքացոցն իւրոց կացուցանէր» (*Բ Մակ.*, 4, 50): Իսկ ածանցմամբ՝ *եղեռնաւոր* ձևով գործածվում է երեք անգամ (*Գ Մակ.*, 5. 19, 21, *Գ Մակ.*, 6. 21):

Եր. Մեղրեցու բառարանում վկայված են հետևյալ բառերը՝ իրենց բացատրությամբ. *եղեռն* «չար, դառն», *եղեռնագործ* «չարագործ», *եղերական* «լալական», *եղերամայր* «ժողով լալեաց, ծայնարկուաց, կոռոյ», *եղերերգու* «լալական երգ» (*ԲՀ*, 1975, էջ 86):

Աճառյանը, ի տարբերություն ՆՀԲ-ի հեղինակների, *եղեռն* բառից է կազմված համարում միայն *եղեռնաւոր*, *եղեռնագործ* «ոճրագործ», *եղեռնական* «եղերական», *եղեռնահամ* «դառնահամ» և (նոր գրականում) *եղեռնադատ* բառերը՝ մերժելով նախորդների այն մոտեցումը, թե հայ. *եղեր* «ողբ» բառը ևս առնչվում է *եղեռն* բառին (այդպես է վարվել ոչ միայն ՆՀԲ-ն, այլև, հավանաբար, վերջիններիս հետևելով, Պ. դը Լագարդը, Ս. Բուզգեն և ուրիշներ), որը և, իր հերթին, տեղիք է տալիս հարցի մանրամասն քննության: Եվ այդպես էլ Աճառյանը չի տալիս *եղեռն* բառի որևէ ստուգաբանություն, որ արվում է ավելի ուշ, հետագա ուսումնասիրողների կողմից (*Աճառեան*, 1973, էջ 17):

2. Բառի ստուգաբանական փորձերը

Ավանդական համեմատական լեզվաբանության մեջ *եղեն* բառի և հարակից մյուս բառերի համար առանձնացվում է հնդեվրոպական այնպիսի հավանական արմատ, որ ցեղակից լեզուներում հանդես է գալիս շուրջ մեկ տասնյակ համանունային տարբերակներով:

Վերջին կարգի տարբերակների մասին, առհասարակ, ընդունելի բնութագրություն է տալիս Գ. Ջահուկյանը. «Ինչպես հայտնի է, համանունությունը բազմիմաստության սահմանն է. բազմիմաստության զարգացումը՝ բառիմաստի տարբեր առումների հեռացումը հանգեցնում է համանունների առաջացման: Համանունության մյուս աղբյուրը փոխառություններն են, որոնք, մուտք գործելով լեզվի մեջ, կարող են արդեն եղած բառերի հետ համանուններ կազմել: Արդի վիճակում մենք առայժմ կարող ենք հավաստիորեն խոսել միայն առաջին տիպի համանունների մասին, այն էլ նկատի առնելով գերազանցապես արմատական իմաստները: Յ. Պոկոռնու բառարանում համանուն արմատները մեծ թիվ են կազմում. երբեմն առկա են մեկ տասնյակից ավելի արմատային համանուններ» (*Ջահուկյան, 1987, էջ 53*):

Եվ ըստ այսմ էլ բերվում են հայերենում իրենց տարբերակային արտացոլումն ունեցող, իրոք, մեկ տասնյակից ավելի արմատներ՝ իբրև համանունային տարբերակներ, որոնցում չկա հե. *el- արմատի տարբերակումը: Սակայն վերջինս գտնում ենք հեղինակի բառային զուգաբանությունների ցանկում. հայերենի համար *el- համանուն արմատները խմբավորված են 8 «տարբեր իմաստային խմբերի մեջ», որոնցից 5-րդը ներկայանում է հետևյալ տեսքով. «Ընդհանուր հե. *el-, որ հայերենի համար հանդես է գալիս այս կամ այն տարատեսակով՝ կապված պարզ

կամ ածանցական ձևով, ծայնդարձի լրիվ կամ զրո աստիճանով. 1) *el- > հայ. *եղեռն* «չարիք, փորձանք, ոճիր», 2) *el-g-(?) > հայ. *եղծ* «եղծելը. հերքում», *եղծանեմ* «եղծել. հերքել», 3) *ol- > հայ. *ողորմ* «խեղճ, ողորմելի», 4) *l- > հայ. *աղ-էպ* (?) «փորձանք. աղետ», 5) *l-no (?) > հայ. *աղն* «աղետ, եղեռն», *աղունք* «աղալու համար նախատեսված հատիկավորներ՝ ցորեն, գարի և այլն», 6) *l-gi-(?) - > հայ. *աղճապ* (?) «խճողված, աղճատված» (*Ջահուկյան*, 1987, էջ 121. *Джаукян*, 1983, էջ 62):

3. Պարզաբանումներ արմատի վերականգնման հարցում

Ինչպես նկատում ենք, թե՛ հե. արմատի վերականգնման և թե՛ հայերենի արտացոլման որոշ դեպքերում կա թեականություն (նշվում է հարցականով): Սրանցից *եղծ* (*եղծանեմ*), *աղէպ*, *աղն* (*աղունք*) և *աղճապ* բառ(արմատն)երի ստուգաբանությունը նորություն է, այսինքն՝ հայերենի արմատաբանությանը հայտնի է Աճառյանի բառարանից հետո, իսկ *ողորմ*-ը Աճառյանը, ոչ անկախ Մեյեից, ծագած է համարում հե. *orm- արմատից (հմմտ. գերմ. arms «թշվառ» և հիսլ. armr, aumur «դժբախտ, ողորմելի» և այլն), որ չեն ընդունում հետագա ուսումնասիրողները (*Աճառեան*, 1977, էջ 556. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 164):

Միաժամանակ մյուս աշխատություններում նշվում է, որ հե. *el- արմատից ծագող ձևեր ունեն ցեղակից լեզուներից միայն խեթական և կելտական լեզուները, իսկ իտալյան լեզուները նշվում են հարցականով (*Ջահուկյան*, 1987, էջ 121. *Джаукян*, 1983, էջ 62 և այլն):

Այն հարցը, թե դրանք, իբրև բազմիմաստությունից համաձայնության անցման տարբերակներ, որքանով են ամբողջանում մեկ ընդհանուր իմաստի մեջ, քննության առարկա չի դառնում,

թելուզ պատմական շրջանի արմատաբանության տեսության լույսի տակ: Գ. Զահուկյանը մեկ այլ դեպքում հայ *-առն*, *-տոն*, *-իռն*, *-ռոն* և *-ուռն* վերջնահանգ մասնիկներից ոչ մեկին չի անդրադառնում (*Զահուկյան*, 1994, էջ 53-66, նաև 1995, էջ 37-50. 2010, էջ 792-814):

Եթե ենթադրելու լինենք, ապա կարելի է ասել, որ դրանք հավանաբար չեն դիտվում որպես այդպիսիք, մանավանդ նախագրային հայերենի բառակազմության մեջ: Սակայն նման վերջնահանգ մասնիկներով (վերջածանցներով), կամ թելուզ այդպիսին համարելի բաղադրությամբ բառերը հայերենում զգալի թիվ են կազմում (ըստ Գ.Զահուկյանի տվյալների՝ 75 միավոր):

Դրանցից *-տոն* վերջածանցով կա շուրջ երկուսուկես տասնյակ բառ (24 միավոր), և դարձյալ ըստ Զահուկյանի բառարանի տվյալների.

ա) 11-ը բնիկ է. *բեռն* [*<* հե. *bher-no (bher-) «բերել, տանել»], *եղեռն* (հե. *el- «ոչնչացնել, վնասել»), *ընթեռնուլ* (*<* հե. *ter- «բարձրաձայն խոսել»), *թիթեռն* (*<* հե. *pter-), *կեռնեխ* (*<* հե. *ger-), *ձեռն* [*<* հե. *g'hes(o)r- «ձեռք»], *ձմեռն* (*<* *g'heimerinos- «ձմեռ»), *ջեռնուլ* (*<* հե. *guher-nu (*guher-) «տաք. ջերմ»), *սեռն* (*<* հե. *k'r-no (*k'er-) «աճել, աճեցնել, սնել»), *սիսեռն* (*<* հե. *k'eik'eron- (*k'ik'er-), *ցեռն(ն)* [*<* հե. *skern-no (sker-) «կղկղել»],

բ) 4-ը՝ եկամուտ (փոխառյալ)՝ *կիսարեռն* «ավազան, ցիստեռն» (հուն. κιστέρνα), *ներն* (հուն. Νέρων *<* լատ. Nero, -nis. կայսրի անուն) (?), *սեռն* «սոնի, առանցք» [արամ. sarnā (seren)], *տարեռնի* «խանութ. կրպակ, պանդոկ» (հուն. ταβέρνα *<* լատ. taberna), 1-ը՝ նմաձայն՝ *ճիճռումք* «ճովողուն»,

զ) Ց-ը՝ անհայտ ծագման՝ *բնդեռն* «մի սև բզեզ», *ենճենն* «նենգ, խարդախ» [նաև՝ *էնճեռ* «սպառազեն» (?)], *թեռ(ն)* «բրդե թել», *լիսեռն* «սրունքոսկր, առանցք», *կոզ(ե)ռն* «անչափահաս, մանուկ», *կոզ(ե)ռն* «ուղտի ձագ», *տեռն* «?» (հարցականով). *տի-տեռն* «կոկորդիլոս»:

Նման քննարկումը, չհաշված մեկ-երկու դեպքի, կատարված է ավանդական համեմատաբանության տվյալների հիման վրա, մասնավորապես Հյուբշմանի, Պոկոռնու, Աճառյանի հետևությամբ:

Իսկ այժմ անդրադառնանք բուն խնդրին՝ *եղեռն* բառին և նրան ծագումնաբանորեն (ըստ ձևի և իմաստի) այս կամ այն չափով առնչվող բառերին՝ կատարելով ինչ-ինչ ճշգրտումներ՝ բերելով թեական լինելու հետ կապված լրացուցիչ փաստարկներ, ընդհանուր արմատին վերաբերող այլ լեզուների տվյալներով լրացումներ:

Է. Աղայանն անդրադարձել է հետևյալ բառերին. *աղունք* (եզ. թիվ՝ *աղն*) «աղետ, եղեռն» (հմմտ. *աղէպ* // *աղեպ* «փորձանք. պատուհաս», *աղճապ* «խեղված, ոչնչացված», նաև *եղծ* «ոչնչացում, հերքում») (< հե. *el- // *ol- «փչացնել, ապականել. ոչնչացնել, կործանել») (*Աղայան*, 1974, էջ 17-18, 30-31, 153 և այլն. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 164. *Համբարձույան*, 2012, էջ 119):

Ուշագրավ դիտարկում ունի Հ. Սուքիասյանը. նախ՝ տարբերակներ են դիտվում *եղեր* և *եղար* արմատները՝ իբրև «ողբ, լաց, կոծ» ընդհանուր իմաստի կրողներ՝ հղելով *ողբ* բառին, այնուհետև՝ *եղծ* (որից՝ *զեղծ*, *զեղծարար*) արմատի համար նշվում են մի շարք իմաստներ՝ «տձև, անշուք, խանգարված, հերքումն, ապականումն, քանդելը, փչացնելը» < *el-g'- (հե.*el-/*ol- / *! - «ոչնչացնել, փչացնել»), ընդ որում արմատական

տարբերակներ են նշվում, աճականով՝ *աղճադել* (*-g-), առանց աճականի՝ *եղեռն / եղեր, աղն / աղունք* «աղետ, եղեռն» (բացատրության մեջ երկրորդ բառը վրիպակով «եղեգն» է - Վ. Հ.), *աղէտ / աղէտ* : Նշվում են նաև ցեղակից լեզուների համեմատելի ձևեր. հուն. ἄλλομαι «փչացնել, ապականել», ἄλέχω «ոչնչացնել», հիդ. olc «վատ», մբրետ. el-boet «քաղց», բրետ. ol-argant «անփողություն», ol-buid «սննդի պակասություն, սննդի կարիք», հրգերմ. ilki «քաղց», լիտվ. eĩgitis «մուրալ», egeĩta «աղքատ», ռուս. алкать «քաղցել, տենչալ» (*Սուքիասյան*, 1986, էջ 157)³² :

Այստեղ, *ողբ* բառի առումով նկատենք, որ հեղինակը մեկ քայլ առաջ է գնում, քանի որ այն համեմատության մեջ է դնում մյուս ձևերի հետ, թեև իր նախորդներն այդպես չեն վարվել. Զահուկյանը, ոչ միայն *ողբ*, այլև *ողողանամ*-ի հետ կապված, գրում է հետևյալը. «*Ողբ*-ի համար Զոլտան (Solta, 1960, էջ 197) նշում է նաև *el / *ol-ին զուգահեռ *ul- հնչարմատին (Schallwurzel) պատկանող լիտվ. ulbũoti «կանչել, երգել» բայը, որ ունի հայերենին համապատասխան շրթնային աճական», այնուհետև՝ «*Ողողանամ* բայի հետ միասին Աճառյանը (*Աճառյան*, 1977, էջ 555) հիշատակում է նաև բրբռ. ուլուլալ «ողբալ» բայը, որ, սակայն, ունի այլ ձայնավորում և մեր կողմից հատկացվում է հ.-ե. *ul-- (կրկն. *ul-ul) արմատին («ճչալ, ոռնալ»)» (*Զահուկյան*, 1987, էջ 164):

Կարելի է ենթադրել, որ հայ. *եղուկ* «ավաղ, ափսոս. խեղճ, ողորմելի, թշվառ» բառի *եղ-* արմատը ևս համեմատելի է *եղեռն*-ի հետ, մանավանդ եթե նկատի ենք ունենում նաև իմաստով մոտ լինելը: *եղուկ*-ի վերաբերյալ ընդունված ստուգաբանու-

³² Տողատակին նշվում է. «*աղէտ* բառի համար Է. Աղայանը վերականգնում է *olei-d նախածկը, ուր *d > ր-ն աճական է» (*Աղայան*, 1974, էջ 17-18) :

թյունը մերժում է Ջահուկյանը. «*եղուկ* «ավաղ, ափսոս. խեղճ, ողորմելի, թշվառ» բառի ստուգաբանությունը պատկանում է Շեֆտելովիցին (BB, 28, էջ 308 [= G. Scheftelowitz, Zur altarmenischen Lautgeschichte // "A. Bezzenbergers Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen", 28, 1904. ըստ Գ. Բ. Ջահուկյանի]), այլև ընդունվում է Աճառյանի կողմից: Կասկածելի է *-ug- > -ուկ անցման պատճառով, թեև *leug'- արմատը ունի նաև *leug- տարբերակը, բայց *-u-ից հետո հայերենում *g-ն նույնպես քմայնանում է և փոխվում -ծ-ի: Իմաստի համար հմմտ. հինդկ. -ruj «ցավ, հիվանդություն», հուն. λευαλογέες, λυγρός «ահավոր. տանջալի, վշտալի, խեղճ», լատ. lūgueō, -ēre «սգալ», lūgubris «վշտալի, սգալի»: Մեջբերման երկրորդ մասում նշումը՝ իմաստային կողմի վերաբերյալ, բավականին հուսալի հիմք է *եղուկ*-ը դնելու *եղեռն*-ի շարքում:

4. Արմատի տարբերակների առանձնացման հարցը

Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» գրքում իմաստային (թեմատիկ) ցանկում հե. *el- արմատից ծագած համարվող *եղեռն*, *եղծ* (*եղծանեմ*), *ողորմ*, *աղէպ*, *աղն* (*աղունք*), *աղճապ* բառերին, բնականաբար, անդրադառնում է նաև «Ստուգաբանական բառարան»-ում, դրանց վերաբերյալ արվում են հետևյալ կարգի դիտարկումները (բերում ենք այստեղ առանձին-առանձին) (*Ջահուկյան*, 1987, 121, 164, նաև 2010, էջ 36, 38- 39, 213-214, 601):

1) *եղեռն* «չարիք, փորձանք, ոճիր». «թերևս բնիկ հնդեվրոպական *el- «ոչնչացնել, վնասել» արմատից. հմմտ. հուն. ολλυμι, ολεκω «ոչնչացնել, կործանել», թերևս նաև խեթ. Էլլաի «հաղթել, պարտության մատնել, ոչնչացնել»: -Pok. IEW 1, 306: Ավելի քիչ հավանական է կապը *եղար*, *եղեր* բառերի հետ» (*Ջահուկյան*,

2010, էջ 213): Հմնտ. Եր. Մեղրեցի «*եղեռն* «չար, դառն», այլև՝ *եղեռնագործ* «չարագործ», *եղերական* «լալական», *եղերամայր* «ժողով լալեաց, ձայնարկուաց, կոռոյ», *եղերերգու* «լալական երգ» (ԲՀ, 1975, էջ 86): Այստեղ երկու անգամ գործածվում է «թերևս»-ը, որ նշանակում է, թե հեղինակը հարցի լուծումը չի համարում վերջնական: Նույնը նկատում ենք *եղծ*-ի ստուգաբանության դեպքում:

2) *Եղծ* «խանգարված, ապականված, ավեր, տձև, անկերպարան, պակասավոր, վատ, շինծու, հերքում»։ «թերևս բնիկ հնդեվրոպական *el-g'- [*el-] «ոչնչացնել, փչացնել, ապականել» արմատից, որից թերևս՝ *el-g- «խեղճ, աղքատ, պակասավոր», *el-k «քաղցած, վատ»։ հմնտ. հուն. օլլսւմ «կործանել, ոչնչացնել, սպանել, քանդել, հեռացնել», օլեւ «ոչնչացնել. կործանել», բրետ. օլ, մբրետ. el «պակասություն, կարիք»: Իմաստային առումով հեռու է հե. selg-«արձակել, նետել, թափել» արմատը» (Ջահուկյան, 2010, էջ 214):

3) *Ողորմ* «ողորմ, գութ»։ «բնիկ հնդեվրոպական՝ *ol- [*el-] «ոչնչացնել, վնասել» արմատից, որից նաև *եղեռն* (տե՛ս): Աճառյանը (Աճառեան, 1977. էջ 556) համեմատում է գերմ. համիմաստ բառերի հետ՝ գութ. arms, հոլ. arm, գերմ. arm «խեղճ, թշվառ», և վերականգնում է հայ.-գերմ. զուգաբանություն՝ հայերենի համար կրկնավոր տարնմանությամբ (*որորմ > ողորմ) զարգացում. սակայն Պոկոռնին (Pok., IEW 1, 782) գերմ. արմատը հատկացնում է *orbho- «որբ» արմատին (խիստ կասկածով՝ *orbh-mo-)» (Ջահուկյան, 2010, էջ 601):

4) *Աղէտ* «գութ, ցավ, վիշտ, չարիք, փորձանք»։ «բնիկ հնդեվրոպական, բայց բուն ձևի վերականգնումը դժվարություն է հարուցում. ամենից ավելի հավանական է բխեցնել հ.-ե.*oleid-

ձևից՝ *lei- < *eiei- «դադարել, փոքրանալ, անհայտանալ արմատից. հմմտ. հիսլ. litt «քիչ, վատ» (այլև՝ lei-t >), գերմ. leiden «հարդուրժել, տառապել» (*Джаукян*, 1967, էջ 150): Ավելի քիչ հավանական է համեմատությունը *ol- «ոչնչացնել, վնասել, փչացնել» արմատի ածանցյալների հետ. հմմտ. հայ. *եղեռն, ողբ*: Աղայան, ԲՍՀ 17-18» (*Ջահուկյան*, 2010, էջ 36):

5) *Աղն (աղունք)* «աղետ, եղեռն». «հնդեվրոպական *olen (?) [*el-] «ոչնչացնել, վնասել, փչացնել» արմատից. հմմտ. հայ. *եղծ, եղեռն*, հուն. ολλυμι «ոչնչացնել, կործանել»: Աղայան, ԲՍՀ 17-18» (*ն. Կ.*, էջ 39):

6) *Աղճապ* «աղավաղված». «թերևս բնիկ հնդեվրոպական *lgio- [*el-] «ոչնչացնել, վնասել, փչացնել» արմատից. հմմտ. հայ. *եղծ, եղեռն*. «ոչնչացնել. կործանել»: Աղայան, ԲՍՀ 17-18: Ջահ. ՀԼՊ 121» (*Ջահուկյան*, 2010, էջ 38):

Նկատենք, որ մինչ այս (իր նախորդ աշխատություններից մեկում) Ջահուկյանը հայ. *աղճապ*-ը հարցականով համեմատում է *այլ, աղաաղ* բառերի հետ, ընդ որում համեմատությամբ «լիդ. ալա «ուրիշը», ալիда-ժ «փոփոխություն?», այլև թերևս ալե՛լ. [o.] «փոփոխել?») բառերի (*Ջահուկյան*, 1970, էջ 143):

Այնուհետև, կարծում ենք, որ հայ. *աղճապ*-ից, թերևս, կարելի է առանձնացնել *աղճ*- մասը, եթե այն դիտենք համեմատելի հայ. *աղչ*- (*աղչ*- / *աղչ*-) (իմա՛ *աղչ-կորել, աղչ-կորել, աղչ-կորել* «ստիպել, բռնադատել») տարբերակային արմատների հետ:

Ջահուկյանը, օրինակ, նշված երեք բառի դեպքում նախ՝ համեմատում է խեթ. alšant- «կողոպտված, գերված, բռնված, բանտարկված», alš- «կողոպտել (?), գերել (?), բռնել (?), բանտարկել (?)» ձևերի հետ, այնուհետև՝ ծանոթագրում է հետևյալը. «Անստույգ է: Խիստ կասկածելի է *աղչկորել*-ը *աղչ* և *կոր* ար-

մատների բաժանելը. ավելի հավանական է *-որ*-ը դիտել իբրև ածանց (հմմտ. *խառնշորորել, փորորել* և այլն) (*ն փ.*, էջ 152. հմմտ. *Tischler, 1990*, էջ 20): Մտածում ենք, որ «խիստ կասկածելի» լինելը վերանում է, եթե նախ՝ խեթական *alsant-* ձևից առանձնացնում ենք *-ant* բաղադրիչը, այնուհետև՝ չենք անտեսում խեթերեն և հայերեն ձևերի իմաստային ընդհանրությունը (եթե ոչ՝ գրեթե նույնական լինելը): Իսկ տիպաբանական առումով համեմատելի են հնդեվրոպական և այլ տիպի (ուրարտերեն, կովկասյան և այլն) լեզուների ինչ-ինչ ձևեր. 1) հմմտ. հե. **el-* / **ol-* «քշել, շարժման մեջ դնել. շարժել, գնալ» - ուրարտ. *ul-* «գնալ. տանել (?)». վարել (?)», *-ul-ušt-* «առջևից գնալ (?)», նախորդել (?)» (*Джаукян, 1967*₁, էջ 42. հմմտ. *Хачукян, 1985*, էջ 108, 110, 176.): 2) հմմտ. հե. *el-* «քշել, շարժ(վ)ել, գնալ» - վրաց.- զան. *wl-* «գնալ» (այլև վրաց. *wal-* / *wl-*, մեգրել. *ul-*, սր, ճան. *ul-*), *wlɕ* «փախչել» և այլն (*Джаукян, 1967*₁, էջ 92):

Եզրակացություններ

1. Արված ճշգրտումները և լրացումները, ցեղակից և ոչ ցեղակից լեզուների հետ համեմատությունները ավելի հավանական են դարձնում բառ(արմատ)ի և նրանից բաղադրված բառերի ծագումն ու տիպաբանությունը:

2. Եվ այդ բառը ըստ այդմ և իր ձևաիմաստային տարբերակներով պիտի ընդգրկվի հայոց լեզվի բառաքննական և ստուգաբանական նոր բառարանի մեջ:

6) Հայ. արտորալ և արտոյտ բառերի մասին

Ներածական

Արտորալ և արտոյտ բառերի քննությունը մինչև օրս մնում է ոչ ամբողջական, այն ենթադրում է բառագիտական և ստուգաբանական լրացուցիչ անդրադարձ՝ հիմնված եղած ձեռքբերումների և նոր տվյալների վրա. վերջինը նոր փորձ է այդ ոլորտում: Այդ բառերին այստեղ անդրադառնում ենք հնչյունական, այլև իմաստային-գործառական որոշ յուրահատկությունների նկատառումով:

1. Հարցի քննությունը նախկինում

Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ում *արտորալ* «շտապել, փութալ» բառը չունի որևէ ստուգաբանություն (համարվում է «անստոյգ բառ») (*Աճառեան*, 1971, էջ 344):

Աճառյանի հիշյալ բառարանի նյութի վերաբերյալ դիտողություններում, այլև «Հայոց լեզվի պատմություն» գրքում Գ. Ա. Ղափանցյանը, ի լրացումն իր առանձնացրած ընդամենը երեք հարյուր բնիկ հնդեվրոպական արմատների, անդրադառնում է նաև մի քանի նոր արմատների, որոնցից մեկն էլ *արտոյտ* (տարբերակ՝ *արտուտ*, *արտիտ*, *արտոտ*) բառն է. այն մի կողմից՝ համեմատվում է հնդեվրոպական լեզուներից բալթյան-սլավոնական, ռոմանական և այլ լեզուների ձևերի հետ՝ առանց նախաձևի նշման (վերականգնման), մյուս կողմից՝ բերվում են հայերենի բարբառների որոշ տվյալներ՝ գրելով, որ «հայերենում թերևս սպասելի էր **արթուտ*, իսկ նշանակության չնչին տարբերությունը արժեք չունի»: Ըստ այսմ՝ *արտ*- արմատի ծագման հարցը մնում է չլուծված: Թերևս նույնը կարելի է ասել հեղինակի այն

առարկության վերաբերյալ, որ արված է *արտորալ* բառի առնչությամբ (*Ղափանցյան*, 2008, էջ 6, նաև 1961, էջ 359):

Հետագա գործածությամբ (բարբառներում՝ հայտնի) *արտորալ* (որից գրական՝ *արտորք*, *արտորանք*) բառի ստուգաբանությանը ավելի ուշ անդրադառնում է Է. Բ. Աղայանը. նախ՝ նշվում է, որ Աճառյանը «արմատական ձևն է համարում *արտորք*, բայց պարզ արմատն է *արտ-*, որ ածանցված է *-որ* մասնիկով», այնուհետև՝ գտնում է, որ «ծագում է հնդեվրոպական **drā-* արմատից. որ նշանակում է «վազել, շտապել»՝ համեմատությամբ ցեղակից լեզուների. «հին հնդկերեն *prāti* «վազում է, շտապում է», հունարեն *δραπετεύω* «վազում եմ (վրայով)», հին բարձր գերմաներեն *zittarōm* «շտապում եմ», գոթերեն *anatrimpan* «շրջել, շարժվել», միջին բարձր գերմաներեն *trumpfen* «վազել», անգլերեն *tramp*, *trample* «մտնել» և այլն: Հայերենը ծագում է *drā-* ձևից, *dr > րտ* օրինաչափ տեղափոխությամբ (հմմտ. **drakru* > արտասուք, *dhabhro* > դարբին և այլն) և բառասկզբում *ր-*ից առաջ *ա-*ի հավելումով, որից և ստացվել է *արտ-* պարզական արմատը» (*Աղայան*, 1974, էջ 35):

Գ. Բ. Զահուկյանը, որոշակի վերապահությամբ է մոտենում Է. Բ. Աղայանի այդ ստուգաբանությանը՝ գրելով հետևյալը. «Թերևս բնիկ հնդեվրոպական **der-* արմատի **drā-* ձևից՝ *-որ* ածանցով և հայերենին հատուկ դրափոխությամբ. հմմտ. հինդկ. *drāti* վազում է, շտապում է!, հուն. *εδραν* «վազել, փախչել»: -Աղայան, ԲՄՀ 35» (*Զահուկյան*, 2010, էջ 97):

2. Ավանդականի վերանայման (կամ վերածարծման) հարց

Մենք ստորև, իր տեղում. կանդրադառնանք հե. **der-*/**drā-* արմատի՝ հայերենում ունեցած դրափոխությանը, և առհաս-

րակ նման արմատից ծագած լինելու հարցին, իսկ մինչ այդ հարկ ենք համարում անդրադառնալ հայ. *արդր-* արմատով բառերից մեկ-երկուսին:

Այս արմատին է առնչվում հայ. *արդրույր* «աբեղաձագ (թռչունը)» բառը՝ *-ույր* (< *-ոյր*, տարբերակներ՝ *-ուր*, *-իւր*. *արդրույր*. *արդրիւր* և այլն. տե՛ս վերը) մասով: Հայ գրական հուշարձաններում այդ երկուսի՝ իրար մոտ կամ նույնական լինելու ամենալավ օրինակը, կարծում ենք, հանդիպում ենք Հ. Թումանյանի հետևյալ քառյակում. «Կըլթացնում են, *արդորում / Արդուրները* արտերում, / Թըռչում մանուկ հոգուս հետ, / Ճախրում. ճըխում եթերում» (Թումանյան, հ. 2, Ե., 2018, էջ 35):

Արդույր բառը հայերենում, մանավանդ նոր գրականում, ունի ոչ պակաս տարածված գործածություն. «Լոռու հանդում՝ մի *արդուր* / Նայում է միշտ իմ ճամփին» (Ն. ր., էջ 34). «Ոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին, / *Արդույրներին* ոսկե հանդում ասում եմ ես, մնա՛ք բարով» (Տերյան, Երկեր, Ե., 1989, էջ 147) և այլն:

Այն ևս, ըստ Աճառյանի, «անստույգ բառ» է, որի բուն նշանակությունն է «արտի՝ մարգագետնի թռչուն» (*Աճառեան*, 1971, էջ 343-344), իսկ ըստ Ջահուկյանի՝ «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ բնաձայնական *t-r- պարունակող մի ձևից. հմմտ. *trozdos-/*trodos, որտեղից՝ միռլ. truit, druit «սարյակ», ռուս. дрозд «կեռնեխ», այլև՝ լատ. tordus, *tet(e)r- որտեղից՝ հայ. *դապրակ* առանց բաղաձայնական տեղաշարժի, *trug (որտեղից՝ հուն. τρυφών «տատրակ»): Հայերենի համար ենթադրելի են *t/dreut/d (> *արդոյր*) կամ *t/drut(d) (> *արդուր*) նախա-

ծևերը: Ժողովրդական ստուգաբանություն է *արտոյտ* <*արտ + ոյտ = ուտ (իբրև «արտ ուտող»)» (*Ջահուկյան*, 2010, էջ 97)³³:

Այս երկու բառի՝ *արտորալ* և *արտոյտ*, հնչումով նույն արմատը՝ *արտ-*, կարելի է մտածել, որ իմաստով ևս նույն է, ծագում է հե. *arg'- «փայլ» ձևից, եթե ընդունենք հնդեվրոպական հետնալեզվային ձայնեղ բաղաձայնի սովորական և քմայնացած տարբերակում (*g // *g')։ Ինչ փաստեր (այլ լեզուների հետ հնարավոր զուգահեռներ) կան և ինչպիսի՞ հիմնավորում կարելի է բերել այս դեպքում:

Ամենից առաջ նկատենք, որ այս համեմատության մեջ ամենավիճելին, եթե հարցին մոտենում ենք ավանդական համեմատաբանության տեսանկյունից, թերևս հե. *g' > հայ. տ անցումն է, որն, այնուամենայնիվ, անհնարին չէ, եթե ի նկատի ենք ունենում այդ բնագավառի ոչ միայն ավանդաբար հաստատված, այլև նորագույն ուսումնասիրությունների տվյալների՝ թե՛ իմաստային համընկման և թե՛ հնչյունական անցումների (հնչյունական օրենքի) հավաստիությունը. այդ հնարավոր անցման վստահելի օրինակ է *արտ* «արտ. մշակվող հող» բառի ծագման դեպքը. հմմտ. հայ. *արտ*, *արտոյ* < հե. *agro, որում, ինչպես Գ. Ջահուկյանն է նշում, ոչ անկախ Աճառյանից և նախորդ մյուս ուսումնասիրողներից, ունենք «*g > տ ոչ սովորական անցում». հմմտ. հինդկ. ajra, հուն. αγρος, լատ. ager, գոթ. akrs «արտ»: - ԱՃ. ՀԱԲ 1, 337» (*ն. տ.*, էջ 95):

Այնուհետև՝ հայ. *արած-*, որից՝ *արածիլ* «ուտել (խոտ՝ դաշտում), ճարակել», *արածել* (*) «արածեցնել (հոտը՝ նախիրը՝ երա-

³³ Գ. Բ. Ջահուկյանը նախկինում չի անդրադարձել *արտոյտ* բառի ծագմանը (տե՛ս «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան», Ե., 1987):

մակը և այլն)» և այլն, այլև *արաւոր* (> *արօր*) «արածելու տեղ, արոտ». հմմտ. *ծ* // *որ*, այլև *ա* // *աւ* տարբերակայնություն³⁴: Ըստ այդմ՝ *արած* // *արաւոր* տարբերակային արմատը ծագում է հե. *trəg'- ձևից, որ զուգահեռներ ունի՝ հուն. τραγανός «ուտելի», τραγεῖν «ուտել, արածել» և այլն, իսկ նրա *trōg'- տարբերակից՝ հուն. τρώγω «ուտել. կրծել, արածել, ճարակելն», τρωγός «ուտիճ», τρώξιμος «ուտելի» և այլն (*Աճառեան*, 1971, էջ 293-294):

Ուշագրավ է, առանձնապես, հայ. *արաւոր* (*արօր*) բառի ծագման, նախալեզվի ձևի նշանակման վերաբերյալ Է. Բ. Աղա-յանի դիտարկումը. «*Արաւոր* բառի համար *աւոր*-ը պետք է ածանց համարել, որով *արած*-, *արաւոր* բառերի հետ կկապվի միայն արմատով (ինչ. արմատն է *ter / tɛ, որից՝ *ց*'-ով աճած tɛg' ձևից ունենք *արած*-, *արաւոր*-ը պետք է կապել նույն արմատի *ա*-ով ձևի հետ (*tred). հմմտ. կիմր. trwyddo «պատռել, ծակել», լիտ. triedziu «habe stanken Durchfall» ևն (= «խորը սեղմվածք ունենալ» և այլն - Վ. Հ.), և *արաւոր*-ը՝ tɛ + *աւոր* > *արաւոր*): Այս *-աւոր* ածանցով կազմությունները շատ հին են, ավելի ճիշտ՝ հնության մնացորդներ» (*Աղայան*, 1974, էջ 25):

³⁴ Այս երևույթը բավականին հին է և ոչ այնքան տարածված («ներկայացնում են մասնավոր դեպքեր»), որ նկատելի է նաև հպաշփականների համակարգում. հմմտ. *աղաչել* // *աղալթ(ք)* (> *աղթթ*), *ամաչել* // *ամալթ* (> *ամթթ*), *զգածիմ* «հագնել, վրան առնել» // *զաւրի* (> *զօրի*), *ճանաչել* (*ճանաչել) // *ճանաւթ* (> *ճանթթ*) և այլն, որոնք բաղաձայնական, այլև ձայնավոր / երկբարբառ տարբերակվածության նկատառումով առանձին ուշադրության առարկա են եղել նախկինում, թեև ունեն նաև վերանայման՝ նորովի մեկնաբանման կարիք: Հմմտ. Գ. Ա. Ղափանցյան, Հնէաբանական մի քանի մնացորդներ հայերենում // «Տեղեկագիր», 1927, էջ 3-4. նույնի՝ Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 208. Է. Բ., Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1, Սինխրոնիա. գիրք Ա. Հնչյունաբանություն, Ե., 1964, էջ 317:

Առավել ուշագրավ է հայ. *արաւտ* (*արօտ*) բառի դեպքում հնդեվրոպական նախաձևի վերականգնման վերաբերյալ Գ. Զահուկյանի դիտարկումը՝ հատկապես հե. *g' > ʔ «ոչ սովորական անցման» առնչությամբ. «Բնիկ հնդեվրոպական՝ *trəǵ' [ʔter-] «տրորել, շփել, շփելով մաշել, ծակել» արմատից՝ *g'-ի ʔ արտացոլմամբ (հմմտ. *ag'ro > *արտ*, *g'olou- > *տալ* «տագերկին» և այլն) և ւ-ի ներմուծմամբ (*ա*-ի երկբարբառացմամբ, ինչպես՝ *մաւտ* (*մատչիլ*) և *յաւտ* (*յատանել*) բառերում. հմմտ. հուն. տրաչա «ուտել (հում բան), կրծել», թոխ. ԱԲ trāsk «որոճալ», հայ. *արածել*: - Աճ. ՀԱԲ 1, 349-350)» (*Ջահուկյան*, 2010, էջ 85):

Արաւտ // *արաւտ* արմատը (ձայնդարձի *ա/աւ* աստիճանով) ծագում է հե. *trəǵ'- արմատից (հմմտ. հուն. տրաչա «կրծել, ուտել»), թոխ. A և B trāsk «ծամել») (*Ջահուկյան*, 1987, էջ 153, նաև 253): Այնուհետև, այդ նույն արմատից է ծագում հայ. *արտ* «հանդ, դաշտ» բառը (հմմտ. բրբռ. *արծ-ալ* «արածել»)՝ խուլի ձայնեղացմամբ՝ կազմելով արմատի ձայնդարձի ստորին՝ զրո (ø) աստիճանը (հմմտ. *Աճառեան*, 1957, էջ 37):

3. Բարբառային նյութի ընդգրկումը ներկայումս

Ըստ վերը նշվածի՝ հայերենում միմյանցից անհրաժեշտ է տարբերել *արտ* բառի երեք, այսպես կոչված, համանուն՝ *արտ* (< հե. *ag'-rǵ «դաշտ, արտ»), *արտ(ա)*- («դուրս» իմաստով նախաձանց) և *արտ* (< հե. *trəǵ'- «արածել, արոտ»): Պետք է կարծել, որ ստուգաբանորեն *արտ*-ը («ճարակ, արածել»), կապվում է *արաւտ*, *արաւտ* բառերին, իբրև ծագումնային ընդհանրություն ունեցող միավորներ: Իսկ *արտ(ա)*- «դուրս» իմաստով նախաձանցը, հավանաբար ավելի հնագույն առնչություն պիտի ունեցած լինի նախորդ երկուսի հետ. այս ընկալմամբ՝ դրան

համանուն լինելու պայման է ժամանակի հարաբերակցությունը, որն անհնարին չէ:

Արատ և *արատ* բառերի այն ստուգաբանությունը, որ բերում է Գ. Զահուկյանը՝ այդ բառերը ծագած համարելով հե. *trəg'-ից, տվյալ դեպքում, միանգամայն համոզիչ է և ընդունելի (տե՛ս նաև *Աբրահամյան*, 1958, էջ 62-63): Սակայն պետք է ավելացնել, որ այն տվյալ դեպքում սահմանափակվում է *արատ*, *արատ* և *արած* բառերով, այսինքն՝ չի տարածվում *արտ* «արոտ, արածել» բառի վրա, իբրև նրանց հետ ծագումնային ընդհանրություն ունեցող, վաղնջական ժամանակներից եկող միավոր: Այնինչ, ինչպես նկատում ենք, այդ շարքը համալրելի է *արտ* բառով, որպիսով ավելի են ամբողջանում մեր պատկերացումները ծագումնային որոշակի ընդհանրություն ունեցող բառերի այդ փնջի վերաբերյալ:

Այս դեպքում լրացուցիչ օրինակ է հայ. (գրական) *ծ* - (բրբռ.) *ծ* առնչությունը՝ կապված հայ. *ծ* // *տ* տարբերակվածության հետ: Վերջինիս լուծմանն ըստ ամենայնի անդրադառնալը թողնելով հետագային՝ այստեղ ակնարկի ձևով նշենք մի քանի հիմնական դրույթներ:

Հայ. (բրբռ.) *արծալ* «արածել» (գրական՝ *արատ* // *արած*) (Մուշ, Ալշ.) (հմմտ. *խաարտ* // *խաարծի*, *բուտ*, *բտել* // *բոյծ*, *բուծել*, *պղտ-որ* // *պիղծ* և այլն) ձևը ներկայացնում է հին գրական հայերենի *ծ* > *ծ* անցումը (խուլի ձայնեղացում), որը ոչ այլ ինչ է, քան հին գրական հայերենի բարբառային հիմքի (Այրարատ, Տարոն-Տուրուբերան) վերածում նոր բարբառային հիմքի, որ չի անցել նոր գրական հայերենին, հավանաբար գրական (գրավոր) ավանդույթի պահպանման հետևանքով (վերջինս ավանդական շարունակությունն է հին գրականի, քան

ընդհանուր առմամբ նոր հիմքի վրա բարձրացած), ուստի հայ. (բրբռ.) ծ-ով ձևը (*արծալ* և այլն) մնացել է միայն իբրև բարբառներին բնորոշ հնչարտաբերություն, և ըստ այդմ կարելի է նշել մի քանի վարկածային (հիպոթետիկ) նկատառում:

ա) Հին գրական հայերենի բարբառային հիմքը, ինչպես գիտենք, ըստ դասական բարբառագիտության տվյալների, հին հայերենի բարբառներից որոշակի մի խմբի բարբառներն են (Այրարատ, Տարոն-Տուրուբերան), որոնցում, հավանաբար, եղած պիտի լինի, տվյալ դեպքում, ծ-ով (ավանդաբար՝ խուլ բաղաձայնով, ըստ նոր ուսումնասիրությունների՝ այլ որակի) *արածել* (հմմտ. *արաւր* «արածելը, արածելու վայր՝ տեղ» և այլն) ձև, որն էլ անցել է գրական լեզվին (*Ջահուկյան*, 1972):

բ) Հին գրական հայերենում *արածել* («արածելը, արածելու վայր՝ տեղ» և այլն) ձևում ծ-ն ունեցած պիտի լինի ոչ թե խուլ, ինչպես լիովին ընդունված է հայերենի դասական համեմատաբանության մեջ, այլ, այսպես կոչված, ծերպաձայնային (գլոտալ) արտասանություն (< * trəg'-), որը, ի թիվս մի շարք այլ՝ համակարգային ձևով ներկայացող փաստերի, առանձնապես՝ հայերենի, իբրև հին (արխահիկ) վիճակ ներկայացնողի, այլև ցեղակից լեզուներից մի քանիսի, վերջին տասնամյակներում հիմք է հանդիսանում առաջարկելու արմատապես վերանայել հնդեվրոպական բաղաձայնական համակարգը (նոր՝ ծերպաձայնայինների շարքի [* (p'), *t', *k'] առանձնացմամբ), որպիսով բոլորովին նոր խնդիրներ են ծագում հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության մեջ [տե՛ս *Хоннер*, 1988, էջ 160-172. *նյունի՛* 1988, էջ 173-182 (= *Idem*, 1981, էջ 133-142). *Гамкрелидзе, Иванов*, 1972, էջ 15-18]: Ի դեպ՝ այդ խնդիրների լուծման ուղղու-

թյամբ հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում նոր աշխատանքներ են հարկավոր:

գ) Ըստ վերը ասվածի՝ կարելի է մտածել, որ *արածել* (ծ-ով) ձևը նոր գրական հայերենում (գրավոր ճանապարհով) ժառանգություն է հին գրականից, քան նոր բարբառային որևէ ձևի հիմքով դրսևորում, այսինքն՝ նոր գրական հայերենում *արածել*-ը (և այլն) գրական փոխառություն է լեզվի հին վիճակից, ոչ թե նոր գրական հայերենի բարբառային (Արարատյան և այլն) հիմքի արտահայտություն³⁵:

դ) Նման տարրորոշումը հիմնված է ոչ թե ավանդական, այլ նոր տեսական բարբառագիտության հիմնարար դրույթի վրա (տե՛ս նաև վերը բերված 2-րդ կետը): Ըստ այսմ՝ հայ տեսական բարբառագիտությունը, կարելի է ասել, պատկանում է ապագային՝ ի հակադրություն եղած, ընդհանուր առմամբ գործնականի (կամ ավանդականի, նկարագրականի), որն, անշուշտ, ունեցել է մեծ ձեռքբերումներ: Հայերենի բարբառների գիտական ուսումնասիրությունը (որևէ հատկանիշով կամ հատկանիշներով դասակարգում, առանձին բարբառների նկարագրություն և այլն) գրեթե գերազանցապես եղել է գործնական բնույթի, քան տեսական հարցադրումների և լուծումների մեջ (Ք. Պատկանյան, Հ. Աճառյան, Ա. Ղարիբյան և ուրիշներ)³⁶ : Բուն իմաստով տեսական ուսումնասիրություններ այս բնագավառում համեմատա-

³⁵ Այս դեպքում, թերևս, բացառվում է խուլի ձայնեղացման հնարավորությունը:

³⁶ Ավելորդ ենք համարում նշել հիշյալ հեղինակների՝ մեր այս թեմային վերաբերող կարևորագույն աշխատանքները:

բար ավելի ուշ են երևան գալիս և մասնակիորեն են առանձնանում՝ զուգընթաց գործնականին (Գ. Զահուկյան և ուրիշներ)³⁷:

ե) Ըստ այսմ՝ արդի բարբառագիտության առանցքային խնդիր են նախագրային հայերենի բարբառային տարբերակվածության, գրավոր շրջանի գրական լեզուների և նրանց բարբառային հիմքերի, հին և նոր շրջանի բարբառների (ենթաբարբառների, խոսվածքների և այլն) փոխհարաբերության հարցերը: Առանձին կարևորություն ունի միջին գրական հայերենի բարբառների (եթե ոչ նաև ենթաբարբառների, խոսվածքների և այլն) հարաբերակցային քննությունը: Չի բացառվում նաև այն, որ վերջիններս հետագա դրսևորումն են հին հայերենի բարբառների, հիմք են նոր հայերենի բարբառների, այսինքն՝ հանդիսանում են արգասավոր և անխափան միջին գիծ, որն առանձին խնդիր է այս բնագավառում:

Եվ այսպես, ունենք նաև *արտ(ա)*- («դուրս» իմաստով նախածանց) բառ-բաղադրիչը, որ հանդիպում է հայերենի նախագրային շրջանից եկող, օրինակ, *արտախոյր* բառում, վերջինս կազմությամբ բարդ բառ է՝ բաղադրված *արտ(ա)*- և *խոյր* «արևելյան թագ, պսակ, փաթեթոց», ավելի հին՝ «ծածկոց» մասերից (հմմտ. *արտախորել* «զլուխը բանալ») մասերով (ավելի մանրամասն տե՛ս Համբարձումյան, 1995, էջ 232-233): Ի դեպ, Մխիթար Սեբաստացու բառարանում ունենք *արտախորակ*, որ բացատրվում է՝ «Բառս այս ելան է ի բառէն *խոյր*, որ է ծածկոյթ գլխոյ, այսինքն՝ գլխարկ կամ թագ և այլն: Եւ աստ *արտախորակ*, այսինքն՝ *արտաքուստ* երևելի *խորիկ*, որ և ռամկօրէն

³⁷ Նկատի ունենք Գ. Բ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (Ե., 1972) և «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» (Ե., 1987) հիմնարար աշխատությունները:

ասի մէնտիլ, գոր ի հնումն մեծամեծ իշխանքն արևելից դնէին ի գլուխս իւրեանց» (ՀՀԲ, 1749, էջ 112. ընդգծումները՝ Վ. Հ.)³⁸:

Արտ // *արծ* տարբերակայնությունը տարածվում է նաև *արտորալ* «շտապել. փութալ» և *արտոյտ* «աբեղաձագ (թռչուն)» բառերի վրա՝ իբրև բնիկ բառապաշարի միավորներ: Ըստ այսմ՝ հիշյալ բառերի քննությունը ևս ցույց է տալիս, որ պայթական խուլ *տ-* ի և նրա տարբերակ *ծ-*ի առնչությունը լրացուցիչ օրինակ է հայերենի պայթականների հնչյունական հարաբերակցության վերանայման համար, որ առաջարկված է համեմատական լեզվաբանության մեջ վերջին տասնամյակներում: Արմատի իմաստային բազմազանությունը ժամանակի ընթացքում հանգում է համանունության:

Եզրակացություններ

1. Հնդեվրոպականում նշվող ծերպաձայնային բաղաձայնների առկայության օրինակ է հայ. *ծ/տ* հարաբերակցմամբ արմատների գոյությունը՝ տարբեր ձևերում:

2. Արմատի ձևային տարբերակմանը նպաստել է ոչ բաղաձայն (ձայնավոր, երկբարբառ) տարրերի առկայությունը:

3. Քննության առարկա *արտորալ* և *արտոյտ* բառերը իմաստով ևս սերտ են, համալրում են հայերենի բնիկ բառապաշարի համապատասխան իմաստային (թեմատիկ) խումբը:

4. Հայերենի գրավոր շրջանում տեղի է ունեցել մինույն արմատի գործառական տարբերակում ներքին զարգացման

³⁸ Հմմտ. «Սոնան էր, զառ մանդիլով նորահարսը, լույս ատամներով այն աղջիկը»: Կամ՝ «Ու հանկարծ, երբ սիմինդրի մարգերում երևաց գլխի զառ կապույտ մանդիլը, ինքը պահվեց դռան հետևը» (ընդգծումը մերն են. - Վ. Հ.) (Ա. Բակունց, Երկեր, Ե., «Սովետական գրող» հրատ., 1985, էջ 74):

(արդ, արած-ել, արաւր «ճարակ, ճարակել») և օտար բառի պատճենման (արդ- «դուրս. մի կողմ») հիմունքով:

7) Հայ. *հարկ(անեմ)* < հե. *(H)a/ork/g-t-

Ներածություն

Ընդհանուր վերնագրով մեր այս աշխատանքը հայերենի կառուցվածքում նախահունչ *q-* // *ø-* (զրո), *q-* // *h-* հակադրությամբ արմատի քննություն է՝ հիմնված ոչ միայն նախկինում կատարված, այլև առավելապես նոր առաջ եկած, բայց չօգտագործված տվյալների վրա: Հայերենի ստուգաբանական քննությունների տվյալները ցույց են տալիս, որ արմատի լծորդական բաղադրիչներ են առաջ գալիս այնպիսի մասնիկներով, ինչպիսիք են *q*, *h* և այլն, որոնց առկայությունը արմատի կազմում հակադիր է բացակայությանը (հմմտ. praef.-R // *ø*-R կամ *ø*-R // praef.-R):

Հայտնի է, որ հայերեն մի շարք արմատներ գրավոր շրջանի աղբյուրներում ներկայացնում են *q-* // *ø-* (զրո), ինչպես նաև *q-* // *h-*, *ø-* (զրո) // *h-* հակադրություն (զուգաձևություն). հմմտ. մի կողմից՝ *q-qալ* (*q-qօն-* [**qգան*]) // *qալ* (< հե. * *uadh-mi*), *q-գենում* (< *q-գեսր* «հագուստ») // **գեսր* (< հե. * *ues-*), *q-արմ* // *արմ*, որից՝ *զարմանամ* // *արմանամ* (< հե. * *or-mo-*) և այլն, իսկ մյուս կողմից՝ *անդ* // *հանդ* «(մշակովի) դաշտ» (< հե. * *Hand*^[h]- «ուտելի բոյս»), *զարկանեմ* // *հարկանեմ* (< *արկանեմ*) և այլն:

Այստեղ առանձին անդրադառնում ենք *հարկանեմ* // *զարկանեմ* (< *արկանեմ*) զուգաձևերի միջև ձևային և իմաստային առնչությանը [հմմտ. (praef.-)R // praef.-R (< *ø*-R)]՝ համեմատությամբ ցեղակից մյուս լեզուների (առանձնապես՝ հին հնդկերենի

և կելտական լեզուների). նոր տվյալները հայերենի համար ստեղծում են լրացումների և ճշգրտումների հնարավորություն:

1. Զուգաձևերի ձևային և իմաստային առնչությունը

ա) Դատելով դասական համեմատաբանության տվյալներով՝ հայ. *հարկ-* արմատի պարզ ձևն է *հար-*, որ ծագում է հե. *per- «գարկել, խփել» արմատից, և որի ձայնդարձով ձևերն են՝ *per-, *pɛ-, իսկ աճականով ձևերը՝ *perg-, *porg-, *pɛg-, այլև *spher-, *spherg-. այս մոտեցումը գալիս է դեռևս Հյուբշմանի նախորդներից: Ըստ Աճառյանի՝ «հայերեն *հար-* ծագում է *pɛ- ձևից, իսկ *հարկ* < *pɛg- ձևից». և տալիս է համապատասխան զուգահեռներ ցեղակից լեզուներում (լիտվ. periu, periau, perytis «թափիչով խփել. լողացնել», լատվ. per'us, pɛ'ri «ճիպոտներով ծեծել». հսլավ. perā, prati «ծեծել, լվանալ» և այլն) (հմմտ. *Hübschmann*, 1895, էջ 464. *Աճառեան*, 1977, էջ 53):

բ) Ավելի ուշ խնդրին անդրադառնում է Գ. Զահուկյանը, որ հնարավորություն ուներ վերանայելու ավանդական մոտեցումը հայ. *հարկանեմ* և նրան լծորդ ձևերի ծագման աղբյուրի ճշգրտման հարցում, քանի որ հայտնի էին ոչ միայն հին հնդկերենի, կելտական լեզուների տվյալները, այլև խեթերենի երևան եկած համարժեքները: Սակայն դա տեղի չի ունենում, քննությունը մնում է ավանդականի սահմաններում: Ըստ այդմ՝ Զահուկյանը նախընտրում է արմատի ծագումը հանգեցնել նախալեզվի երկրորդ՝ *pɛg- (< *perg- «խփել») տարբերակին, անցյալի հիմքը՝

հարի, դարձյալ համեմատելով բալթյան-սլավոնական ձևերի հետ (*Джаукян, 1965, էջ 88* և այլն)³⁹:

գ) Այնուհետև, նախքան այդ նկատել են, որ գոյություն ունի ծագումնային առնչություն խեթթ. *hark-* «ոչնչանալ, կոտորվել, կորչել», իռլ. *org-* «սպանել, ոչնչացնել, ավերել» և հայ. *հարկանեմ* «խփել» (վերջինիս իմաստը՝ ըստ 5-րդ դ. գրական լեզվի), որ, անշուշտ, իրական հիմք է հայերենի և ցեղակից այդ և մյուս լեզուների միջև ծագումնային առնչությունների հնարավոր ձևային և իմաստային նոր մեկնաբանությունների համար (*Cuny, 1934, p. 205*. հղումը ըստ Վյաչ. Իվանովի ստորև նշվող գրքի, էջ 80):

Սակայն նկատված է, որ խեթթ. *hark-* «ոչնչանալ, կոտորվել, կորչել» իմաստը ավելի հետին է, քան որ այդ պարզ արմատը նախապես ունեցել է «սպանել» իմաստը. նույնիսկ՝ ըստ Պեդերսենի, ավելի ընդհանուր իմաստ՝ «վնասել» (տե՛ս *Иванов, 2007, էջ 79-80*): Խեթթերենի ներսում նկատվող իմաստային այս զարգացումը (մինչև լեզվի գրի առնվելը) օրինակ է նույնպիսի քննության հայերենի նախագրային վիճակի համար՝ ոչ միայն այդ բայարմատի իմաստաբանական զարգացման, այլև առհասարակ նման երևույթների ավելի հանգամանակից և նոր փաստերի հիման վրա կատարվող քննության պարագայում:

դ) Ավանդաբար լեզուներում առկա «խփել, ծեծել» հատկանիշի հիման վրա զուգահեռ է անցկացվում նաև գերագույն

³⁹ Ի դեպ՝ ավանդականի սահմաններում նման մի օրինակ տալիս է Ֆոգտը, երբ փորձում է հայ. *երկու* թվականի և *երկուրասան, երկիցս* ձևերի հիման վրա հաստատել նախահնդեվրոպական **ō / *o / *i* հերթագայություն (*երկու* <*dwo, *երկու* <*dwo, *երկի* <*dwi-), տրադիցիոն (անքննադատ) ձևով գտնելով, որ հայ. *երկու* ձևը ծագում է հե. **dwo* արմատից, որ ներկայումս առարկելի է. Ֆոգտն ինքն էլ է նշում, որ «առաջին հայացքից թվում է տարօրինակ» (տե՛ս *Фогт, 1971, 4, էջ 37*):

ուժի (որոտի) նույն գործառույթի համաբանությամբ՝ գործողության (nōmen aētiōnis) («հարվածել. հարված») և գործիչի (nōmen auctōris) («որոտ. Որոտի աստված») միջև. ըստ այդմ՝ բերվում են օրինակներ. հմմտ. ընդհ.սլավ. *Perunŭ «որոտի աստված», լիտվ. Perkūnas (նույնը), լատվ. Pērķūnas (նույնը) և այլն. այս բացատրությունը, թերևս, հենվում է նախորդների տեսության վրա՝ ավանդական քննությամբ և բառարանագրմամբ (*Աճառեան*, 1977, էջ 55)⁴⁰: Այդպես նաև ուշ երևան եկած աշխատանքներում բալթյան-սլավոնական ձևերը, օրինակ, ծագած են համարվում հե. *p^[h]erk^{[h]o}ս- // *p^[h]eru- տարբերակային արմատից (առաջինը՝ *k^{[h]o}- ածանցով հիմք). ամենանախնական մտածողության հիմքում՝ «կաղնի», «ժայռ», որին հարվածում է որոտը (կայծակը և այլն) (*Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 614-615, 792-793* և այլն): Այս համեմատության մեջ, կարելի է կարծել, որ բնական է համարվել ներառել հայերենի նյութը. *հար-կ- // հար-ի* իմաստային զարգացմամբ և, թերևս, հետևյալ անցումներով՝ «խփել, հարվածել» > «կաղնի. ժայռ» (?):

Սա առարկելի է, քանի որ. կարծում ենք, հե. *p^[h]erk^{[h]o}ս- // *p^[h]eru- արմատին ավելի շուտ առնչվում է *հերկ-եմ // հերձ-եմ* (նախնականը իմաստը՝ «կիսել, երկատել, բաժանել», հետագայում՝ «(հողը) վարել. պատռել, ճեղքել») տարբերակային արմատը. Աճառյանը երկուսն էլ համարում է «անստույգ բառ», իսկ Գ. Զահուկյանի տարբեր տարիներին գրված աշխատություններում այդ արմատները կա՛մ մասամբ են ստուգաբանված (տրադիցիոն մոտեցմամբ), կա՛մ համարվում են «հավաստի ստուգաբանություն չունեցող» (*Աճառեան*, 1977, էջ 56-58. *Джаукян*,

⁴⁰ Այս կետում հարցը պիտի քննվի այլ տեսանկյունից, որին այստեղ չենք անդրադառնում:

1965, էջ 181, 191 և այլն. *Ջահուկյան*, 1987, էջ 144, նաև 2010, էջ 458-459. հմմտ. *Համբարձումյան*, 2020, էջ 200)⁴¹: Այնինչ, նկատի ունենալով մեր այս թեմային վերաբերող նորագույն տվյալները, կարծում ենք, որ *հար-կ-* // *հար-ի* արմատի ծագումն առնչվում է հե. *(H)a/ork/g-t- արմատին: Նման առաջարկի համար հիմք է հանդիսանում ամենից առաջ համեմատությունը խեթական և կելտական լեզուների համարժեքների հետ, ընդ որում ոչ միայն արմատի հնչյունական կազմի, այլև նրանում հիմքակազմիչ մասնիկների զուգադիպումը, մանավանդ հայերենի և խեթականի դեպքում [խեթ. ḫarnink - ḫark-, հայ. *հարկանեմ* - *հարկ-* (*հար-*)]:

ե) Թե՛ ավանդաբար եկող և թե՛ վերջինիս հիման վրա ձևակերպվող տեսության համաձայն հե. *per- // *perg- (նոր՝ *p^[h]erk^{[h]o}u- // *p^[h]eru-) արմատը նախնական իմաստով նշանակում է «զարկել, խփել. ծեծել», որը, ինչպես կտեսնենք ստորև, առարկելի է, որովհետև նախնական չէ, այլ հետագա ձեռքբերում է:

Այստեղ միայն նշենք, որ ավելի նախնականը պիտի եղած լինի «բաժանել, կիսել, երկատել՝ ճեղքել» իմաստը, այսինքն՝ իմաստով «համարժեք» է մեկ այլ արմատի նույնպիսի իմաստի հետ. հմմտ. հայ. *հերկ-եմ* «առը շուռ տալ» // *հերձ-եմ* (*հերձ-ան-եմ*, *հերձ-ն-ում* և այլն) «կիսել, երկատել», «ճեղքել, պատռել» և այլն, որը դասական համեմատաբանության մեջ տեղիք է տվել, այսպես կոչված, իմաստային բաղարկության (կոնտամինացիայի): Մյուս կողմից՝ արձանագրվում է նաև այն, որ հնդեվրոպական պատումներում («ասքերում» և այլն) որոտի («ամ-

⁴¹ Այս տարբերակային արմատներին անդրադառնալու ենք առանձին:

պրոպ», «կայծակ» և այլն) հարվածը ժայռին (կաղնուն և այլն) ձևանում է բանաստեղծական պատկերացումներում, որը, ենթադրում ենք, կարող է համեմատաբար ավելի ուշ ժամանակների վերաբերել:

2. Համեմատություն ցեղակից լեզուների հետ

ա) Մինչև խեթական լեզուների տվյալների ներառելը հնդեվրոպաբանության մեջ այն տեսությունն էր իշխում, թե լեզուների քերականական կառուցվածքի գրեթե ամեն կարգի իրողություն հնարավոր է բացատրել, օրինակ, հին հնդկերենի տվյալների հիման վրա: Սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նախալեզվում նկատելի են նաև երևույթներ, որոնց մեկնաբանումը միայն հին հնդկերենով բավարար չէ:

Խեթալուվական, ինչպես նաև թոխարական և արևելաիրանական լեզուների շատ փաստեր նոր հարցադրումների շեմ են բացում. իսկ դա լրացուցիչ խթան է հայերենի տվյալներին ևս դարձնելու ավելի լայն ուշադրություն:

Նման մի օրինակ է հայ. *հարկ-* (նաև՝ *հարկ-անեմ*, *հար-ի* և այլն) բայարմատի ծագումնային առնչության քննությունը անցյալ դ. 30-ական թթ. երևան եկած աշխատանքներում (Ա. Կունի, Հ. Պեդերսեն և ուրիշներ), որոնց հետագայում, ինչպես նշեցինք, ավելանում է խեթ. *ḫark-* «կորչել», *ḫar-nin-k-* (*հար-*արմատի միջաձանցական տարբերակ. հմմտ. հայ. *հարկ-անեմ*) (ընդամին բայի կերպային-տիպային ձևեր՝ *ḫarninkišk*, *ḫarganu-*, *ḫarninkuḫar-* «մահ» և այլն) և այլ ձևերի ավելի հանգամանալից քննությունը: Այս երևույթին, այսինքն՝ հայերենի և կելտական լեզուների հետ զուգադիր վերլուծությանը 1950-ական թթ.

անդրադարձել է Վյաչ. Իվանովը, որի մասին տեղեկանում ենք միայն վերջին ժամանակներս (տե՛ս *Иванов*, 2007, էջ 79- 83):

բ) Ըստ այդմ՝ հայ. *հարկանեմ* (*հարկ-ան-եմ*) ձևը զուգահեռ է դիտվում իռլանդերենի (անցյալ ժամանակի եզ. 3-րդ դ.) *ort* (< *orcht*) [^{*}(H)org-t]) և խեթ. *ḫar-ak-ta* (իմա՛ *ḫarkt*) ձևերին. նկատի ունենալով հիշյալ ձևը իբրև ընդհանուր կելտական, որից առաջ են եկել մի շարք բաղադրված ձևեր: Իվանովը, հղելով նաև Լուիսին և Պեդերսենին, գրում է հետևյալը. «Այս ընդհանուր կելտական արմատից առաջ եկածներից ամենից շատ ուշագրավ են *or-n*, *orgon*, որ հանգում են (հե.) ^{*}(H)org-na արմատին, որտեղ ոնգային վերջածանցը կարող է կապված լինել ոնգային ածանցին՝ խեթերենում և հայերենում, այդ նույն արմատի կազմում» (*Иванов*, 2007, էջ 82. տե՛ս նաև *Льюис, Педерсен*, 1954, էջ 445):

Ուստի հայ. *հարկանեմ* և ցեղակից մյուս (խեթական, կելտական) ձևերի նոր քննությունը՝ արմատի և նրան ավելացող ձևակազմական բաղադրիչների նշումով, կարևոր է հիմք-լեզվի և հետագա ձևերի ժամանակագրական անցումների մասին ավելի իրական պատկերացում ունենալու համար:

գ) Նկատենք, որ հայ-խեթական զուգահեռություն գոյություն ունի ոչ միայն արմատի, այլև ոնգային միջածանցման դեպքում. «Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ խեթականում *-nu-* ածանցի և *-nin-* միջածանցի զուգահեռությանը հայերենում համապատասխանում է *-նու-* և *-անե-* զուգահեռությունը» (*Иванов*, 2007, էջ 82)⁴²:

⁴² Հեղինակը նկատի ունի, օրինակ, հայ. *առնում* «վերցնել» և *ելանեմ* «ելնել» տիպի բայերի հիմքի կազմության միջածանցական տիպը՝ խոնարհիչ ձայնավորով հանդերձ:

Այս իրողությունը, ինչ խոսք, հետաքրքիր է հայերենի միջա-
ծանցման երևույթի հնատիպության բնութագրման տեսանկյու-
նից, ինչպես նաև ըստ այնմ, թե դրանց կարգային (կատեգո-
րիալ) համընկումն ինչ ընթացք է ունեցել լեզուների ինքնուրույն
պատմության մեջ [ըստ Իվանովի՝ հմմտ. հայ. *հարկ-ան-եմ*
«խփում եմ», հինդկ. *ri-nā-k-tl* «թողնում է», լատ. *li-n-quo* «լքել»,
խեթ. *ḡar-ni-k-mi* // *ḡar(a)-nu-*] (*Ն. Կ.*, էջ 83):

դ) Կունիի, հետագայում Իվանովի կողմից նշվող հայ. *հար-*
կ-, խեթ. *ḡark-*, կելտ. *or-n*, *orgon* [< հե. **(H)org-na*] ձևերի զու-
գադրման հարցի լուծումը հանգում է նրան, որ «խեթերենում -
nu- վերջածանցի և -nin- միջածանցի զուգահեռությունը համընկ-
նում է հայերենում *-նու-* և *-անե-* ածանցների զուգահեռությանը:
Նկատի ունենալով այս փաստերը՝ հետևում է ենթադրել, որ խե-
թերենի կանոնավոր համընկումը ռնգային *-nin-* միջածանցին
պիտի լինեն հայերենում *-անե-* ածանցով հիմքերը: Ուստի խեթ.
ḡarnink- և հայ. *հարկանեմ* համընկումը ձևաբանական տեսանկ-
յունից միանգամայն օրինաչափ է» (*Ն. տ.* , էջ 82. ունի հղում՝
Brugmann, Grundriss. Bd. II, t. 3, p. 315):

Իսկ ինչ վերաբերում է այդ ածանցների հնչյունական կազմի
որոշ տարբերությանը, ապա դա, բնականաբար, պիտի եղած
լինի այդ լեզուների ինքնուրույն զարգացման ընթացքում. կելտա-
կանը ներկայացնում է արմատի պարզական ձևը, եթե նկատի
ենք ունենում նախահունչ կոկորդայինի (**H*) բացակայությունը,
այնուհետև՝ արմատի ձայնավորին նախորդող կոկորդային
արտացոլում խեթականում և հայերենում, որ ևս օրինաչափ է:

3. Ցեղակից լեզուների տվյալների գնահատությունը

ա) Նոր վերականգնվող հե.*(H)a/ork/g-t- ընդհանուր արմատը ներկայանում է տարբերակումով, խեթահայկականի դեպքում՝ հե. *(H)ark-t-, իսկ կելտականի դեպքում՝ հե. *(H)org-t, ընդ որում կարելի է ենթադրել, որ առաջին տարբերակը ավելի հին է, քան երկրորդը, եթե նկատի ունենանք մի կողմից՝ կոկորդային *H-ի առկայություն/բացակայություն հատկանիշի դրսևորումը [բերվում է փակագծում՝ իբրև կամընտրական (\$ա-կուլտատիվ)], մյուս կողմից՝ a / o լրացական ձայնավորման և հետնալեզվային k / g լծորդության գոյության հետ, որ առանձին քննության են արժանի՝ զարգացման ժամանակային փուլերի (օղակների) մեջ:

բ) Ավանդական վերականգնումով արմատի *p-ի փոխարեն հանդես է գալիս կոկորդային *H, որ կարող է հիմք հանդիսանալ մի այնպիսի վարկածի, ըստ որի այս դեպքում ևս արմատի նախահունչ դիրքը թույլ է եղել, որ հայերենում, խեթականում և կելտականում սկզբից ևեթ եղել է կոկորդային, ոչ թե շրթնային արտասանության դիրք. վարկած է այն, որ այս արմատի դեպքում հե. *p-ն այլ է, քան հե. *H-ն, որի նախնականը (ավելի հինը) պահում են խեթական լեզուները և հայերենը:

գ) <արկանեմ //զարկանեմ լծորդության մեջ h//q սկզբնամաս-բաղադրիչները այլ ծագման են: Ավանդաբար նկատված է, որ q-ն ծագում է հե. *g'hō «հետևում, հետո, համար» (ըստ Ջահուկյանի՝ «վաղնջահայերեն» *jō) մասնիկից (հայերենում այն հոլովական «ցուցիչ» է կամ նախածանց) (Ջահուկյան, 1987, էջ 243): Ուստի կարելի է կարծել, որ հիշյալ լծորդությունը հետագա, այսպես կոչված, զուգիմաստություն է, երբ *հարկանեմ*-ը

«վնասել. սպանել» իմաստից անցել է նոր՝ «խփել, զարկել» իմաստին (հմմտ. *արկանեմ* «զցել. դնել» և այլն):

դ) Ուշադրության է արժանի նաև այն, որ հայ. *հարկանեմ* բայի անցյալի հիմքը արմատական է (*հարկ > հար-*). հմմտ. վալլիերեն՝ *dyni-or-n* (<-or-<-org-) «մարդ սպանելը. մարդասպանություն», այնինչ իռլանդերենի անցյալ ժամանակի ձևն է՝ *-ort -orcht*. խեթականում համապատասխանում է արմատական *hark-* ձևը (*Иванов, 2007, էջ 82. հմմտ. Льюис, Педерсен, 1954, էջ 447*): Ստացվում է այնպես, որ ընդհանուր արմատի հետնալեզվային բաղաձայն-բաղադրիչը կամ սղված է հանդիպում, կամ պահպանված՝ խուլ կամ ձայնեղ տարբերակմամբ:

Եզրակացություններ

1. Հայ. *հարկանեմ* (*զարկանեմ, արկանեմ*) բայի ծագմանային քննությունը նոր տվյալների հիման վրա նոր խնդիրների է առնչվում և ինչ-որ չափով ենթադրում է նույնպիսի լուծումներ:

2. Ավանդաբար առանձնացվող հե. *p > հայ. h (հմմտ. հե. *p > ph > f > h) օրենքին հակասում է հե. *H > հայ. h, խեթ. h, կելտ. ø (զրո) համընկումը, թե՛ նոր խնդիր է առաջ բերում, որի վերջնական լուծումը պիտի հիմնված լինի լրացուցիչ փաստերի վրա:

3. Ամենից առաջ խեթական լեզուների տվյալները թույլ են տալիս մասամբ քննության առնելու նախորդ կետում նշված հարցադրումը (թեկուզ իբրև վարկած):

4. Հայերենի տվյալների հնավանդ (արխաիկ) լինելը (ինչպես խեթականի, թոխարականի, արևելաիրանականի և այլն) արդի համեմատական-տիպաբանական լեզվաբանության համար (մի քանի տասնամյակ է, ինչ նկատելի է) ունի որոշակի կարևորություն:

8) Հայ. *հերկ-* < հե. *p^(h)erk^{(h)ο}-

Ներածական

Ինչպես անվանի պատմաբան Գ. Խ. Սարգսյանն է կարծում, Խորենացուց մեզ հասած վիպական «Երկնէր երկիր...» պատահիկը, որ անցյալի բանասիրական որոշ ուսումնասիրություններում քննվում է իբրև Վահագն դիցական սյուժեի մի երևույթ, «թեոգոնիական ցիկլի» մի հատված է (տե՛ս *Саркисян*, 1990, էջ XIV. հմմտ. *Топоров*, 1982, էջ 100-102):

Այդ ցիկլը ներկայանում է իր երեք մասով, դրանք են՝ տիեզերածնություն, երկրագործություն և պտղաբերություն: Հայերենում, իբրև հնդեվրոպական պատկերացումների ուրույն արտահայտություն, ցիկլային համաձույլ (սինթետիկ) դրսևորման միավոր է *հերկեմ* բայը, որն առանձնանում է իր, այսպես կոչված, բազմիմաստությամբ (իր տարբեր իմաստներով):

Հնդեվրոպական լեզուների համար վերականգնվող ընդհանուր նախալեզվյան *p^(h)erk^{(h)ο}- արմատի ամենասկզբնական իմաստը պիտի եղած լինի «(սեղմելով, ուժ գործադրելով) կիսել, պատռել, ճեղքել», որ ուշ պատմական շրջանի լեզուներում ունեցել է իր տարաբնույթ զարգացումները՝ ձևային, իմաստային և գործառական հատկանշումներով:

Հիշյալ տիպի լեզուների ընդհանուր համեմատական և տիպաբանական հետազոտությունների նորագույն տվյալները օգնում են հայերենի նախագրային ժամանակաշրջանի պատմությանը, մանավանդ բառապաշարի համապատասխան շերտի ծագումնային հարցերին անդրադառնալ նոր մոտեցումով:

1. Արմատի ծագման վերաբերյալ մինչև այժմ եղած փորձերը

Նախ անդրադառնանք հայերենի տվյալներին՝ անհրաժեշտ լրացումներով:

Եր. Մեղրեցու բառարանն ունի՝ *հերկել* - վարել, ցելել. *հերկ* - վար, ցել. *հերձել* - պատառել, բաժանել. *հերձուած* - բաժանումն (ԲՀ, 1975, էջ 184-185) :

Հյուբշմանը հայ. *հերկ*-ը համարում է բնիկ, նշում է նաև *հերկ հարկանեմ*, *հերկեմ* ձևեր՝ ի համեմատություն լատ. *porca* «ակոսների միջև թումբ», կիմր. *rhÿch*, հրբետ. *rec* «հերկել», հիռլ. *et-rech* «ակոս» ձևերի (*Hübschman*, 1895, էջ 467): Իսկ իր մեկ այլ աշխատության մեջ նա *հերկ* բառի ծագումը հե. **perk'* արմատից տալիս է հարցականով (*Hübschman*, 1883 (= *Հյուբշման*, 2004, էջ 205): Իսկ դա նշանակում է, որ արմատի ծագման և իմաստի բացատրության հարցը մնում է չլուծված:

Աճառյանը, թեև ընդունում է Հյուբշմանի հիշյալ ստուգաբանությունը, սակայն ծագումը որակում է «թերևս բնիկ»՝ հե. **perk-* արմատից, որ ըստ այդմ՝ «պիտի տար հայ. **հերգ*»: Այնուհետև Աճառյանը բերում է նաև մեկ այլ արմատ՝ հե. **perk'*- «պատռել, ճղել, ճանկռել, փորփրել». նշում է հայերենի հետ այդ երկուսի ունեցած առնչության վերաբերյալ այն երկվությունը, որ առաջ է եկել ուսումնասիրողների հայտնած տարբեր տեսակետների արդյունքում. «ոմանք այս երկու խմբի բառերը միացնում են. ընդհ.[անուր] արմատը դնելով **perk'*. այս պարագային հայերենը դուրս է մնում, որովհետև հնիս. **perk'*- տալիս է հայ. **հերս-*, ուրիշներ հենց հայերենը հիմք բռնելով՝ միացնում են երկուսը, որով մնում է հայ. *հերկ* < հնիս. *perg-* < *perk*»

(Աճառեան, 1977, էջ 86-87): Ինչպես կարելի է նկատել, այստեղ ևս հարցի լուծումը վերջնական չէ:

Եվ սա առաջ է բերում մի նոր խնդիր՝ վերստին անդրադառնալ այդ արմատի ծագմանը, եթե ոչ նաև նրա հնարավոր տարբերակների առնչակցությանը՝ իմաստի և հնչյունական կողմի առումով:

Ջահուկյանը խեթ. *ħarš-* «պատռել, հերծել, հերկել» բառարմատին զուգահերոմ է հայ. *հերծել, հերկել*. տողատակին ծանոթագրում է. «Սակայն հայ. բայերը հավանաբար գալիս են հ.-ե. *perk-ից («հերկել, ճեղքել, ակոս»)՝ մի այլ հ.-ե. լեզվի միջնորդությամբ» (Ջահուկյան, 1970, էջ 159) : Այստեղ ուշադրություն է գրավում նախ՝ *հերծել, հերկել* ձևերի միասին բերելը, որ նշանակում է թե դրանք դիտվում են նույնարմատ բաղադրական հիմքով կազմություններ՝ *-կ/-ծ* լրացումով, այնուհետև՝ «մի այլ հ.-ե. լեզվի միջնորդությամբ» լինելը, որը հարցի մեկնաբանությունը մղում է, կարելի է ասել, անորոշության ոլորտ:

Իսկ նախագրային շրջանի հնչյունաբանության վերաբերյալ աշխատության մեջ Ջահուկյանը այդ խմբում քննում է ընդամենը հետևյալ բառարմատները.

ա) *հերծ*, որից՝ *հերծեմ, հերծիք*. որ հանգեցնում է *հերկեմ* «վարել» բային՝ ծագած հե. *perk'- «ճեղքել, քանդել, փորել». հմմտ. հինդկ. *pārśāna-* «կիրճ, անդունդ», լատ. *porca* «ակոս», լիտվ. *pra-pařsas* «փոս. փորվածք», *peršėti* «տոզալ, ցավել, քերծել (վերքի մասին)» (Джаукян, 1967, էջ 181):

բ) *հերկ*, որից՝ *հերկեմ, նաև հերքեմ* (?). այս ձևերը նույնպես ծագած են համարվում հե. *perk'- «ճեղքել, քանդել, փորել» արմատից (ն. *տ.*, էջ 181, 189, 191, 192):

Եվ ըստ այդմ՝ հիշյալ արմատական կազմությունները ծագումնային և իմաստային նույն «դաշտի» միավորներ են:

Այնուհետև թերևս կարելի է խոսել նաև *հորդ* «ուղիղ, հարթ (ճանապարհ)», *հորձ* «հուզում, կիրք. եռանդ» (զուգահեռ այլ՝ *յորդ* «առատ, առատահոս», *յորձ* «(ջրի) առատ հոսք». վերջինս «նույն է *յորդ* բառի հետ, որ սրա հոմանիշն է») բառարմատների մասին՝ այդ խմբում, սակայն բերվում են առանձին-առանձին (*Աճառեան*, 1977, էջ 120, նաև 407-408. նաև *Джаукян*, 1967): Հազիվ թե դրանք հայերենում լինեն համանուններ, որովհետև համարվում են ծագած հե. նույն արմատից (հակառակ դեպքում, իրոք, համանուն արմատներից):

Վերջիններիս հետ կապված՝ նշենք որոշ մանրամասներ:

ա) *հորձ*- «հուզում, կիրք. եռանդ» (?), ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ» (*Աճառեան*, 1977, էջ 120): ՆՀԲ-ն առնչում է *յորձանք* բառին, որ առանձին չունի Աճառյանը՝ թերևս համարելով ածանցական կազմություն: Ջահուկյանը նույն աշխատության մեջ իրար է միացնում *յորձ*- «հեղեղում, հորդացում» և *հորդ* «լի, լեցուն» ձևերը՝ համարելով ծագած հե. *ordhio- // *ortio-(*er-) արմատից, որ այնքան էլ հավաստի չէ, մանավանդ որ անհստակություն (շփոթ) կա մեկ այլ՝ *հորձ* «այլայլում, հուզում, եռանդ» [*or-dh- // *ort- (< *er-)] արմատի հետ (*Джаукян*, 1967, էջ 173, 242, 302 և այլն):

բ) *հորդ*- «ուղիղ, հարթ (ճանապարհ)», որից՝ *հորդեմ* «ճանապարհ բանալ, մաքրել, պատրաստել» // *հորդիլ* «զնալ, տարածվել» և այլն. այդ արմատով կազմությունները առավելապես գտնում ենք հայերենի բարբառներում (նույն իմաստի արտահայտմամբ). հմմտ. *հորտել* (Ալ.), *հորտել* (Բլ.), *հորթել* (Մշ.),

խորթել (Սլվ.), հիյթել (Հճն.), հորթել (Հմշ., Տր.), խորտել (Վն.) և այլն (Աճառեան, 1977, էջ 120):

Ջահուկյանը հայերենի բնիկ արմատների ցանկում, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողների (առանձնապես՝ Հյուբշման, Մեյե, Աճառյան և ուրիշներ)՝ այս հարցում ունեցած մոտեցումներից, հայ. *հերկ*-ը և *հերծ*-ը համարում է ծագած հիմք-լեզվի տարբեր արմատներից:

ա) «*Հերկ*-ի միացումը *հարկանեմ*-ին առաջարկել է Մեյեն (Meillet, 1908, էջ 129). անհավաստի է կապը *perk- «պատռել, հերկել, ակոս» արմատի հետ *perk- > **հերս*: Պարզ չէ *հերծեմ*-բայի կապը սրանց հետ» (Ջահուկյան, 1987, էջ 186). այնուհետև նշվում է, որ *հերկել* բայը ծագում է հե. *perk- (< *per-) արմատից՝ ընդ որում իբրև «երկրագործություն, բուսականություն» իմաստային (թեմատիկ) խմբի միավոր (ն. տ.)⁴³:

բ) Հեղինակի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ *հերծ*- արմատի ծագման վերաբերյալ ոչինչ չի ասվում, այլ այն հնագույն շրջանի բառապաշարի բարբառային տարբերակների «համանիշային շարքերում» է բերվում՝ *հերծ*- [*հերծ(ան)ել* // *հերծույ*], մի դեպքում՝ *երգիծանեմ*, *ճեղքեմ* (*ճեղքում*), *պապառեմ*, մյուս դեպքում՝ *ճեղքեմ*, *ցելում*, *պապառեմ*, *փեռեկեմ*, *քճքճեմ* միավորների հետ (ն. տ., էջ 396, 403):

գ) Իսկ «Հայերեն ստուգաբանական բառարան»-ում Ջահուկյանը այդ արմատի ծագման մասին գրում է հետևյալը. «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *pergʰ- արմատից, բայց այս

⁴³ Նույն ընդհանուր արմատից են ծագած համարվում նաև *հրեմ* (?), *հարի* (աոր.), *հարում*, *հարկ-անեմ*, *որ-որ* (?) միավորները (էջ 143-144): Նույնը գտնում ենք հեղինակի մեկ այլ աշխատության մեջ (տե՛ս *Джаукян*, 1983, էջ 94-95. հմմտ. *Համբարձումյան*, 2021, 1, էջ 60-69):

ծևը, բացի հայերենից, այլ զուգահեռներ չունի. *perk'- «պատ-
նել, ճեղքել, փորփրել» արմատը պիտի տար *հերս-, *pers ար-
մատից ծագող *փորձ* բառի նախաձևը պարզ չէ» (*Ջահուկյան*,
2010, էջ 458-459). նկատենք, որ սա նոր ստուգաբանություն է,
որ այնքան էլ հեռու չէ Աճառյանի դիտարկումից (մանավանդ
հերս-ի առնչությամբ):

Այսպիսով, ամփոփելով մինչև այժմ կատարվածը, կարելի է
հաստատել, որ մեր այս աշխատանքում քննվող նյութի ստուգա-
բանական պարզաբանման հարցում եղածը մնում է ոչ վերջնա-
կան լուծում ստացածի սահմաններում, ուստի այդ ոլորտում նոր
փորձերի դիմելը, կարծում ենք, դառնում է անհրաժեշտ:

2. Արմատի հնարավոր տարբերակների առանձնացում (նշում)

Հոդվածի վերնագրում նշված *հերկ*- ձևը ածանցական կազ-
մություն է, պարզ արմատն է *հեր-*, որ առանձին գործածություն
չունի՝ գրական հուշարձաններում և այլ կարգի աղբյուրներում
պահպանված, սակայն հայտնի են այդ հիմքով տարբեր կազ-
մություններ:

Բերենք դրանցից հետևյալները:

Հեր-, որից՝ *հերհեր* «սանդերք. բուրդ գզելու գործիք». *Ջահուկյանի*
բառարանում հարցականով կապվում է հայ. *յեռու*,
հեր «մազ» (< * ser- «իրար կողքի շարել») (*ն. տ.*, էջ 458). սա
ավելի հավանական չէ, քան կապը *հերկ*- արմատի հետ («բուրդ
գզել» իմաստը ոչ այլ ինչ է, քան եղածը իրարից «գատել՝ հեռաց-
նել, բաժանել»):

Հերիք (խսկց.-բրբռ.) «բավական, ձեռնհաս, կարող». *Ջա-
հուկյանի* «Հայոց լեզվի պատմություն» գրքում (էջ 143) և բա-

ռարանում (էջ 458) թեականով կապվում է հե. *peri-ko- (*per-) «անցկացնել. տանել» արմատի հետ, և բերվում է այլ կարծիք, սակայն դա ավելի հավանական չէ, քան նրա առնչակից լինելը *հերկ-* արմատի հետ:

Հերկ [*(h)երկ-* (?)] «(հողը՝ արտը) պատռել, զատել՝ իրարից առանձնացնել. վարել» բառն ունի առնվազն երկու կարգի բաղադրություն. ա) *(h)երկ-*. հմմտ. *հերկ-(եմ)*, *հերձ-(եմ // -անեմ)*, բ) *հարեմ // հարում // հարկանեմ* (< **հարկ-*). հմմտ. *երկ(ին)-ք // երկ(իր)*, *երկիւղ* և այլն (*ՆՀԲ*, 1837, էջ 63):

Հերձ «ճեղք, ծերպ, ճեղքվածք, պատռվածք» բառի համար Ջահուկյանը բառարանում գրում է (մասամբ՝ կրկնում ենք). «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *pergʰ- արմատից, բայց այս ձևը բացի հայերենից, այլ զուգահեռներ չունի. *perk- «պատռել ճեղքել, փորփրել» արմատը պիտի տար **հերս-*, **pers* արմատից ծագող *փորձ* բառի նախաձևը պարզ չէ» (*Ջահուկյան*, 2010, էջ 458-459). սա նույնպիսի բացատրություն է, ինչ ունի Աճառյանը, այնուամենայնիվ՝ բառարանում *փորձ* բառի համար նշվում է հետևյալը՝ ինչպես որ Աճառյանի մոտ է (*Աճառեան*, 1979, էջ 520). «բնիկ հնդեվրոպական՝ *phorgʰ- [*per-] «փորձել» արմատից» (*Ջահուկյան*, 2010, էջ 767): Այստեղ, թերևս, կարելի է բերել նաև *հերձիք* «չարախոսություն, զրպարտություն» բառը, որ Ջահուկյանը դնում է հարցականով և համարում՝ «անստույգ բառ, ծագումն անհայտ է» (*ն. տ.*, էջ 459. հմմտ. *ՆՀԲ*, 1837, էջ 94. *Աճառեան*, 1979, էջ 88):

Այնուհետև, եթե հնարավոր լինի նախկինում հայ. *հերու* «հերու, անցյալ տարի» բառի համար ևս բերվող հե. *peruti- «անցյալ տարի» արմատից առանձնացնել *-ու* մասնիկը, ինչպես որ նույն արմատից ծագող ցեղակից լեզուների՝ հինդկ. *parut*,

հուն. πέρυσι (դոր. πέρυσι), իսլ. fiórð «հերու, անցյալ տարի» ձևերի դեպքում է առանձնացվում -սի, -սու (-սու), -ծ տարրերը՝ իբրև ածանցական մասնիկներ, ապա հայ. *հերու*-ի բուն արմատը (հե.*per- > հայ. *հեր*-) այս դեպքում ևս կարելի է ուշադրության առնել (հմմտ. *Hübschmann*, 1895, էջ 467, նաև *Աճառեան*, 1977, էջ 89):

Կարելի է կարծել, որ դրանք ընդհանուր առմամբ ծագում են հե. *p^[h]erk^{[h]o-} արմատից՝ հայերենում ևս «երկուսի կիսված, ճեղքված. երկատված» իմաստների մեջ, ծայնորդային *-ր//ն տարբերակմամբ:

Այդպես նաև, *հերկ*-// *հերծ*- տարբերակմամբ ձևերին են առնչվում, մի կողմից՝ *երկ(ան // երկ-այն* «աղաց», *երկ-ան(ք)*, *երկ-ին(ք)*, *երկ-իր*, *երկ-ն-չիմ*, *երկ-այն // երկ-ար*, *երկ -իւղ*, *երկ-ու*), այլև *կր* (-*կին*), *հեր-ք-եմ*, մյուս կողմից՝ *խերծ // *խերդ, եթե ոչ նաև (*ս*)*երկ*, *քերծ* և այլն (հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 117, 148 և այլն)⁴⁴:

Այստեղ առանձին ուշադրության առարկա են *հերկ*-ը, մասամբ՝ *հերծ*-ը, որոնց ծագման վերաբերյալ դասական համեմատաբանության կողմից կատարվածը ունի ճշգրտումների և լրացումների կարիք: ա) *հերկ*- (< հե. *perk-). այլև *հերս*. հմմտ. *հերսոտել*. պարզ չէ *հերծեմ*-ի կապը սրանց հետ, նաև *հարսն* (*ն. ր.*, էջ 186). բ) *հերծ*- «ճեղքվածք», «ճեղք, ծերպ». *հերծ(ն)ուկ*, *հերծի-ք*. ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ» (*Աճառեան*, 1977, էջ 87-88). հմմտ. *կեղծ-իք* (*ր // ղ*-ի համար՝ հե.* pl-e // pr-th-. *լայն //*

⁴⁴ Հիշյալ օրինակների միջև ծագումնային, կոնկրետ՝ հնչյունական-իմաստային հարաբերակցության քննությունը այլ խնդիր է, որին այստեղ չենք անդրադառնում:

հարթ), փերթ-// պրծ-, պարթ-// հարթ- (?) (Ջահուկյան, 1987, էջ 396, 403-404)⁴⁵:

3. Նոր տվյալների մեջբերում և քննություն

Հե. *p^[h]erk^{[h]o-} > հայ. *հերկ-* // *հերծ* առնչությունը ուշադրության առարկա կարող է լինել համեմատական և տիպաբանական քննության տեսանկյունից: Կան նոր տվյալներ, ըստ այդմ՝ կատարված քննություն, սակայն, առ ի լրացումն դրանց, հայերենի նյութը մասամբ է ներառված համեմատվող լեզուների ցուցադրության մեջ (ռեպերտուարում):

Այս դեպքում նկատելի է նաև այն, որ նախ՝ այդ արմատը նախալեզվում վերականգնվում է ոչ միաձև, այլ ունի մի քանի տարբերակ՝ պայմանավորված արմատի ձայնավորի աստիճանավորմամբ:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին (հայերենի հնարավոր տվյալների լրացումներով), նախալեզվի արմատի (աճանցական, ձայնդարձային) կազմության՝ հայերենում հնարավոր արտացոլումների մատնանշմամբ:

1) Հե. *p^[h]er-. սա պարզ կամ նախնական արմատն է *p^[h]erk^[h] // *p^[h]rek^[h]- տարբերակային արմատների, առանց -k^[h]-աճանցի, որով նախահնդեվրոպականում բաղադրվում են ձայնդարձով կրկնակ հիմքեր (տե՛ս *Гамкредидзе, Иванов, 1984, էջ 239*): Եթե այդ *p^[h]er- արմատին հատուկ է եղել «ծակել» իմաստը, ապա նրանից, իրոք, կարելի կլինի բխեցնել հայ.

⁴⁵ Հերծակ-ը ուշ կազմություն է, հոմանիշ՝ *սլաք, փքին*, նաև *հերծ(ան)-ել* // *հերծ(ն)-ուլ* հոմանիշները, բավականին հեռու ձևեր են, մի դեպքում՝ *երգիծանեմ, ճեղքեմ, պատրտեմ*, մյուս դեպքում՝ *ճեղքեմ, ցելում, պատրտեմ, փեռեկեմ, քքքեմ*:

հերին. հերհեր «բուրդ գզելու երկաթյա սանր» ձևերը (*Աճառեան*, 1977, 87): Իսկ ածանցավոր *p^[h]er-+-ek^[h] (> *p^[h]er-k^[h]) // *p^[h]r-ek^[h]- տարբերակային արմատից, թերևս, հայ. *փեռեկ* «ճեղք» (?) (տե՛ս *Աճառեան*, 1977, էջ 87, նաև 1979, էջ 496-497): Նկատենք նաև, որ Աճառյանը *հերհեր*-ը համարում է միջին հայերեն՝ անհայտ ծագման բառ, Ջահուկյանը փորձում է կապել հնդեվրոպական *ser- «իրար կողքի շարել» արմատի հետ, որն անհավանական է (*Աճառեան*, 1977, էջ 87. *Ջահուկյան*, 2010, էջ 458). հմմտ. հայ. (բրբռ.) *պեռ, պիպեռ* «քար, (պինդ) սառցակտոր»՝ (ամրության՝ պնդության հատկանիշով (իմա՛ *հերհեր*-ի երկաթյա լինելը). միջին հայերենի նոր բառարանը չունի *հերհեր* բառը: Իսկ *փեռեկ* «ճեղք» բառը Ջահուկյանը, ինչպես որ Աճառյանը (ոչ անկախ Մեյեից) բխեցնում է հե. *spher-g'- (*spher-) արմատից, որը, թերևս, ավելի հավանական չէ, քան հե. *p^[h]erċ^[h] // *p^[h]reċ^[h]- տարբերակային արմատի հետ այն կապելը:

2) Հե. *p^[h]erċ^[h]- (նխն.) «քերծել, հողի մեջ փոս անել», (ուշ) «հերկ. ակոս». այս արմատը բերվում է ցեղակից մի շարք լեզուներում, ընդ որում համարվում է առավել բնորոշ եվրոպական արեալի լեզուներին. հմմտ. հինդկ. pársāna- «խորք. փոս», լատ. porca «ակոս», «մարգ, ածու», գալլ. rica «ակոս», հվգերմ. fursch (գերմ. Furche), հանգլ. furh (անգլ. furrow «ակոս») և այլն (տե՛ս *Гамкрелидзе, Иванов*, 1984, էջ 689. 868). հմմտ. նաև հայ. *հերկ*- «հողի շերտ՝ ակոս. վարած հող», որ բերում ենք իբրև լրացում եղած տվյալների:

Եվ այս դեպքում, եթե ընդունելի լինի այն, որ հայ. *հերկ*- ձևը լրացնում է ուսումնասիրողների կողմից բերվող միայն եվրոպական տարածքին (արեալին) բնորոշ օրինակները, ապա

ըստ այդմ կարելի է մտածել, որ հիմք-լեզվի հիշյալ արմատը համահնդեվրոպական տարածում է ունեցել⁴⁶:

3) Հե. *p^[h]er-k^[h] // *p^[h]r-ek^[h]- արմատի այս երկու տիպերն առանձնացվում են իբրև նախատիպ՝ ցեղակից լեզուների արտացոլումների ելքային նշանակման համար. ընդամին տիպերից առաջինում, ի թիվս ցեղակից այլ լեզուների տվյալների, բերվում է նաև հայ. *փեսայ* «որոնող՝ փնտրող», «հայցող»՝ իր բուն, նախնական իմաստով (հետագայում է, որ ձեռք է բերել սոցիալական երանգ՝ «ամուսնացող»). հմմտ. լիտվ. *peršũ* «պսակվել», հվգերմ. *fergōn* «խնդրել» և այլն (*Гамкрелидзе, Иванов.*, 1984, էջ 237, 239, 241): Ըստ Աճառյանի՝ հայ. *փեսայ* «փեսա. ամուսինը՝ զոքանչի/ աներոջ առնչությամբ. քեռայր» բառի ծագումը «անստոյգ» է, Ջահուկյանի բառարանում այդ բառի համար նշվում է՝ «ծագումն անհայտ է» (*Աճառեան*, 1979, էջ 497. *Ջահուկյան*, 2010, էջ 763):

Այլև նշված հնդեվրոպական արմատի երկրորդ տիպից կարելի է, ի թիվս ցեղակից լեզուների տվյալների, ծագած համարել հայ. *հարց*- «հարցնել. հայցել» (թերևս նաև՝ *հարսն*, հականիշ՝ *փեսայ*. մեկը իբրև երկու մաս-ամբողջություն, հմմտ. «այր ու կին՝ մի մարմին»). հմմտ. հինդկ. *praśná-*, ավեստ. *frašna-* «հարց», լատ. *prescor* «խնդրում եմ», գոթ. *fraihnam* «հարցնում եմ», լիտվ. *prašau* «պահանջում եմ», հւլավ. *prosi*, թոխ. *A prak*, թոխ. *B prek-* «հարցնել» (տե՛ս ն. *տր.*, էջ 237, 239, 241):

⁴⁶ Նշվում է նաև այդ արմատին համանուն *p^[h]er-k^[h]-, որի նախնական իմաստ են ենթադրում «շերտավոր. երիզ», ուշ՝ «երփներանգ, խայտաբղետ. մուգ կարմիր և այլն». հմմտ. հինդկ. *pṛśṅi-* «խայտաբղետ», «բծավոր», հուն. *περικινός* «խայտաբղետ», «սևավուն», *πέρικη* «պերկետ (ծուկ)», բոց.՝ «խայտաբղետ» և այլն (տե՛ս *Гамкрелидзе, Иванов*, 1984, էջ 536, 594). թերևս՝ պատմականորեն տեղի է ունեցել անցում բազմիմաստությունից համանունության:

Տարբերակային արմատի նման լայն զարգացումը մի հիմք է հայերենում սոցիալական տվյալ երանգի՝ *հարսն* - *փեսայ* իմաստային (թեմատիկ) միավորի առանձնացման համար, որ իր սկիզբն ունի ավելի վաղ՝ նախագրային ժամանակի մեջ: Ըստ այսմ, թերևս, հմմտ. ոչ միայն *փեսայ* [**փե(ր)սայ < *փե(ր)ծայ*] // *հարսն* (**հա(ր)ց-ն*), թերևս նաև հայ. *հոր* «մեկի աղջկա ամուսինը. փեսան» [բրբռ. (?)], եթե ոչ նաև՝ *պերսէ* «փորձված» (ԲՀ, 1975, էջ 274. *Աճառեան*, 1979, էջ 76, 119. *Джаукян*, 1967, էջ 301):

Նկատենք, որ հայկական ավանդույթով [*<* հնդեվրոպական (?) աղջիկ ուզողին «հարցնել. ուզել՝ խնդրել» (փեսա եղողին) փորձում են, օր.՝ *փայտ են* ջարդել տալիս և այլն (այլ տիպի լեզուներում կա ուրիշ կարգի ավանդույթ. ազգագրական մշակույթ]. հմմտ. հայ. *հար-սն* < հե. **prk'-* (**perk'-*) (*Джаукян*, 1967, էջ 163): Հմմտ. նաև (բրբռ.) *փռէ* «թափթփված՝ անկարգ մազերով (աղջիկ)». հմմտ. (բրբռ.) *Փռէ* (*Բաղման*) (տեղանուն՝ Մշ., Սս.), նաև *Բաթմանա կամուրջ*, *Բաթմանա բուղա* և այլն (?). հմմտ. հայ. *փռ-ել* < հե. **phēr-* «սփռել. տարածել» (*Աճառեան*, 1979, էջ 531)⁴⁷:

4) Հե. **p^[h]er(k^{[h]o})-* «կաղնի», «ժայռ», «բարձունք, բարձրություն» (հմմտ. լատ. *quercus* «կաղնի»). նորագույն տվյալների համաձայն՝ այս արմատի շրթնաքմային **k^{[h]o}* տարրը արդյունք է հետադարձ առնմանության՝ քմային **k^[h]-* մասից (**k^{[h]o}-* < **k^[h]-*), ընդ որում դրանք համարվում են տարբերակային ածանցների բուն **p^[h]er-* արմատի առնչությամբ. բովանդակության պլանում նման իմաստով բառարմատի դրսևորումը ենթադրում է համապատասխան հողատարածք (լանդշաֆտ)՝ հնդեվրոպական լե-

⁴⁷ Հայ. (բրբռ.) *փռե* (*փռէ*) ձևին ստուգաբանական բառարանները չեն անդրադարձնում:

զունների կրողների նախնական բնակության վայրի առումով: Եվ ըստ այդմ՝ մենք համեմատության մեջ ենք առնում հայ. *հերձ*-«կիսել, զատել» արմատը, որը նույնպես զուգահեռներ ունի ցեղակից մյուս լեզուներում թե՛ հնչյունապես բացատրելի անցումների, թե՛ մանավանդ իմաստային-գործառական (ֆունկցիոնալ) նշանակման առումով. հմմտ. նաև լիտվ. *perkūnas* «որոտ, ամպրոպ», *perkūnija* «ամպրոպ. փոթորիկ, կայծակ») (*Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 410, 866, 880*)⁴⁸: Հմմտ. հե. *p^[h]er(k^{[h]o})u-n-«ամպրոպի աստված». հայ. [...] (?) (համարժեքը փոխարինված է ուշ, օրինակ՝ իրան. *Վահագն* անվանումով (տե՛ս *Саркисян, 1990, էջ XIV*. հմմտ. *Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 615*):

Իսկ վերջինին՝ *հերձ*- «կիսել, զատել» արմատին առնչակից ենք համարում հայ. *հերկ*- արմատը նախնական՝ նույն իմաստով (ավելի ուշ՝ «հողը ակոսել՝ վարել, ցանքս»). հայ. *կ* // *ձ* լծորդությունը թերևս, ծագում է հե. *k^[h]-//*k^{[h]o}- տարբերակումից: Ընդամին՝ բնության երկնային-ամպրոպային տարերքի և երկրային գարնանային ժամանակի երկրագործության (վարուցանքի՝ «հողը մշակելու՝ կիսելու, ակոսելու») իմաստաբանությունը ընդհանուր հնդեվրոպականում հանդես է գալիս փոխադարձ (դիֆուզ) վիճակով:

Այս համատեքստում ուշագրավ տվյալներ են պարունակում հայերենի որոշ բարբառներ, այդ տվյալները, իբրև հնդեվրոպական նախնական ձևի արտացոլում՝ կապված հնչունական անցումների հետ, երկու կարգի են:

⁴⁸ Ամպրոպի (կայծակի) պաշտամունքային գործառույթի մասին՝ իբրև գարնանային հանդեսի (խեթ. AN. TAԿ. ŠUM^{SAR}) սիմվոլ- օրինակի (տե՛ս *Аракелян, 1988, էջ 16-20*. իբրև ծանոթագրություն նշվող գրականությամբ հանդերձ):

ա) Մեկն այն է, որ եթե այս դեպքում ևս ընդունելու լինենք հե. *թ-ն, ընդհանուր օրինաչափությունից (անցում՝ *h-ի, ւ-ի, զրո-յի*) բացի, իբրև շեղում կամ բացառություն այդ ընդհանուրից, կարող էր արտացոլվել որպես խուլ *պ* (տե՛ս *Hübschmann, 1895. Джаукян, 1967, էջ 288-292*):

բ) Մյուսը վերաբերում է հե. *թ և * $\widehat{k}^{[h]}$ - ($// *k^{[h]o}$ -) խուլերի շնչեղ խլացման ձևով արտացոլմանը (հայ. *փ, ք*), օր.՝ հե. * $\widehat{p}^{[h]}$ er- $\widehat{k}^{[h]}$ (* $\widehat{p}^{[h]r}$ -e $\widehat{k}^{[h]}$ -) - հայ. (բրբռ.) *փեքոլ (անել)* «գետինը կիսել՝ հատել», «(ծիու, ցուլի կամ գոմշի՝ ոտներով կամ եղջյուրներով գետինը փորփրել)», որից նաև *փեքոել* «պատռել, պատռվել», *փեքոպել* (սաստկ. *փեքոել-ի*) «պատառ-պատառ անել» (տե՛ս *Մայիսասյանց, 1945, էջ 497*): Աճառյանի «Արմատական»-ը չունի *փեքոլ* բառ(արմատ): Մեր այս համեմատությունը ենթադրելի է, եթե ընդունենք բառի նախնական ձևը **փե(ր)քոլ* (հմմտ. *խորհել - խոհ, *քարշել - քաշել, *խարշել - խաշել* և այլն), մանավանդ որ բառի ընդհանուր իմաստը («պատռել, հատել») տալիս է այդ հնարավորությունը:

5) Հե. * $\widehat{p}^{[h]}$ er($k^{[h]o}$)- $// *p^{[h]}$ er- «կաղնի», «ժայռ» տարբերակային արմատի դեպքում ուսումնասիրողները բերում են ցեղակից այլ լեզուներից օրինակներ, որոնց կարելի է ավելացնել հայերենի որոշ տվյալներ (*Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 866*). հմմտ. հայ. (բրբռ.) *պեռ // պիպեռ* (<**պեռպեռ*) «ամուր՝ պինդ, կարծր. (փխբ.) ժլատ», թերևս նաև *պղպղաքար*, թերևս նաև *պաղ* (բրբռ.՝ *պալ* «պինդ. ժեռ քար») (Ալշ., Մշ.), *պղպղ(աքար)*, որ Ջահուկյանը համարում է ծագած հե. * $\widehat{b\bar{e}l}$ - (* $\widehat{b\bar{o}l}$ -?) (< * $\widehat{b_l}$ -) (ըստ Աճառյանի՝ հայ. *պալ* < հե. * \widehat{bal} - (* $\widehat{b\bar{a}l}$ -, * $\widehat{b_l}$ -) «խոշոր, ուժեղ») արմատից՝ բաղաձայնական տեղաշարժի ակնհայտ հիմունքով (*Ջահուկյան, 1987, էջ 114*): Այս դեպքում նկատի ունենք

հիշյալ արմատի պարզ *p^[h]eru- տարբերակի առնչությունը հայ. (բրբռ.) *պալ* «(կարծր) քար. մեծ զանգված». հմմտ. հինդկ. párvata- «ժայռ», «սար», խեթ. peru- (չեզոք սեռ. ուղղ. հոլ.), peruni (ոչ չեզոք սեռ.) «ժայռ» (հմմտ. *Гамкрелидзе, Иванов., 1984, էջ 614*):

6) Հե. *p^[h]erk^{[h]o}- «լեռնային կաղնի», «ժայռերին աճող կաղնի». այլև՝ «սար»: Այս դեպքում նույնպես ցեղակից լեզուներից բերվող համեմատելի օրինակների մեջ ներառված չէ հայերենից որևէ օրինակ. հմմտ. հուն. ἔρκος «կաղնու անտառ», լատ. quercus «կաղնի» (*Ն. Կր., էջ 614, 614₁, 615, 619, 669, 866*): Այդ արմատի հատկապես երկրորդ՝ «սար» իմաստի հիման վրա, թերևս, կարելի է համեմատության մեջ առնել հայ. *քերծ* «ժայռ» բառը (հնչյունական նույն օրենքով, ինչ լատ. quercus «կաղնի»), թեև այն վեջին հաշվով, ինչպես որ Աճառյանի ստուգաբանությանը է, հանգեցվում է *քեր* (*քերթ*) արմատին՝ ծագած հե. *kerd- / *kerth [^(s)ker-] արմատից (*Ջահուկյան, 1987, էջ 114. հմմտ. Աճառյան, 1979, էջ 572*):

Այս կետում նշենք, որ հե. *p^[h]erk^[h]- «ակոս» > հայ. *հերծ* // *հերկ* առնչություն, ընդամին «ակոս» իմաստի համար, ի թիվս ուրիշ երկուսի, վերականգնվում է նաև *p^[h]erk^[h]-, իսկ վերջինս սկզբնական իմաստով նշանակել է «քերծել, հողի մեջ խորանալ՝ հողը փորել». հմմտ. լատ. porca «ակոս» (թերևս լատ. porcus «խոզ», նախնական իմաստով՝ «(հող՝ գետինը) փորող, քանդող, ճեղքող» (< *p^[h]ork^{[h]o}-). այլև՝ «մարգ. ածու, թումբ». ի դեպ՝ վերջինիս հետ չի համեմատվում հայերեն ձևը, և գտնում են, որ միայն արևմտյան բարբառներում է դիտվում այդ ձևի «ակոս», նախնականը՝ «քերծ(ել)». իմաստի արտացոլումը՝ հայ. *հերկ* «ակոս՝ ցել» (*Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 689, 868*):

Այդպես նաև հայ. *փորձ, փորձոյ* < հե. *per-, հմմտ. հուն. πείρα «փորձ. փորձելը», լատ. ex-perimentum (նույնը) (*Джаукян, 1967, էջ 105*): Ըստ այդմ՝ արմատը հիմք-լեզվում ևս վերականգնվում է *k^[h]o- բաղադրիչով, իսկ ժառանգ լեզուներում՝ առանց այդ բաղադրիչի. հմմտ. հայ. *հարկանեմ (հարի, զարկանեմ)*, (բրբռ.) *զանեմ, զանի* և այլն:

7) Հե. *p^[h]er(k^[h]o)u-no- լիահունչ ածանցական արմատի համար, հավանաբար, կարելի է, իբրև ծագումնային համեմատության եզր նկատի ունենալ հայ. (բրբռ.) *երակ // էրագ* «կարճատև հորդ անձրև» (առասպել.՝ ամպրոպային վերին ուժ՝ «անձրև, հորձանք» և այլն) (Ար., Սս., Մշ., Ալշ.). հմմտ. խեթ. Pirya «Պիրվա (աստվածություն)», «ձիավոր (աստված)» (հետին ժամանակ՝ «Սուրբ Սարգիս» և այլն) (*Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 792-797*): Այս նյութի բովանդակության պլանում քննությունը վերաբերում է այլ թեմայի, որին այստեղ չենք անդրադառնում:

Եվ առհասարակ պետք է նկատի ունենալ, որ բերված և հայերենի հետ համեմատության մեջ դրված հե. p^[h]erġ^[h] // p^[h]erġ^[h]- և այլ ածանցական կամ ձայնդարձով տարբերակային ձևերը «հանգում են ավելի հին *p^[h]er- արմատին՝ -erġ^[h]- ածանցով, որ կազմում է մեկ այլ հիմք ձայնդարձի երկու վիճակով *p^[h]er- ġ^[h]- և *p^[h]r- erġ^[h]-, որը և առանցքային է հայ. (բրբռ.) ձևերի նոր քննության համար (հմմտ. *ն. փ.*, 1984, էջ 239):

Եզրակացություններ

1. Հնդեվրոպական լեզուների համեմատական և տիպաբանական նոր հետազոտությունների տվյալների ընդգրկումը կարևոր է նոր մոտեցումով քննելու հայերենի նախագրային

Ժամանակաշրջանի բառապաշարի համապատասխան շերտի ծագումնային հարցերը, քանի որ այդ ոլորտում մինչև այժմ կատարվածը մնում է ոչ վերջնական լուծում ստացած:

2. Հոդվածի վերնագրում նշված *հերկ-* ձևը ածանցական կազմություն է, պարզ արմատն է *հեր-*, որ չի հանդիպում գրական հուշարձաններում և այլ կարգի աղբյուրներում, սակայն հայտնի են այդ հիմքով տարբեր կազմություններ:

3. Պետք է նկատի ունենալ նաև, որ բերված և հայերենի հետ համեմատության մեջ դրված հե. $p^{[h]}er\hat{k}^{[h]}$ - // $p^{[h]}rek^{[h]}$ - և այլ ածանցական (ծայնդարձով) տարբերակային ձևերի նախնականը $*p^{[h]}er-$ արմատն է, $-e\hat{k}^{[h]}$ -բաղադրիչով, որ կազմում է երկու ձևով՝ մեկ այլ հիմք՝ $*p^{[h]}er-\hat{k}^{[h]}$ - և $*p^{[h]}r-e\hat{k}^{[h]}$ -, որը և առանցքային է հայ. (բրբռ.) ձևերի նոր քննության համար:

5. Բառիմաստային և ստուգաբանական քննություն

Լեզվական միավորի բառաքննական-ստուգաբանական գրեթե ամեն մի հետազոտություն ինչ-որ տեղ կարելի է համարել ոչ ամբողջական, եթե այն ըստ հնարավորին չի ներառում տվյալ միավորի հիմքում ընկած երևույթի այսպես կոչված մշակութային-բանաստեղծական խոսքի ընձեռած հնարավորությունները:

Հայոց լեզվի պատմության ավելի ամբողջական պատկերացման առնչությամբ հին մատենագրական երկերի տվյալների ըստ ամենայնի քննությունը եթե ոչ իդեալի, ապա իրականի հիմք է, որին ձեռնամուխ լինելը, բնականաբար, խոստանում է նոր ձեռքբերում յուրովի:

Հին գրական հուշարձաններում (թարգմանական կամ ինքնուրույն) կան ոչ միայն բառային, այլև քերականական ակնհայտ տարբերություններ, որոնք դասական բանասիրության տեսանկյունից «անկանոն» ձևեր են՝ շեղումներ ստանդարտ լեզվից (օր.՝ հոլովման, խոնարհման զուգաձևություն, բացառություն ընդհանուր կանոնից և այլն, որոնք բերվում են նույնիսկ նորմատիվ քերականություններում):

Որքան էլ նման ձևերը համարվեն ձեռագրական տարընթերցումներ, «գրչագրական» սպրդումներ և այլն (տե՛ս Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ի տվյալների հիման վրա կազմված ցանկը հեղինակի «Լիակատար քերականության» մեջ, հ. VI, 1971, էջ 773-822), դրանք ավելին են, որ գտնում ենք համապատասխան բնագրերում, տարբեր աշխատություններում

(դասագրքերում, քրեստոմատիաներում և այլն), դրանց ոչ միայն լեզվական-քերականական, այլև ոճական-հաղորդակցական հայեցակետով քննությունը արդիական է հայոց լեզվի ընդհանուր պատմության համար:

Կարելի է ենթադրել, որ նման տարբերություններն ունեն ժամանակային-խոսակցական (եթե ոչ բարբառային) հիմք, որ կարող է պայմանավորված լինել նաև գրավոր հուշարձանների հեղինակների (թարգմանիչների) խոսքային հակումներով:

Ստորև անդրադառնում ենք բնագրային հայտնի մի քանի նման միավորների (բառ, կապակցություն, արտահայտություն և այլն):

1) Բուզանդի «Այծից հայոց արքայ» արտահայտության մասին

Ներածություն

Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկը կարևոր աղբյուր է հին հայերենի պատմության ավելի մանրամասն և բազմաշերտ քննության համար, մանավանդ ժամանակի խոսակցական ոլորտի՝ բառի գործածության, ոճերի և արտահայտությունների վերհանման տեսանկյունից (հմմտ. «Ո՛ւղտ եմ, ո՛ւղտ եմ...», «Ճերմակաձին գինի արբցէ», «Այծից հայոց արքայ» և այլն):

Այստեղ անդրադառնում ենք «Այծից հայոց արքայ» արտահայտությանը՝ իմաստաբանական և տիպաբանական փոքրիշատե հնարավոր համեմատության սահմաններում:

1. Նյութը իրականի և առասպելականի համատեքստում

Որքան մեզ հայտնի է, մինչև օրս չունենք Բուզանդի «Այծից հայոց արքայ» հատվածի լեզվական-առասպելական որևէ քննություն: Նրա Պատմությունը ավելի շատ, քան հայ հին գրականության որևէ այլ նմուշ, աչքի է ընկնում ժամանակի ժողովրդական մտածողության, էպիկական պատկերացումների հոգեբանական խտացման լայն ընդգրկումով: Նման բնութագրման հիմքը ամենից առաջ այդ երկի լեզուն է, այնուհետև՝ վերջինիս միջոցով արտահայտված պատումի յուրօրինակ բովանդակությունը:

Հիշենք այն համատեքստը (կոնտեքստը), որում գործածվում է այդ արտահայտությունը. Շապուհի պահանջով հայոց արքա Արշակը, լինելով Պարսկաստանում, մի անգամ սպարապետ Վասակի հետ շրջելիս է լինում Շապուհի պատերազմական ուժ կազմող ձիերի ասպաստանում [*«ձիանցում»*. *ասպ.* < պրս. (մայրսկ.) *asp* «ձի»]. «Ապա եղեւ դէպ օր մի յաւուրց եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանաւ միով զարքային Պարսից. իսկ փոռոպետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպաստանին: Իբրև տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ շուքս դնէր նմա. այլ և անարգանս եւս դնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու՝ թէ *այծից Հայոց արքայ*, ե՛կ նի՛ստ ի խրճան խոտոյ ի վերայ» (*Փասսարոս Բուզանդ*, 1987, էջ 196):

Նման պատումը, ինչ խոսք, լիովին վիպական է (հմմտ. նաև *ոչ ինչ առ լուս կալնուլ, ոչ ինչ շուքս դնել, անարգանս դնել* ձևերը, որոնք, իբրև բառակապակցական միավորներ, հազեցած են ժամանակի ժողովրդական մտածողությամբ):

Ինչպես Բուզանդի լեզուն առհասարակ, այնպես էլ սույն հատվածը, տվյալ դեպքում հիշյալ արտահայտությունը օրինակ է ժամանակի բանավոր մտածողության (օր.՝ հիշյալ հատվածում. *օր մի յաւորց* «օրերից մի օր» և այլն): Նկատված է, որ այս և նման շատ արտահայտություններ և ոճեր հեղինակի լեզվում ունեն ժողովրդական-բարբառային հիմքեր (հմմտ. *Առաքելյան*, 1948, էջ 311-339): Այս հատվածի հետ կապված՝ Վ. Առաքելյանը էական ճշգրտում է մտցնում ոչ միայն Մալխասյանցի թարգմանության, այլև Աճառյանի՝ *լուս* (< *լու* «լու միջատը») ձևը *լաւս* «դարձնելու» մեջ. «սա մի շատ սովորական գրաբարյան նախադասություն է, որ նշանակում է՝ «լվի տեղ էլ չդրեց կամ՝ *լվի տեղ դնելով՝ չմեծարեց*»: Թյուրիմացության պատճառը «լու» բառի հոգնակի ձևն է, բայց այդ գրաբարյան դարձվածքի «*ունել*» բայի «*առ*» նախդիրով խնդիրը միշտ էլ հոգնակի է դրվում, երբ «*ունել*» նշանակում է «համարել»» (*ն. տ.*, էջ 320-321):

Այնուհետև տեղեկանում ենք Վասակի հանդուգն բնավորության տեր լինելուն. «մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ բարկանայր, ի վեր առեալ զուսերն, զոր ընդ մէջս ունէր, հարեալ անդրէն ի տեղուջն զախոռապետն արքային Պարսից գլխատէր ի ներքս յասպաստանի անդ» [հմմտ. այստեղ ևս *բարկութեամբ բարկանալ* (սա ասորաբանություն է), *զոր ընդ մէջս ունէր, հարկանել անդրէն ի տեղուջն* արտահայտությունները՝ բանավոր խոսքին առավել բնորոշ]:

Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության մեջ «Այծից Հայոց արքայ» արտահայտությունը բացատրվում է մի ձևով, որ մասամբ է արտացոլում իրողությունը. «Հայտնի է, որ հին ժամանակ սովորություն կար, որ գավառները մեկը մյուսին ծաղրական կամ արհամարհական մակդիրներ էին դնում,

ինչպես ագուլեցոց՝ զոկ, հին նախիջևանցոց՝ խաչագող, նոր նախիջևանցոց՝ հածե, ախալցխեցոց՝ կոռ, երևանցոց՝ շան ճրագ, պոլսեցոց՝ հոսոս և այլն: Թվում է՝ այսպիսի մի մակդիր է եղել Պարսկաստանում հայերի համար՝ այս բառը, նկատի ունենալով, որ Հայաստանը լեռնոտ երկիր էր, և ժողովուրդը մագլցում էր լեռների վրա՝ ինչպես այժերը: Ախոռապետը ոչ թե անարգելու նպատակով (հիշենք, որ Բուզանդն ասում է՝ «անարգանս ևս դնէր թշնամանաց» - Վ. Հ.), այլ հանաք անելով, այս մակդիրն է տալիս Արշակին՝ հրավիրելով խոտի խուրձի վրա նստել: Նա ընկերական հանաք է արել, մոռանալով, որ խոսում է թագավորի հետ» (ն. փ., էջ 433-434):

Այդ արտահայտությունը Մալխասյանցի կողմից թարգմանված է «այծ-հայերի արքա» ձևով, որը ճիշտ թարգմանություն է, միայն եթե բացառենք «այծ-հայեր» կապակցությունը գծիկով գրված լինելը, որը նույնականություն է նշանակում, այնինչ բնագրում, կարծում ենք, գործ ունենք որոշիչ-որոշյալ կապակցության հետ (իմա՝ բնութագրություն)՝ «այծ հայերի արքա» (առանց գծիկի):

Մալխասյանցի այս ծանոթագրության մեջ կան նաև անճիշտ կետեր. նկատի ունենք «ոչ թե անարգելու նպատակով», «հանաք անելով», «նա ընկերական հանաք է արել» ձևակերպումները: Ասվածի մեջ թերևս միայն տեղին է՝ «մոռանալով, որ խոսում է թագավորի հետ» ձևակերպումը, իսկ առհասարակ այստեղ ուշագրավ է միայն այն, որ *այծ* բառի գործածությունը կապվում է «Հայաստանի՝ լեռնոտ երկիր» լինելու հետ, թեև այս դեպքում էլ տեղին չէ ասել, թե «ժողովուրդը մագլցում է լեռները»:

Ա. Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկ»-ում (Ե., 1976, էջ 235) վերը նշված հատվածի որոշ բառաձևերի գործածության վերաբերյալ կա ոչ պակաս, քան ութ ծանոթագրություն (*ն. տ.*, էջ 403. ծանոթ. 53-60), որոնցից, տվյալ դեպքում, առավել ուշագրավ են հետևյալները. «օր մի յաւուրց», որ նշանակում է «օրերից մի օր» (տե՛ս վերը), «եկն եմուտ շրջել», որ թարգմանվում է նախ՝ «եկավ մտավ», այլև «շրջելու, շրջելու համար», որոնք ևս բանավոր խոսքի նմուշ են և այլն: Այստեղ ունենք մի առարկություն՝ Աբրահամյանը գտնում է, որ «ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա» արտահայտությունը, ինչպես որ Վ. Առաքելյանն է «ճիշտ բացատրությունը տվել», թարգմանվում է «լու համարելով, լվի տեղ դնելով՝ չմեծարեց նրան», որ կարելի է նաև այլ կերպ թարգմանել՝ «լվի տեղ անգամ չդնելով՝ չմեծարեց նրան». կա որոշակի տարբերություն:

2. Բնագրի իմաստաբանության վերանայման հիմքեր

Հայերենում ոչ միայն *այծ* «էգ այծ», այլև վերջինիս իմաստով, եթե ոչ իբրև հոմանիշ, ունենք նաև *նոխազ* «արու այծ», *քաղ* (նույնը), *քոշ* (< *քաւշ*) (նույնը) բառերը, որոնցից, ըստ Աճառյանի, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, մանավանդ Հյուբշմանից, միայն *այծ* բառն է, որ բնիկ է, ծագում է հե. *aig'- (ավելի նոր նշանակմամբ՝ *aik') արմատից, որ ժամանակին ստուգաբանել է Վինդիշմանը (հմմտ. հուն. αἶξ «այծ», սեռ. հոլ. αἶγος «այծի», αἶγειος «այծյա, այծենի») (*Աճառեան*, 1971, էջ 169), հմմտ. նաև միկ. հուն. aizā «այծի» (*Гамкрелидзе-Иванов*, 1984, էջ 586. հեղինակներն ունեն հղում այլ հեղինակի՝ *Risch*, 1976, էջ 313):

Մյուս բառերից երկուսը փոխառություն են. *քոշ* (< *քաւշ*) «արու այծ» < ասոր. *kawša* «խոյ. ոչխար», արաբ. *kabš* «մատաղ խոյ» (*Աճառեան*, 1979, էջ 604-605), *նոխազ* «արու այծ» < պիլ. (պրսկ.) *nuhāz* «արու այծ (որ գնում է հոտի առջևից)» (*Աճառեան*, 1977, էջ 463): Վերջին՝ *քաղ* «արու այծ» բառը, ըստ Աճառյանի բառարանի տվյալների, չունի որևէ ստուգաբանություն, այսինքն՝ անհայտ ծագման է. այդ բառի վերաբերյալ մենք ունենք մեր ենթադրությունը, որին այստեղ չենք անդրադառնում:

Ի դեպ՝ նկատենք, որ *այծ* բառի բնիկ կամ հնդեվրոպական լինելը համեմատական լեզվաբանության մեջ հիմնավորվում է միայն հունարենի տվյալների զուգահեռությամբ, որ նշանակում է, թե գործ ունենք, այսպես կոչված, բացառյալ (էքսկլյուզիվ) զուգաբանության (իզոլոսի) հետ, իսկ վիպական առումով, ենթադրում ենք, համեմատելի է հոմերոսյան «քավության նոխազ» [ռուս. *козел отпущения* (նույնը)] արտահայտության հետ: Այնուհետև, հայ. *նոխազ* բառին և նրանից կազմվածներին համարժեք է հուն. *τράγος* «նոխազ» (հմմտ. լատ. *hircus*), *τράγῳδος* «նոխազերգու», *τράγῳδία* «նոխազերգություն» (հմմտ. հայ. փոխառյալ *տրագեդիա* «ողբերգություն»). հայերեն *նոխազ*, *նոխազերգու*, *նոխազերգութիւն* և նման մյուս կազմությունները գտնում ենք Եփրեմ Ասորու Ճառերում, Մագիստրոսի Թղթերում, Երզնկացու քերականության մեջ և այլն:

Հարկ կա հատուկ նշելու, որ այժի պաշտամունքը գիտության այսօրվա տվյալներով հասցվում է մինչև մ. թ. ա. VII, նույնիսկ VIII հազարամյակ, ընդ որում հին աշխարհում այն բնորոշվում է իբրև լեռնային գոտու կարևոր և հարմար կենդանի, որպես կաթնատու, որի մորթին մշակվում է *տիկ* «հեղուկ լցնելու

աման» պատրաստելու համար, իսկ միսը նախընտրելի է, քան մյուս կենդանիներինը, որովհետև դյուրամարս է - այս ամենով հանդերձ՝ այն զոհաբերման կենդանի է եղել (հմմտ. «Словарь античности», 1989, էջ 275)⁴⁹:

Սույն հատվածի վիպական-առասպելական կողմի մեկնաբանության հարցում, ի թիվս այլ կարգի աշխատանքների, այստեղ խիստ ուշագրավ է Բ. Ն. Առաքելյանի մի ուսումնասիրությունը, որը նվիրված է հայոց Վահագնի առասպելին՝ կապված նրա *վիշապաքաղ* մակդիր-անվանման հետ (այս բառի երկրորդ բաղադրիչն է *քաղ* «արու այծ») (*Առաքելյան*, 1951, էջ 75-81): Նա իրավամբ նշում է, որ «*վիշապաքաղը* հարաբարդված է *վիշապ* և *քաղ* բառերից; *Քաղ* նշանակում էր *արու այծ*, *նոխազ* կամ *քոշ*», որպիսով բացառվում է *քաղ* արմատի մեջ «քաղել, պոկել, առանձնացնել» իմաստ տեսնելը, որ նկատվում է նախորդ ուսումնասիրողների մոտ (*Ն. Կ.*, էջ 75): Ըստ այդմ՝ նա գտնում է, որ «Մատենագրական և հնագիտական տվյալները թույլ են տալիս ոչ միայն կասկածանքի ենթարկելու այդ բացատրությունը, այլև առաջարկելու բոլորովին նոր մեկնաբանություն» (*Ն. Կ.*):

Այնուհետև, Բ. Ն. Առաքելյանը կարծում է, որ հին աշխարհում քիչ չեն այն իրերը, որոնցով ներկայացվում են առասպելական արարածներ «իբրև երկու տարբեր կենդանիների խառնուրդ, օրինակ՝ վիշապառյուծ, եղջերվաքաղ: Վերջինս համարվում էր կես եղջերու, կես այծ ու նույնիսկ բառակազմությամբ էլ հար և նման է վիշապաքաղին», և դա հաստատվում է, ըստ Բ.

⁴⁹ Չոհաբերման հատկանիշն անցել է քրիստոնեական հատուկ ծիսակարգին՝ Սուրբ խաչին (բրբռ.՝ *սրբխէշ*), որի դեպքում մինչև վերջին ժամանակներս հայկական գյուղերում հանգուցյալի հիշատակին զոհաբերման էին տարվում սպիտակ այծեր (հատկապես մատղաշ տարիքի՝ ուկեր):

Ն. Առաքելյանի, հնագիտական տվյալներով (հմմտ. Էրմիտաժում պահվող արծաթե մի անոթը՝ թևավոր վիշապաքաղի պատկերով. «վիշապ՝ այծի գլխով, առջևի երկու ոտքերով և թռչնի թևերով» (Ն. Կ., էջ 75-76)⁵⁰:

Անվանի հնագետի կարծիքն ի վերջո այն է, որ «վիշապաքաղը կամ վիշապայծը Վահագն աստծու կերպարն է՝ առաջացած նրա պաշտամունքի ավելի վաղ փուլում, երբ ամպրոպի, փոթորկի և ամպի աստվածությունը մի էր և երևան էր գալիս արու այծի ու թևավոր վիշապի միասնական պատկերով» (Ն. Կ., էջ 76)⁵¹:

Մեր այս թեմայի առնչությամբ, ի վերջո, ուշագրավ է նաև այն, որ Վահագնի աստվածային լինելը՝ *վիշապաքաղ* մակդիրով, և ըստ այդմ՝ «Վահագնի հետ կապված առասպելները երկար ուղի են անցել և մի ընդարձակ ցիկլ են կազմել, որը աստիճանաբար հարաբարդվել է» (Ն. Կ., էջ 78):

Նկատենք նաև, որ այս հարցում Մ. Աբեղյանի նման մեծության տեսությունը մերժելը, նույնիսկ գիտության ներկայիս տվյալների օգտագործմամբ, բավականին դժվար պիտի լիներ, սակայն այդ ուղին, ինչպես տեսնում ենք, մատնանշում է մեկ այլ մեծություն՝ Բ. Ն. Առաքելյանը, գրելով. «Աբեղյանը այդ առասպելների միայն վերջին փուլն է քննության առարկա դարձրել, այն էլ նկատելիորեն ստատիկ վիճակում, ուստի և չի բացահայտել այդ առասպելների տեղական բովանդակությունն ու

⁵⁰ Նշվում է նաև նման մեկ այլ «արծաթե անոթ (ոխտոն)» հին Նիսայում (հղում՝ *М. Е. Массон, Новые данные по истории Парфии // "Вестник древней истории", 1950, էջ 3*):

⁵¹ Ըստ այսմ՝ փաստորեն մերժվում է Մ. Աբեղյանի՝ լայն տարածում գտած տեսակետը Վահագնի ամպրոպածին աստված լինելու վերաբերյալ, և դա, իրոք, հեռանկարային է:

կողորհտը և հին արևելյան առասպելների հետ նրանց կապերը բացատրելու փոխարեն Վահագնին իր առասպելով փոխառված է համարում Իրանից» (ն. Կ.):

3. Խնդրի լուծման նոր մոտեցման նախանշում

Սույն քննությունը ամփոփում ենք հետևյալ ձևով. Բուզանդի Պատմության «Այծից հայոց արքայ» արտահայտությունը առաջ է բերում ենթադրության և հիմնավորումների մի քանի կետեր. նախ՝ այժ բառը, լինելով բնիկ, զուգահեռ է միայն հուն. *αἶξ* «այծ» ձևին, այնուհետև՝ նրա *քաղ* հոմանիշ-տարբերակը ոչ այլ ինչ է, քան *վիշապաքաղ* բարդ բառի երկրորդ բաղադրիչ, երրորդ՝ *այծի* տոտեմ-պաշտամունքային երևույթը հիմնովին տարածված է եղել Հայկական լեռնաշխարհի հանրության առասպելական պատկերացումներում, և ըստ այդմ՝ անցած նաև հարևան ժողովուրդներին, սովյալ դեպքում իրանականին,- և այս ամենը հիմք է հանդիսանում երևույթը բխեցնելու նախահնդեվրոպական ակունքներից՝ ժառանգորդաբար անցած և պահպանված լեռնաշխարհի հնագույն բնիկների լեզվական և առասպելական ձևակերպումների («գեղարվեստական խոսքի») մեջ:

Այնինչ, Մ. Աբեղյանի տեսության (կոնցեպցիայի) մեջ այդ *քաղ*- արմատը դիտվում է «քաղել» (փխբ.՝ «բարձրացնել», «վերև տանել» և այլն) իմաստով (թերևս իբրև համանուն, որ մնում է կարոտ ճշգրտման), որը սերտ առնչություն ունի ամենից առաջ իրանականի (resp. հնդիրանականի) հետ (հմմտ. Ս. Բ. Հարությունյանի և ուրիշների նմանատիպ աշխատությունները):

Եվ ստացվել է այնպես, որ դասական բանասիրությունը այս թեմայի մեջ ելակետ է համարել ոչ թե ակունքներին դիմելը, այլ հետագա դրսևորմանը հետևելը, ընդ որում այն դեպքում, երբ

այդ հետագա դրսևորումը (օրինակ՝ իրանականում) անցած պիտի լինի ակունքներից՝ ավելի հին, քան ենթադրելի ժամանակներում (եթե ոչ զուգահեռ զարգացում՝ հնդեվրոպական ընդհանրությունից):

Քանի որ Բուզանդի պատմությունը, ձևակերպված յուրօրինակ ձևի՝ լեզվի մեջ, ինչպես ընդունված է ասել, պարունակում է ոչ գրական (խոսակցական, եթե ոչ՝ բարբառայն) մտածողության տարրեր, ապա վերջիններիս նվիրված գրեթե ամեն մի քննություն կարող է արժեքավոր լրացումներ և ճշգրտումներ երևան հանել հայոց հին մշակույթի վերաբերյալ:

Եզրակացություններ

1. Պարսից ախոռապետը դիմել է հայոց արքա Արշակին վաղուց ի վեր գոյություն ունեցող, հնավանդ, ուստի առասպելաբար հայտնի մի երևույթի պարսկերեն ձևակերպված արտահայտությամբ, որ թարգմանաբար բերում է Բուզանդը, և այդ հատվածը բերվում է Վասակի քաջությունը ցույց տալու նպատակով:

2. Այս ուղղությամբ թեման կարող է ունենալու իր շարունակությունը՝ որքանով Բուզանդի պատմությունը նկատելի չափով հագեցած է ժողովրդական-ավանդական «պատմություններով» (բառային, խոսքային մակարդակի և այլն):

3. Մեծ կարևորություն ունի հայ առասպելների ցիկլերում երկանդամ բաշխման ածանցումով (ատրիբուցիայով) քննությունը՝ կապված հայ. *երկ-* (հմմտ. *երկու / կրկին, երկին / երկիր, երկայն / երկար, երկնչել / երկիւղ* և այլն) արմատի ծագման և իմաստաբանության հետ:

4. Հետաքեղյանական բացատրություն-իմաստաբանությունը, որ գտնում ենք Բ. Ն. Առաքելյանի աշխատության մեջ, թեև

նույնպես ավանդական է, սակայն ոչ ամենևին լոկ պատմական արժեք ներկայացնող, այլ հակառակը՝ այն հնարավորություն է ստեղծում ոչ միայն, տվյալ դեպքում, Բուզանդի բնագրի այդ արտահայտության նոր մեկնաբանության, այլև, առհասարակ, Վահագնին առնչվող դիցական պատումի ավելի խորը քննության համար:

2) Նարեկացու բառապաշարի մի քանի բառի մասին

Ներածություն

Գրիգոր Նարեկացու երկերը նմուշ են հին գրականից միջին գրականի անցման հայերենի՝ իր ժամանակի լեզվի յուրօրինակ արտահայտություն, անկախ ներքին (գրական-ոչ գրական և այլն) տարբերակվածությունից: Իբրև տիպական օրինակ՝ ստորև անդրադառնում ենք «Տաղ Յարութեան» երկի լեզվին՝ ըստ քննական բնագրի: Իսկ մինչ այդ նշենք, որ Մաշտոցի անվան Մատենադարանի հմուտ աշխատակից Ա. Քյոշկերյանի երկար տարիների անդուլ աշխատանքի շնորհիվ տասնամյակներ առաջ կազմվել է Գրիգոր վարդապետի տաղերի և գանձերի քննական բնագիրը, որը լույս է տեսել աշխատասիրողի ընդարձակ ներածությամբ, բնագրային ծանոթագրություններով, օգտագործված աղբյուրների համադրությամբ ու նկարագրությամբ, ձեռագրերի, տպագիր գրականության և հատուկ անունների ցանկերով (տե՛ս *Գրիգոր Նարեկացի*, 1981):

1. Վերլուծության նոր նախադրյալներ

Դասական բանասիրության մեջ ընդունված է եղել քննության առարկա դիտել Նարեկացու այդ և մյուս երկերը ամենից առաջ իբրև ժամանակի գրական-կանոնական լեզվի՝ ուշ շրջանի հայերենի (գրաբարի) լավագույն նմուշներ, իսկ նրանցում տեղ գտած ոչ գրական (խոսակցական, նույնիսկ բարբառային) բառեր, քերականական ձևեր, ոճեր և այլն գրեթե դուրս են մնացել, կամ ստացել են այլ բնորոշում: «Տաղեր և գանձեր» ժողովածուի բառապաշարի (ընդհանուր առմամբ՝ լեզվի) ավելի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ այն ընդգրկում է ոչ միայն գրական-կանոնական, այլև ժամանակի խոսակցական (sic բարբառային) բառեր, քերականական ձևեր, «ոճեր», որոնք մնում են ոչ լիովին պարզաբանված:

Երկինք ու գետին («երկիր») քննող վարդապետը հայորդի է, նրա մարդկային (իմա՝ «գերմարդկային») քննությունը («խոսքը») իր ժամանակի հայերենով է՝ ըստ ամենայնի, *խորությամբ* (իմաստով), *ձևով* (գրական, ժողովրդական-խոսակցական, նույնիսկ՝ բարբառային), *ընդգրկումով* (աստվածխոսական, փառաբանական՝ փիլիսոփայական), *սրբասացությամբ* (եկեղեցական): Նրա երկերին ամենից առաջ անդրադարձել են վերը նշված հատկանիշներով (հ. Գ. Ավետիքյան, Մ. արք. Օրմանյան, Մ. Աբեղյան և ուրիշներ), դրանք եղել են նաև լեզվական-բառային քննության առարկա՝ ընդհուպ մինչև մեր օրերը (ՆՀԲ, 1-2, 1836-37. *Առաքելյան*, 1971)⁵²:

Նարեկացու տաղերի լեզուն, կարծում ենք, պիտի քննվի ոչ միայն հին գրական հայերենի (գրաբարի), այլև ժամանակի

⁵² Հետագա ուսումնասիրություններին (հոդվածներ, զեկուցումներ և այլն) այստեղ չենք անդրադառնում՝ իբրև հարցի պատմություն:

խոսակցական (եթե ոչ նաև բարբառային) կտրվածքի մեջ: Նա Վասպուրականի տարածքի ծնունդ է, և չի բացառվում, որ X դ. 2-րդ կեսի և հետագա ժամանակի լեզվի բանավոր (խոսակցական կամ բարբառային) տարբերակի տարրեր թափանցեին նրա «մաքուր» գրաբարի մեջ, մանավանդ բառերի և ձևերի արտասանական-հնչական հանգամանքով:

Ազգային հանճարի տաղերի մեջ՝ գրավոր խոսքում մենք գտնում ենք նման երանգներ, որ նախորդ ուսումնասիրողները չեն նկատել կամ չեն համարել այդպիսին՝ թերևս գրաբարյանի պարփակումով:

Ինչպես գիտենք, Նարեկացին ապրել է միջին հայերենի շրջանին նախորդող ժամանակում, և այդ շրջանը հետագայում պիտի սահմանվեր որպես գրական լեզվի նոր որակի դրսևորում: Իսկ ինչպիսի՞ հնչյունական, ամենից առաջ բաղաձայնական համակարգ ուներ այդ ժամանակի հայերենը, ինչպիսի՞ն էին վերջինիս բառապաշարը, քերականական կառուցվածքը, որոնցով միջին գրականը տարբեր է լինում հին գրականից: Այս հարցերի նկատառումով, անշուշտ, կարելի է հասկանալ Նարեկացու տաղերում մեզ հետաքրքրող մի քանի բառի նոր մեկնաբանությունը՝ իբրև քննական վերլուծություն կամ ստուգաբանություն:

Այստեղ անդրադառնում են միայն «Տաղ Յարութեան» երկում գործածված նախ՝ ոչ գրական (բանավոր-խոսակցական, «բարբառային») բառերին, և քերականական ձևերին, գրական նորակազմություններին, այնուհետև՝ *գանձ*, *գիլ*, *փաղ* բառերի ստուգաբանությանը:

2. Ոչ գրական (բարբառային) բառերի և ձևերի գործածություն

ա) Ձայնավոր հնչյունի սղում (որ հաճախ դիտվում է գրական նորմայի մեջ. *ի լեռնէ(ն)* (փխ. *ի լեառնէ*. հմմտ. ՆՀԲ, էջ 881). «Սայլն այն իջանէր *ի լեռնէն* Մասեաց» (էջ 59): Նման երևույթ նկատվում էր դեռևս հին գրականում, որն առանձին քննության առարկա է:

բ) Հավական կամ հպաշփական ձայնեղ բաղաձայնի դիմաց խուլի գործածություն ($q > Կ, ք > ծ$). *կորնկան* (փխ. *կորնգան*) «վարդագույն թիթեռնածաղկավոր մշակաբույս». «Եթէ հարիւր բարդ խոլրձան, վեց *կորնկան*...» (էջ 61), «Եւ այն վեց բարդ *կորնկանն՝* // Վեցաւրեայ գործքն Աստուծոյ» (էջ 64), *ճոճ* (փխ. *ջոջ*) «խոշոր. մեծ, մեծկէլ». «Այն ճորտն *ճոճ* էր եւ ճապուկ» (էջ 62):

Այդպես ունենք նաև $դ > ր$ անցման օրինակ՝ **դայլ* «ձայն (թոշնի)» > *րաղ* «երգեցիկ ձայն. մեղեդի», հետևյալ մեկնություն-ստուգաբանությամբ: Նախ՝ հայտնի է, որ միջին հայերենի Կիլիկիայի տարբերակում «*այ* երկբարբառը վերածվում է հիմնականում *ա* ձայնավորի» (տե՛ս *Մուրադյան*, 1975, էջ 227): Այնուհետև, հայագիտության մեջ կա կարծիք, որ «կիլիկյան հայերենը նորագույն փոխառությունների ձայնեղները տառադարձում է խուլերով ... օր. արաբ. *burj* > *պորճ*» (ն. ր., էջ 225). այդ երևույթը նկատվում է նաև Վասպուրականի տարածքում, որում ևս ձայնեղ բաղաձայններն արտասանվում էին խուլ ($p > պ, դ > ր, q > Կ$ և այլն) (տե՛ս *Միքայելյան*, 2009): Ըստ այսմ, հայ. *րաղ* բառը կարող է զուգորդվել *դայլ*- (< *դայլայլ* < **դայլ-դայլ*) առանձին չգործածվող արմատի հետ՝ երկբարբառի պարզեցմամբ (*այ /ա*), որ տարածված է հայերենում՝ առհասարակ, այլև ձայնեղի

խլացմամբ (ունենում ենք արմատի տարբերակներ՝ դայլ- / փաղ, ընդհանուր իմաստով՝ «ձայն. հնչում»)։ օր.՝ «Տաղ Յարութեան, Գրիգորի Նարեկացոյն ասացեալ» (էջ 59)⁵³։

զ) Փոքրացուցիչ-փաղաքշական *-իկ, -ակ* (դրանք տարբերակներ են) մասնիկներով կազմություններ՝ *սայլիկ, աթոռակ. «Ջսայլիկն ածեա՛լ են, կացուցեալ. // Ի Մասեաց կողմանէն // Ջսայլիկն ածեա՛լ են, կացուցեալ»* (էջ 60-61). «Եւ ահա չչարժէր *սայլիկն* այն» (Ն. տ.). «Նա ձայն ածէր եզնամուլին, // Կանչին առնէր *աթոռակին*, // Դարձեալ խաղայր եզնամուլին, // Խաղայր, ցնծայր *աթոռակին»* (էջ 63).

դ) Խոսակցական տարբերակին բնորոշ բառեր⁵⁴. *խործան (խորործն), կորնկան (կ-ով), փնջեալ (ծաղիկ). եզնամուլ, կանչին* (հմմտ. *կանչ-, գանչին, գոչին*), *խաղալ* (փխ. *երթալ, գնալ* և այլն. հմմտ. խոսակցական՝ *աչքը խաղում է*).

ե) Հոգնակիի կազմություն՝ հավաքական մասնիկների, այլև հետագայում լայն տարածում գտած և հին գրականի *ք-ի* հետ - *ոյի* մասնիկի, այլև *ք-ին* փոխարինած *-եր, -ան, -ական* մասնիկների գործածություն. վերջիններս գրաբարի բնագրերում երբեմն հանդես էին գալիս իբրև հավաքական-հոգնակերտներ, որոնցից հատկապես *-եր* (< *-եար*) մասնիկն ընդհանրացել է գրական աշխարհաբարում. *սամոյիք, փոկեր(ն)*. «Եթէ սամիքն են արծաթի, լուծն է ոսկի, // Եւ *սամոյիքն՝* ապրիշմի, // *Փոկերն՝* ի կերպասոյ հիւսեալ...» (էջ 62)։

⁵³ Ընդունված է նման բառերը (արմատները) համարել բնաձայնություն (հմմտ. նաև *ծվլալ* կրկնավոր հիմքով կազմությունը)։

⁵⁴ ՆՀԲ-ն Նարեկացու տաղերը բնորոշում է հետևյալ կերպ՝ «Տաղք սրբոյս խրթին բառիք ճարտար քերթութեան» (Ն. տ., հ. 1, էջ 16, 1-ին սյունակ, ն. 2)։

ՆՀԲ-ն *խոլործ* բուսանունը նշում է երկու ձևով՝ առանց *ն*-ի և *ն*-ով (*խոլործն*), և վերջինի համար, իբրև սեռական հոլովի ձև նշում է *խոլործան* (որն, ի դեպ, արտասանությամբ ներհունչ է *կորնկան* բառին՝ *-ան* մասով)։ Եթե *կորնկան* բառի այդ մասը արմատինն է, ապա *խոլործան*-ի դեպքում այդպես չէ, այն սեռականի ցուցիչ չէ, մանավանդ որ բառը, ըստ ՆՀԲ-ի, հայ մատենագրության մեջ բացի Նարեկացուց հանդիպում է միայն Մխիթար Գոշի առակներում, ուղիղ՝ *խոլործ* ձևով, ուստի *-ան* մասնիկն այստեղ ընդամենը հավաքական-հոգնակերտ է՝ դրված *հարհիր* թվականի (քանակի) նշման պահանջով՝ խոսակցական մտածողությամբ (այն է՝ *հարհիր բարդ խոլործան* «հարյուր կապ՝ խորձ, խորոմ խոլորձ»)։ հմմտ. հին գրականում՝ *էշ-իշան* (նաև *իշեան*), *ծի - ծիան*, որոնք խոսակցական ձևեր են եղել, միջին գրականում՝ առավել տարածված։

զ) Ժխտականի ձև չ-ով, ոչ թե *ոչ*-ով, *չխաղայր* (փխ. ոչ խաղայր), *չշարժեր* (փխ. ոչ շարժեր)։ «Եւ ահա *չշարժեր* սայլիկն այն, // Եւ ահա *չխաղայր* անին այն» (էջ 61, 62. գործածված մի քանի անգամ)։

է) Բառային հոմանշություն՝ պատկերի համընդգրկման նպատակով. *ածել / կացուցանել*. «Ածեա՛լ են, ածեա՛լ, // Չսայլիկն *ածեա՛լ են, կացուցեալ*» (էջ 60)⁵⁵, *շարժել / խաղալ / ցնծալ*. «Եւ ահա *չշարժեր* սայլիկն այն, // Եվ ահա *չխաղայր* անին այն» (էջ 61 և այլն), «Դարձեալ *խաղայր* եզնամոլին, // *խաղայր*, ցնծայր աթոռակին, // Եւ ահա *շարժե՛ր* սայլիկն այն, // Եւ ահա *խաղա՛յր* անին այն» (էջ 63), *հիւսել / փնջել*. «Փոկերն՝ ի կերպասոյ *հիւսեալ*, // Եւ խարազանն՝ *փնջեալ* ծաղիկ» (էջ 62), *ծայն*

⁵⁵ Հմմտ. «Երկներ երկին, երկներ երկիր, // Երկներ եւ ծովն ծիրանի» (*խորենացի*, 1913, էջ 85)։

ածել / կանչին առնել. «Նա ծայն ածէր եզնամոլին, // Կանչին առնէր աթոռակին» (էջ 63):

ը) Որոշի առաջադաս գործածություն. *վեցթեւեան սերովբէ*. «Եւ յաջմէ նորա *վեցթեւեան սերովբէքն*» (էջ 60), *բազմաչեայ քերովբէ*. «Յահեկէ նորա՝ *բազմաչեայ քերովբէքն*» (ն. Կ.), *աջ կողմն*. «Ի Մասեաց *յաջ կողմանէն*» (էջ 61), *հարիւր բարդ խոլրծան*. «Եթէ *հարիւր բարդ խոլրծան*» (էջ 61, 64), *վեց (բարդ) կորնկան*. «Եթէ *հարիւր բարդ խոլրծան, վեց կորնկան*» (էջ 61, 64), *մին մանուշակ, նաև միաւորեալ Երրորդութին* «Եւ այն *մին մանուշակ՝ // Միաւորեալ Երրորդութին*» (էջ 64), *չորս գունդ*. «Եւ այն *չորս գունդն* սայլին» (ն. Կ.), *հոյլ մարգարիկ*. «Եւ մազն ամէն՝ *հոյլ մարգարիկ*» (էջ 62), *անուշահոյ բուրումն*. «Այսօր *անուշահոյ բուրմամբ ընթանայ*» (էջ 63), *երկրորդ օրէնք*. «Երկրորդ օրէնքն է Մովսեսի» (ն. Կ.), *ամենազօր յարութին*. «Փա՛ռք Քրիստոսի *ամենազաւր յարութեան*» (էջ 60, 65):

3. Գրական կամ խոսակցական բաղադրական հիմքերով կազմություն

Դրանք մի քանի կարգի են, ընդ որում իրարից բավականին տարբեր, վերաբերում են բառարանագրված չլինելու, ոչ գրական (ժամանակի խոսակցական) հիմքով կազմված լինելու հանգամանքների հետ:

ա)Նախ՝ նկատենք, որ այս տաղում կան բառեր, որոնք չկան ՆՀԲ-ում.

լայնաթիկունք («թիկունքը լայն. թիկնեղ») «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ ... // *լայնաթիկունք, խարտիշագեղ*» (էջ 62-63).

խրձադիզեալ (< *խրձադիզեմ*. «խրձերով՝ խուրձ-խուրձ դիզել՝ կուտակել»): «Եթէ հարիւր բարդ խուրձան, վեց կորնկան, // Մին մանուշակ՝ *խրձադիզեալ...*» (էջ 61).

ծաղկախայտուցք [«գույնզգույն՝ երփներանգ ծաղիկներով ի մի բերված(ներ)՝ կապված(ներ), փնջած(ներ)»]. «Եթէ եզինքն են սաթ ու սպիտակ, // *Ծաղկախայտուցք*, արագաքայլք, ընթացականք» (ն. տ.):

բ) Լեզվի գրական նորմայի մեջ մտնող բառ-բաղադրիչներով կազմութիւններ, որոնք ՆՀԲ-ում բերվում են կա՛մ հետագա հայտնի հեղինակների անունով (*արագաքայլ*), կա՛մ միայն Նարեկացու այս տաղի վկայակոչումով (*ուռամիջակ*), կամ ժամանակի առումով անհստակ որոշելի ժողովածուների [*Տօնակ*. (= «Տօնանամակ», «Տօնապատճառք», հետագայի), *Ճ.Ա., Ճ. Դ.* (= «Ճառընտիրք ազգի ազգի», թարգմ. Գրիգոր Վկայասերի)] հիման վրա (*եզնամուլ, կանջին*):

գ) Գրական նորմայից դուրս (բանավոր-խոսակցական) բառակազմական հիմքով կամ մտածողությամբ կազմութիւններ.

եզնամուլ (ըստ ՆՀԲ-ի՝ «որպես ամուլք եզանց». իմա՛ *ամուլ* «զուգակից, լծորդ») ՆՀԲ-ն՝ վկայակոչում է միայն *Տօնակ., Ճ. Ա.* (տե՛ս վերը), որոնց համապատասխան հատվածները եթե հին չեն, ապա բառը պիտի դիտվի Նարեկացու կողմից կիրառված՝ ժամանակի խոսակցական լեզվի հիմքով. «Նա ձայն ածեր *եզնամուլին*» (էջ 63).

խարտիշագեղ (ըստ ՆՀԲ-ի՝ «խարտեաշ գունով գեղաւոր». իմա՛ «շիկավուն գեղեցիկ»). թեև Տաղերի նախօրինակ ձեռագրերի մի զգալի մասը (թվով՝ 10) բառն ունի *ե*-ով, քննական բնագրի կազմողը դնում է *ի*-ով, ՆՀԲ-ն ունի միայն *ե*-ով, և վկայակոչելով միայն՝ *Երզն, քեր*. (= Երզնկացու Մեկնութիւն քերա-

կանութեան), *Աղթարք* (= «Անպէտ գրութիւն անպիտան ոճով ի վերայ բախտից...»), ոչ՝ Նարեկացի. «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ, ...// Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ» (62).

Կանչիւն «կանչ». ՆՀԲ-ն վկայակոչում է նախ՝ Ճ.Դ. (= տե՛ս վերը), այնուհետև՝ Նարեկացու այս Տաղը. «Նա ծայն ածէր եզնամուլին, // *Կանչիւն* առնէր աթոռակին» (էջ 63).

Կորնկան (ըստ ՆՀԲ-ի «խոտ ինչ ցած». իմա՛ «վարդագույն թիթեռնաձողկավոր մշակաբոյս»), ՆՀԲ-ում գլխաբառը բերվում է *գ*-ով, օրինակները՝ *կ*-ով, տրվում են հնչատարբերակներ՝ *կ*-ով, նշվում է, որ բառը *կորնկան* ձևով «ռամկական» է, այլև վկայակոչվում է նախ՝ *Մխիթար Գոշ առակ*. (= Մխիթար Գոշի Առակներ), այնուհետև՝ *Նար.* (= Նարեկացի)՝ այս տաղը («սայլի»). «Եթէ հարիւր բարդ խոլորձան, վեց *կորնկան*, // Մին մանուշակ՝ խրձադիզեալ» (էջ 61).

Ուռամիջակ (ըստ ՆՀԲ-ի՝ ած. որ բացատրվում է մի քանի ձևով՝ «որոյ ուռքն նմանականք են միջակ. միջասահման ըստ անդամոց ձեռաց և ոտից, կամ պարարակ միջով», որոնցից «մեջքը ուռի պես բարակ՝ ճկուն» իմաստն է բռնում Տաղի բանաստղին), և վկայաբերվում է միայն Նարեկացու այս տաղը («սայլի»). «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ, // *Ուռամիջակ*, հաստաբազուկ» (էջ 62):

4. Ստուգաբանական դիտարկումներ

Ստորև անդրադառնում ենք *գանձ*, *գիլ*, *լրաղ* բառերի ծագմանը (ստուգաբանությանը): Նախ՝ նշենք, որ սրանք իմաստային (թեմատիկ) տարբեր խմբի բառեր են, *գանձ*՝ «բանաստեղծական խոսքի տեսակ» և *լրաղ* բառերը պատկանում են մեկ

առանձին խմբի («ձայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն և գիր»), իսկ *գիլ*-ը՝ մեկ այլ («ֆիզիկական աշխարհ»):

Ստորև առաջարկում ենք այդ բառերի ստուգաբանությունը՝ ճշգրտման կամ լրացման նկատառումով (հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 207, 220):

ա) *Գանձ*: Այս բառը, որը մենք առնչում ենք բուսական աշխարհի հետ, հայերենում ունի զգալի թվով տարբերակներ (հմմտ. *գինձ*, *սինձ*, *գնձիկ* և այլն), դրանց ծագումնային մանրամասն քննությունը մեզ կարող է շատ հեռուն տանել, սակայն այստեղ այդ ներկայացնում ենք ավելի հակիրճ ձևով՝ մանրամասն վերլուծությունը թողնելով մեկ այլ առիթի (հմմտ. *Saint-Martin*, 1818, էջ 150): Նշենք միայն, որ նկատելի է «բուսական աշխարհի միավոր» - «բանաստեղծական խոսքի տեսակ» փոխաբերված անցում:

բ) *Գիլ*: «Նոր հայկազյան բառարանը» *գիլ* «քար» (օր.՝ *գլաքար*) և *գիլ* «ստույտ» (օր.՝ *գլորել*) համանուն բառերը դրել է մեկտեղ. և երկրորդի համար վկայակոչում է Նարեկացու հիշյալ տաղի մեջ գործածությունը. «Ի *գիլ* գայր, ի *գիլ*, սայլիկն ի *գիլ*՝ նշելով՝ «իմա՛ զլելով գլորելով անուոց՝ որպէս գեղ գեղ» (*ՆՀԲ*, 1836, էջ 551-552):

Բառը գտնում ենք նաև Եր. Մեղրեցու կազմած բառարանում՝ գործածված լատինաբան հայերենի բայի կրավորաձև անցյալ անկատարի ձևով՝ *գլեէին* «ծածկէին, յաղթէին» (*ԲՀ*, 1975, էջ 67. տե՛ս *Համբարձումյան*, 2014, էջ 16-17): Ընդունված է բառի ծագումը բխեցնել հե. **uelu-* արմատի **vēlu-* (երկար ձայնավորով) տարբերակից, ըստ Գ. Ջահուկյանի՝ հե. * *uēl-* (կամ **uēlā-*) [**uēl(ā)-*]. հմմտ. սանս. *vālatē* «դառնում է», *valitā*

«դարձած, ծռած», valayati «շրջել, գլորել», հուն. ἐλύνω «ուլորել, գլորել. գլորվել, փաթաթվել», εἰλύνω «գլորել, փաթաթել. շրջապատել» և այլն, լատ. volvo «ուլորել, գլորել. դարձնել», volumen «ուլորք, գալար», գոթ. walwjan «ուլորել, գլորել» (*Աճառեան*, 1971, էջ 530-531. *Джагкян*, 1967, էջ 136. *Ջահուկյան*, 1987, էջ 155. *Սիմոնյան*, 2014, էջ 320):

Ընդ որում եթե հնդեվրոպական ձայնդարձի տարբեր աստիճանի ձևերի արտացոլումներ են՝

1) *գել-* // *գիլ-* // *գ(ը)լ-եմ*) «ուլոր (-ուն, -ած, -եմ), պիրկ, կլոր»(հմմտ. «*գլ-ա-քար*») (բուն իմաստով),

2) *գալ(-ար, -ած)* (հմմտ. բրբռ.՝ գալած «չորացնելու համար ոլորած՝ հյուսած բանջար՝ ավլուկ և այլն») // *գուլ* (բրբռ.) «պտտ(-ած), բութ, ոչ սուր», այլն «ծվի դեղնուց, խորիզ» // (բրբռ.) *գուլ, գիգիլ* (նաև *գուլ-գուլ* «կաթիլ-կաթիլ»), «(վայրի՝ ոչ մշակովի) ոլոռ» (երկրորդական իմաստով),

3) *գաղ* (*գաղ-գաղ* «անիվ. ժողովելը». տե՛ս վերը՝ «Նոր հայկազյան բառարանի» նշումը) // *գաղ(-ել)* «ծածկել, թաքցնել» // *սայլ*, (բրբռ.) *գ^օալգ^օալ-ի* «(երկանիվ) փոխադրամիջող. բրբռ.՝ *գ* // *ս* հերթագայությամբ (ալտերնացիայով)» (երկրորդական իմաստով), ապա հայերեն հիշյալ տարբերակային ձևերը, իրոք, հանգում են հնդեվրոպական նշված տարբերակային ձևերին՝ ունենալով ընդհանուր **ǵel-* արմատը (նոր վերականգնում՝ **ǵ^{[h]oel-}*):

Ուստի, քննության առնելով *գիլ* (բառ)արմատը, նրան առնչում ենք մի նոր տարբերակ («սայլ. անվավոր փոխադրամիջոց» իմաստով)՝ հայ. (գրական) *սայլ*, և (բրբռ.) *գ^օալգ^օալ-ի* բառերը (երկրորդը՝ կրկնավոր բաղադրությամբ, *-ի* կազմիչով), մանավանդ որ *սայլ*-ը գործածվել է Նարեկացու տաղում (ի դեպ՝

այդ տաղը ձեռագրերում կոչվել է նաև սայլի անունով. տե՛ս վերը) (հմմտ. *Համբարձումյան*, 2012, էջ 143-145. *Hambardzumyan*, 2014, էջ 106-111):

գ) *Տաղ*: Եթե նկատի ենք ունենում միջին հայերենի ոչ միայն Կիլիկիայի տարբերակում, այլև առհասարակ «այ երկբարբառի վերածումը *ա* պարզ ձայնավորի», որ անհերքելի իրողություն է լեզվի պատմության այդ շրջանի համար, ապա հայ. *փաղ* բառը կարող է (ձայնի՝ հնչման հատկանիշով) առնչվել *դայլ* (< *դայլայլ* < **դայլ-դայլ*. «թռչնի մի տեսակի երգեցիկ ձայն. ճովողյուն, այդ թռչնի նպատակադիր կանչ») առանձին չգործածվող արմատի հետ՝ նույնպիսի *այ /ա* տարբերակմամբ:

Այնուհետև, այս դեպքում *դայլ* // *փաղ* արմատների պատկերացումը, իբրև ձևափմաստային տարբերակներ, ունեն ընդհանուր «ձայն, հնչում» ենթփմաստը՝ բաշխված բնական («ձայն») և մշակութային («մեղեդի, խոսք») նշանակման վրա: Ընդ որում արտահայտության պլանում (բառի նշանակման մեջ) առկա է ոչ միայն *այ > ա*, այլև *դ > փ*, *լ > ղ* հերթագայություն, որոնք հայերենի հնչյունաբանական օրենքներով լիովին բացատրելի են: Իսկ արմատի ծագմանն անդրադառնալու ենք հետագայում՝ առանձին, իբրև բնիկ (հնդեվրոպական՝ ոչ բնաձայնական) միավոր:

Եզրակացություններ

1. Նարեկացու երկերից միայն մեկի լեզվի քննությունը ցույց է տալիս, թե ինչպիսի բառային և քերականական կարևոր իրողություններ են պարփակված հայ միջնադարյան գրական հուշարձաններում:

2. Դրանց նոր, ավելի առարկայական (օբյեկտիվ) ուսումնասիրությունը երևան է բերում ժամանակի մտածողության հիմքով ձևեր, իմաստային տարբերություններ, շարահյուսական աշխարհիկ (ոչ գրաբարյան) կառույցներ, և որ ավելի հարկավոր է՝ բառերի ծագման մանրամասներ, որոնք էական են հայերենի պատմության համար:

3. Միջնադարյան մեծ հեղինակի գրավոր խոսքը միջին դարերի գրական նորմայի մեջ անգամ պարունակում է իր ժամանակի բանավորի՝ խոսակցական որոշ տարրեր, որոնց մի մասը վերը քննության առնված միավորներն են:

6. Մի քանի այլ ստուգաբանություններ

Հնդեվրոպական լեզուների բառիմաստային (թեմատիկ) բաշխման մեջ առանձին շերտ են, օրինակ, այսպես կոչված, «վերին աշխարհի» (ոլորտի) միավորների (թռչունների) անվանումները, որոնց ծագումն ու իմաստաբանական բաշխումը, սովորական կամ տարուի վերածված գործառույթի մեջ, որոշակի պատկերացման հիմք է լեզուների վաղնջական ժամանակների վերաբերյալ:

Հայերենում նույնպես այդ անվանումները քննության առարկա կարող են լինել ըստ իրենց ոլորտի կարգաբանության. այդ ոլորտի մեջ են մտնում նաև այնպիսի բառեր, որոնց ծագման վերաբերյալ չունենք հավաստի պարզաբանում. հմմտ. *արագիլ*, *արծիվ* (*արծուի*), *կռունկ* և այլն:

Մյուս կողմից՝ հայերենի բառաքննական և ստուգաբանական տարաբնույթ աշխատանքներում (բառարան, ուսումնասիրություն և այլն), բանավոր խոսքում (բարբառներ և այլն) կան բառեր, որոնք մասամբ են եղել քննության առարկա, այլև առհասարակ չեն արժանացել որևէ ուշադրության:

Ստորև անդրադառնում ենք շուրջ մեկուկես տասնյակ բառերի ծագմանը: Մեր անդրադարձը, թեկուզ, մի փորձ է այս դեպքում՝ հիմնված նոր տվյալների վրա կամ կապված որոշ չափով նոր մոտեցման հետ:

1. Ալաբուլա. այս բառն ունի «Հայոց լեզվի բարբառային բառարանը»՝ «խայտաբղետ», (փխբ.) «տարօրինակ, կասկածելի» իմաստներով, սակայն չի հանդիպում Հ. Աճառյանի և Գ. Զահուկյանի բառարաններում (ՀԼՐԲ, 2001, էջ 11. *Աճառեան*, 1971, էջ 90. *Զահուկյան*, 2010, էջ 24). հմմտ. հայ. (խսկց.-բրբռ.)

Աչքին *ալաբուլա* է երևում («մի տեսակ տարօրինակ է՝ սովորական չէ և այլն») արտահայտությունը:

Կարելի է մտածել, որ բառը հայերենում փոխառություն է թյուրքական լեզուներից, որոնց մի ճյուղի ներկայացուցիչն է հալաջերենը, որում գտնում ենք *hala bula* «խայտաբղետ» բառակապակցությունը (*Ճերփեր*, 1972, էջ 95):

Այլև չենք կարծում, թե փոխառությունը անմիջական է, ուստի ավելի իրական է ենթադրել անցումը խոսակցական թուրքերենից՝ բավականին ուշ ժամանակներում:

2. Գալ (*գա-մ.* աոր.՝ *եկ-ի*) «գալ». այս բառը ավանդաբար համարվում է բնիկ՝ հնդեվրոպական ծագման, և իբրև խոնարհման հարացույցում «պակասավոր» բայ, այն լրացվում է *եկ-* (*եկ-ի*, *եկ-ն* և այլն) բառով: Եվ այդպես ամփոփելով նախորդ ուսումնասիրողների փորձերը՝ Աճառյանը գրում է. «Թերևս հնիս. *wā-* արմատից, որ այլուր ամեն տեղ կորած է, բայց *-dh-*ով աճած *wādh-* ձևն են ներկայացնում լատ. *vādere* «երթալ, քայլել», *vado* «ջրի հունով անցնել», *vadum* «հուն», հիսլ. *vaða*, *öð* ...: Հնիս. *wā-* «երթալ, քայլել», արմատից ծագումը հաստատում է նորագյուտ կամիս. [= խեթ.] *wā-*, *wē-* «երթալ, գալ», *uwa* «գալ», *wāmi*, *uwāmi* «գամ» (*Աճառյան*, 1971, էջ 500): Սրանից բացի բերվում է նաև հետևյալը՝ որպես լրացում վերը ասվածի. «Հյուբշ. [= *Հյուբշման*, էջ 441] դնում է *եկ* < հնիս. *ég²at*, *եկն* < հնիս. *ég²emt* արմատների *ghñ*, *ghō*, *ghā*, *ghē* ձայնդարձից: Վերի մեկնությունը տվավ *Meillet*, *Esquisse*, 101 ...» (տե՛ս *ն. տր.*):

Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» գրքում *գամ* բառը համարում է ծագած հե. **yadh-mi* (**yadh-*) արմատից (ինչպես Աճառյանի մոտ է), իսկ *եկ(ն)-ը*՝ հե. **e-gʷem-t* (**gʷā-* / **gʷem-*) արմատից (*ն. տր.*, էջ 128, 154): Հեղինակի բառարանում

այդ երկուսի ծագումը բերվում է նույն կերպ, թեև տարբեր կարգի բացատրություններով.

1) *գալ* բայի արմատն է համարվում *գա-* (բրբռ. *գո-*). «Բնիկ հնդեվրոպական՝ **ǵadh-* «քայլել, գնալ» արմատից (**ǵadh-m* «գամ») **dh-*ի անկմամբ. հմմտ. լատ. *vadō* «գնալ, ուղևորվել», հանգլ. *wadan* «ճանապարհորդել, առաջանալ, ծանծաղուտով անցնել»: Աճառյանը (*Աճառեան*, 1971, էջ 500) արմատի **dh-*ն համարում է աճական և գտնում է, որ հայերենը պահպանել է մաքուր արմատ, սակայն նրա բերած խեթ. *wat-* «գալ» զուգահեռը հետազոտողները ավելի հակված են դիտելու որպես բաղադրյալ կազմություն» (*Ջահուկյան*, 2010, էջ 143).

2) *ել-* («*գալ* բայի կատարյալում և սրանից կազմվող ձևերում») գլխաբառով բառահոդվածի դեպքում նշվում է հետևյալը. «Բնիկ հնդեվրոպական՝ **ǵem-* «գնալ, գալ» արմատից. **e-ǵem-t* > **e-ǵem-t* > *ելն* (= հինդկ. *á-gan*). հմմտ. նաև հինդկ. *á-gān*, հուն. *ε-βην*, գոթ. *gíman* «գալ», *gums* (< **kuem-is*) «գալուստ», թոխ. Ա *kām*, Բ *kēm*, *kam* «գալ», և հետևում են» (հղումներ եղած փորձերին) (*ն. տր.*, էջ 211. կան տառադարձման վրիպումներ):

Ինչպես կարելի է նկատել, դասական իմաստով *գալ* և *ելն* բառաձևերը տարբեր արմատների ձևեր են (Աճառյանի բնորոշմամբ՝ «*գալ*, պակասավոր բայ, որ իր մի քանի ձևերը կազմում է *ել* արմատից»), սակայն դա այդպես չէ, այլ դրանք նույն արմատի ձայնեղ//խուլ հակադրությամբ տարբերակներ են, ընդ որում տարաժամանակյա կտրվածքում (հմմտ. հայ. *քառ-* // *չորք*, *կին* // *ծին*, *առոյգ* // *ուժեղ* և այլն):

Հայ. *ելն* (հետնալեզվային խուլ բաղաձայնով) ձևը, ենթադրում ենք, ավելի հին է, քան ցեղակից լեզուներում ձայնեղ պայ-

թական կամ շփական տարրերով ձևերը [հմմտ. թոխ. kum «գալ. հասնել». օսկ. kúm-bened «(անընդմեջ՝ շարունակ) գալ»]. հմմտ. հինդկ. (աոր.) ágām «եկա», gátih «քայլք», լիտվ. gāju «անցա», ալբ. ngā (< *ga-njo) «վազում եմ», ինչպես նաև գոթ. qiman «գալ. ժամանել», հուն. βάλνω «գնում եմ, գալիս եմ», լատ. uenio (< *g^heniō) «գալ. հասնել» և այլն (տե՛ս *Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 86*):

Բերված լեզուների օրինակներից մի քանիսում ևս նկատելի է ձայնեղ // շփական տարբերակում՝ տարածամանակյա կտրվածքում, որը ոչ այլ ինչ է, քան երևույթի պատմական զարգացման մեջ կատարված փոփոխության արտացոլում:

Կա նաև այլ ձևակերպում արմատի վերականգնման-նշանակման հարցում, որ ներկայացնում է ավելի հին վիճակ առհասարակ հնդեվրոպականի համար, քան որ ավանդաբար բերվում է դասական համեմատաբանության մեջ. հարցն ամենից առաջ վերաբերում է հետնալեզվային ձայնեղ / խուվ (*g / *k) լծորդության հարցում նախնականին, այն է՝ առաջարկվում է ավելի հին համարել խուվ (*k) հնչումը՝ այս արմատի դեպքում: Ըստ այսմ՝ հայ. *գամ (եկի)* հնչատարբերակային բայը ծագում է հե. *k^oṃ արմատից. հետնալեզվային խուլը պահպանվել է լեզուներից մի քանիսում (հայ., թոխ., օսկ.), իսկ մյուսներում վերածվել է ձայնեղի՝ պատմական զարգացման ընթացքում. հայերենը ներկայացնում է բայի հնչական հին (արխաիկ) վիճակը, քան մյուս լեզուները:

3. Գաղգաղ «անիւ, ժողովումն, յայտնութիւն». բառն ակնհայտորեն կրկնավոր կազմություն է (*ԲՀ*, 1975, էջ 61): Այն առանձին չենք գտնում Աճառյանի «Արմատական բառարան»-ում, հավանաբար, այդպիսին լինելու պատճառով: Զահուկյանի

բառարանում չկա *գաղգաղ*, այլ միայն՝ *գաղ(գ)աղել* «խոշորել»՝ հղելով *գաղգազիլ* (վրիպակ, փխ.՝ *գաղգաղիլ*. Վ. Հ.) ձևին, իսկ բառի ծագման կամ կազմության վերաբերյալ չկա որևէ դիտարկում (տե՛ս նաև *գաղեմ* բառի հետ կապված) (*Ջահուկյան*, 1987, էջ 155, 199 և այլն, նաև 2010, էջ 146-147):

Բառը *գաղ* արմատով կրկնավոր բարդություն է, որովհետև այդպիսով այն դառնում է «պտույտ» իմաստի արտահայտիչ, և բնագրում այն տրվում է «անիվ» բացատրությամբ: Եթե *գաղ* արմատի համար ընդունում ենք «պտույտ» ընդհանուր իմաստը, ապա այն թերևս կարող է ներառել ոչ միայն «անիվ», այլև մյուս երկու՝ «ժողովումն» և «յայտնութին» իմաստները:

Հայտնի է, որ նույն իմաստն ունեն *սայլ* («հին անվավոր փոխադրամիջոց», բուն՝ «եզան կոշտ կառք», փխբ.՝ «Մեծ և Փոքր արջի համաստեղություն», «հյուսիս կամ հյուսիսային բևեռ», «առանցք, լիսեռ», «երաժշտական մի ձայն» իմաստներով) և *գալգալի* (բրբռ. գ⁰ալգ⁰ալի «երկանիվ՝ միաստնի փոխադրամիջոց») բառերը, որոնք ծագում են հե. *k^{[h]o}el- «պտտվել, շարժվել», «անիվ, սայլ», արմատից (հմմտ. հիռ. cul «սայլ», հիսլ. hvel «անիվ», պրուս. kelan «անիվ», լատվ. du-celis «երկանիվ», հսլավ. kolo, (սեռ. հոլ.) kolese «անիվ», լատ. colus «ճախարակ», «մանված թել, մանվածք» և այլն):

Հե. *k^{[h]o}el- արմատից ունենք նաև *k^{[h]o}(e/o)k^{[h]o}lo կրկնարմատ ձևը, որը նույնպես իր ծագումնային արտացոլումն ունի ոչ միայն հայերենում, այլև ցեղակից մյուս լեզուներում. հմմտ. թոխ. Ա kukäl «սայլ», թոխ. Բ kukale «սայլ», հինդկ. cakrá «անիվ», Ռիգվեդայում «արևի ակ՝ անիվ», հուն. κύκλος «շրջան», «անիվ», փոյուգ. κίκλιν (= Հեսիք. [= Հեսիքիոս]) «Բույլք համաստե-

ղություն», «սայլ» և այլն) (տե՛ս *Гамкредидзе, Иванов* 1984, էջ 718-719. *Համբարձումյան*, 1998, էջ 34-38):

Ավելացնենք, որ հայերենում սովորական է *q//u*, այլև *η//i* (հմմտ. *գայթել* և *սայթաքել*, *ջիղ* և *ջիլ* և այլն), ինչպես նաև հետնալեզվային պայթականի սովորական և քմային արտասանությունը:

Այս *գաղգաղ* բառին իմաստով («ժողովումն», «յայտնութիւն»), ինչպես նաև կազմությամբ բավականին մոտ են *գաղգաղայ* («ի բաց երեսումն»), *գեղգեղ* «հողովումն», եթե ոչ նաև *գաղաղել* (<**գաղ-գաղ-ել* «խորշել») բառերը, որոնք կարող են առանձին քննության նյութ դառնալ (*ԲՀ*, 1975, էջ 61- 64. տե՛ս *Համբարձումյան*, 2012, էջ 143-144):

4. Գեղ- «երգ», որից՝ *գեղգեղ* «խաղացկուն ձայնով երգելը» [հմմտ. (բրբռ.) *կլկլացնել* «մի տեսակ ձայնել» (?), *գեղօն* (< *գեղաւն*) «երգ. բալլադ» (հմմտ. հիոլ. *filii* «բանաստեղծ»): Սովորաբար արմատը քննվում է *գեղգեղ* «բեկբեկ՝ խաղուն ձայնով երգել» կազմությամբ ձևի մեջ (*Աճառեան*. 1971, էջ 534. *Ջահուկյան*, 1987, էջ 127). թեև նշվում է նաև առանձին՝ հե. **ghel-* «գոչել, կանչել» > *գեղ* «երգ», թերևս «ձայնի» և «երգի» միջև կապի անտեսումով (շրջանցումով) (*Джаукян*, 1967, էջ 196):

Որքան էլ ավանդաբար բառը ծագած է համարվում հե. **ghel-* «գոչել, կանչել» արմատից (*Սոկ.*, 1959, էջ 428. հմմտ. *Джаукян*, 1967, էջ 196. *Ջահուկյան*, 1987, էջ 127 և այլն), այնուամենայնիվ Աճառյանը նշում է նաև, որ նախաձևի հարցում կա դժվարություն. «Արդարև ց¹ի տալիս է հայ. ձ (= հուն. κ), ց²ի տալիս է ընդհանրապես *q*, բայց *e*-ի մոտ՝ *ջ* (հմմտ. *ջեր*, *ջերմ*), ուստի այստեղ մենք գործ ունենք կա՛մ մի երրորդ տեսակի ց¹-ի հետ և կա՛մ ներկա ենք մի առանձին ձայնախոսական (= հնչյու-

նի արտաբերման- Վ. Հ.) պարագայի, որի պայմանները մեզ հայտնի չեն» (*Աճառեան*, 1971, էջ 534):

Ջահուկյանը բառարանում այս արմատը չի բերում առանձին, այլ կրկնավոր կազմությամբ՝ *գեղգեղ* «գեղգեղում, դայլայլ», որից՝ *գեղալ(ն)* «երգ, գեղգեղանք». «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *ghel- «ձայն արձակել, կանչել» բնածայնական արմատից. հմմտ. հուն. χελιδών «ծիծեռնակ», հիբլ. gjalla «հնչել», հանգլ. giellen «գոչել», հիսլ. gala «գոչել, երգել» (հե.*gh-ի անցմամբ *g-*ի, ինչպես *գեղձ* բառում, այլուր ghe-ն տալիս է *ջե-*): - Աճ., ՀԱԲ, 1. 535: Ջահ. ՀԼՊ, 127» (*Ջահուկյան*, 2010, էջ 155):

Թե՛ Աճառյանի կողմից նշվող և թե՛ այս դեպքում (ոչ անկախ Աճառյանից) արմատի ծագման, առավել ևս պատմամշակութային հավաստիության (վերիֆիկացիայի) հարցը ենթադրում է նոր քննություն:

Նորագույն տվյալները ցույց են տալիս, որ հայ. *գեղ-* արմատը ևս ծագում է հե. *uel- «մարգագետին, արոտ. անդրաշխարհ» արմատից, որն ունի ձևային (հնչյունական) և իմաստային (բովանդակության) ավելի հավաստի հիմք՝ ի համեմատություն ցեղակից լեզուների տվյալների: Նախամշակույթի առումով վիպական ավանդույթի արտացոլում է նկատվում հնդեվրոպական ժողովուրդների (հատկապես՝ խեթալուրվական, կելտական, բալթյան և այլն) մտածողության մեջ պահպանված ծիսակարգային (ոհտուալ) այն ավանդույթը, որը վերաբերում է այս արմատի իմաստային համատեքստին. հմմտ. խեթ. uellu «մարգագետին. մեռյալների վայր». լուվ. u(ya)lant- «մեռած», թոխ. U walu «մեռած», wäl- «մեռնել», wialune «մահ», հուն. Ἠλύσιος λειμών, (հոմ.) Ἠλύσιον πεδίον «Ելիսեյան դաշտեր», «մեռյալների դաշտեր» (Ἠλύσιο-ի ծագումը *uel-ից՝ ըստ Պուեիվելի), վալլ.

gweli, կոռն. goly «վերք», հիսլ. val-hgll «Վալգալա», «կովի դաշտում ընկած մարտիկների բնակատեղի», val-kyria «Վալկիրիա», «մեռյալների մեջ հերոսին գտնող և Օդինոս աստծու մոտ՝ մեռյալների աշխարհ տեղափոխող կույս», լատվ. Velu laiks «մեռածների հիշատակի ծես», լիտվ. Veliuonà «մեռյալների աստված» (< հե. *yel- «մարգագետին», «արոտավայր». «անդրաշխարհ») (տե՛ս *Гамкрелидзе, Иванов.*, 1984, էջ 824, նաև 836 և այլն): Այս համատեքստում հայերենի տվյալների ընդգրկումը մեծացնում է համեմատությունների ձևային և իմաստային հավաստիության շեմը, ենթադրում է հայերենի այդ կարգի տվյալների ավելի ամբողջական և մանրամասն քննություն, որ, կարելի է ասել, վերաբերում է հետագային⁵⁶:

Այսպես, ըստ անդրաշխարհի երգային պաշտամունք-ծիսակարգի՝ «(հերոսի) ծիսական ուղեկցում» > «(բանաստեղծի) ներբող» մոտիվը, թերևս, կարելի է տեսնել Արայի և Շամիրամի դրվագում. «Դիակապուտս առաքէ տիկինն յետ յաղթութեանն ի տեղի ճակատուն, խնդրել ի մէջ դիականցն անկելոց զբաղձալին իւր և զտարփածուն: Գտանեն զԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, և հրամայէ դնել զնա ի վերնատան ապարանիցն» (*Խորենացի*, 1913, էջ 49): Հմմտ. հայ. արա-գիլ «ջրի պատռվածքում ալիքներում փնտրող». Արա *գեղ*-եցիկ «մարտում ընկած, որին փնտրում է աստվածների մոտ տանող աղջիկը՝ Շամիրամ. դնում է վերինում». այս պատումը, կարելի է մտածել, որ

⁵⁶ Ի դեպ՝ տեղին է հիշել Գ. Ա. Ղափանցյանի հետևյալ միտքը. «Իզուր են եվրոպական պատմաբաններն ու բանասերները մինչև հիմա անտես առել հայկական լեզվի, հավատալիքի կամ ֆոլկլորի տվյալները: Հայերենը մի շտեմարան է այդ հին լեզուներն ու կուլտուրաները ուսումնասիրելու խնդրում» (*Ղափանցյան*, 1945, էջ 185):

ենթարկվել է բաղարկության (կոնտամինացիայի) հայ մշակույթում մեզ հայտնի «կովի, տարփանքի, վերակենդանացման» սյուժեի հետ. բաղարկություն համանուն հե. *uel- «ցանկություն. փափագ» (հմմտ. հայ. գեղ-, գեղ-ձ և այլն) արմատի հետ: Հավանական է չի բացառվում ընդհանուր հնդեվրոպականում զոհվածի նկատմամբ հակումը («ցավ. ավստասանք») նրանց ուղեկցողների մեջ, որ կարելի է ենթադրել վերը բերված և մյուս լեզուների ձևերի հիման վրա⁵⁷:

5. Դրօշ (< դրաւշ) - ուրարտ. diruše (// իրան. drafš). ուրարտագետ Ս. Գ. Հմայակյանը իր հոդվածներից մեկում անդրադառնում է ուրարտ. ^DHaldine diruše «հասկացությանը», որտեղ մեզ, տվյալ դեպքում, հետաքրքրում է երկբաղադրիչ կազմությանը արտահայտության երկրորդ՝ diruše բաղադրիչը (*Հմայակյան*, 1981, էջ 203-210):

Հոդվածում այն քննվում է հետևյալ վերլուծությամբ (բերենք ամբողջությամբ). «^DHaldine diruše» հասկացությունը Ի. Մ. Դյակոնովը բացատրում է «Խալդիի ողորմածությունը» ձևով (*Дьяконов*, 1963, էջ 69, ծան. 90), իսկ Մորդմանը diruše-ն ստուգաբանել է «դրոշ» բառով (Ս. Հմայակյանը հղում է Հ. Աճառյանին - Վ. Հ.) (տե՛ս *Աճառյան*, 1971, էջ 697): Վերջինիս դիտողությունը չի ընդունվում գրեթե բոլոր ուրարտագետների կողմից: Բայց եթե նկատի ունենանք, որ այժմ հայտնի են բազմաթիվ ուրարտական դրոշների պատկերներ, նաև այն, որ Սարգոն II-ի արձանագրությունում ուղղակի հիշատակվում է Խալդեի տաճարում պահվող դրոշի (ստանդարտ) մասին

⁵⁷ Այս թեման բավականին տարողունակ է, ուստի կարելի է անդրադառնալ հետագա աշխատանքներում:

[АВНИУ, 49 (367)], ապա պիտի ընդունել, որ Ուրարտուում եղել է «խալդյան դրոշը» հասկացությունը, որն անպայման, ինչպես բխում է Մեերի դռան արձանագրության բնույթից, պիտի հիշատակված լիներ այնտեղ, ստանալով զոհերի համապատասխան քանակ, հետևաբար կարելի է ^ԸHaldine diruše արտահայտությունը թարգմանել «խալդյան դրոշին» ձևով» (*Հմայակյան*, 1981, էջ 297):

Այս diruše ձևը, անկասկած, նույնն է, ինչ հայ. *դրաւշ* բառը, որը բնականաբար, համարվում է իրանական փոխառություն (< drafš). հմմտ. ավեստ. drafš, պրթ. driš (drafš), մպրսկ. drafš, պրսկ. dirafš «դրոշ», ընդ որում նաև *դրաւշակ* «դրոշ», «քղանցք, շորի փեշ» (տե՛ս *Ջահուկյան*, 1987, էջ 524):

Եվ ըստ այսմ՝ կարելի է մտածել, որ ուրարտերեն բնագրում բառի տեղ գտած լինելը իրական հիմք է ասելու, թե այն փոխառությամբ զուգահեռ ունի նաև նախագրային հայերենում, եթե ընդունում ենք հայ-ուրարտյան նույնության (իզոտիպի) վարկածը, կամ այլ դեպքում՝ նույնպիսի առնչության հնարավորությունը ոչ միայն առհասարակ, այլև տվյալ միավորի համար: Ընդ որում անցումը (փոխառությունը), ըստ երևույթին, պիտի եղած լինի լեզվի պատմության երրորդ՝ հայ-հյուսիսկովկասյան (խուռա-ուրարտական)-իրանական ինտենսիվ շփումների (մ. թ. ա. II հզր. վերջ - մ. թ. ա. I հզր. կեսեր) շրջանում⁵⁸:

Իսկ ինչ վերաբերում է փոխառության՝ լեզուներին զուգահեռ կամ առանձնակի լինելուն, ապա այն, բնականաբար, քննություն ուրիշ խնդիր է:

⁵⁸ Հայերենի նախագրային ժամանակաշրջանի պատմության շրջանաբաժանման փորձ կատարում է տողերիս հեղինակը հայոց լեզվի ընդհանուր պատմությանը նվիրված իր աշխատանքում (ձեռագիր):

6. Չուարակ (< զուար-ակ). այս բառն ունի եր. Մեղրեցին՝ «եզն, ցուլ, արջառ» իմաստներով, որի բացատրության մեջ բերվող «հոմանիշները» ոչ այլ ինչ են, քան «խոշոր եղջերավոր անասունների արունների տարիք-(սեռա)վիճակային նշանակում» (ԲՀ, 1975, էջ 105):

Աճառյանը, ոչ անկախ Հյուբշմանից, դնում է բառի բուն իմաստը՝ «մեծացած հորթ. փոքր եզ», այլև (փխբ.) «Ցուլ կենդանակերպը», միաժամանակ զուգահեռ է անցկացվում ասոր. *ezwārā* «ցուլ» բառի հետ, նշվում, որ «ասորի բառը բնիկ չէ և չի գտնուում ուրիշ սեմական լեզուների մէջ, ուստի հաւանաբար փոխառեալ է հայերէնից և կամ երկուսը միասին փոխառեալ են իրանեանից: Սակայն մինչև այժմ իրանեանի մէջ սրանց համապատասխան մի ձև չէ գտնուած». վերջում ունի հղում Հյուբշմանին (*Աճառեան*, 1973, էջ 106-107. *Hübschmann*, 1905, էջ 303):

Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» գրքում (Ե., 1987, էջ 512-549) չունի *զուարակ* բառը բնիկ բառապաշարի ցանկերում, այլ միացնում է «պարթևական համարված հայերեն փոխառությունների ցանկին», որ կազմել է Մ. Անդրոնիկաշվիլին՝ կապված վրացականի առնչությամբ հայերենի իրանական փոխառությունների «ժամանակագրական շերտերի» հետ, որտեղ էլ՝ *զուարակ* բառը (*ն. տ.*, էջ 553-556): Հետագայում՝ հեղինակի բառարանում այն բերվում է հետևյալ ձևով. *զուարակ* «մատաղ ցուլ. արջառ. ցուլ կենդանակերպ»: «Հավանաբար փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հավաստված» (*Ջահուկյան*, 2010, էջ 242):

Ինչպես կարելի է նկատել, բառի իմաստի մատնանշումը (տե՛ս ՆՀԲ և այլն) հիմնված է գրական հուշարձանների վրա,

իսկ նախագրային շրջանի առումով, չի բացառվում, որ այն ունեցած լինի ավելի նախնական իմաստ:

Եվ ըստ այսմ կարելի է *զուար(ակ)* բառը կապել հե. **ǵ^huer-* արմատի հետ, այսինքն՝ բառը համարել բնիկ, իբրև «վայրի կենդանիներ» դասի անվանում, որ ունի մի շարք զուգահեռներ ցեղակից լեզուներում. հմմտ. հուն. *θήρ* «վայրի կենդանի», լատ. *ferus* «վայրի. չընտելացած. ոչ ձեռնասուն», հւլավ. *zvērī* «վայրի գազան», հռուս. *звѣрь* «ոչ ընտանի՝ մարդ, կենդանի», պրուս. *zwirins* (հոգն հայց. հոլ.) «վայրի գազան», լիտվ. *žvėris* «գազան» (տե՛ս *Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 468-469*):

Այդպես նաև, ենթադրում ենք, որ կարելի է առնչություն տեսնել հայ. *վարագ*-ի հետ, որը հիմնավոր ձևով համարում են իբրև իրանական փոխառություն. և որին անդրադառնալն այլ խնդիր է (տե՛ս *Ջահուկյան, 2010, էջ 706*). իրանական ձևերից է նշվում նաև *gurraž*. որ կարելի համարել համեմատելի հե. **ǵ^huer-* ձևի հետ, մանավանդ *գ*-ի նկատառումով, որն, այդուհանդերձ, տեղ է թողնում առարկության. թերևս գործ ունենք զուգահեռ արտացոլման հետ՝ նախալեզվյանից (իրանականում հնչյունական ուրույն ձևացումներով հանդերձ):

Այս դեպքում միայն նշենք, որ նման ենթադրության հիմք կարող է հանդիսանալ «արական-իգական» հակադրության մեջ **զուար-* / *վարագ* բառերի մեջ սեռանիշ (արական սեռ) իմաստի հատկացումը (հմմտ. *կով // ցու, եգ, արջառ, խոզ // վարագ* և այլն):

7. Ծամ (կեմ, ճիմ և այլն) < հե. *kem-. Ա. Պետրոսյանի աշխատանքներից մեկում «Սեպագիր *kummi, kummanni kummaḥa* և կամախ» վերնագրի տակ, ի թիվս լեզվական տարբեր կարգի միավորների, այլև առանձին ժողովուրդների առասպելական (միջական) այլևայլ անձնավորումների (պերսոնաժների), քննա-

կան վերլուծության ընթացքում հայերենի տվյալներից օգտագործվում է նաև *ծամ* «հյուսված մազեր. գես» բառը (*Պեպրոսյան*, 2006, էջ 59-69):

Այս առիթով նկատելի է այն, որ վերջինս (*ծամ*. ծագումն անհայտ) կարող է տարբերակային միավոր լինել հայ. *կեմ* «երկար պինդ խոտերից հյուսված պարան» (*կէմ* < *kem) բառի հետ, որ գտնում ենք ոչ միայն հին և նոր գրական հայերենում, այլև մանավանդ վերջինիս բարբառների մի որոշակի մասում (Մուշ, Ալշ., Ղրբ. և այլն. հմմտ. <ԼԲԲ, Գ, էջ 74): Նշենք նաև, որ տվյալ դեպքում դա կարող է սոսկ բացթողում լինել, իսկ ոչ լավագույն դեպքում՝ շրջանցում, եթե նկատի են առնվել միայն <. Աճառյանի տվյալները (իմաստուգաբանությունը)՝ բառի՝ հունարենից փոխառյալ լինելու վերաբերյալ (հուն. κημος) (*Աճառեան*, 1973, էջ 571-572): Աճառյանը նշում է նաև *կեմ*-ը, որը «հետնաբար ստացել է նաև *կեամ* և *ճիմ* ձևերը», որոնցից երկրորդը գործածված եզակի դեպքում՝ *ճմաւ* (գործ. հոլ.), որ «անշուշտ ենթադրում է **ճիմ* կամ **ճում* ուղղականը» (*ն. տ.*, էջ 571):

Մալխասյանցի բառարանում բերվում է *կեմ*, ի համեմատություն հուն. κέμος ձևի, ինչպես որ Աճառյանի մոտ է (*ՄԲԲ*, 2, էջ 421): Բառարանն ունի նաև *կէմ*, որ հղում է *անհոգ* «փոքրիկ սեպ, որ անց են կացնում լիսեռի երկու ծայրերին» ձևին, որ իմաստով բավականին հեռու է, բայց ոչ բացառելի, եթե առանձին արմատ չէ (*ն. տ.*, 1, էջ 143). բարբառային բառարանում հիշյալ իմաստով *կեմ*-ը (ոչ՝ *կէմ*) դիտվում է առանձին՝ համանուն *կեմ* «խոտից ոլորած կապ՝ խուրձեր և այլն կապելու համար» բառին (<ԼԲԲ, Գ, էջ 74): Հունարենի հետ համեմատությունը, կարծում ենք, ենթադրում է ընդհանուր հնդեվրոպական հիմունք բառի ստուգաբանության համար, մանավանդ հնչյունական պլա-

նում (հմմտ. հայ. ե//է - հուն. ε), թեև ըստ Աճառյանի փոխառյալ է հուն. κημός «հյուսած բան» բառից, միաժամանակ (հունարենի համար) նշվում է՝ «բառս համարվում է բնիկ հնդեվրոպական», այլև համեմատելի՝ «բառը բավական տարածված է Արևելքում» (հմմտ. ասոր. qāmā, թուրք. gem, քրդ. gem և այլն), որ և չի ընդունում Ջահուկյանը՝ համարելով «քիչ հավանական» (*Աճառեան*, 1973, էջ 571. հմմտ. *Джаукян*, 1967, էջ 303):

Այսպես, բարբառային նոր բառարանում բերվում են հայ. *ծիմ* և *ծումբ* (*ծում*, *ծումնը*) բառերը, որոնք նշվում են նույն իմաստով՝ «հողի մեծ կտոր՝ գուղձ, որի վրա լինում է կանաչ կամ չոր խոտ» // «հողի գուղձ՝ խոտերով ծածկված» (*<LPP, Գ, էջ 388, 423*):

Ստորև մեր քննարկումը, ի լրացումն ուսումնասիրողների կողմից մինչև այժմ կատարվածի, վերաբերում է հենց Աճառյանի դիտարկմանը, որի դեպքում ունենք վերանայման առաջարկություններ:

Նախ՝ կարելի է ենթադրել, որ հայ. *ծամ* «մազերի հյուսք», այլև *կեմ* «երկար խոտերից հյուսված պարան», *ծիմ* «ճահճուտում բուսած բարակ խոտ» բառերը, որ հայերենի ինքնուրույն զարգացման ընթացքում տարբերակված (դիֆերենցված) ձևեր են (անփոփոխակի փոփոխակներ), ամենայն հավանականությամբ բնիկ են, մանավանդ որ բարբառներում հանդիպում է նաև կիսաշփական շնչել խուլ *ծ* տարբերակով՝ *ծիմ* [եթե ոչ հայերենից այլ լեզուներից անցած, օր.՝ թրք. *շիմ*, *շիման*, ուրիշ լեզուներ՝ *ջմջմայ* և այլն (?): Եվ իբրև ընդհանուր արմատ՝ կարելի է նշել հե. *kem- (< *k'em-b^(h)-) «պատռել, կտրատել», «մանրել, փշրել» (?) ձևը. հմմտ. թոխ. Ա kam, թոխ. Բ keme «ատամ», հուն. γόμφος «մեխ», հվգերմ. «սանր» և այլն (տե՛ս *Рокорны*, 1959, էջ 369, *Джаукян*, 1967, էջ 81. *Гамкредидзе, Иванов*, 1984, էջ 815,

879): Ըստ այդմ՝ ենթադրելի է հնչյունական հետևյալ անցումը՝ հե. *k > հայ. ծ (կ/ճ), «մասերի բաժանված՝ մասնատված» իմաստի հիմունքով և այլն (*Համբարձումյան*, 2018, էջ 45):

Այնուհետև, ենթադրելի է, որ նախալեզվի նախնական *k'em-b^(h)- արմատից է ծագում հայ. (բրբռ.) *ճումբ* բառը, քան որ կարելի է *ճում*-ի ներքին զարգացում համարել՝ *բ*-ի ածանցմամբ, և որ այն չունեն ստուգաբանական բառարանները, սակայն հանդիպում է բարբառներում (նաև գրական լեզվում). հմմտ. օր.՝ «Աշնան ամպին ու զամպին, / Մոլոր նըստած իր *ճըմբին*, / Լոռու հանդում մի արտուտ / Նայում է միշտ իմ ճամփին» (*Թումանյան*, 2018, էջ 34). «... բորիկ, արևից խանձնված ոտքերով քայլում էր առվի եզերքով, բահով *ճումերը* առվից դեն գցում» (*Բակունց*, Երկեր, հ. 1, 1964, էջ 122):

8. Կաշառ «կաշառք». ըստ Աճառյանի բացատրության՝ «կողմնակցության համար տրված վարձք». համարվում է «անստույգ բառ»՝ գործածությունը հայերենի վաղ շրջանից (V դ.), որից՝ *կաշառել*, *կաշառաբեկ*, *կաշառառու*, *անկաշառ* և այլն (*Աճառեան*, 1973, էջ 517).

Այս բառին Գ. Ջահուկյանն անդրադառնում է «Հայոց լեզվի պատմություն» (Ե., 1987, էջ 472) գրքում՝ հայերենի և ակկադերենի առնչությամբ, ընդ որում իբրև «կասկածելի կամ պատահական համարվող», ակկադ. q(i)āšu(m) «նվիրել»: Գրեթե նույնը գտնում ենք հեղինակի բառարանում՝ հետևյալ ձևով. «Ծագումն անհայտ է; Քիչ հավանական է *կաշ*-ն անջատել և դիտել որպես փոխառություն ակկադերենից՝ kašu(m) «նվիրել» (*Ջահուկյան*, 2010, էջ 383):

Բառի մեկնության համար ունենք նոր տվյալներ. հնագույն ժամանակներում չէր բացառվում «մարդկանց միջև հարաբերու-

թյուն» իմաստային ոլորտը՝ (փխբ.) «ձեռք տալ, ձեռք մեկնել և այլն», որի արդյունքում հնդեվրոպական լեզուներում ևս նման երևույթ պիտի եղած լիներ: Ուստի հայ. *կաշառ* բառը, թերևս, առնչվում է այդ ոլորտին՝ իբրև «մի տեսակ հարաբերություն», և ըստ այդմ՝ բառը կարելի է համարել փոխառություն խեթ. *keššar(a)* «ձեռք» բառի, ընդ որում իմաստային ընդլայնմամբ:

Նկատենք, որ հե. $*\text{ḡ}^{[h]}\text{es-}\text{r-//} *ḡ^{[h]}\text{es-}\text{t}^{[h]}\text{o-}$ «ձեռք (մարմնի մաս)» զուգադիր արմատի $*\text{r}$ մասնիկով տարբերակից ցեղակից լեզուներում, ընդամին նաև հայերենում կան տարբեր արտացոլումներ. հմմտ. խեթ. *keššar(a)* «ձեռք», լուվ. *iššari* «ձեռք», լիկ. *izre* «ձեռք», թոխ. Ա *tsar* «ձեռք», թոխ. Բ *šar*, հուն. *χείρ* «ձեռք», հայ. *ձեռն* «ձեռք», հինդկ. *hāsta*, ավեստ. *zasta* «ձեռք» և այլն (հմմտ. *Гамкрелидзе, Иванов, 1984*, էջ 49, 408, 785, 807):

Հին անատոլիականում՝ լուվերեն և լիկերեն ձևերում առկա է նախահունչ *k-*ի անկում [հմմտ. խեթ. *keššar(a)*], որ ընդհանուր առմամբ բացատրվում է հնդեվրոպական քմային շնչեղ ձայնեղ $*\text{ḡ}^{[h]}\text{h-}$ ի դիմաց խուլ $*\text{k}$ հանդես գալու հանգամանքով (տե՛ս *Иванов, 1980*, էջ 147-148):

9. Հաւ(անի)- < հե. $*\text{g}^{[h]}\text{ab}^{[h]}\text{-}$. Սովորաբար այս *հաւանի* «արու. որձ (զուգընկեր)» բառը դնում են առանձին, քան *հաւան* «համոզում, հաճություն» բառը, որի ծագման վերաբերյալ Մեյեի (ոչ անկախ Ս. Տերվիշյանից) հայտնած կարծիքը Հյուբշմանը «կեղծ է համարում»:

Եվ իրոք, հավանական է, որ դրանք լինեն տարբեր՝ գուցե համանուն արմատներ, թեև Աճառյանը, այն առանձին բերելով հանդերձ, այնուամենայնիվ փորձում է դրանց միջև կապ տեսնել՝ նույնացնելու աստիճանի: Այնուհետև՝ Աճառյանը ունի նաև *հաւ-* արմատից կազմված ձևեր, որոնք ավանդված են հին գրա-

կան հուշարձաններում. *հաւանի* «անասունների արուն». օր.՝ «Ո՞ր մատակ առի՞ծ զիր *հաւանին* ի սպանումն մատնէ» (*Ոսկ. Հերովդ.*, էջ 617): Ընդ որում Աճառյանը ավելացնում է հուն. ձբօրն «արու». ուստի բառի արմատն է *հաւան*: Նշվում է նաև, որ Ոսկերբերանի մոտ կա «*հաւանընկեր* «զուգակից, ամուլակից» բառը, որ ծագում է *հաւան* արմատից, ուստի թերևս այս բառն էլ բուն նշանակում է «ընկեր» և ծագում է նույն արմատից» (*Աճառյան*, 1977, էջ 69)⁵⁹:

Հաւան «համոզում, հաճություն». ըստ Աճառյանի՝ «անստոյգ բառ», որ հայ մատենագրության մեջ ունի բազմապիսի ձևերով գործածություն՝ *հաւանիլ*, *հաւանեցուցանել* (*հաւանել*), *հաւանագոյն*, *հաւանընկերք*, *հաւանութիւն*, *անհաւան*, *դիրահաւան* և այլն: Դրանցից *հաւանընկերք*-ը վկայաբերված է ոչ միայն, ինչպես վերը նշվեց, Ոսկերբերանից, այլև Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ից (հմմտ. *Ջահուկյան*, 1987 էջ 68):

Ջահուկյանի՝ հետազայում բառարանում հայտնաձև կարծիքն այդ բառերի ծագման վերաբերյալ թեական է կամ ժխտողական. «*հաւան* «հավանություն, հավանող. թերևս փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հավաստված», «*հաւանի* «արու, որձ (կամ ընկեր)»: Ծագումն անհայտ է (իրանական)» (*Ջահուկյան*, 2010, էջ 453-454): Իսկ «Հայոց լեզվի պատմություն» (Ե., 1987, էջ 113) գրքում, օրինակ, բերվում է *հաւան(իմ)*, որ ծագած է համարվում հե. *Haũñ- (*au-) արմատից:

Նույն (կամ նույնարմատ) բառի տարբեր իմաստների հիման վրա բառարանում առանձին-առանձին արմատ համարելը

⁵⁹ Առաջ անցնելով նկատենք, որ Ջահուկյանը հետևում է Մեյի կարծիքին՝ շարունակելով այն կապել հե. *au- (*av-) արմատի հետ (*Джаукян*, 1967, էջ 241. *Ջահուկյան*, 1987, էջ 113, 218 և այլն):

վերանայելի է, և ըստ այդմ՝ դրանցից *հաւան*-ի ծագման վերաբերյալ կարծիքը (քանի որ «կեղծ է համարվում»)՝ անընդունելի է, և այդ ամենը՝ դրանց նախնական, ընդհանուր իմաստի նկատառումով: Կարելի է մտածել, որ դա «սիրո՝ սիրային կապվածության, հաճության» իմաստն է, որ պարզվում է տվյալ դեպքում հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների հնարավոր տվյալների համեմատությունից: Եթե դա ընդունելի լինի, ապա ըստ այդմ՝ դրանցում ամենանախնականը «բռնել - ունենալ, առնել. ուզել» իմաստն է, որ գտնում ենք ցեղակից լեզուներից մի քանիսում, այնինչ գրավոր հայերենում այն, ինչպես երևում է, ինչ-որ չափով փոփոխվել է, նույնիսկ՝ գործածության ոլորտների տարբերությամբ պայմանավորված, առանձնացվել (հմմտ. «համոզում, հաճություն» և «արու. ընկեր»):

Այնուհետև, նախագրային հայերենից հայտնի է (Խորենացու երկի բնագրով պահպանված), այսպես կոչված, միջանկյալ՝ «համաձայն լինել. մի խոսքի գալ» իմաստի օրինակ՝ «Ե՛կ *հաւանեաց* բանից աչագեղոյ դստերս Ալանաց»: Տվյալ դեպքում. աղջկա ոչ միայն «գեղեցիկ», այլև «հոժար» հատկանիշներ են իմաստային հիմքը նրա առևանգման, և նրանց ամուսնության. հմմտ. ընդհանուր հնդեվրոպական իմաստաբանություն՝ «բռնել - ունենալ, առնել. ուզել»:

Ուստի հայ. *հաւան* և *հաւանի* ձևերով հայտնի բառերի *հաւարմատը* բացատրելի է իբրև բնիկ բառապաշարի միավորի հիմք. հմմտ. հայ. *հաւ*, հինդկ. *gábhasti*(-ի) «ձեռք», լատ. *habeō* «ունենալ», *inhibeō* «բռնած պահել. ձեռքից բաց չթողնել», հիռլ. *gaibid* «բռնում է», «առնում է. վերցնում է», գոթ. *gabei* «ունեցվածք. հարստություն», գերմ. *haben* «ունենալ», անգլ. *have*

«ունենալ» և այլն (< հե. *g^[h]ab^[h]-) (հմմտ. *Гамкредидзе, Иванов*, 1984, էջ 143, 146, 289):

Հայերենում (հնչյունական մակարդակում) հետնալեզվային ծայնեղի անցումը հազագայինի հնչյունափոխական նույն երևույթի արտացոլումն է, ինչ լատիներենում, գերմաներենում և այլն (տե՛ս վերը):

Եթե հետևելու լինենք հայերենում հե. *g^[h]ab^[h]- «բռնել. (ծեռքում) պահել» արմատի իմաստային զարգացմանը, ապա անհնարին չէ նրան առնչել նաև հայ. *հալաստ* (< *հալ-աստ*, որից՝ *հալաստի-ք* և այլն) «ստույգ, ճշմարիտ», *հալաստի* (< *հալ-աստի*) «գոտու ծոպերը կամ ուրիշ մասերը» (ըստ Աճառյանի բացատրության) բառերը. երկրորդը՝ եզակի գործածությամբ, Ոսկեբերանի հետևյալ հատվածում. «*Ջծովս գօրտյն* մերթ բանայցէ և մերթ ծածկիցէ, մերթ ի կուրծս ածիցէ և մերթ զգաւական ածիցէ և այսր անդր շոշոկիցէ, բացխփիկ նափորտամբն խաղայցէ, զի *զհալաստիսն գօրտյն* կարիցէ բազմաց ցուցանել» (*Աճառեան*, 1977, էջ 70). համատեքստից կարելի է ենթադրել «գոտու միջոցով բռնածը՝ պահածը (ցույց տալ)» իմաստը: Թե՛ նախորդ և թե՛ այս բառի առնչությունը հնդեվրոպական հիշյալ արմատի հետ հնարավոր ենք համարում, եթե ընդունենք դրանցում նախնական «ունենալ, բռնել՝ պահել» իմաստը⁶⁰:

10. Ներ // նեռ(ն) արմատին նախկինում տրվել է այլ մեկնաբանություն. կարծում ենք, կարելի է ընդգրկել բոլորովին նոր քննության ոլորտ՝ հայերեն *ներ* «600-յակ (ժամանակաշրջան)» իմաստի մեջ (հմմտ. հուն. νῆρος «600 տարվա մի շրջան», լատ.

⁶⁰ Ավելի մանրամասն քննությունը լինելու է մեր հետագա աշխատանքների մեջ:

nerus «600-յակ» և այլն)⁶¹, այլև հետագայում հայտնի՝ *ներն* «(ուշ) սուտ Մեսիա» - հուն. νῆρος [< շումեր. neru (?): Այս երկուսի կապակցումը, առերևույթ միանգամայն իրական է, որ կատարվել է նախկինում՝ ամենից առաջ երկրորդը հապճեպ ձևով կապելով Ներոն (հուն. Νέρων, լատ. Nero) կայսեր անվան հետ: Հարկ կա նկատելու, որ նման հարմարեցումը նախորդ ուսումնասիրողների կողմից, իրավամբ, մասամբ եղել է առարկելի (հմմտ. *Աճառեան*, 1977, էջ 443-444. հմմտ. *Աղալբեգեան*, 1928, էջ 418-428, 494-503),

Մնում է լրացուցիչ մի քանի դիտարկում, որ ամբողջացնում է նախկինում արվածը՝ իբրև ավելի հավաստի մեկնություն: Հայ. *ներ*-ը գործածված է հին գրական թարգմանական և ինքնուրույն հուշարձաններում (օր.՝ «*ներ* մի ասէ *ի ներիցն*՝ է վեց հարիւր ամ» - լատ. «*nerus una, inquit, ex neris, sexcentum*»), ավանդաբար նաև ոչ գրականում (խոսակցականում) (*Եստերիոս Կեսարացի*, 1818, էջ 11. *Խորենացի*, 1913, էջ 13, 145 և այլն):

Հ. Աճառյանը այս *ներ* բառի համար բերում է և՛ գործածության, և՛ մեկնության վերաբերյալ տվյալներ, ընդ որում հետևություններ Հյուբշմանի, որպիսով գտնում են հունարեն ձևի ծագումը ակկադականից (*Աճառեան*, 1977, էջ 443):

Ըստ այդմ՝ հայ. *ներ* // *ներ(ն)* ձևերը ազատ տարբերակներ են, որ գալիս են վաղնջական ժամանակաշրջանից, իսկ հետագայում, հատկապես արտալեզվական հատկանիշների ներառումով (առաջին հերթին՝ խոսակցական լեզվի ընկալման կամ մեկնաբանման պայմաններում) տեղի է ունեցել բազմիմաստության վերածում համանունության, մանավանդ քրիստոնեական ըն-

⁶¹ Բառը չենք գտնում Ի. Խ. Դվորեցկու հայտնի բառարանում. տալիս ենք Կեսարացու բնագրի գործածության օրինակով (տե՛ս ստորև):

կալման ոլորտում. բոլորովին այլ է Ներոն անձնանունը՝ թե՛ ձևով և նշանակությամբ, թե՛ գործառապես:

Բառը, թերևս, փոխառություն է հայերենի նախագրային ժամանակաշրջանում, որը, բնականաբար, ըստ այդմ՝ ենթադրում է ավելի լայն քննություն՝ լեզուների միջընտանիքային հարաբերության մեջ:

11. -սկել «հսկել» < հե. *sek'- / *sk'- . հայ. *սկել* «տքնել. արթուն մնալ և ուշադիր հսկել» բառը, որից՝ *հսկել* «հետևել, հսկել» ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ» է: Ընդունված է հայ. *հսկել*-ը առնչել *սկել*-ին, այսինքն՝ *հ*-ն համարել նախահավելված (*Աճառեան*, 1979, էջ 227. *Մալխասեանց*, 1944, էջ 141, նաև 1945, էջ 228):

Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» (Ե., 1987, էջ 314-315) գրքում բառն առնչում է խեթ. *ušk-* «տեսնել», *hušk-* «սպասել» ձևերին (թեականով՝ իբրև բաղարկություն): Իսկ հեղինակի բառարանում *հսկել*-ը ուղղակիորեն հանգեցվում է *սկել* «արթուն մնալ, չքնել, ուշադիր լինել, հսկել» ձևին, գրելով՝ թերևս փոխառություն խեթ. *Hušk* «սպասել» բառից (*Ջահուկյան*, 2010, էջ 683):

Բառի փոխառություն լինելը առարկելի է, քանի որ նկատի չի առնված մի քանի հանգամանք. նախ՝ չի լուծվում խեթ. *u-*ի հարցը, այլև՝ հարցի լուծման մեջ պարզություն չի մտցնում «բաղարկություն» համարելը, այնուհետև՝ իմաստային կողմը դիտվում է ավելի շուտ հետին, քան բուն նախնական ընդգրկման մեջ (օր.՝ ավեստերենի տվյալը, որն այս դեպքում կարևոր է). հմմտ. ավեստ. *vohuna-zga* (*spā*) «շուն՝ վարժեցված արյան» - հայ. *արալէզ* [**ար*-(*իւն* < **esr*), *լէզ* (*լիզ-ուլ* (< հե. **leig'h-* «լիզել» (?), «լիզել. ընդունել»)], որ կարող է զորեղ կովան հանդիսանալ մի կողմից՝ հայ. *սկել*-ի ստուգաբանության «(արյան սովոր՝ վար-

Ժեցված շան) հսկել», իսկ մյուս կողմից՝ հայ. *սկունդ* (*սկ-ունդ*) «շուն. շնիկ» բառին ավելի հավաստի ծագում վերագրելու համար, իմաստային այլ համատեքստում քննելու դեպքում:

Հայ. *արալեզ*-ը իրավամբ համարվում է «Ժողովրդական ստուգաբանություն» (արդյունք ոչ գիտական մեկնաբանության), *սկունդ*-ը՝ թեականով, ոչ հավաստի ձևով առնչված *շուն* բառին (տե՛ս *Ջահուկյան*, 2010, էջ 83, 684)⁶²:

Ավելի իրական կլինի այն, եթե ընդունենք, որ հայ. *սկ-* [*սկ-ել*, (*h*)*սկ-այ*, *սկ-ունդ* և այլն] արմատը բնիկ է, այսինքն՝ ծագում է հե. *sek'- / *sk'- լծորդական արմատից. հմմտ հինդկ. sájati «մոտ է գտնվում. կից է», միռլ. sén «ծուղակ. թակարդ», լիտվ. ségti «մոտ գտնվել», այլև ավեստ. vohuna-zga (spā) «շուն՝ վարժեցված արյան» (հմմտ. *Ганкрелидзе, Иванов*, 1984, էջ 155):

Հայերենի այս տվյալը նախ՝ լրացնում է հե. արմատի համար վերը բերված ցեղակից լեզուների շարքը, այնուհետև պարզություն է մտցնում հայ. *շուն* - *սկունդ* - *արալեզ* ծագումնային-իմաստային (ենթադրյալ) կապի մեջ. այդ ամենը, իմաստի առումով, իր նախնականության մեջ կարող է ստանալ նոր մեկնաբանություն և ըստ այդմ՝ առավել հավանական բնութագիր:

12. Ստահակ < հե. *(s)t(h)aHi-. բառը «անառակ, ըմբոստ» իմաստով ունի Եր. Մեղրեցին՝ «Ստահակ - անառակ, անիրաւ, ըմբոստ» (*ԲՀ*, 1975, էջ 293):

Ըստ Աճառյանի՝ «Թերևս փոխառյալ իրան. *stāhak ձևից. սրա հետ հմմտ. պիլ. vistāxv < հպրս. *vistāhava, զնդ. vistāka > հայ. *վստահ*, կազմված stak «դեմ կանգնել» արմատից՝ vi-

⁶² Վերջինիս նոր տվյալների հիման վրա ստուգաբանության, ըստ այդմ՝ վերանայման հարցը թողնում ենք այլ առիթի, քան որ այստեղ շոշափվեց:

նախդիրով: Առանց նախդիրի ունինք պիլ. *staxmak*, գնդ. *staxra* «ամուր, հաստատ», և հատկապես *ստրահակ* բառի համաձայն՝ պրու. *ustāx* «հանդուզն» (Horn. Grdr. § 920 [= Հռոնի «Հիմունքներ»-ի պարագրաֆը.- Վ. Հ]), որ, ցավոք, չի վկայված» (*Աճառեան*, 1971, էջ 268): Աճառյանի քննությունը թեական է, իրանական ձևերի մի մասը նշվում է աստղանիշով, որ իջեցնում է մեկնաբանության հավաստիությունը:

Այնուհետև Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» գրքում (էջ 544) *ստրահակ* բառը բերում է իբրև իրանական փոխառություն (< **stāhvak*. հմմտ. մպրսկ. *vi-stāxv* «վստահ») (*Ջահուկյան*, 1987, էջ 544, 547, 576): Գրեթե նույնը գտնում ենք հեղինակի բառարանում (իրան. **stāhak*), այսինքն՝ նույնն է, ինչ Աճառյանի մեկնաբանությունը (*Ջահուկյան*, 2010, էջ 693):

Նման պարագայում ստուգաբանությունը, կարծում ենք, վերանայելի է:

Նախ՝ նոր փաստերի ընդգրկումը հուշում է, որ բառի «անառակ, անիրավ, ըմբոստ» իմաստները հետին են, որ հայերենում ավանդաբար բերվում են տարբեր գրավոր աղբյուրների հիման վրա, իսկ նախնականը (նախագրայինը), կարելի է մտածել, «գող. գողանալ. թալանել» իմաստը պիտի լինի, որ առանձնացվում է հնդեվրոպական մեծ թվով լեզուների օրինակով:

Եվ ըստ այդմ՝ հայ. *ստրահակ* բառի արմատն է *ստրահ-*, իսկ *-ակ-*ը ածանց է, այն ծագում է հե. *(s)t^(h)aHi- «գողանալ», «թաքցնել», «գող» արմատից. հմմտ. խեթ. *tajā-* «գողություն անել, գողանալ», (եգ. 3-րդ դ.) *ta-ja-az-zi*, *ta-a-i-iz-zi* «գողություն է անում», «գողանում է», *tajazzi* «գողություն», հինդկ. (s)*tāyú* §գող», *stéyam* «գողություն», *stená* «գող», ավեստ. *tāyu-* «գող», *tāya-* «գողություն», հուն. *τητάομαι* «գրկվում եմ. ունեմ կարիք», հիոլ. *táid*

«գող», հւլավ. tatī «գող», tajiti «թաքցնել», «գաղտնի պահել», ռուս. таить և այլն (հմմտ. Pok., 1959, էջ 1010. Гамкрелидзе, Иванов, 1984, էջ 748):

Բառի իմաստի առումով հայերենում տեղի է ունեցել փոփոխություն, և դա միանգամայն բնական է, որ այլ բան չէ, քան լեզվի բովանդակության պլանի (բառիմաստի) տեղաշարժի վկայություն՝ այլ գործառույթի հիմունքով:

13. Խուլ *տ*-ի առնչությունը հե.*g'-ին. Է. Հեմպը իր հոդվածներից մեկում (*Հեմպ*, 1983, էջ 38-42), հե. *g' + նայ հնչյունախմբի հետ կապված, իր տարակուսանքն է հայտնում հետևյալ դեպքում (բերում ենք իր տողատակի նշած հղումների հետ միասին). «Ա. Մեյեն խոսում է art-oy (*արտ*) բառի հանելուկային *t*-ի մասին (*Meillet*, 1936, էջ. 101), մինչդեռ Ջոլտան առանց տատանվելու այս բառը կապում է սանսկ. ajras, հուն. ἄγρος, լատ. ager, գոթ. akrs բառերի հետ (*Solta*, 1960, էջ 132): Այս բառի *g' կիսաշփական արտացոլումը *r-ից առաջ հավանորեն ենթարկվել է փոփոխության՝ կորցնելով իր շփականությունը նախքան *Cr-ի փոփոխությունը, այսինքն՝ նախքան *Cr > rC վերածվելը: Ուստի հնչյունաբանորեն ավելի հավանական է, որ *r*-ն, լինելով ծայրալեզվային հնչյուն, ներառել է հենց այդ որակի *s* շփական հնչյունը: Նույն եղանակով կիսաշփականի ծայրալեզվային ելքը սխալմամբ դիտվել է որպես *r*- հնչյունի մաս: Պետք է ենթադրել, որ այս փոփոխությունը ընթացել է հետևյալ կերպ. *g' r > *dzʳ (կամ *tsʳ) > *dr (կամ *tr) > *rd (կամ *rt) > rt » (ն. տ., էջ 38) :

Ինչպես նկատում ենք, քննությունը տեղի է ունենում «հավանականի» և «ենթադրականի» սամաններում, ուստի այն այնքան էլ վերջնական չի կարելի համարել, իսկ հնչյունական ան-

ցումների շղթան թողնում է գերստուգաբանականի (hiperety-mologica) տպավորություն:

Ունենք երևույթի այլ բացատրություն՝ հե. *g' > հայ. *տ* (նաև *ծ*) անցման վերաբերյալ, որ հայտնել ենք մեր աշխատանքներից մեկում (*Համբարձումյան*, 1995, 2, էջ 232-233 և այլն). 1) *խաւարտ* [*խաւ-արտ* < հե. *khəu- [*(s)keu-](?) + *ag'ro- (*g' > տ)] (*Ջահուկյան*, 2010, էջ 323-324, նաև *Աճառեան*, 1973, էջ 351-352). օր.՝ «Զարտախուր *խաւարտ* և գտից խաւարծի» (*Խոր.*, էջ 84). 2) *խաւարծի* [*խաւ-արծ-ի* (< *խաւ-արտ*) < հե. *khəu- [*(s)keu-] (?) + *ag'ro- (*g' > ծ)] (ն. տ.). օր.՝ «Զարտախուր խաւարտ և գտից *խաւարծի*» (*Խոր.*, էջ 84): Հմմտ. նաև հայ. *արածել*, (բրբռ.) *արծալ*, *արաւտ*, թերևս նաև *արտ* և այլն:

Այսպիսով, հե. *g' > հայ. *տ* (նաև *ծ*) համապատասխանությունը բացատրելի է ըստ լեզվի հնչյունական օրենքների, նրանց ժամանակային փոփոխությունների նկատառումով:

14. Փալախ (բրբռ.) (> բալախ) < հե. *bɟ. Քիչ չեն հայերեն բարբառային այն բառերը, որոնք բնիկ են (ունեն հնդեվրոպական ծագում), սակայն տեղ չեն գտել, կամ մասամբ են հանդիպում հայերենի ստուգաբանական բառարաններում. թերևս բացառություն են Գ. Ջահուկյանի և Ն. Սիմոնյանի այն աշխատաքները, որոնցում այս կամ այն չափով ընդգրկված են հիշյալ կարգի բառերը (*Ջահուկյան*, 1972, էջ 277-330 և այլն, *Սիմոնյան*, 1979, էջ 188-250):

Աճառյանի «Արմատական»-ում. օրինակ, հայ. *բալախ* «անապատային վայրի խոտ. փշաբույս» (իմաստի նշանակումը՝ Աճառյանի) համարվում է փոխառյալ վրաց. *բալախի* «խոտ» (և նրանից կազմված, ընդ որում միայն գրական լեզվում գործածվող բուսանուններ՝ *բալախկվերցիա* «հոռոմ սամիթ», *բալախ-*

փիչվա «կվենի» և այլն), որն այնքան էլ համոզիչ չէ՝ մի քանի պատճառներով:

1) Վրացերենի որևէ բարբառում այդ բառը գործածված չէ, չունի լայն տարածում այդ լեզվի մյուս տարբերակներում (հմմտ. հայ. *մածուն* բառը, որ փոխառություն է հայերենից վրացերենում. վրաց. *մածոնի*, որ չի հանդիպում վերջինիս բարբառներում, այլ գործածվում է միայն գրականում, ընդ որում խուլ բաղաձայնի շնչեղացմամբ):

2) Բառը տարածված է հայերենի մի շարք բարբառներում (Ալշ., Բլ., Երև., Մուշ և այլն)՝ *փալախ* «մի տեսակ դաշտային խոտ, որից կեմ են պատրաստում» (իմա՝ Աճառյանի բացատրությունը), որից՝ *փալախոտ* (Բղ. բրբռ.): Այս վերջինը, ի դեպ, կա՛մ բառասեղման արդյունք է (*փալախոտ* < *փալախախոտ*), կա՛մ *փալախ*-ի գործածություն, իբրև բառաբարդման բաղադրիչ՝ *բալտարբերակով*, որն ինքնին հետաքրքիր է:

3) Հայերենի գրավոր աղբյուրները, թեև մասամբ են հին, սակայն ունեն բառի ավելի նախնական գործածություն. ըստ ՆՀԲ-ի՝ *Վրք. հց.* (= «Վարք հարանց»), Բ, 590, *Ամիր. Բժշկ.* (= Ամիրդովլաթ Ամասիացի, Բժշկարան)⁶³:

4) Եթե նույնը դիտենք, ինչ մյուս (Աճառյանի «Արմատական»-ի)՝ նախորդ բառահոդվածը՝ *բալախ* «սնտի, չնչին, աննշան» (վկայություն՝ Ս. Գիրք՝ Եփր. օրին., էջ 268, Եփր. Համար., էջ 93, Թիք, ԻԱ, 5), ապա այդ երկուսը կարելի է կարծել, որ նույնը պիտի լինեն. այս 2-րդի իմաստը լավագույնս համապատասխանում է բրբռ. *փալախ*-ի «ոչ կարևոր, երկրորդական (խոտ)» իմաստին. նկատի ունենանք, որ հայ. (բրբռ.) *փալախ* (<

⁶³ Հմմտ. նաև «Առձեռն բառարան», մանավանդ «Հայ Բուսակ. հայկական բուսաբառություն» (§ 278):

բալախ) նշանակում է «ոչ կանոնավոր, այլ խառնիխուռն, վայրի աճած խոտ» [հմմտ. բրբռ. *փղրչուփալախ* «(անկանոն՝ ի միջի այլոց) խոտ»]:

Այս ամենից հետո, կարելի է մտածել, որ հայ. *բալախ* (բրբռ. *փալախ*) բառը բնիկ է, ամենայն հավանականությամբ ծագում է հե. *b₁- (> bal-. հմմտ. *բող-*, *բող-կ*, *բող-ջ*, *բոյս* և այլն) արմատից՝ *-ախ* ածանցով (հմմտ. *սպանախ*, *մանանեխ* և այլն):

Վերը՝ մի քանի այլ ստուգաբանություններ անվանումով բաժնում քննության առնված մոտ մեկուկես տասնյակ բառերին անդրադառնալը, իբրև նորություն, այս կամ այն չափով լրացնում է հայերենի ստուգաբանական բառարանը՝ լուսաբանված իր իսկ չափով:

Համառոտագրություններ

ա) Սկզբնաղբյուրների

- ԲՀ - Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., 1975:
- ԲՍՀ - Է. Բ. Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:
- ԷԱԲ - Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:
- ԺՀԼԲԲ - «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հհ. 1-4, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:
- ՀԼԲԲ - «Հայոց լեզվի բարբառային բառարան», հհ. Ա-Է, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001-2012:
- ՀՀԲ - Բառգիրք հայկազեան լեզուի ի Մխիթարայ Սեբաստացոյ (և աշակերտաց), հհ. 1-2, Վենետիկ, 1749-1769:
- ՄԲԲ - Սյր. Մայիսասեանց, Հայերէն բացատրական բառարան, Ե., հհ. 1-4, Հայկ. ՍՍՌ պետհրատ., 1944-1945:
- ՆՀԲ - Գ. Աւերիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
- АВННУ - И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту // “Вестник древней истории”, 1951, 2, с. 257-266, 1951, 3, с. 207-252:
- БЭС - “Большой энциклопедический словарь: Языкознание”, М., 1998:
- Дв. - И. Х. Дворецкий, Греческо-русский словарь, 1-2, М., 1958.
- УПД - Дьяконов И. М.. Урартские письма и документы, М.-Л., 1963:
- IEW - J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I Band, Bern-München, 1959 (= Pok.).
- REA - Revue des études arméniennes, Paris:
- MSL - Mémoires de la Société de linguistique de Paris.

բ) Լեզուներ և բարբառներ

ալբ. - ալբաներեն	հանգլ. - հին անգլերեն
Ախց. - Ախալցխայի (բրբռ.)	հրգերմ. - հին բարձր գերմաներեն
անգլ. - անգլերեն	հիեր.լուվ. - հիերոգլիֆյան լուվերեն
Ալշ. - Ալաշկերտի (բրբռ.)	հիռլ. - հին իռլանդերեն
Աշտ. - Աշտարակի (խոս..)	հիսլ. - հին իսլանդերեն
ասոր. - ասորերեն	հկոռն. - հին կոռներեն
ավ(եստ). - ավեստերեն	հհնդկ. - հին հնդկերեն
արաբ. - արաբերեն	հհնդկ. (վեդ.) - հին հնդկերեն (վեդայական)
բրետ. - բրետոներեն	հիր. - հին հրեերեն
գաել. - գաելական (գաելյան)	Հմշ. - Համշենի (բրբռ.)
գալլ. - գալլերեն	հոլ. - հոլանդերեն
գերմ. - գերմաներեն	հչեխ. - հին չեխերեն
գոթ. - գոթերեն	հռուս. - հին ռուսերեն
եբր. - եբրայերեն	հսլավ. - հին սլավոներեն
Երև. - Երևանի (բրբռ.)	հվգերմ. - հին վերին գերմաներեն
գենդ. - գենդերեն	հուն. - հունարեն (հունական)
թոխ. - թոխարական (թոխարերեն)	հուն. (էդլ.) - հունարեն (էդլյան)
իռլ. - իռլանդերեն	Ղրբ. - Ղարաբաղի (բրբռ.)
լատ. - լատիներեն	մբրետ. - միջին բրետոներեն
լատվ. - լատվիերեն	միկ. հուն. - միկենյան հունարեն
լիտվ. - լիտվաներեն	միռլ. - միջին իռլանդերեն
խեթ. - խեթերեն	Մշ. - Մուշի (բրբռ.)
Խտջ. - Խոտրջուրի (բրբռ.)	Ջղ. - Ջուղայի (բրբռ.)
խուռ. - խուռերեն	Մրդ. - Մարաղայի (բրբռ.)
Կր. - Կարինի (բրբռ.)	չեխ. - չեխերեն
կելտ. - կելտերեն (կելտական լեզու)	Չրմ. - Չարմահալի (բրբռ.)
կիմր. - կիմրերեն	
հայ. - հայերեն	

պամիր. (վախան.) - պամիրյան
(վախանյան)

պիլ.- պահլավերեն

պրուս. - պրուսերեն

սանս. - սանսկրիտ

սեպ. լուվ. - սեպագիր լուվերեն

սերբ. - սերբերեն

սերբ.-խորվ. -սերբա-
խորվաթերեն

հուն. (հոմ.) - հունարեն (հոմերոսյան)

սողդ. - սողդերեն

Սս. - Սասունի (բրբռ.)

վալլ. - վալլիերեն

վեդ. - վեդայական

Վն. - Վանի (բրբռ.)

Տիգ. - Տիգրանակերտի (բրբռ.)

Տփ. - Տփղիսի (բրբռ.)

ուրարտ. - ուրարտերեն

Ուրմ. - Ումիայի (բրբռ.)

գ) Տերմիններ և տերմինային անվանումներ

անեզ. - անեզական

անց. - անցյալ

աոր. - աորիստ

ար. ս. - արական (սեռ)

բրբռ. - բարբառ(ային)

դ. - դեմք

եզ. - եզակի (թիվ)

եղ. - եղանակ

երկ. - երկակի (թիվ)

ըղծ. - ըղծական (եղանակ)

թ. - թիվ

Ժմ. - ժամանակ

խոս. - խոսվածք

իգ. ս. - իգական սեռ

կտր. - կատարյալ

հե. (հ.-ե.) - հնդեվրոպական

հոգն. - հոգնակի (թիվ)

հոլ. - հոլով

ներգոյ. - ներգոյական (հոլով)

ներկ. - ներկա (ժամանակ)

նխ. - նախդիր

սահմ. - սահմանական (եղանակ)

սեռ. - սեռական (հոլով)

դ) Այլ կարգի

բրբռ. -խսկց.- բարբառային-
խոսակցական

դդ. - դարեր

կրկն. - կրկնավոր (կազմություն)

հզր. - հազար(ամյակ)

հմմտ. - համեմատի՛ր
(համեմատել)

հնխ. - հնդեվրոպական

Նախալեզու

մ. թ. - մեր թվարկություն

մ. թ. ա. - մեր թվարկությունից
առաջ

մոտ. - մոտավորապես

ն. տ. - նույն տեղում

նխն. - նախնական

փխ. - փոխ(անակ/արեն)

փխբ. - փոխաբեր(աբար/ական)

օր.- օրինակ

Գրականության ցանկ

ա) Բնագրեր

Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Ա. Քյոշկերյանի, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981:

Եւսեբի Պամփիլիայ Կեսարացոյ Ժամանակականք, Վենետիկ, տպ. Ս.Ղազարու, 1818:

Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, առաջաբանը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Ե., «Հայաստան» հրատ., 1990:

Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահանություն), լրացումները Ա. Բ. Սարգսյանի, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1991:

Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Ե., 1987:

Мовсес Хоренаци, История Армении, перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Ереван, Изд-во «Айастан», 1990:

բ) Բառարաններ

Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:

Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հհ. 1- 4, Ե., ԵՊՀ հրատ., 1971-1979:

Ազեբեան Մ., Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1846.

Աւերիքեան Գ., Սիրմէլեան Խ., Ազեբեան Մ., Նոր բառագիրք հայկազնեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

- Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., ՀՀ ԳԱ հրատ., 1975:
- Ղազարյան Ռ. Մ., Ալեքսիայան Հ. Մ., Միջին հայերենի բառարան, հհ. Ա-Բ, Ե., ԵՊՀ հրատ., 1987-1992:
- Մայիաստեանց Սյր., Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., ՀՍՍՌ պետհրատ, 1944-1945:
- Ջահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., «Ասողիկ» հրատ., 2010:
- Гарибян А. С., Русско-армянский словарь, Ереван, Изд-во “Айастан”, 1977,
- Дворецкий И. Х., Латинско-русский словарь, М., 1976.
- Мещанинов И. И., Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., “Наука”, 1978.
- “Словарь античности”, М., 1989.
- Фасмер М., Этимологический словарь русского языка, тт. I-IV, М., “Прогресс” (изд. II, стереотип.), 1986-1987.
- Boisacq E., Dictionnaire étymologique de la langue grecque, 2-ème ed., Heidelberg-Paris, 1923.
- Tischler J., Hethitisches etymologisches Glossar, mit Beiträgen von G. Neumann und E. Neu, Teil I, Innsbruck, 1990.
- Vrouyr N. E., Répertoire étymologique de l’arménien, dans ses relations avec les langues des pays voisins. Première partie: Accadien, Sumérien, Ourartien, Hittite, Aramien, Hébreu, Syriaque, Arabe. Anversm: 1948.

զ) Տեսական գրականություն

- Աբրահամյան Ա. Ա., Բառաքննական դիտողություններ // ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների), 1958. 4, էջ 62-63:
- Աղայան Է. Բ., Գրաբարի քերականություն, հ. 1. Մինխրոնիա, գիրք Ա. Հնչյունաբանություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964:

- Աղայան Է. Բ., Բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:
- Աղայան Է. Բ., Նոր ստուգաբանություններ // «Պատմա-բանասիրական հանդես», 1967, 4, էջ 25-38:
- Աճառյան Հ., Վիպասանական հայերեն // «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք 1, Ե., 1946, էջ 163-173:
- Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Ե., 1951:
- Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1957, հ. 6, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971:
- Առաքելյան Բ. Ն., Դիտողություններ Վիշապաքաղ Վահագնի մասին // «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1951, 2, էջ 75-81:
- Առաքելյան Վ. Դ., Փավստոս Բուզանդի աշխարհաբար թարգմանությունը // Հայկ. ՍՍՌ Լեզվի ինստիտուտի «Աշխարհությունների ժողովածու», 1948, հմ. 3, էջ 311-339:
- Առաքելյան Վ. Դ., Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971:
- Աղայբեգեան Թ., Միիրը հայոց մէջ // «Հանդէս ամսօրեայ», 1927, էջ 442-453, 589-599, նաև 1928, էջ 418-428, 494-503:
- Բոլոնիեզի Զ., Հայերենի հնչյունաբանության և ստուգաբանության խնդիրները // «Միջազգային հայերենագիտական գիտաժողով (21-25 սեպտեմբերի 1982 թ., զեկուցումների թեզիսներ)», Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 21:
- Գալստյան Հ., Երեք բառ Նարեկացու տաղում // «Գրական թերթ», 2015, հմ. 4, էջ 3-7:
- Համբարձումյան Վ. Գ., Մովսես Խորենացու Պատմության «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը // «Պատմա-բանասիրական հանդես», 1995, 2, էջ 232-233:
- Համբարձումյան, Հայերեն աստված բառի ծագումն ու տիպաբանությունը, Ե., «Զանգակ 97» հրատ., 2002:
- Համբարձումյան Վ. Գ., Լատիներենի դասագիրք, Ե., «Զանգակ 97» հրատ., 2007:

- Համբարձումյան Վ. Գ., Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012:
- Համբարձումյան Վ. Գ., Լատինաբան ձևերի գործածությունը Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ում // «Լեզու և լեզվաբանություն», 2014, 1-2, էջ 16-17:
- Համբարձումյան Վ. Գ., Ստուգաբանական դիտարկումներ // «Լեզու և լեզվաբանություն», 2014, 2, էջ 41-46:
- Համբարձումյան Վ. Գ., Հայերենի տվյալների կարևորությունը հնդեվրոպասեմական առնչությունների ուսումնասիրության մեջ // «Զահուկյանական ընթերցումներ», Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2016, էջ 104-110:
- Համբարձումյան Վ. Գ., Հայերեն եղեռն բառի ծագումը և տիպաբանությունը // “Геноцид как духовно-нравственное преступление против человечества”: Материалы международной научной конференции. 23-24 октября 2015 г.”, М., Изд. “Ключ - С” 2017, էջ 187-196:
- Համբարձումյան Վ. Գ., Հայերեն մարգարիտ բառի ծագման մասին // «Զահուկյանական ընթերցումներ», Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2019, էջ 106-113:
- Համբարձումյան Վ. Գ., Հայերենը և կելտական լեզուները, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020:
- Համբարձումյան Վ. Գ., Բառաքննական և ստուգաբանական դիտարկումներ - // «Լեզու և լեզվաբանություն», 2021, 1, էջ 4-14:
- Համբարձումյան Վ. Գ., Ստուգաբանական դիտարկումներ. հայ. հերկ- < հե. *p^(h)erk^{(h)0}- // «Լեզու և լեզվաբանություն», 2021, 2, էջ 27-43:
- Հարությունյան Լ. Վ., Քո շրջապատի ծառերը, Ե., հրատ., 1983:
- Հեմպ Է., Մի քանի կիսաշփականների մասին հայերենի պատմության մեջ // «Պարմա-բանասիրական հանդես», 1982, 1, էջ 38-42:
- Հմայակյան Ս. Գ., Ուրարտական դիցարանի «սրբությունները» // «Պարմա-բանասիրական հանդես», 1981, 3, էջ 203-210:

- Հմայակյան Ա. Գ., Վանի թագավորության պետական կրոնը, Ե., ՀՀ ԳԱ հրատ., 1990:
- Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, Ե., ԵՊՀ հրատ., 2003:
- Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., ԵՊՀ հրատ., 2004:
- Հովհաննիսյան Լ. Շ. Գրաբարի «խաղող» և «գինի» բառերի շուրջ // «Լեզու և լեզվաբանություն», 2014, 1-2, էջ 4-9:
- Ղափանցյան Գ. Ա., «Հնէաբանական» մի քանի մնացորդներ հայերենում: Ստուգաբանություններ («առիւծ», «մորմ», «խլէզ») // «Տեղեկագիր» ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1927, 2, էջ 1-37:
- Ղափանցյան Գ. Ա., Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., ԵՊՀ հրատ., 1939:
- Ղափանցյան Գ. Ա., Խեթական մի առասպելի մասին // «Ն. Մառի անվան կարհնետերի աշխատություններ», 1945, 1, Եր. համալս. հրատ., էջ 173-186:
- Ղափանցյան Գ. Ա., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Ե., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1961 :
- Ղափանցյան Գ. Ա., Անտիպ գործեր (Արմատական բառարանի առթիվ դիտողություններ), Ե., 2008:
- Միքայելյան Ժ. Ա., Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Ե., «Նաիրի» հրատ., 2009:
- Մուրադյան Ա. Ն., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971:
- Մուրադյան Մ. Հ., Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի շուրջը (XII-XIV դարեր) // «Լեզվի և ոճի հարցեր», III, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975:
- Պեդերսոն Հ., Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1907:

- Պեդրոսյան Ա., Արամազդ. կերպար, պաշտամունք, նախատիպեր, Ե., «Վան Արյան» հրատ., 2006:
- Ջահուկյան Գ. Բ., Հայերենի բառապաշարի խեթալուսական տարրերը // «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, 2:
- Ջահուկյան Գ. Բ., Հայերենի և խեթալուսական լեզուների բառային կազմի ծագումնային զուգադիպումները // «Պատմա-բանասիրական հանդես», 1967, 4:
- Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները. Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970:
- Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., ՀՀ ԳԱ հրատ., 1972:
- Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատ., 1987:
- Ջահուկյան Գ. Բ., Հին հայերենի վերջածանցների ծագումը // «Պատմա-բանասիրական հանդես», 1994, 1-2, էջ 53-66, 1995, 1, էջ 37-50 (նույնը՝ «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, Ե., 1998, էջ 5-48, նաև՝ «Հայերեն ստուգաբանական բառարան», Ե., 2010, էջ 791- 814):
- Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և ուրարտերենը // Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան. Հայաստան-Ուրարտու, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 127-168 :
- Ջահուկյան Գ. Բ., Հայկական շերտը ուրարտական դիցարանում // «Պատմա- բանասիրական հանդես», 1993. 1:
- Սարգսյան Գ. Խ., Պատմագիտական հետազոտություններ, Ե., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2006:
- Սարգսյան Գ. Խ., Ուրարտական տերությունը և հայերը // Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Ե., 1988, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 47-126:
- Սուրբիսյան Հ. Վ., Աճականը հայերենում, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
- Տերվիշեան Կ. Ս., Հնդեվրոպական նախալեզու, Կ. Պոլիս, 1885:
- Аракелян А. Б., «Дом для омовения» по данным хеттских источников // «Древний Восток», т. 5, Ереван, 1988, с. 16-20:

- Гамкрелидзе Т. В.*, Индоевропейская “глоттальная теория” и система древнеармянского консонантизма // “*Международный симпозиум по армянскому языкознанию* (Ереван 21-25 сентября 1982 г., Доклады)”, Ереван, Изд-во АН Арм ССР, 1984, с. 31-34.
- Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.*, Лингвистическая типология и реконструкция системы индоевропейских смычных // “*Конференция по сравнительно-исторической грамматике индоевропейских языков (12-14 декабря). Предварительные материалы*”, М., 1972, с. 15- 18.
- Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.*, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, I-II, Тбилиси, 1984.
- Гамкрелидзе Т. В., Иванов Вяч., В.* К проблеме прародины носителей родственных диалектов и методам ее установления // “*Вестник древней истории*”, 1984, 2.
- Дёрфер Г.*, О состоянии исследования халаджской группы языков // “*Вопросы языкознания*”, 1972, 1.
- Джаукян Г. Б.*, Урартский и индоевропейские языки, Ереван, Изд-во АН АрмССР, 1963.
- Джаукян Г. Б.*, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, Изд-во АН АрмССР, 1967.
- Джаукян Г. Б.*, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, Изд-во АН АрмССР, 1967, 1.
- Джаукян Г. Б.*, Сравнительная грамматика армянского языка, Ереван, Изд-во АН АрмССР, 1982.
- Джаукян Г. Б.*, Опыт семантической классификации и ареального распределения индоевропейской лексики армянского языка // *Г.Б. Джаукян, Л. А.Сараджева, Ц.Р. Арутюнян*, Очерки по сравнительной лексикологии армянского языка, Ереван, Изд-во АН АрмССР, 1983, с. 5-116 .

- Дьяконов И. М., Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков // *"Переднеазиатский сборник"*, М., 1961, с. 369-422.
- Дьяконов И. М., Урартские письма и документы, М.-Л., 1963 (= У ПД).
- Дьяконов И. М., Урарту, Фригия, Лидия // *"История древнего мира"*, т. 2, М., 1982.
- Дьяконов И. М., Материалы к фонетике урартского языка // *"Вопросы грамматики и истории восточных языков"*, М.-Л., 1985.
- Иванов Вяч. Вс., К этимологии балтийского и славянского названий бога грома // *"Вопросы славянского языкознания - 3"*, М., 1958.
- Иванов Вяч. Вс., Об исследовании древнеармянской фонологической системы и ее отношении к индоевропейской // *"Вопросы языкознания"*, 1962, 1, с. 37-41.
- Иванов Вяч. Вс., Заметки по сравнительно-исторической индоевропейской поэтике: 2. Индоевропейская поэтическая формула в древнейшем армянском стихотворении // *"To Honor Roman Jakobson"*, The Hague-Paris. 1967.
- Иванов Вяч. Вс., Внешняя история анатолийских языков // *"Древние языки Малой Азии"*, М., "Прогресс", 1980, с. 147-148.
- Иванов Вяч. Вс., Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну // *"Историко-филологический журнал"*, 1983, 4, с. 22-43:
- Иванов Вяч. Вс., Первоначальная глубинная структура текста гимна Вахагну и проблемы древнеармянской этимологии // *"Международный симпозиум по армянскому языкознанию (Ереван 21-25 сентября 1982 г., Доклады)"*, Ереван, 1984, с. 61-86.
- Иванов Вяч. Вс., Труды по этимологии индоевропейских и древнепереднеазиатских языков. Том 1. Индоевропейские корни в хеттском языке, М. "Языки славянских культур. Знак. М., 2007.

- Капанцян Г. А.*, Историко-лингвистические работы (К начальной истории армян. Древняя Малая Азия), Ереван, Изд-во АН АрмССР, 1956.
- Льюис Г., Педерсен Х.*, Краткая сравнительная грамматика кельтских языков, М., Изд-во Иностранной литературы, 1954.
- Макаев Э. А.*, Армяно-кельтские изоглоссы // *“Кельты и кельтские языки”*, М., Изд-во АН СССР, 1977, с. 56-57.
- Макаев Э. А.*, Общая теория сравнительного языкознания, М., “Наука”, 1977.
- Массон М. Е.*, Новые данные по истории Парфии // *“Вестник древней истории”*, 1950 .
- Меликишвили Г. А.*, Урартские клинообразные надписи, М., Изд-во АН СССР, 1960.
- Периханян А. Г.*, Материалы к этимологическому словарю древнеармянского языка, Часть 1, Ереван, Изд-во НАН РА, 1993.
- Туманян Э. Г.*, Структура индоевропейских имен в армянском языке, М., “Наука”, 1974.
- Саркисян Г. Х.*, Введение // *Мовсес Хоренаци*, История Армении, перевод с древнеармянского языка, введение и примечания Г. Саркисяна, Ереван, 1990, с. V-L.
- Топоров В. Н.*, Древнеармянский в свете индоевропейских реконструкций // *“Международный симпозиум по армянскому языкознанию, 21-25 сентября 1982 г. (Тезисы докладов)”*, Ереван, 1982, с. 100-102.
- Топоров В. Н.*, Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции // *“Историко-филологический журнал”*, 1977, 3, с. 88-106.
- Топоров В. Н.*, Пространство и текст // *“Текст: Семантика и структура”*, М., 1983, с. 227-284:
- Фогт Г.*, Индоевропейские языки и сравнительные методы // *“Вопросы языкознания”*, 1971, 4, с. 36-41.

- Хачикян М. Л., Хурритский и урартский языки, Ереван, Изд-во АН АрмССР, 1985.
- Хоппер П. Дж., Типология проиндоевропейского набора сегментов // "Новое в зарубежной лингвистике", вып. XXI, М., "Прогресс", 1988. с. 160-172.
- Хоппер П. Дж., Языки "Decem" и "Taihun": индоевропейская изоглосса // "Новое в зарубежной лингвистике", вып. XXI, М., "Прогресс", 1988. с. 173-182.
- Cuny A., Linguistique du Hittite // "Revue hittite et asianique", 1934, II, F. 1247 (ըստ Վյաշ. Վս. Իվանովի գրքի).
- Dervischjan S., Das altarmenische Բ, Wien, 1877.
- Hambardzumyan V. G., Armenian and Indo-European: Essays on Comparative Lexicology of the Armenian Language (Comparative-typological Variativity), Yerevan, NAS RA Publ., 2014.
- Hopper P. J., Glottalised and murmured occlusives in Indo-European // "Glossa" (An International Journal of Linguistics), vol. 7, № 2, pp. 141- 166.
- Hopper P. J., . "Decem" and "taihun": An Indo-Eurpoean isogloss // "Bono Homini Donum". (Essays in Historical Linguistics in memory of Alexander Kerns), I, Amsterdam, 1981, pp. 133-142.
- Hübschmann H., Armenische Studien, Leipzig, 1883 (= Հ. Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ. Ե., 2004, էջ 168-262).
- Hübschmann H., Armenische Grammatik. Erste Teil; Armenische Etymologie Leipzig, 1895-1897 [= Հ. Հյուբշման, Հայերենի քերականություն, Ե., 2003].
- Knobloch J., Zur armenisch *erkin* "Himmel", *erkir* "Erde" // "Handes amsoreay" [= «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր), 1961, թիւ 75, էջ 541-544].
- Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne. 1936.

Saint-Martin J.-A. Mémoires historique et géographique sur l'Arménie, t. 1,
Paris. 1818.

Scheftelowitz G.. Zur altarmenischen Lautgeschichte. // "A. Bezenbergers
Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen" 28, 1904
(ըստ Գ. Բ. Ջահուկյանի):

Solta G. R., Die Stellung des Armenischen im Kreise der
indogermanischen Sprachen, Wien, 1960.

Բովանդակություն

Առաջաբան	3
1. Հնդեվրոպական արմատի զրո աստիճանի ծայնավորման արտացոլումը հայերենում	5
2. Հայերենի տվյալների կարևորությունը Հնդեվրոպասեմական առնչությունների ուսումնասիրության մեջ.....	16
3. Հնչյունական և բառաքերականական զուգադիպումների համեմատական-տիպաբանական քննություն	25
4. Ստուգաբանական դիտարկումներ	37
1) Հայ. այգի < հե. *oi-yi(ā)-	38
2) Հայ. երկինք // երկիր < հե. *k'°er-	47
3) Հայ. առակ // առած < հե. * հե. *reg'-	60
4) Հայ. մարգարիտ - ասոր. margāniṯā	70
5) Հայ. եղեռն բառի ծագման մասին	78
6) Հայ. արտորալ և արտոյտ բառերի մասին.....	89
7) Հայ. հարկ(անեմ) < հե. *(H)a/ork/g-t-	100
8) Հայ. հերկ- < հե. *p(h)erk(h)°-	110
5. Բառիմաստային և ստուգաբանական քննություն	127
1) Բուզանդի «Այծից հայոց արքայ» արտահայտության մասին	128
2) Նարեկացու բառապաշարի մի քանի բառի մասին.....	138
6. Մի քանի այլ ստուգաբանություններ	151
Համառոտագրություններ	178
Գրականության ցանկ	182

Վազգեն Գուրգենի Համբարձումյան
Ակնարկներ հայերենի
բառաքննության և ստուգաբանության
1

Вазген Гургенович Амбарцумян

Лексикология и
этимология армянского языка
1

Vazgen G. Hambardzumyan

Lexicology and etymology of the
Armenian Language

Տառադարձական տեղադրումները
Մ. Հ. Խառատյանի
Ձևավորումը Հ. Փիլոյանի